Լ. Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ



ԱՂՎԱՆԻՑ (ԳԱՆՁԱՍԱՐԻ) ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ

Հարգարժան ընթերցողություն՝ պ-րն Ռ. Հակոբյան-ին՝ լավագույն ցանկություններով

Լ. Ա. Մկրտումյան -ից:

28.11.2006

Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ.

ԵՐԵՎԱՆ 2006
ՏՆՏԵՍԱԳԵՏ

ՀՏԴ 941(479.24)
ԳՄԴ 63.3(2Հ)
Մ 807

Մասնագիտական խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտոր *Հ. Մարգարյան*

Գրախոս՝ պատմ. գիտ. դոկտոր *Գ. Գրիգորյան*

Մկրտումյան Լ. Ա.
Մ 807 Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը
XVII-XIX դդ. - Եր.: Տնտեսագետ, 2006. – 268 էջ

Մենագրությունը նվիրված է Հայ Առաքելական Եկեղեցու չորս ճյուղերից մեկի՝ Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության XVII-XIXդդ.-ի պատմությանը: Գիտական շրջանառության մեջ դեռևս չդրված ձեռագրերի և վավերագրերի քննությամբ ճշգրտված են Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության թեմական կառուցվածքը, XVII-XIXդդ.-ի Աղվանից կաթողիկոսների ցանկը և վերջիններիս աթոռակալման տարեթվերը, ուսումնասիրված է թեմերի և դրանցից ստացվող հասույթների համար Ամենայն Հայոց և Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունների պայքարը, լուսաբանված են Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության պատմության հետ առնչվող այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են հակաթոռությունը և կաթողիկոսական աթոռի համար պայքարը, XVIIIդ. Արցախում ծավալված ազատագրական շարժմանը այս կաթողիկոսության մասնակցությունը, վեր են հանված Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության վերացման հանգամանքները:

Մ 0503020913
719(01)2006 2006 ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 99941-51-20-07

© «Տնտեսագետ» հրատ. 2006թ.
© Լ. Մկրտումյան 2006 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

ԳԼՈՒԽ 1
ԱՂՎԱՆԻՑ (ԳԱՆՁԱՍԱՐԻ) ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԵՐԸ: ԱՂՎԱՆԻՑ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԹԵՄԵՐԻ ՀԱՄԱՐ XVII Դ.-XIX Դ. ՍԿԶԲՆԵՐԻՆ 9

§1 Շիրվանի թեմ 16
§2 Ստրախանի թեմ 24
§3 Հաղպատի թեմ 31
§4 Գանձակի թեմ 49

ԳԼՈՒԽ 2
ՀԱԿԱԹՈՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ 54

ԳԼՈՒԽ 3
XVIII Դ. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՂՎԱՆԻՑ (ԳԱՆՁԱՍԱՐԻ) ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ 82

§ 1 Ազատագրական պայքարը Արցախում XVIII դ. 20-ական թթ. և Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը 82
§ 2 Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության մասնակցությունը XVIII դ. 80-ական թթ. ազգային-ազատագրական շարժմանը 115

ԳԼՈՒԽ 4
ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ 1747-1798 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 140

ԳԼՈՒԽ 5
ԱՂՎԱՆԻՑ (ԳԱՆՁԱՍԱՐԻ) ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ 184

ՎԵՐՋԱԲԱՆ 212

XVII-XIX ԴԴ. ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ 216

ՀԱՎԵԼՎԱԾ 217

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 265

Ներածություն

Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը հայագիտության կարևորագույն խնդիրներից է և չնայած միշտ էլ գտնվել է պատմաբան հետազոտողների ուշադրության կենտրոնում, սակայն խորհրդային իշխանության օրոք տիրապետող աթեիստական գաղափարախոսությունը, բնական է, չէր կարող նպաստել հայ եկեղեցու հոգևոր-մշակութային և քաղաքական գործունեության իրական պատկերը ներկայացնելուն:

Հայաստանի Հանրապետության և Արցախ աշխարհի անկախության վերականգնումից հետո առավել կարևորվում է Աղվանից կաթողիկոսության պատմության ուսումնասիրությունը, քանի որ ազգային պետության բացակայության պայմաններում կաթողիկոսական աթոռը էական դեր է ունեցել իր հոգևոր իշխանության տակ գտնվող հայության քաղաքական, տնտեսական և անգամ վարչա-իրավական կյանքում: Ակնհայտ է, թե մուսուլմանական տիրապետության օրոք ազգապահպան ինչ կարևոր առաքելություն է կատարել Աղվանից կաթողիկոսությունը, քննարկվող ժամանակաշրջանում իր գոյությամբ և գործունեությամբ նպաստել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում ռուսական կողմնորոշմանը, հայ-ռուսական կապերի զարգացմանը:

Այս աշխատության հիմնահարցերից է Ամենայն Հայոց կաթողիկոսության և Աղվանից կաթողիկոսության հարաբերությունների վերլուծությունը, Աղվանից XVII-XIX դդ. կաթողիկոսությունը կազմավորող թեմերի պատմության լուսաբանումը, հայ ժողովրդի XVIII դ. ազատագրական պայքարում Աղվանից կաթողիկոսության դերի արժևորումը:

Կարևոր խնդիրներից մեկն էլ XVI դ. երկրորդ կեսից Աղվանից կաթողիկոսությունում ծայր առած հակաթոռության հիմնահարցի, ի մասնավորի՝ երից Մանկանց վանքի կաթողիկոսության պատմության ոչ արդարացի գնահատման քննությունն է, որի կապակցությամբ պարզել ենք, որ ի տարբերություն Աղվանից կաթողիկոսության մինչ 1675 թ. գործած նախորդ հակաթոռների, Երից Մանկանց վանքի կաթողիկոսները, լինելով մի տոհմի ներկայացուցիչներ, ունեցել են մեծ հեղինակություն ու ազդեցություն, ինչու չէ, նաև ոչ քիչ ներդրում հայ ժողովրդի հոգևոր ու աշխարհիկ կյանքում, մի հանգամանք, որ ոչ միայն չի գնահատվում:

Այս աշխատանքը նորովի է լուսաբանում Աղվանից կաթողիկոսությունում հակաթոռության հիմնահարցը, ճշտում կաթողիկոսների աթոռակալության տարեթվերը՝ ըստ Մատենադարանի ձեռագրերի, վավերագրերի, նաև վիմագիր արձանագրությունների: Աղվանից կաթողիկոսության XVII-XIX դդ. պատմության գիտական հետազոտությունը արժևորվում է և՛ բուն հիմնախնդրի, և՛ Խամսայի մելիքությունների, Հարավային Կովկասի խանությունների և այս տարածաշրջանի ռուսական տիրապետության հաստատման պատմության լուսաբանման առումով, նաև ադրբեջանցի պատմաբանների կողմից Արցախի՝ համաշխարհային հանրության ուշադրության առարկա դարձած հարցի խեղաթյուրված ներկայացմամբ:

Աշխատանքում ներկայացվել են XVII-XIX դդ. Աղվանից կաթողիկոսության հիմնախնդրին վերաբերող սկզբնաղբյուրները և գրականության համառոտ տեսությունը:

Աղվանից կաթողիկոսության պատմության կարևոր և առավել փաստաշատ տեղեկություններ բովանդակող սկզբնաղբյուր է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի «Ջամբռը», քանի որ հեղինակը Աղվանից կաթողիկոսությունում XVIII դ. երկրորդ կեսին տեղի ունեցած իրադարձությունների անմիջական մասնակիցն է: Այդուհանդերձ, նրա տեղեկությունները անաչառ համարվել չեն կարող: Սիմեոն Երևանցին՝ որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, էջմիածնի գերագահությունը չընդունող կաթողիկոսին պատժելու միտումով սատարել է նրա հակառակորդ կաթողիկոսին:

Ի տարբերություն Սիմեոն Երևանցու, Վարդան արքեպիսկոպոս Օձնեցին Աղվանից կաթողիկոսության XVIII-XIX դդ. պատմությունը ներկայացրել է որպես անաչառ ուսումնասիրող՝ հիմք ընդունելով Շուշիի կոնստիտորիայում պահվող վավերագրերը: Օձնեցու «Պատմություն Հայոցը» արժեքավոր է և այն առումով, որ դարձել է այդ վավերագրերի չպահպանված մասը սերունդներին փոխանցելու աղբյուր: Չնայած դրան՝ հարկ է նշել, որ Օձնեցին մի շարք իրադարձությունների տարեթվեր ճիշտ չի ներկայացրել՝ ինքն էլ վկայելով այդ մասին. «Եթե գտցի ի սմայ անհամաձայնութիւն ժամանակաց, ըստ տկար մարդկային մտաց ներել մաղթեմ»[1]:

Մեր ուսումնասիրության սկզբնաղբյուրներն են հանդիսացել Աղվանից կաթողիկոսների՝ Մատենադարանում պահվող Գավազանագիրքը, Աղվանից կաթողիկոսության պատմությանն առնչվող Ամենայն Հայոց կաթողիկոսների «Հավաք կոնդակաց և նամակաց»-ը, աշխարհիկ իշխանությունների հրովարտակներ, զանազան հիշատակարաններ, Խաչիկ Դադյանի, Մակար Բարխուտարյանցի և Հովհաննես Շահխաթունյանի կազմած Աղվանից կաթողիկոսների

[1] Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 3ա

մնվանացանկերը և պատմական այլ փաստաթղթերի գիտնականների որոշակի մեկնաբանություններով կազմած ժողովածուները: Վերոգրյալ անվանացանկերում նշվել են Աղվանից կաթողիկոսների միայն աթոռակալության տարեթվերը, իսկ Գավազանագիրքը, որ բովանդակում է ավելի մեծ թվով կաթողիկոսների անուններ, ունի և այն առավելությունը, որ այդ կաթողիկոսներից մի քանիսի իշխանության վիճակի և գործունեության կապակցությամբ ներկայացնում է հավելյալ և անկողմնակալ տեղեկություններ[2]:

Ամենայն Հայոց կաթողիկոսների կոնդակների ու նամակների ժողովածուները[3] հատկապես Ամենայն Հայոց և Աղվանից կաթողիկոսությունների հարաբերությունների վերաբերյալ տեղեկություններ քաղելու աղբյուր են, մանավանդ որ գրեթե չեն պահպանվել Աղվանից կաթողիկոսների էջմիածին հղած նամակները: Այդ հարաբերությունների, Աղվանից կաթողիկոսության XVII-XIX դդ. իրադարձությունների մասին անհրաժեշտ տեղեկություն կարողանում ենք ստանալ Ամենայն Հայոց կաթողիկոսների պատասխան նամակներից, որոնք, որպես կանոն, անդրադառնում են նաև ստացված նամակների բովանդակությանը:

Աղվանից կաթողիկոսության XVII-XIX դդ. պատմությանը վերաբերող հիշատակարանները, ինչպես և աշխարհիկ իշխանությունների հրովարտակները՝ որպես յուրահատուկ պատմագրական արժեք, ներկայացնում են նաև այդ կաթողիկոսության պատմության անցուդարձը, հիմք տալիս պարզելու իրադարձությունների իսկական պատկերը:

XIX-XX դդ. գիտնականների կազմած պատմական փաստաթղթերի ժողովածուները, բնագրերի հետ բովանդակելով համապատասխան մեկնաբանություններ, առավել մանրամասն են բացահայտում Աղվանից հոգևոր իշխանության և Ռուսաստանի փոխհարաբերությունները՝ կապված հայ ժողովրդի XVIII դ. ազատագրական շարժման հետ, փաստական տվյալներ տալիս Աղվանից կաթողիկոսության վերացման կապակցությամբ:

Աղվանից կաթողիկոսության XVII-XIX դդ. պատմությանը ի շարս այլ հարցերի անդրադարձել են նաև Լեոն, Ռաֆֆին, Աշոտ Հովհան-

[2] Գավազանագրքի կազմողը Երից Մանկանց վանքի կաթողիկոսական, Զրաբերդցիների տոհմին պատկանող առաջին աթոռակալի՝ Սիմեոն Խոտորաշենցու մասին գրում է, որպես օրինակ կաթողիկոսի, իսկ նրան հաջորդած նույն տոհմին պատկանող Ներսեսին անվանում «հակաթոռ և յետին թշուառացեալ»:

[3] Գյուտ Աղանյանցի կազմած «Դիվան հայոց պատմութեան» ժողովածուն առավել արժեքավոր և հանրաճանաչ է որպես առաջինը տպագրված:

նիսյանը, իսկ Բագրատ Ուլուբաբյանը ներկայացրել է Աղվանից եկեղեցու ընդհանուր պատմությունը:

Լեոն իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ Աղվանից կաթողիկոսությունը համարում է որպես Ղարաբաղի «ամբողջովին տեղային, ինքնուրույն, ինքնագլուխ և նվիրական ազգային իշխանություն» կազմող բաղադրիչներից մեկը. «Գանձասարի աթոռն էր, որ մարմնացնում էր երկրի նահապետական-աստվածապետական կառավարության հնագույն ձևը: Իշխանական գավազանը և կաթողիկոսական խույրը հաճախ միանում էին միևնույն տոհմի ներկայացուցչի ձեռքում՝ երկրի ճակատագիրը տնօրինելու համար»[4]: Լեոն, փաստորեն, գերագնահատում է Հասան-Ջալալյան կաթողիկոսների դերը XVIII դ. հայ ազատագրական շարժման և Ղարաբաղում ձևավորված սղնախների ղեկավարման գործում, իսկ հակաթոռ Երից Մանկանց վանքի Զրաբերդցիների տոհմի կաթողիկոսներին անարդարացիորեն մեղադրում է, նրանց աթոռանիստը անվանում «օտարամոլության և մատնության օջախ»[5]:

Չնայած դրան, XVIII դ. երկրորդ կեսին Աղվանից կաթողիկոսությունում վերսկսված աթոռակալական պայքարի պատճառները Լեոն իրավացիորեն տեսնում է Գանձակի և Ղարաբաղի խաների մրցակցության մեջ, իսկ Աղվանից կաթողիկոսության վերացումը պայմանավորում XIX դ. սկզբին մելիքության ինստիտուտի անհետացման հետ:

Ռաֆֆին նույնպես «Խամսայի մելիքությունները» աշխատությունում Աղվանից կաթողիկոսության պատմությանը անդրադարձել է Ղարաբաղի ազգային ազատագրական շարժման ֆոնի վրա, սակայն ի տարբերություն Լեոյի՝ նա այդ կաթողիկոսությունում ծայր առած աթոռակալական պայքարի քայքայիչ հետևանքների հարցում մեղադրում է երկու կողմերին էլ, միաժամանակ բացասական համարում էջմիածնի միջամտությունն այդ պայքարին[6]:

Ռաֆֆին, ձեռքի տակ ունենալով Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի՝ Աղվանից կաթողիկոսությանն առնչվող հրովարտակների ժողովածուն և նրա անավարտ ձեռագիր պատմությունը, ուշագրավ մանրամասներ է հաղորդում Աղվանից կաթողիկոսության վերացման կապակցությամբ:

[4] Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. III, Գիրք II, Երևան, 1973, էջ 15:

[5] Նույն տեղում, էջ 116, 145:

[6] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. X, Երևան, 1964, էջ 222-223:

Աշոտ Հովհաննիսյանը «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատության երկրորդ հատորում հայ ժողովրդի XVIII դ. ազատագրական պայքարին Աղվանից կաթողիկոսության մասնակցության ակունքները հասցնում է 1677 թ. ենթադրելով, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին, հանդիպելով Աղվանից ախոյան կաթողիկոսներին, նպատակ է ունեցել նրանց հաշտեցնել և հաղորդակից դարձնել էջմիածնում կայացած խորհրդաժողովի որոշումներին: Աշոտ Հովհաննիսյանը միաժամանակ գտնում է, որ Հակոբ Ջուղայեցին լիազորված է եղել Հռոմի պապի հետ բանակցելու ոչ միայն էջմիածնի, այլև Աղվանից կաթողիկոսության անունից[7]:

Աղվանից կաթողիկոսության պատմության ուսումնասիրության գործում անվիճելի է Բագրատ Ուլուբաբյանի ներդրումը, մանավանդ, որ նա Արցախի պատմությանը նվիրված «Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության» և «Խաչենի իշխանությունը X-XVI դդ.» աշխատություններում անդրադարձել է նաև Աղվանից կաթողիկոսության նվիրապետների գործունեության պատմական հետաքրքրություն ներկայացնող առանձին խնդիրների: Բագրատ Ուլուբաբյանի «Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը» աշխատության վերնագիրն ինքնին ցույց է տալիս, որ այն ընդգրկում է Հայ Առաքելական եկեղեցու չորս ճյուղերից մեկի պատմությունը՝ սկսած քրիստոնեության առաջին քարոզիչների գործունեությունից մինչև Աղվանից կաթողիկոսության վերացումը:

Ուլուբաբյանի մտքի և գրչի արժեքը գնահատելով հանդերձ, մեր թեմայի հետ առավել աղերս ունեցող նրա «Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը» աշխատության կապակցությամբ թող թույլ տրվի ասել, որ նրանում Աղվանից կաթողիկոսության պատմությունը ներկայացված է ոչ այնքան սկզբնաղբյուրների, որքան մենագիր աշխատությունների հիման վրա, ուստի որոշակի առումով այդ պատմությունը, մեր կարծիքով, հեռացել է իրական անցքերից[8]:

[7] Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք երկրորդ, Երևան, 19 59, էջ

[8] Սարգիս կաթողիկոսի Գանձակում օծվելը հիմնավորվել է կաթողիկոսական աթոռի թափուր լինելու և Արցախից դուրս գալու ճանապարհների փակվածության (թեև Գանձակը ևս Արցախից դուրս է) փաստարկներով (Բագրատ Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 146): Մինչդեռ կաթողիկոսական աթոռին այդ ժամանակ գահակալում էր Իսրայել Ջրաբերդցին, որին նույն Սարգիսն իր կողմնակիցներով Ամենայն Հայոց կաթողիկոսից իր օգտին կոնդակ ստանալու նպատակով մեռած է ներկայացնում (Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 73ա):

ԳԼՈՒԽ 1

ԱՂՎԱՆԻՑ (ԳԱՆՁԱՍԱՐԻ) ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԵՐԸ: ԱՂՎԱՆԻՑ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԹԵՄԵՐԻ ՀԱՄԱՐ XVII Դ.-XIX Դ. ՍԿԶԲՆԵՐԻՆ

Աղվանից մարզպանության ստեղծումից և այս մարզպանության 450-481 թթ. միջև ընկած ժամանակահատվածում Հայոց Արևելից կողմանց (Արցախ և Ուտիք նահանգներ) բռնակցումից հետո[9] Հայոց կաթողիկոսության վերահսկողությունը այս տարածքում գտնվող թեմերում թուլացավ: Մայր եկեղեցուց մեկուսացվածության պայմաններում Սասանյան Պարսկաստանի վարած հակաքրիստոնեական քաղաքականությանը և ուժեղացող քաղկեդոնական քարոզչությանը դիմագրավելու նպատակով VI դ. կեսին տեղի է ունենում այս թեմերի միավորում: 552 թ. ստեղծվում է Աղվանից կաթողիկոսությունը, որի առաջին նվիրապետ Աբասը (552-595) իր աթոռը հաստատեց Պարտավում: Հայոց կաթողիկոսությունը չճանաչեց Աբասի կաթողիկոսական տիտղոսը, ինչի վկայությունն է Հովհաննես Բ Գաբեղենեցի կաթողիկոսի (557-574) ուղերձը՝ Մ. Օրմանյանի կողմից 564-ով թվագրված[10], Աղվանից մի շարք թեմերի առաջնորդներին[11]: Այս ուղերձում Աբաս կաթողիկոսը սոսկ «Պարտաւայ եպիսկոպոս» է կոչված:

Հայոց և Աղվանից կաթողիկոսություններում գիտակցում էին նման հարաբերությունների վնասակարությունը: Հայաստանում և Աղվանից մարզպանությունում Բյուզանդական կայսրության կողմից քաղաքական ազդեցության շրջանակը լայնացնելու համար զենք ծառայող քաղկեդոնականության՝ վտանգավոր ծավալներ ընդունած աճը կասեցնելու նպատակով անհրաժեշտ էր միավորել Հայոց և նորաստեղծ Աղվանից կաթողիկոսությունների ջանքերը ու համատեղ հանդես գալ երկու կաթողիկոսությունների հիմքերը խարխլող այդ երևույթի դեմ:

Դվինի 608 թ. ժողովում հայ միաբնակ հոգևորականությունը, ցանկանալով վերջ տալ քաղկեդոնական եկեղեցու հետ Հայ Առաքելական եկեղեցու համար սպառնալիք հանդիսացող բանավեճին,

[9] Б.яА.яАрутюнянИяАдминистративно – политическоеяясостояниеяясевера – восточны. яобластейяцарстваяВеликойяАрмениИяИяКяосвещениюяпроблемя историИяИяякультурыяКавказскойяАлбаниИяИяяя

որոշեց հիմնել առաջին և երրորդ՝ պատրիարքական և մետրոպոլիտական աստիճանները, որոնց բացակայությունը շահարկվում էր քաղկեդոնական եկեղեցու կողմից: Հայոց կաթողիկոսը հռչակվեց պատրիարք, Աղվանից կաթողիկոսը՝ արքեպիսկոպոս, Վրաստանի կաթողիկոսը՝ մետրոպոլիտ[12]: Այս ժողովի որոշմամբ Աղվանից կաթողիկոսը ստանում էր այն աստիճանը, որը մինչ 608 թ. ուներ Հայոց կաթողիկոսը: Կանոնակարգվեցին նաև երկու կաթողիկոսությունների հարաբերությունները: Համաձայն այս կանոնների՝ Աղվանից կաթողիկոս ընտրելու նպատակով գումարվում էր ժողով, որին մասնակցում էին Աղվանից բոլոր թեմերի ներկայացուցիչները: Այստեղ ընդհանուր համաձայնության մթնոլորտում պետք է ընտրվեր նոր կաթողիկոս: Նորընտիր կաթողիկոսը Աղվանքի աշխարհիկ և հոգևոր վերնախավի ներկայացուցիչների ուղեկցությամբ մեկնում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը, ներկայացնում ընտրվելու մասին համախոսականը և օծվում Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից:[13]

Աղվանից կաթողիկոս Ներսես Ի-ին (689-706) քաղկեդոնական դավանանք ընդունելու համար կարգալույծ անելով՝ 713 թ. Պարտավում գումարված Աղվանքի հոգևոր և աշխարհիկ վերնախավի ժողովը Հայոց կաթողիկոս Եղիա Արճիշեցուն (703-717) տված Ձեռնարկում վերահաստատում է այս կանոնները[14]: Մինչ այդ Եղիա կաթողիկոսը Վալիդ խալիֆի (705-715) օժանդակությամբ Ներսեսին և վերջինիս աջակից իշխանուհի Սպրամին շղթայակապ աքսորեց:[15]

Եղիա կաթողիկոսի այս գործունեության հետ կապված՝ ադրբեջանցի պատմաբան Ջ. Բունիաթովը մեղադրում է Հայոց կաթողիկոսությանը և հայ նախարարներին այն բանում, որ, ինչպես ինքն է արտահայտվում, «խաչի դրոշի տակ իրենց ճանապարհին ջնջում էին պատմական Աղվանքի և նրա մասը հանդիսացող Ղարաբաղի (Արցախ) ժողովուրդներին»[16]:

Անհրաժեշտ է նշել, որ Արցախում մինչև ուշ միջնադար ապրել են միայն տեղաբնիկ հայեր և այդ պատճառով հայերի ու «պատմական Աղվանքի» բնակիչների միջև որևիցե հակասության վերաբերյալ դատողությունները բացարձակ հիմնազուրկ են: Ջ.

[12] Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 100-107:

[13] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 210, էջ 10բ-11ա:

[14] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 298-302:

[15] Նույն տեղում:

[16] З.яБуниатовияАзербайджанявяVII – IXявв.иБакуия1965яс.я101.

Բունիաթովը, քաղկեդոնականություն ընդունած երկու անձանց՝ Ներսես կաթողիկոսի և Սպրամ իշխանուհու պատիժը անվանելով ժողովուրդների բնաջնջում, լռության է մատնում այն փաստը, որ Եղիա կաթողիկոսը Պարտավ էր ժամանել Աղվանից հոգևոր և աշխարհիկ առաջնորդների դիմումից հետո, որոնք խնդրում էին վերջ տալ Ներսեսի կողմից իրականացվող կամայականություններին և բռնություններին[17], այլ ոչ թե «ջնջելու» նպատակով:

Իր աշխատության նույն էջում Ջ. Բունիաթովը որպես անժխտելի փաստ է ներկայացնում «աղվանական եկեղեցու՝ հայկականից անկախ լինելու» մասին Ի. Պետրուշևսկու կարծիքը: Սակայն Ի. Պետրուշևսկին խոստովանում է, որ իր աշխատանքը հանդիսանում է միայն Լեռնային Ղարաբաղ կատարած ուղևորության նկարագրությունը և ոչ մի կերպ չի հավակնում Հայոց և Աղվանից կաթողիկոսությունների վերաբերյալ սպառիչ ուսումնասիրություն լինել[18]: Խորամուխ չլինելով քաղկեդոնականության Հայաստան և Աղվանք ներթափանցման հանգամանքներին՝ Ի. Պետրուշևսկին դրանում նկատում է «ֆեոդալական, միաբնակ, Գրիգորյան եկեղեցու դեմ» հասարակության ստորին խավերի բողոքի ինչ-որ հետքեր: Այնինչ, ինչպես վկայում է Մովսես Կաղանկատվացին, քաղկեդոնական դավանանք առաջին հերթին ընդունում էին հոգևոր ու աշխարհիկ վերնախավի առանձին ներկայացուցիչներ և ոչ թե ստորին խավերը, ինչպես կարծում է Ի. Պետրուշևսկին: Քաղկեդոնականությանը հարում էին իրենց մերձավոր ազգականների հետ ամուսնացող ավատատիրական վերնախավի բարոյապես քայքայված ներկայացուցիչները, որոնք աջակցություն էին ստանում Վրաստանի կաթողիկոս քաղկեդոնական Թալիլեից: Վերջինս խոստացել էր օրինականացնել այդ ապօրինի ամուսնությունները, եթե իրեն դիմողները քաղկեդոնական դավանանք ընդունեն:[19] Դա հակառակ էր Բարսեղ Կեսարացու և Աթանաս Ալեքսանդրացու՝ քրիստոնեական բոլոր եկեղեցիների կողմից ընդունած կանոններին:[20]

Ասվածից պարզ է, որ Ի. Պետրուշևսկու այս կարծիքը չի կարող որպես փաստարկ ներկայացվել: Ի. Պետրուշևսկու և Ջ. Բունիաթովի այս հայտարարությունների սնանկության ապացույց է 713 թ. Պարտավի ժողովում Եղիա կաթողիկոսին տրված Ձեռնարկը,

[17] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 293-295:

[18] И.яПетрушевскийяОядо. ристянски. яверования. якрестяняНагорногоя КарабагаяБакуия 19у0яс.я1:

[19] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 313-314:

[20] Կանոնագիրք հայոց, աշխատ. Վ. Հակոբյանի, Գիրք Ա, Երևան,1964, էջ 297:

որտեղ անվերապահորեն ընդունվում է Հայոց կաթողիկոսի գերագահությունը Աղվանից կաթողիկոսի նկատմամբ:

Դեռ երկար ժամանակ Հայ Առաքելական եկեղեցին, որի անխզելի մասն է հանդիսանում Աղվանից կաթողիկոսությունը, ստիպված էր ծանր պայքար մղել քաղկեդոնականության ներթափանցման դեմ: Սակայն դա պայքար էր դավանաբանական վեճերի քողի տակ թաքնված Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության դեմ: Դա պայքար էր ազգային ինքնության համար:

Այդ ամենը ներկայացնել որպես Հայոց եկեղեցու պայքար իբր անկախ Աղվանից կաթողիկոսության դեմ, ինչպես դա անում է Զ. Բունիաթովը, նշանակում է քամահրել փաստերը և խեղաթյուրել պատմական իրականությունը:

Աղվանից կաթողիկոսությունը, Հայ Առաքելական եկեղեցու աստիճանակարգում ստորադաս կարգավիճակ ունենալով Ամենայն Հայոց կաթողիկոսության նկատմամբ և լինելով Ամենայն Հայոց կաթողիկոսների վերահսկողության ներքո, օժտված էր ներքին ինքնուրույնությամբ: Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգում Աղվանից կաթողիկոսն իր արքեպիսկոպոսական աստիճանով երկրորդն էր Ամենայն Հայոց կաթողիկոսից հետո: Արքեպիսկոպոսական աստիճանը Աղվանից կաթողիկոսին իրավասու էր դարձնում մետրոպոլիտ և եպիսկոպոսներ ձեռնադրել, մեռոնօրհնեք կատարել[21]: Աղվանից կաթողիկոսն իր նշանակած թեմական առաջնորդների միջոցով կառավարում էր Աղվանից կաթողիկոսության թեմերը և տնօրինում այս թեմերից ստացվող գումարները:

Աղվանից առաջին կաթողիկոս Աբբասը կրում էր «կաթողիկոս Աղուանից, Լփնաց և Չողայ» տիտղոսը[22]: Նշված տեղանուններով տիտղոսը ներառում էր ամբողջ Աղվանից մարզպանության տարածքը. Աղվանքը Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներն էր, ինչպես նաև Կուր և Գիրդիման-չայ գետերի միջև ընկած բուն Աղվանքը, Լփնիքը՝ բուն Աղվանքից արևելք մինչև Փիրսաղատ գետն ընկած տարածքը, իսկ Չողը՝ Լփնիքից հյուսիս-արևելք, մինչև Կասպից ծովը ընկած տարածքը:[23]: Ս. Տ. Երեմյանը, հենվելով Հովհաննես Բ Գաբեղենեցի կաթողիկոսի՝ Աղվանից կաթողիկոսին և հոգևոր հայրապետներին հղած ուղերձում[24] հիշատակված անունների վրա, գտնում է, որ VII դարի սկզբին Աղվանից կաթողիկոսությունը բաղկացած է եղել 8 եպիսկոպոսական թեմերից[25]: Բ. Ուլուբաբյանը վիճարկում է այս կարծիքը՝ պնդելով, որ Հովհաննես Գաբեղենեցու ուղերձում հիշատակված են Աղվանքի ոչ բոլոր եպիսկոպոսական թեմերի առաջնորդները: Բ. Ուլուբաբյանը նշում է, որ նույն ժամանակաշրջանի այլ աղբյուրներում հիշատակվում են Մեծառանից, Գտչա, Չողի և այլ առաջնորդանիստ կենտրոններ: Նա այն կարծիքն է հայտնում, որ Արցախի և Ուտիքի նահանգների գավառներից յուրաքանչյուրը պետք է որ իր եպիսկոպոսական թեմն ունենար[26]:

XVII-XVIII դդ. կաթողիկոսական շրջաբերական կոնդակներից հնարավոր չէ կոնկրետ տեղեկություն ստանալ Աղվանից կաթողիկոսության թեմերի վերաբերյալ, քանի որ դրանք հասցեագրված են ոչ թե կոնկրետ թեմերին, այլ Հարավային Կովկասի խանություններում բնակվող և Աղվանից կաթողիկոսության հոգևոր վերահսկողության տակ գտնվող հայադավաններին: Մի քանի խանությունների տարածքը կարող էր ընդգրկել մեկ եկեղեցական թեմ (օրինակ, Շիրվանի թեմը), կամ ընդհակառակը, կարող էին գոյություն ունենալ մի քանի թեմեր (օրինակ, Գանձակի խանության տարածքի թեմերը):

Աղվանից կաթողիկոսությունը կազմող թեմերի աշխարհագրական տեղադրության, առաջնորդական կենտրոնների մասին տեղեկանում ենք Աղվանից կաթողիկոսության եպիսկոպոսական դասի համախոսականների ստորագրություններից և կնիքներից:

Հարավային Կովկաս Իսլամի մուտքից, ապա սելջուկյան արշավանքներից հետո այս տարածաշրջանի դեմոգրաֆիական պատկերը փոխվեց: Բուն Աղվանքի ավտոխթոն բնակչության մի մասը ոչնչացավ, մյուս մասը տարրալուծվեց եկվոր թյուրքական զանգվածի մեջ: Քրիստոնյաների թվի կտրուկ նվազման հետևանքով Կուրի ձախափնյակի բազմաթիվ թեմերը դադարեցին գոյություն ունենալ: XVII-XVIII դարերում այդ ընդարձակ տարածքում գոյություն ուներ միայն հոգևոր մեկ առաջնորդություն՝ Շիրվանի թեմը, որն ընդգրկվում էր Սեֆյան դինաստիայի անկումից հետո Շաքիի, Շամախու, Ղուբայի, Դերբենտի և Բաքվի խանությունների միջև բաժանված Շիրվանի ամբողջ վիլայեթի տարածքը:

---

[21] Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 108:

[22] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 118-119, հավելված Բ, էջ 350:

[23] Б.А.Арутюнян К вопросу о локализации страны Лпник Кавсвещения проблемы истории и культуры Кавказской Албании и восточны. провинция Армении т. I Ереван 1991 с. 107 – 1т4.

[24] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 81:

[25] С.Т.Еремян Экономический и социальный строй Албании III – VII века. и "Очерки истории СССР III – IX веков" и Москва 1958 с. ут4.

[26] Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 117:

Կաթողիկոսության կորիզը կազմում էին Ղարաբաղի թեմերը: Ղարաբաղի գավառներից յուրաքանչյուրում առանձին եպիսկոպոսական թեմ գոյություն ուներ: XVII-XVIII դարերում Գյուլիստանի թեմի առաջնորդական կենտրոնն էր Հոռեկի վանքը, Վարանդայինը՝ Ամարասի վանքը, Դիզակինը՝ Սպիտակ Խաչ վանքը: Մինչև XVIII դարի երկրորդ կեսը գոյություն ուներ նաև Խաղավանքի թեմը, որն ընդգրկում էր Ծարի, Սողքի գավառները (պարսկերեն աղբյուրներում՝ Զարգբիլ): Ղարաբաղի խաների կողմից այս տարածքը հայաթափելու և թյուրք ու քուրդ քոչվոր ցեղերով բնակեցնելու հետևանքով այս թեմը վերացավ:

Գանձակի խանության տարածքում գոյություն ուներ 7 թեմ՝ Խորանաշատի, Թարգմանչաց, Փառիսոսի, Ամենափրկիչ վանքերի և Գետաշենի, Գետաբակի ու Գանձակի թեմերը[27]:

Միջնադարում, ինչպես աշխարհիկ իշխանությունների տարածքները, այնպես էլ կաթողիկոսություններին ենթակա թեմերի քանակը հաստատուն չէր: Այն շաղկապված էր աշխարհիկ իշխանությունների տարածքային նվաճումների կամ կորուստների, ինչպես նաև հարևան կաթողիկոսության դիրքերի թուլացման կամ ուժեղացման հետ:

Երկու անգամ՝ VI դարում, ապա X դարում, Աղվանից կաթողիկոսությանը հաջողվում է իր վերահսկողության տակ առնել Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա Սյունիքի մետրոպոլիտությունը: Բյուզանդիայի կողմից VI դարում Ավանի հակաթոռ կաթողիկոսական աթոռի հիմնադրումից հետո Դվինի 554 թ. ժողովի մասնակից Սյունյաց եպիսկոպոս Պետրոսը խզեց կապերը Ամենայն Հայոց կաթողիկոսության հետ: Նրա հրահանգով եկեղեցական ձեռնադրությունները և մեռոնը Սյունյաց թեմը ստանում էր Աղվանից կաթողիկոսներից:[28] Մինչև Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռին Աբրահամ Ա. Աղբաթանեցու (607-615) հաստատվելը Պետրոս եպիսկոպոսին հաջորդած Գրիգոր և Քրիստափոր եպիսկոպոսները նույնպես ձեռնադրվել են Աղվանից կաթողիկոսի կողմից:[29] Սյունիքի թեմը X դարի I կեսին մեկ անգամ ևս հայտնվում է Աղվանից կաթողիկոսության ազդեցության տակ: Արաբական տիրապետությունից նեղված Ամենայն Հայոց կաթողիկոսները, հեռանալով Դվինից, աստանդական կյանք էին վարում՝ ժամանակավորապես հաստատվելով Շիրակի, Արգինայի, Վասպուրականի, Աղթամարի վանքերում: Օգտվելով դրանից՝ Աղվանից Սահակ կաթողիկոսը (929-947) իր վերահսկողության տակ վերցրեց Սյունյաց թեմը: Ամենայն Հայոց կաթողիկոս Անանիա Ա. Մոկացուն (946-968) հաջողվեց Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթարկել Սյունյաց մետրոպոլիտությունը[30]:

IX դարի սկզբին Խաչենի մեծ իշխան Սահլ Սմբատյանի նվաճումների արդյունքում Սյունիքի նահանգի մաս կազմող Սողք գավառը և Գեղարքունիքի գավառի մի մասը Շողագա վանքով անցավ Աղվանից կաթողիկոսության վերահսկողության տակ:[31] XVI դարի սկզբին Գեղարքունիքի հայ ավատատերերի համախոսականի համաձայն, Գեղարքունիքի գավառը վերամիավորվում է Տաթևի թեմին[32]:

XVI դարում Սեֆյան Թահմասպ Ա շահի (1524-1576) կողմից էջմիածնի կաթողիկոս Միքայել Ա Սեբաստացուն 1548 թ. դեկտեմբերին տրված հրովարտակով էջմիածնի վերահսկողության տակ են դրվում Լոռու, Գեղարքունիքի, Կապանի, Խոյի, Սալմաստի, Գանձակի, Պարտավի, Աղստաբադի և Զակամի հոգևոր թեմերը[33]: Այս հրովարտակին անդրադարձել է նաև Սիմեոն Երևանցին: Նա շեշտում է, որ այս հրովարտակը կարևոր նշանակություն է ունեցել էջմիածնի իրավունքների և ազդեցության ամրապնդման գործում: Նա նշում է, որ մինչ այդ Աղվանից կաթողիկոսները յուրացրել էին Գեղարքունիքի, Կապանի, Աղստևի, Լոռու թեմերը և միայն այս հրովարտակի հրապարակումից հետո են դրանք հետ վերադարձվել[34], բայց էջմիածինը չի բավարարվել նախկինում իրեն պատկանած թեմերի վերադարձումով և Աղվանից կաթողիկոսությունից խլել է մշտապես նրա կազմում գտնվող Գանձակի, Պարտավի և Զակամի (գավառ Կուրի աջակողմյան վտակ Զակամի հովտում, Ուտիքի նահանգ) թեմերը:

---

[27] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան (այսուհետև՝ Կթղկ. դիվան), թղթապանակ (այսուհետև՝ թղթ.) 257, վավերագիր (այսուհետև՝ վավ.) 250; թղթ. 240, վավ. 3:

[28] Ուխտանես, Պատմութիւն հայրապետաց և թագաւորաց հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 120:

[29] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Գիրք II, Գլուխ Խ՝ ;ա Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 125:

[30] Ուխտանես, Պատմութիւն հայրապետաց և թագաւորաց հայոց, էջ 120; Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Գլուխ ԽԸ, էջ 308-313; Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1912, Գլուխ ԾԲ, էջ 275-279; Տեառն Անանիայ հայոց կաթողիկոսի յաղագս ապաստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս լեալ իցէ ծեռնադրութիւն արտաքոյ սուրբ Լուսավորչին աթոռոյ, «Արարատ», 1897, մարտ, էջ 130-133:

[31] Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ. , էջ 371:

[32] Մատենադարան, ձեռ. N 6271, էջ 6ա-7ա:

[33] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, կազմեց Հ. Փափազյան, պրակ Ա, Երևան, 1956, վավ. 13, էջ 59:

[34] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան, (այսուհետև՝ Ջամբռ), Վաղարշապատ, 1873, էջ 20, 78, 210:

XVII դարի առաջին քառորդից սկսած Ամենայն Հայոց կաթողիկոսությունը տնտեսական, քաղաքական ու մշակութային վերելք ապրեց: Մովսես Գ Տաթևացի (1629-1632), Փիլիպոս Ա Աղբակեցի (1632-1655) կաթողիկոսների ջանքերով սկսեց վերականգնվել էջմիածնի տնտեսությունը, վանական-միաբանական կյանքը: Դրան հակառակ՝ Աղվանից կաթողիկոսությունը XVI դարի երկրորդ կեսից աթոռակալական պայքարի թատերաբեմ էր դարձել և գտնվում էր խոր ճգնաժամի մեջ, որից օգտվեց էջմիածինը:

Թեմերի և դրանցից ստացվող եկեղեցական հասույթների համար պայքարը մեծ թափ ստացավ XVII դարից և ընդհատումներով շարունակվեց մինչև Աղվանից կաթողիկոսության վերացումը: Երկու կաթողիկոսությունների միջև պայքարը ծավալվում էր հարուստ թեմերի՝ Շիրվանի, Աստրախանի, Հաղպատի և Գանձակի համար:

§ 1 Շիրվանի թեմ

XVII դարը Աղվանից կաթողիկոսությունը դիմավորում է ներքին խոր ճգնաժամի մեջ: Օգտվելով այդ խառնակ վիճակից՝ էջմիածնի կաթողիկոսությանը հաջողվում է 1634 թ. շահական հրովարտակով ձեռք բերել Շիրվանի թեմը: Շահ Սեֆիի այս հրովարտակի բնագիրը չի պահպանվել, և մենք դրա մասին տեղեկանում ենք Աբբաս Բ-ի (1642-1666) հրովարտակից, որտեղ մեջ է բերվում իր նախորդի՝ շահ Սեֆիի մեզ հետաքրքրող հրովարտակի տեքստը[35]: Հրովարտակում ասվում է, որ շահ Սեֆին Հիջրայի 1043 թ. զուլ-հիջջա ամսին (1634 թ. մայիսի 27-հունիսի 26), Շիրվանի հայերի խնդրանքին անսալով, հրովարտակ է հրապարակել, ուր հրամայում է, որ այսուհետև «ոչ մի արարած և հատկապես Գանձասարի կաթողիկոսը ապօրինի կերպով հիշյալ (Շիրվանի-Լ. Մ.) հայերի գործին չմիջամտի... Թողնեն, որ նախկին կարգով Ուչքիլիսայի (էջմիածնի-Լ. Մ.) մարդիկ նրանց կաթողիկոսը լինեն»[36]:

Հրովարտակում ասվում է, որ շահին դիմել է ոչ թե էջմիածնի կաթողիկոսը, այլ Շիրվանի հայ համայնքը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ շիրվանաբնակ հայերը աթոռակալական պայքարի պատճառով երես էին թեքել Արցախում գտնվող իրենց հոգևոր կենտրոնից, որն ի վիճակի չէր կարգավորել սեփական թեմերի

[35] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Բ, Երևան, 1959, վավ. 42, էջ 147-148:
[36] Նույն տեղում:

կառավարումը: Հնարավոր է նաև, որ Աղվանից հակաթոռ կաթողիկոսներից յուրաքանչյուրն իր նվիրակի միջոցով եկեղեցական հասույթներ էր պահանջում Շիրվանի թեմից: Շիրվանի հայերը, ցանկանալով իրենց թեմում կանխել ներեկեղեցական պայքարը, դիմեցին շահին՝ խնդրելով իրենց թեմը էջմիածնին պատկանող ճանաչել:

Շահ Սեֆիի այս հրովարտակի հրապարակումից հետո էլ Աղվանից կաթողիկոսությունը, հավանաբար հենվելով Շիրվանի հայ բնակչության հակաէջմիածնական թևի վրա, չի հրաժարվել Շիրվանի թեմի նկատմամբ իր վաղեմի իրավունքներից: Դրա ապացույցն է Աբբաս Բ-ի հրովարտակը՝ թվագրված Հիջրայի 1060 թ. ռաբի ալ ահիրա ամսով (1650 թ. ապրիլի 3-մայիսի 2): Այս հրովարտակից պարզվում է, որ Շիրվանի հայերը դիմել են Աբբաս Բ-ին և ներկայացնելով Սեֆի շահի հրովարտակը՝ խնդրել են իրենց թեմը էջմիածնապատկան ճանաչել: Շահը վերահաստատել է իր հոր հրովարտակը[37]:

Էջմիածնին այս անգամ էլ չի հաջողվում երկար ժամանակ տնօրինել Շիրվանի թեմը: Կաթողիկոսական աթոռին 1653 թ. Գրիգոր Հասան-Ջալալյանին փոխարինած եռանդուն ու գործունյա Պետրոս Խանձթեցուն հաջողվում է Ղարաբաղի բեկլարբեկ և Գանձակի խան Մուրթուզա-Ղուլիից ստանալ հրովարտակ՝ թվագրված Հիջրայի 1066 թ. ջումադի ալ-ավալ ամսին (1656 թ. փետրվարի 26-մարտի 27), ուր Ղարաբաղի, Գանձակի և Շիրվանի հայերին հրամայվում էր կաթողիկոս ճանաչել Պետրոս Խանձթեցուն[38]:

Պետրոսին Աղվանից կաթողիկոս ճանաչած Մուրթուզա-Ղուլի խանի այս հրովարտակը ուղղված էր ոչ միայն Ղարաբաղի, այլև Գանձակի և Շիրվանի հայերին: Սրանից հետևում է, որ տեղական իշխանությունը, հանձին Մուրթուզա-Ղուլի խանի, ճանաչում էր Աղվանից կաթողիկոսության հոգևոր իշխանությունը ոչ միայն Ղարաբաղում, այլև Գանձակում և Շիրվանում:

Պետրոս կաթողիկոսի հաջորդ քայլը պետք է լիներ այդ թեմերի նկատմամբ Աղվանից կաթողիկոսության հոգևոր իշխանության հաստատումը Իրանի կենտրոնական իշխանության՝ շահի կողմից:

Աբբաս Բ-ի կողմից Աղվանից կաթողիկոս հաստատվելուց շուրջ 8 ամիս անց 1664 թ. գարնանը, Պետրոս կաթողիկոսը մեկնում է Թեհրան, որտեղ այդ ժամանակ գտնվում էր շահը, և նրանից

[37] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Բ, Երևան, 1959, վավ. 42, էջ 147-148:
[38] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 47:

հրովարտակ ստանում, որով Ղարաբաղի հետ մեկտեղ Գանձակի և Շիրվանի թեմերը նույնպես տրվում էին Գանձասարին:

Հրովարտակում ասվում է, թե Գանձասարի կաթողիկոս Պետրոսը ներկայացել է բարձրագույն ատյան և խնդրագրով հայտնել, որ հնուց Ղարաբաղի, Գանձակի, Շիրվանի թեմերը Աղվանից կաթողիկոսությանն են պատկանել, բայց էջմիածնի կաթողիկոսը սուտ տեղեկություն է տվել և հրովարտակ ձեռք բերելով դրանք ենթարկել իրեն:

Պետրոս կաթողիկոսը խնդրագրի հետ ներկայացրել է Աղվանքի հայերի բազմակնիք համախոսականը, ըստ որի նրանք միայն իրեն են ենթարկվում: Արքունի դիվանապետն էլ շահին հայտնել է, որ Ադրբեջան երկրի մատյանը, ուր գրառված են այդ թեմերի վերաբերյալ հրամանները, մնացել է Սպահանում և Թեհրանում չէ:

«Եվ դուք, այս երկրների հայեր,- ասվում է հրովարտակում,- Պետրոս կաթողիկոսին ձեզ կաթողիկոս ճանաչեցեք, նրա օրինական խոսքը կատարեցեք և այլևս հրաման մի խնդրեք: Գրվեց Հիջրայի 1074 թ-ի ռամազան ամսին (1664 թ-ի մարտի 28-ապրիլի 27)»[39]:

Այս հրովարտակը ցույց է տալիս.

1. էջմիածինը «սուտ տեղեկության» հիման վրա է ձեռք բերել այս թեմերը:

2. Պետրոսը ներկայացրել է Աղվանքի հայերի բազմակնիք համախոսականը:

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Գանձակի, Շաքիի, Շիրվանի հայկական համայնքները նույնպես կողմ են եղել վերստին Գանձասարի կաթողիկոսական աթոռին ենթարկվելուն:

3. Այս հարցում կարևորը հրովարտակի այն հատվածն է, որտեղ ասվում է, թե «Ադրբեջան երկրի մատյանը», որում պետք է գրանցված լիներ նախկինում այս թեմերի պատկանելությունը Աղվանից կաթողիկոսության, Թեհրան չի բերվել, այլ մնացել է մայրաքաղաք Սպահանում: Հրովարտակում այս հատվածի առկայությունը թերևս նշանակում էր, որ հարցն ամբողջովին փակված չէ, և էջմիածինը կարող է բողոքարկել այս որոշումը:

Իսկապես, Գանձակի և Շիրվանի թեմերը Աղվանից կաթողիկոսությանը վերահանձնած Աբբաս Բ-ի մահից հետո Հակոբ Ջուղայեցին (1655-1680) բողոքել է նորընծա Սուլեյման շահին (1666-1694) և թեև ընդունել է, որ այդ թեմերը պատկանելիս են եղել Աղվանից կաթողիկոսությանը, սակայն դա պատճառաբանել է

[39] Կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 57:

նրանով, որ պարտքերը մարելու համար են (այն էլ ժամանակավոր) դրանք էջմիածնի կողմից տրվել Աղվանից կաթողիկոսությանը:

Շահը երկու կաթողիկոսներին կանչում է Սպահան: Այս անգամ ևս Պետրոսը կարողանում է ապացուցել այդ թեմերի պատկանելությունը Աղվանից կաթողիկոսությանը[40]:

Այնուհանդերձ Ամենայն Հայոց և Աղվանից կաթողիկոսությունների հարաբերությունները չեն խզվել. «Երկոքին կաթուղիկոսք ո՛չ քակտեցին զսէր ի միջոյ իւրեանց և ոչ բարձցին զնախնի սովորութիւն հպատակութեան Աղուանից ի սուրբ էջմիածնայ»[41]: Մակար Բարխուտարյանցը ևս գրում է, որ «Պետրոս կաթողիկոսը վերանորոգում է Աղուանից և Հայոց կաթողիկոսաց մեջ եղած նախնի հարաբերությունը սուրբ էջմիածնում ձեռնադրուելով և օծվելով»[42]:

Պետրոսը Աղվանից կաթողիկոս է դարձել անմիջապես Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսի մահից հետո 1653 թ.: Ըստ Սիմեոն Երևանցու՝ նույն 1653 թ. Պետրոսը Աղվանից կաթողիկոս է հաստատվել Ամենայն Հայոց Փիլիպոս կաթողիկոսի կողմից[43]: Սակայն Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից, ինչպես հաղորդում է Զաքարիա Ագուլեցին, Պետրոսի կաթողիկոսության հաստատումը տեղի է ունեցել Գանձասարի աթոռը նրա զբաղեցնելուց 19 տարի անց: «Թուին ՌՃԻԱ յուլիսի ԺԴ-ումն (1672 թ. հուլիսի 14) վարդավառ կիրակի օրն ի սուրբ էջմիածինն Հակոբ կաթուղիկոսն ժողով արար... Գանձասարու Պետրոս կաթուղիկոսին գաւազան իշխանութեան տվեց, քանզի կաթուղիկոսութիւն վարեր, ապայ օրենք չէր. այժմուս տվեց»[44]:

Ինչպես տեսնում ենք, Հակոբ Ջուղայեցին Պետրոսին ոչ թե օծել է կաթողիկոս, քանի որ Պետրոսը 1653 թ. Աղվանքի եպիսկոպոսների կողմից օծվել էր, այլ նրան միայն հայրապետական գավազան է շնորհել, որը նշանակում էր Ամենայն Հայոց կաթողիկոսության կողմից Պետրոսի կաթողիկոսության հաստատում:

Գավազանի շնորհումը էջմիածնի կաթողիկոսական աթոռի գերագահությունը ցուցադրող ակտ էր:

Հայրապետական գավազանի ընծայումից առաջ էլ հայոց երկու հայրապետների միջև սերտ շփումներ են եղել: Համաձայն Զաքարիա սարկավագ Քանաքեռցու՝ Հակոբ Ջուղայեցին իր հակառա-

[40] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 10բ-11ա:
[41] Նույն տեղում:
[42] Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Հատոր Բ, Թիֆլիս, 1907, էջ 66:
[43] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 79:
[44] Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 108:

կորդ Օնոփրիոս վարդապետին դատելու նպատակով կազմակերպված ժողովին հրավիրել էր նաև Աղվանից Պետրոս կաթողիկոսին[45]: Զաքարիա սարկավագը չի նշում, թե որ թվականին է տեղի ունեցել Օնոփրիոս վարդապետի դատը: Սակայն նշում է, որ Օնոփրիոսին դատող այս հոգևոր ժողովից հետո Նաջաֆ խանի փոխարեն Երևանի նոր խան է նշանակվում Ամիրգունա խանի որդին Աբբաս խանը[46]: Աբբաս-Ղուլի խան Ղաջարը Երևանի խան է եղել 1663-ից 1666 թվականներին[47]: Ուրեմն այս ժողովը, որին մասնակցել է նաև Պետրոս կաթողիկոսը, գումարվել է էջմիածնում 1662 կամ 1663 թվականին: Այս փաստից թերևս հետևում է, որ էջմիածինը ընդունում էր Պետրոս Խանձթեցու կաթողիկոսական իրավունքները Աղվանից կաթողիկոսական աթոռի նկատմամբ, բայց միայն 1672 թվականին է իրավաբանորեն ճանաչել դրանք, երբ Պետրոսը, Հակոբ Ջուղայեցու կողմից կաթողիկոսական գավազան ստանալով, ընդունել է էջմիածնի կաթողիկոսի գերագահությունը:

Շիրվանի թեմին տիրելու էջմիածնի փորձերը վերսկսվում են 1675 թ. Պետրոս Խանձթեցու մահից հետո: Դրան նպաստում է այն, որ Աղվանից կաթողիկոսությունում վերստին ծայր է առնում աթոռակալական պայքար Երեմիա Հասան-Ջալալյանի և Սիմեոն Խոտորաշենցու միջև: Պայքարն ընթանում է ոչ առանց էջմիածնի միջամտության: Հակոբ Ջուղայեցու միջնորդությամբ 1677 թ. Աղվանից կաթողիկոսության թեմերը բաժանվում են երկու հակամարտող հայրապետների միջև: Ղարաբաղի թեմերը տրվում են Երեմիա Հասան-Ջալալյանին, իսկ Գանձակի խանության ու Շիրվանի թեմերը՝ Սիմեոն Խոտորաշենցուն: Շիրվանի թեմի նկատմամբ էջմիածնի նկրտումները ավելի ցայտուն և առարկայական են դառնում: Հակոբ Ջուղայեցուն հաջորդած Եղիազար Այնթափցին (1681-1691), օգտագործելով Վարանդայի, Դիզակի և Խաչենի մելիքների՝ իրեն ուղղված դիմումը, որտեղ հայտնվում էր, թե միայն Երեմիա Հասան-Ջալալյանին են ճանաչում Աղվանից կաթողիկոս և պահանջ էր ներկայացվում բանադրել Սիմեոնին[48], էջմիածնին է ենթարկում Պետրոս Խանձթեցու ժամանակ Աղվանից կաթողիկոսությանը անցած Շիրվանի թեմը: Եղիազարի հրամանով էջմիածին

[45] Զաքարիա Սարկաւագ, Պատմութիւն, հ. երկրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 66-70:
[46] Նույն տեղում:
[47] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977, էջ 571:
[48] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 13ա:

եկած Սիմեոն Խոտորաշենցին պարտավորվում է «առանց վարելոյ զիշխանութիւն կաթուղիկոսուեան նստի հանդարտ ի վանս իւր»[49]:

Սակայն Շիրվանի թեմը Երեմիա Հասան-Ջալալյանին հանձնելու փոխարեն Եղիազար Այնթապցին այն ենթարկում է էջմիածնին[50]:

Սիմեոն Խոտորաշենցին չի կատարում էջմիածնում ստանձնած պարտավորությունը. 1690 թ. մարտի 15-ին Եղիազար կաթողիկոսը Շիրվանի հայերին ուղղված կոնդակում գրում է, որ Սիմեոնը երդմնազանց լինելով մեռոն է օրհնել, եպիսկոպոս ձեռնադրել և ստացել Շիրվանի թեմի եկեղեցական արդյունքները: Նույն կոնդակում նա մեղմում է իր վերաբերմունքը Սիմեոն Խոտորաշենցու նկատմամբ և նրան նույնպես կաթողիկոսի իրավունքներ վերապահում. «Երեմիայն և Սիմէօնն եթէ միաբան մնան ի Գանձասար, բարի է, եթէ ո՛չ, և ո՛չ մինն չէ կաթուղիկոս»[51]: Եղիազար կաթողիկոսի համար հասկանալի էր, որ Հասան-Ջալալյանները և նրանց կողմնակիցները թույլ չեն տա Սիմեոնին հաստատվել Գանձասարի վանքում: Եղիազարի այս պահանջը նպատակ էր հետապնդում ոչ թե վերջ տալ Աղվանից կաթողիկոսությունը ծվատող աթոռակալական պայքարին, այլ այդ պայքարի հետևանքով թուլացած և հեղինակազրկված Աղվանից կաթողիկոսությունից վերջնականապես անջատել և էջմիածնին ենթարկել Շիրվանի թեմը: Այս թեմի համար Գանձասարի և էջմիածնի միջև պայքարի նոր փուլ է սկսվում Եսայի Հասան-Ջալալյանի Աղվանից կաթողիկոս օծվելու հետ միաժամանակ: Երեմիա կաթողիկոսի մահից հետո Եսայի Հասան-Ջալալյանը մեկնում է Պարսկաստան և 1113 թ. ջումադի ալ-ավալ ամսին (1701 թ. հոկտեմբերի 4-նոյեմբերի 3) Սուլթան-Հուսեին շահից հրովարտակ ստանում, ուր Ղարաբաղի, Գանձակի, Զարգբիլի և Շիրվանի հայ համայնքներին հրամայվում էր իրենց կաթողիկոս ճանաչել Եսայիին[52]:

Այս հրովարտակից երևում է, որ Սուլթան-Հուսեին շահը ճանաչում է Շիրվանի թեմի պատկանելն Աղվանից կաթողիկոսությանը, և էջմիածինը ստիպված ընդունում է վիճահարույց թեմերի պատկանելիությունը Աղվանից կաթողիկոսությանը:

Սիմեոն Երևանցին գրում է, որ 1703 թ. էջմիածնում Նահապետ Եդեսացին (1691-1705) Եսայիին Աղվանից կաթողիկոս հաստատելու հետ մեկտեղ կոնդակ է գրում Աղվանից կաթողիկոսության

[49] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 13ա:
[50] Նույն տեղում:
[51] Նույն տեղում, էջ 13ա, բ:
[52] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 141:

բոլոր թեմերին, այդ թվում նաև Շիրվան, պատվիրելով իրենց կաթողիկոս ճանաչել և հնազանդվել Եսայիին[53]:

Սակայն մինչև 1703 թ. էջմիածինը նորից ապարդյուն փորձ է կատարել Աղվանից կաթողիկոսությունից անջատել Շիրվանի հարուստ թեմը:

1703 թ. օգոստոսի 7-ի համախոսականով շաքեցիներն ու շամախեցիները հայտարարում են, որ կաթողիկոս են ընդունում Եսայիին և հրաժարվում են ենթարկվել էջմիածնին[54]: Պետք է ենթադրել, որ այս թեմերը իրեն ենթարկել չկարողանալուց հետո է Նահապետ Եղեսացին Եսայիին Աղվանից կաթողիկոս ձեռնադրել:

Նահապետ Եղեսացուն հաջորդած Ալեքսանդր Ջուղայեցու (1707-1714) հետ Եսայի կաթողիկոսին հաջողվում է սերտ հարաբերություններ հաստատել: Այդ նպատակով Եսային էջմիածնում չորս հանդիպում է ունենում Ալեքսանդր կաթողիկոսի հետ և հասնում այն բանին, որ 1708 թ. հունիսի 24-ի կոնդակով Ալեքսանդր Ջուղայեցին Շիրվանի թեմը հանձնում է Աղվանից կաթողիկոսությանը[55]:

Շիրվանցիները, ինչ-ինչ պատճառներով վերստին հրաժարվելով ենթարկվել Եսայիին, դիմում են Սուլթան-Հուսեին շահին և խնդրում հաստատել իրենց պատկանելությունը էջմիածնին: Շահը 1712 թ. հրովարտակով բավարարում է այդ դիմումը[56]:

Երևանի Մատենադարանի 6714 ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Եսայի կաթողիկոսը 1713-ի օգոստոսին գտնվել է Սպահանում[57]: Սպահան գնալու պատճառներից մեկը հավանաբար նաև Շիրվանի թեմը Աղվանից կաթողիկոսությանը վերադարձնելու խնդիրն էր:

Էջմիածինը Շիրվանի թեմը որպես լծակ էր օգտագործում Աղվանից կաթողիկոսության գործերին ներազդելու, նրա կաթողիկոսներին հնազանդ պահելու նպատակով: Այսպես, երբ 1714 թ. վախճանված Ալեքսանդր Ջուղայեցուն հաջորդում է Աստվածատուր Համադանցին (1715-1725), Եսայի կաթողիկոսը չի ներկայանում էջմիածին: Աստվածատուր կաթողիկոսը «բարկացեալ ի չգալն նորայ, վերստին տէրունի առնէ զՇամախի, զՇրուան, զՇաքի և զշրջակայսն նոցա ... և ինքն առաքէ առ նոսա նուիրակ և առաջնորդ հանդերձ սրբով Մեռոնավ»[58]:

[53] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 81:
[54] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ 2բ, վավ. 143:
[55] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 19ա; Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 83:
[56] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 83:
[57] Մատենադարան, ձեռ.N 6714, էջ 33բ:
[58] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 83:

Ամենայն Հայոց կաթողիկոսության հետ հարաբերությունները կարգավորելու և Շիրվանի թեմը վերադարձնելու նպատակով 1719թ. Եսայի կաթողիկոսը մեկնեց էջմիածին և տեսակցելով Աստվածատուր Համադանցուն ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի գերագահությունը: Աստվածատուր Համադանցին հետ վերադարձրեց Շիրվանը[59]: Եսային ստիպված էր երկու տարի անց 1721 թ. գարնանը, մեկնել էջմիածին և Աստվածատուր կաթողիկոսից նորից կոնդակ խնդրել, քանի որ շիրվանցիները հրաժարվել էին ենթարկվել Աղվանից կաթողիկոսությանը[60]: Աստվածատուր Համադանցին Շամախու, Շաքիի, Ղուբայի հայ համայնքներին ուղղված կոնդակում գրում էր, թե քանի որ Եսայի կաթողիկոսը հնազանդություն է հայտնել, այդ պատճառով «վերանորոգեցաք զվաղեմի սէր մեր և ձեզ վերստին շնորհեցաք եղբոր մերոյ Եսայի կաթուղիկոսիդ»[61]:

Աստվածատուր Համադանցուն հաջորդած Ամենայն Հայոց կաթողիկոսներն այլևս չդիմեցին Շիրվանն ուղղակի էջմիածնին ենթարկելու քաղաքականությանը գերադասելով Աղվանից կաթողիկոսների վրա ներազդելու և իրենց ազդեցության տակ պահելու համար օգտագործել Շիրվանում առկա էջմիածնամետ հոգևոր և աշխարհիկ գործիչներին:

§ 2 Աստրախանի թեմ

Հայերն Աստրախանում հաստատվել են XVI դարի երկրորդ կեսին: Նրանք հիմնականում առևտրականներ և արհեստավորներ էին: Հայերն առաջին օտարերկրացիներն էին Աստրախանում, որ դեռևս 1625 թ. ունեին հատուկ առևտրական հրապարակ, առևտրական իջևանատուն և գերեզմանատուն: 1640 թ. կառուցվում է առաջին հայկական եկեղեցին[62]:

1667 թ. կնքված առևտրական համաձայնագիրը Նոր Ջուղայի հայ վաճառականների և ցարական արքունիքի միջև զարկ տվեց տնտեսական համագործակցությանը, որ զգալի նշանակություն ունեցավ Աստրախանի հայկական գաղթօջախի ստվարացման գործում: 1672 թ. ռուսական արքունիքին ուղղված իր դիմումում Սուլեյման շահի դեսպան և հայ առևտրական ընկերության ներկա-

[59] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 84:
[60] Նույն տեղում:
[61] Նույն տեղում:
[62] Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 405-406:

յացուցիչ Գրիգոր Լուսիկովը խնդրում է թույլ տալ Աստրախանում հայկական նոր եկեղեցի կառուցել: Նա խնդրում է նաև, որ ցարը թույլատրի հայերին իրենց հոգևորականների հետ վերաբնակվել Աստրախանում և իրավունք տա նոր հողամասեր գնելու[63]:

Աստրախանում հայերի հաստատման գործում էական դեր էր խաղում ռուսական կառավարության հովանավորչական քաղաքականությունը: Հայ վաճառականների և արհեստավորների բնակեցումը Աստրախանում ձեռնտու էր Ռուսաստանին:

Աստրախանի հայկական գաղութում զգալի թիվ էին կազմում Գանձակից, Շաքիից և Շամախուց Ռուսաստան տեղափոխված առևտրականներն ու արհեստավորները: Այդ փաստը հանդիսանում էր մեկն այն պատճառներից, որ Աղվանից կաթողիկոսները ձգտում էին իրենց գավազանի տակ առնել Աստրախանի հայկական գաղութը: Այդ առումով նշանակալից քայլ էր 1716 թ-ին Եսայի կաթողիկոսի կողմից Մինաս Տիգրանյանին արքեպիսկոպոս ձեռնադրելը և Ռուսաստանի հայերի առաջնորդ հաստատելը[64]: Մինչ Ռուսաստանում հոգևոր առաջնորդ նշանակելը Աղվանից կաթողիկոսությունն իր տեսադաշտում է պահել հայկական գաղութները և կապված է եղել դրանց հետ: Այդ մասին է վկայում Եսայի կաթողիկոսի անդրանիկ նամակը՝ ուղղված Ռուսաստանում հաստատված հայերին[65]: Նամակից տեղեկանում ենք, որ դեռ Սիմեոն Խոտորաշենցին է նամակագրական կապ ունեցել Ռուսաստանի հետ: Այդ նամակի վերջում Եսային պատվիրում է. «Պարտիք առաւեալ քան զկար ձեր հնազանդել առաջնորդաց ձերոյ և սուրբ Աթոռոյն Գանձասարայ»[66]:

Պետրոս Մեծին ուղղված նամակում Եսայի կաթողիկոսը շեշտում էր, որ Լուսավորչի օրերից ի վեր հաստատված օրենքով «Ամենայն կողմանս Հիւսիսոյ, այսինքն ·յայսկոյս և յայնկոյս Կասբիական ծովուն որքան ազգս հայոց, որ լինին ընդ իշխանութեամբ քրիստոսասեր և մեծազոր թագաւորիդ» ենթակա են

[63] Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 406-407:

[64] Армяно – русские отношения в первой четверти XVIII века, т. I, ч. I, Ереван, 1964, док. 156, с. 97 – 74; Ա. Հովհաննիսյան; Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջմիածին, 1921, էջ XI:

[65] Армяно – русские отношения в первой четверти XVIII века, т. I, ч. I, док. 96.

[66] Նույն տեղում:

Գանձասարի կաթողիկոսության իրավասությանը և պարտական «նիւթ և նուէրք» հատկացնել այդ կաթողիկոսությանը[67]:

1718 թ. սեպտեմբերի 25-ին գրված նամակում Եսայի կաթողիկոսը Պետրոս Մեծին խնդրում էր իր կողմից արքեպիսկոպոս ձեռնադրված Մինաս Տիգրանյանին միայն ճանաչել Ռուսաստանում հաստատված հայերի հոգևոր առաջնորդ, «զի մի ոք այլասիրտ և այլախորհուրդ մարդ կամ սևագլուխ մտցէ երկիրդ այդ»[68]: Պետրոս Մեծին ուղղված մեկ այլ նամակում գրված 1721 թ. ապրիլի մեկին, խնդրում է հատուկ հրովարտակով արգելել ազգությամբ հայ «չարք և նախանձաւոր» անձանց գործունեությունը Մինաս Տիգրանյանի դեմ[69]: Թերևս այս դիմումը կապված էր Մինաս արքեպիսկոպոսին լրտեսելու համար Ռուսաստան եկած հայ եպիսկոպոսի հետ: Մինաս արքեպիսկոպոսը ռուսական իշխանություններից խնդրում էր նրան արգելափակել վանքում[70]:

Մինաս արքեպիսկոպոսին ուղղված նամակներում Եսայի կաթողիկոսը զգուշացնում էր խիստ գաղտնի պահել իրենց հարաբերությունները և առանձնապես հորդորում էր զգուշանալ Շամախիում հաստատված էջմիածնեցիներից, որոնք չպետք է տեղեկանան Ռուսաստանի հետ իր կապի մասին. «աստուած մի արասցէ, թե որ այս թղթոց մեկն նոցա ձեռն անկանի»[71]:

Եսայի կաթողիկոսի մահվանից և Ղարաբաղի սղնախների պարտությունից հետո Ռուսաստանի հայ համայնքները հրաժարվել են Մինաս արքեպիսկոպոսին իրենց հոգևոր առաջնորդ ճանաչել: 1736 թ. մարտին Մինաս արքեպիսկոպոսը, ռուսական իշխանություններին հայտնելով, որ Աստրախանի հայերը, հրաժարվելով իրենց հոգևոր առաջնորդ ճանաչել իրեն, վերածվել են «անհովիվ հոտի», խնդրում էր կայսերական հրովարտակով վերահաստատել իրեն Ռուսաստանի հայերի առաջնորդ, հրամայել հայկական համայնքներին հնազանդվել և Աստրախան մեկնելու համար իրեն զինված պահակախումբ հատկացնել[72]:

[67] Г. Я. Я Эзов и Сношения Я Петра Я Великого с Я армянским Я народом Я СПб и 1898 Я и. Նույն տեղում, док. Я 86:

[68] Армяно – русские отношения в первой четверти XVIII века, т. I, ч. I, док. Я 156, с. 373-374:

[69] Նույն տեղում, док. Я 161, с. 381-382:

[70] Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. III, Գիրք II, Երևան, 1973, էջ 115:

[71] Армяно – русские отношения в первой четверти XVIII века, т. I, ч. I, док. 155 и 16т.

[72] Նույն տեղում, գլ. 380, § 19, էջ 329:

Բայց աստրախանաբնակ հայերը «անհովիվ» չէին: 1736 թ. ապրիլին՝ այսինքն, Մինաս արքեպիսկոպոսի ներկայացրած դիմումը գրելուց մեկ ամիս հետո, արքեպիսկոպոս Ստեփանոս Անանեը Աստրախանի ուղղափառ եկեղեցու եպիսկոպոս Իլարիոնից հայկական եկեղեցի կառուցելու թույլտվություն է ստանում[73]: Նույն վավերագրից տեղեկանում ենք, որ վերոհիշյալ Ստեփանոս արքեպիսկոպոսը, Վախթանգ Զ-ի որդի արքայազն Բաքարի հրահանգով Ղարաբաղի սղնախներում ռուսամետ քարոզչություն է վարել: Հետագայում հալածանքներից խուսափելու համար տեղափոխվել է Աստրախան:

Մատենադարանի 6241 ձեռագրում առկա է Հարավային Կովկասում Ստեփանոս արքեպիսկոպոսի գործունեությունը լուսաբանող Ղազար Ջահկեցի կաթողիկոսի անթվագիր մի նամակ՝ ուղղված վրաց թագավոր Ալեքսանդրին*: Նամակում Ղազար Ջահկեցին հայտնում է, որ չի կարող կատարել վրաց թագավորի խնդրանքը և բանադրանքից արձակել Ստեփանոսին, քանի որ վերջինս եպիսկոպոս է ձեռնադրվել այլ կաթողիկոսի կողմից: Թող այլևս վրաց թագավորը նրա համար չբարեխոսի, քանի որ մինչև մեղայականով Ստեփանոսը չներկայանա էջմիածին, բանադրանքից չի արձակվի[74]: Այս նամակից հետևում է, որ Ստեփանոսը էջմիածնի կաթողիկոսության վարդապետներից էր: Նամակում չի նշվում, թե ո՞ր կաթողիկոսի կողմից է նա եպիսկոպոս ձեռնադրվել: Սակայն վերը նշվեց, որ Ստեփանոսը մասնակցել է Ղարաբաղի սղնախների ազատագրական պայքարին, և այդ փաստից կարելի է եզրակացնել, որ նա ձեռնադրվել է Աղվանից կաթողիկոսությունում:

Պարզ է դառնում, որ 1728 թ. Եսայի Հասան-Ջալալյանի մահից հետո Աղվանից կաթողիկոսությունը իր գավազանի տակ միավորած Ներսես կաթողիկոսը, Ստեփանոսին Աստրախանի թեմի առաջնորդ հաստատելով, փաստորեն հեռացրել էր Եսայի Հասան-Ջալալյանի կողմից հաստատված Մինաս Տիգրանյանին: Վերջինիս կողմից ռուսական իշխանություններից Աստրախան մեկնելու համար զինված պահակախումբ խնդրելը նպատակ էր հետապնդում այդ պահակախմբի միջոցով հաշվեհարդար տեսնել Ստեփանոսի և նրա աջակիցների հետ:

[73] Армяно – русские отношения в XVIII в. и гомя II я Ереван я 1978 и с. 109-110:

* Ալեքսանդր Բ (Գ)-Քարթլիի թագավոր (1736-1744), Իմերեթի Դավիթ Բ (Իմամղուլի խան) թագավորի որդին: Տես Н. Бердзенишвили, И. Джавахишвили, С. Джанашиа, История Грузии, часть I, Генеологическая таблица основнои ветви грузинского царского рода Багратидов, Тбилиси, 1950, с. 153-154.

[74] Մատենադարան, ձեռ. N 8241, էջ 13բ-14ա:

Այս պայքարից փորձեց օգտվել Ղազար Ջահկեցի կաթողիկոսը, որն Աստրախանի թեմը էջմիածնին ենթարկելու նպատակով նամակով դիմում է ռուս ուղղափառ եկեղեցու արքեպիսկոպոս Իլարիոնին: Նա խնդրում է օժանդակություն ցուցաբերել իր կողմից Աստրախան ուղարկված նվիրակ Ներսես եպիսկոպոսին, որն իր հրամանի համաձայն պետք է ստանձնի Աստրախանի հայերի հոգևոր առաջնորդությունը, իսկ Աստրախանում գտնվող այն հայ հոգևորականներին, որոնք չունեն էջմիածնից տրված թուղթ կամ հրաման, արտաքսել քաղաքից՝ «քանզի այնպիսիք ապստամբեալ ի մենջ լինիցին և գայթակղեցուցիչ ժողովրդոյ»[75]: Ղազար Ջահկեցուն չի հաջողվում այս անգամ էջմիածնին ենթարկել Աստրախանի թեմը և միայն 1742 թ. Ելիզավետա Պետրովնա կայսրուհու հրամանով հայկական եկեղեցին քանդելուց և առաջնորդարանը փակելուց հետո Ստեփանոս արքեպիսկոպոսը թողեց Աստրախանը և հաստատվեց Մոսկվայում[76]: Հաջորդ տարի գանձանակադրամ հավաքելու նպատակով էջմիածնից Աստրախան է գալիս Բարսեղ եպիսկոպաս Փառակեցին, որ գումարը հավաքելուց հետո հետ չի վերադառնում: 1749 թ. մայիսին մի խումբ մոսկվաբնակ և աստրախանաբնակ հայեր դիմում են Ելիզավետա Պետրովնային և խնդրում վտարել Բարսեղ վարդապետին ու Աստրախանի հոգևոր առաջնորդ վերահաստատել Մոսկվայում բնակվող Ստեփանոս արքեպիսկոպոսին[77]: Խնդրագիրը բավարարվեց. Բարսեղը վտարվեց, և Ստեփանոսը վերահաստատվեց Աստրախանի հայերի հոգևոր առաջնորդ[78]:

Հավանաբար այդ ժամանակ է Ներսես կաթողիկոսը նամակով տեղեկացրել Աղվանից կաթողիկոսության թշվառ վիճակի մասին, խնդրել Ղազար Ջահկեցուն՝ Աղվանից կաթողիկոսությանը հանձնել Աստրախանի թեմը[79]: Ղազար Ջահկեցին մերժում է Ներսեսին[80] և 1750 թ. հոկտեմբերին Աստրախան է ուղարկում նվիրակ Իգնատիոս աբեղային, որն իր հետ տանում է նրա կոնդակը՝ ուղղված Աստրախանի հայերին: Ղազարը զգուշացնում էր, որ Ներսես կաթողիկոսը ցանկանում է իրեն ենթարկել Աստրախանի թեմը և «զձեզ սիրելի

[75] Մատենադարան, ձեռ. N 6241, էջ 11բ, անթվական:

[76] Армяно – русские отношения в XVIII в. и г. я III и д. ок. 114 и с. я 160: я

[77] Армяно – русские отношения в XVIII в. и г. я III и д. ок. 114 и с. я 211-212:

[78] Նույն տեղում, վավ. 165, էջ 216-217:

[79] Մատենադարան, ձեռ. N 6241, էջ 58բ, անթվական:

[80] Նույն տեղում:

ժողովուրդոյդ իմ տիրապետիլ»: Պատվիրում էր զգույշ լինել և չընկնել «ի գուբ խորդուբեան և անհնազանդութեան»[81]:

Ստեփանոս արքեպիսկոպոսի առաջնորդության ամբողջ ընթացքում էջմիածնի դիրքերը Աստրախանում շատ խախուտ էին: Ճիշտ է, էջմիածնից նվիրակներ ուղարկվում էին Աստրախան, սակայն պատարագների ժամանակ հիշատակվում էր Աղվանից կաթողիկոսի անունը, Աղվանից կաթողիկոսության նվիրակների բերած մեռոնն էին Աստրախանում ընդունում, և նրանց հավաքած գումարները հատկացվում էին Աղվանից կաթողիկոսությանը[82]:

Աստրախանի թեմի համար պայքարը կաթողիկոսական երկու աթոռների միջև առանձնապես սրվեց Ներսես կաթողիկոսի մահից քիչ անց՝ 1763 թ. ապրիլին,Սիմեոն Երևանցու (1763-1780) Ամենայն Հայոց կաթողիկոս օծվելուց հետո: Մինչ էջմիածնում Սիմեոնի օծումը, Ներսեսին հաջորդած Իսրայելը նվիրակ էր ուղարկել Աստրախան: Այստեղ Ներսես կաթողիկոսի մահից հետո ստեղծված վիճակը չփոխվեց: Իսրայելի մեռոնաբեր նվիրակ Խաչատուրը պատիվներով ընդունվեց, և Աստրախանի հայկական եկեղեցում պատարագի ժամանակ սկսեցին հիշատակվել նորընծա Իսրայել կաթողիկոսի և նրա նվիրակ Խաչատուրի անունները[83]:

Դրան ի պատասխան՝ Սիմեոնը Աստրախան ուղարկեց նվիրակ Հովհաննես վարդապետին և Աստրախանի հայերին կոնդակով հրամայեց հնազանդվել էջմիածնին, նրա նվիրակին հանձնել հոգևոր հասույթները: Սիմեոնը իր նվիրակ Հովհաննեսին հրահանգեց Աստրախան ժամանելուն պես արգելել տեղի հայ համայնքին հոգևոր տուրք տալ Իսրայելի նվիրակին[84]: Սակայն Աստրախանում մերժեցին ընդունել էջմիածնի նվիրակ Հովհաննես վարդապետին:

1764 թ. փետրվարի 23-ին Սիմեոն Երևանցին ուղերձ հղեց Աստրախան, ուր նախատում էր հայ համայնքին՝ իր նախկին նամակներում տեղ գտած պատվերները և հորդորները քամահրելու, Իսրայելին իրենց կաթողիկոս ճանաչելու, նրա անունը պատարագի ժամանակ հիշատակելու համար: Սիմեոնն իր վրդովմունքն էր արտահայտում էջմիածնի նվիրակ Հովհաննես վարդապետի անպատիվ վիճակի համար, որը շուրջ մեկ տարի գտնվում է Աստրախանում, բայց «բնաւ ոչ առ դա գնացող գոյ և ոչ հարցանող,

[81] Մատենադարան, Արխիվ Ալ. Երիցյանի, թղթ 155, վավ. 3:
[82] Դիւան Հայոց պատմութեան, կազմեց Գյուտ Աղանյանց (այսուհետև՝ Դիվան), Գիրք Գ, Թիֆլիս 1893, էջ 397; Մատենադարան, ձեռ. N 2931, էջ 111բ:
[83] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ.241, վավ. 205ա, էջ 27բ-30ա:
[84] Մատենադարան, ձեռ. N 2931, էջ 93բ:

թէ ո՞վ ես և ուստի՞ գաս»[85]:

Նույն թվականի նոյեմբերի 16-ի նամակից պարզվում է, որ Սիմեոն Երևանցին ստիպված էր մեղմել իր պահանջները: Այժմ նա Աստրախանի առաջնորդ Ստեփանոսից պահանջում էր միայն Իսրայելի ներկայացուցիչ Խաչատուրից բռնագրավել նրան հանձնած գումարները և պահել այնքան, մինչև ինքը, վերացնելով Աղվանից կաթողիկոսական աթոռի շուրջ ծագած երկպառակությունը, նոր կաթողիկոս հաստատի[86]:

Աստրախանը էջմիածնին ենթարկելու Սիմեոն Երևանցու հետևողական ջանքերից անհանգստացած Իսրայելը հրահրեց իրեն հովանավորող Գանձակի Շահվերդի խանի միջամտությունը, որպեսզի ստիպի Սիմեոն Երևանցուն հրաժարվել Աստրախանը էջմիածնին ենթարկելուց:

1765 թ. օգոստոսին Երևանի Հուսեին Ալի խանը դիմեց Սիմեոն Երևանցուն՝ հայտնելով, որ Գանձակի Շահվերդի խանը խնդրել է իրեն միջնորդել Ամենայն Հայոց կաթողիկոսի առջև, որպեսզի նա ճանաչի Իսրայելի իրավունքները Աստրախանի թեմի նկատմամբ: Գանձակի խանը Երևանի խանին ուղղված նամակում շեշտել էր, որ Աստրախանի թեմը իրավամբ պատկանում է Իսրայելին, և Սիմեոն Երևանցու հրամանը ժողովրդին՝ չընդունել Իսրայելի նվիրակին, ապօրինի է:

Սիմեոն կաթողիկոսը, պատասխանելով Երևանի խանին, հայտնեց, որ Աստրախանի թեմը պատկանում է իրեն, և Աղվանից կաթողիկոսությունից կարող են միայն Ամենայն Հայոց կաթողիկոսի թույլտվությամբ ժողովարարներ ուղարկել այնտեղ:

Բայց քանի որ Աղվանից կաթողիկոսության աթոռի համար պայքար է գնում երկու հավակնորդների միջև, որոնց նկրտումները էջմիածինը անօրինական է համարում, ապա ինքը հրամայել է Աստրախանում գտնվող իր նվիրակին՝ արգելել տեղի հայ համայնքին դրամ տալ Իսրայելի ժողովարարներին[87]:

1765 թ. վերջին Աստրախանի առաջնորդ Ստեփանոսը պահանջում է Սիմեոն Երևանցուց՝ բանադրել և Աստրախանից հետ կանչել էջմիածնի նվիրակ Հովհաննեսին[88]: Սիմեոն կաթողիկոսը տեղի է տալիս և Հովհաննեսի փոխարեն. 1766 թ. հունվարին նոր նվիրակ է

[85] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ.241, վավ. 205ա, էջ 29բ:
[86] Մատենադարան, ձեռ. N 2912, էջ 100բ:
[87] Մատենադարան, ձեռ. N 2912, էջ 92բ:
[88] Նույն տեղում, էջ 137ա:

ուղարկում Աստրախան[89]:

Սիմեոն Երևանցին, տեսնելով, որ Աստրախանի թեմը էջմիածնին ենթարկելու բոլոր փորձերը ձախողվում են, հանդիպելով Ստեփանոս առաջնորդի և տեղի հայ համայնքի ղեկավարների դիմադրությանը, որոշեց ուղղակի դիմել Եկատերինա Բ կայսրուհուն: Նրա 1766 թ. օգոստոսի 1-ի կոնդակը Պետերբուրգ տանելու պարտականությունը դրվեց էջմիածնի միաբան Դավիթ վարդապետի վրա[90]: Աստրախան ժամանելուց հետո Դավիթ վարդապետին հաջողվեց քաղաքից արտաքսել Իսրայելի նվիրակին: Նրա պահանջով էջմիածնի նվիրակին սկսեցին հանձնել եկեղեցական տուրքերը[91]: Աստրախանից մեկնելով Պետերբուրգ Դավիթ վարդապետը բարեհաճ վերաբերմունքի արժանացավ Եկատերինա Բ-ի կողմից, որը 1768 թ. հուլիսի 30-ի հրովարտակով վերականգնեց էջմիածնի իրավունքները ռուսահայության նկատմամբ[92]:

Ստեփանոս առաջնորդը և նրա կողմնակիցները չէին համակերպվում Աստրախանի թեմը էջմիածնի իրավասությանը հանձնելուն, և Աստրախանից Պետերբուրգ Դավիթ վարդապետի մեկնելուց անմիջապես հետո նախկին հակասությունները էջմիածնի նվիրակի և Ստեփանոսի միջև ի հայտ եկան[93]: Միայն Ստեփանոսի մահից հետո Սիմեոն Երևանցուն հաջողվեց վերջնականապես էջմիածնին ենթարկել Աստրախանի թեմը: 1769 թ. հունիսին, դիմելով Աստրախանի հայերին, Սիմեոն կաթողիկոսը էջմիածնի և Աստրախանի հայ համայնքի միջև վեճը համարում էր ավարտված: Վախճանված Ստեփանոսի փոխարեն Սիմեոնը Աստրախանի հայ համայնքի առաջնորդ էր նշանակում Մինաս վարդապետին[94]:

Հետաքրքրության է արժանի այն, որ միայն Ստեփանոսի մահից հետո է Սիմեոնը նրան արձակում Ղազար Ջահկեցու բանադրանքից[95]: Փաստորեն Սիմեոն Երևանցին շուրջ վեց տարի նամակագրական անմիջական կապ է ունեցել բանադրանքի տակ գտնվող անձի հետ, բայց մեղադրել է բոլոր նրանց, ովքեր կապ են պահպանել իր կողմից բանադրված Իսրայելի հետ:

[89] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ.241, վավ. 205ա, էջ 20ա-21բ:
[90] Դիվան, Գիրք Գ.,Թիֆլիս, 1894, էջ ճԻԹ:
[91] Նույն տեղում, Գիրք Ը, Մաս II, Թիֆլիս, 1908, էջ 23-24:
[92] Նույն տեղում, Գիրք Գ, էջ ճԻԹ:
[93] Մատենադարան, ձեռ. N 2912, էջ 175բ-176բ; Կթղկ. դիվան, թղթ, 241, վավ. 205ա, էջ 103բ-107ա:
[94] Մատենադարան, ձեռ. N 2912, էջ 175բ-176բ; Կթղկ. դիվան, թղթ, 241, վավ. 205ա, էջ 190բ-191բ:
[95] Նույն տեղում:

§ 3 Հաղպատի թեմ

Հաղպատի վանքը հիմնադրվել է 976 թ. Աշոտ Գ Ողորմածի կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու նախաձեռնությամբ: XI դարի երկրորդ կեսից Հաղպատի վանքը դառնում է Տաշիր-Ձորագետի թագավորության թեմական կենտրոն: XII-XIV դարերում այն Զաքարյան Հայաստանի աչքի ընկնող հոգևոր կենտրոններից մեկն էր: Հաղպատի վանքի և նրա թեմի հետ ծագումով արցախցի հոգևոր գործիչների առնչությունները սկիզբ են առնում հենց Զաքարյանների օրոք: Որոշ ընդմիջումներով ամբողջ XIII դարի ընթացքում Հաղպատի վանքի առաջնորդությունը վարել են Վերին Խաչենի իշխանական տոհմից սերված երեք եպիսկոպոսներ՝ որոնք երեքն էլ հայտնի են Հովհաննես Խաչենցի անունով[96]:

Միքայել Սեբաստացուն շնորհված վերոհիշյալ հրովարտակով էջմիածինը ետ էր ստացել Աղվանից կաթողիկոսությանն անցած Կապանի, Գեղարքունիքի, Աղստևի և Լոռու թեմերը[97]: Ինչպես տեսնում ենք, այս հրովարտակում հիշատակվում է նաև Լոռին, որի թեմական կենտրոններ էին հանդիսանում Սանահինի և Հաղպատի վանքերը: Հրովարտակում նշված թեմերին Աղվանից կաթողիկոսությունը հավանաբար տիրացել էր կա՛մ մինչ Ամենայն Հայոց կաթողիկոսության 1441 թ. էջմիածին տեղափոխումը, կա՛մ դրանից հետո ծայր առած աթոռակալական պայքարի ընթացքում: Ինչպես գրում է Վարդան Օձնեցին, Աղվանից կաթողիկոսությանը Հովհաննես Ը-ի (1606-1634) աթոռակալության օրոք հաջողվում է նորից տիրանալ Հաղպատի թեմին:[98] Ուշ միջնադարում Հաղպատի թեմն ընդգրկում էր Արևելյան Վրաստանի, Ղազախի և Բորչալուի տարածքները ու ամենաընդարձակ թեմերից մեկն էր: Հայտնի չէ, թե կոնկրետ երբ է Հաղպատի թեմը նորից անցել էջմիածնի տիրապետության տակ: Կարելի է միայն ենթադրել, որ դա տեղի է ունեցել կա՛մ Հովհաննես Ը-ի աթոռակալության վերջին տարիներին, կա՛մ նրան հաջորդած Գրիգոր Հասան-Ջալալյանի կաթողիկոսության սկզբում, երբ Աղվանից կաթողիկոսությունը գտնվում էր խոր ճգնաժամի մեջ:

Սակայն Աղվանից կաթողիկոսությունը չհրաժարվեց Հաղպատի թեմի նկատմամբ հավակնությունից: Սիմեոն Երևանցուն հասցեագրված նամակում Գանձակի խանության տարածքում գտնվող Աղվանից կաթողիկոսության թեմերի առաջնորդ եպիսկոպոսները

[96] Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., էջ 255-264:
[97] Տես վերը, էջ 15
[98] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 9ա:

Աղվանից նվիրապետների կաթողիկոսանիստների թվում հիշատակում են նաև Հաղպատի վանքը[99]: Նամակի հեղինակ եպիսկոպոսները 1763 թ. կաթողիկոս օծված Իսրայելի կողմնակիցներն էին: Վերջինս Սիմեոն Երևանցու մահից առաջ 1780 թ. սկզբին հաստատվում է Հաղպատի վանքում և փորձում իր ձեռքը վերցնել Հաղպատի թեմի կառավարումը[100]:

Իսրայելը Հաղպատի թեմի նկատմամբ վերահսկողություն հաստատելով չսահմանափակվեց. նրա ծրագրերը շատ ավելի հեռուն էին գնում:

1780 թ. հուլիսի 26-ին Սիմեոն Երևանցին կնքեց իր մահկանացուն: Մեկ շաբաթ անց՝ օգոստոսի 2-ին, խախտելով Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության կանոնները, կաթողիկոս օծվեց Զմյուռնիայի առաջնորդ Ղուկաս Կարնեցին (1780-1799)[101]:

Այդպիսի շտապողականության և հակառակ հաստատված կանոնների ընտրության պատճառներից մեկը Իսրայել կաթողիկոսի գործունեությունն էր: Ականջալուր լինելով Սիմեոնի մահվանից դեռ երկու շաբաթ առաջ տարածված այն լուրերին, թե էջմիածնի միաբանությունը թաքցնում է կաթողիկոսի մահը, նա շտապել էր դիմել վրաց արքունիք և ծանրագին կաշառքներ առաջարկելով՝ ստացել Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռը զբաղեցնելու խոստում: Հերակլ Բ-ն միայն մեկ վերապահություն էր արել՝ հայտարարելով, թե պետք է սպասել, մինչև այդ լուրը հաստատվի[102]:

Ղուկաս Կարնեցին Սիմեոն Երևանցու մահվան և իր կաթողիկոս օծվելու վերաբերյալ 1780 թ. օգոստոսին Իսրայելին գրած նամակում իր օծման շտապողականության և Իսրայելին չտեղեկացնելու մասին ոչ հստակ պատճառաբանություններ է ներկայացնում. «...զի յոյժ շուտով եղել: Ժամանակի հարկն այդպես պահանջեաց: Բայց յետ օծման մերոյ, որ այսքան յետասցուք զայտ կողմն գրելի թուղթսն, ճանապարհաց փակ լինիլն է»[103]:

Ղուկաս Կարնեցու օծմանը Հերակլ Բ-ի հավանություն տալուց և Ղուկասին շնորհավորելուց հետո Իսրայելի հույսերը՝ տիրանալ Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, տապալվեցին: Նա ստիպված էր իր կողմից ևս շնորհավորել Ղուկասին և իր նվիրվածությունը հայտնել նրան: Վերջում Իսրայելը տեղեկացնում էր, թե գտնվում է

[99] Մատենադարան, ձեռ. N 2931, էջ 101ա, բ:
[100] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 152:
[101] Յիշատակարան, Սիմեօն կաթողիկոս, էջմիածին, 1875, էջ ԼԲ, ԼԶ:
[102] Մատենադարան, ձեռ. N 3738, էջ 6ա:
[103] Նույն տեղում, էջ 15ա, բ:

Հաղպատի վանքում և այնտեղ իր գտնվելու պատճառների և հանգամանքների մասին Ղուկասին կտեղեկացնի նամակաբեր Դանիել վարդապետը: 1780 թ. հոկտեմբերին գրած պատասխանում Ղուկասն իր տարակուսանքն էր հայտնում Հաղպատում Իսրայելի հաստատվելու կապակցությամբ, և քողարկված կշտամբանք էր արտահայտում՝ Իսրայելին հասկացնելով, թե իրեն հայտնի են Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռը ձեռք գցելու Իսրայելի անհաջող փորձերը[104]:

Ղուկաս Կարնեցին մտադիր չէր հանդուրժել էջմիածնի թեմ հանդիսացող Հաղպատում Աղվանից Իսրայել կաթողիկոսի հաստատվելը: Այդ մասին նույն հոկտեմբեր ամսին նա հայտնում էր Սանահինի վանքի առաջնորդ Աբրահամին[105]:

Ղուկաս Կարնեցին զգուշանում էր ուղղակի կերպով ընդհարվել Իսրայելի հետ՝ հավանաբար ենթադրելով, որ վերջինս օգտվում է վրաց արքունիքի օժանդակությունից: Թիֆլիսի առաջնորդ Հովհաննես վարդապետին Ղուկասը գրում էր, որ Իսրայելի դեմ առայժմ չի ցանկանում ուղղակիորեն հանդես գալ, քանի որ կաթողիկոսական աստիճանը նոր է ստանձնել և բազմաթիվ անհետաձգելի գործերով է զբաղված: Ղուկասը տվյալ պահին նպատակահարմար էր համարում միայն Հաղպատի թեմի ազգաբնակչության ավագներից Իսրայելի դեմ ուղղված թուղթ վերցնել՝ հարմար առիթ ներկայանալու դեպքում օգտագործելու նպատակով[106]:

Ի պատասխան Թիֆլիսի առաջնորդ Հովհաննեսի, Գալուստ և Կարապետ վարդապետների՝ Հերակլին և Գեորգի արքայորդուն դիմելու խնդրանքին, Ղուկաս Կարնեցին 1781 թ. ապրիլի 10-ին գրում էր. «Դուք ի միասին խոսեսջիք յաղագս այդր բանի ընդ արքայն և ընդ այլս, զմեզ իբրու այդմ անտեղեակ գոլ կարծեցուցանելով նոցա: Զի մեր փութով ի լույս անկանիլն լավ չէ, որոյ աղագաւ իսկ յայդր զգիր չգրեցաք և ոչ ունեք յայժմ»[107]: Ղուկաս Կարնեցու այս նամակները ցույց են տալիս, որ նա իրեն հաստատ չէր զգում էջմիածնի կաթողիկոսական գահին, քանի որ Կ. Պոլսի պատրիարք Զաքարիա Կաղզվանեցին (1773-1781) չէր ընդունել Ղուկասի օծման արարողությունը, իսկ սուլթան Մուստաֆա Գ-ն (1768-1789) հաստատման ֆերման չէր տվել: Եթե Ղուկաս Կար-

[104] Մատենադարան, ձեռ. N 3738, էջ 6ա:
[105] Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Գիրք I, հ. Ա, աշխատ. Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, Նամակ N 162, էջ 126:
[106] Նույն տեղում, էջ 133:
[107] Մատենադարան, ձեռ. N 3738, էջ 92ա-93բ:

նեցին զրկվեր Հերակլ Բ-ի լոյալ վերաբերկունքից, ապա կարող էր հեռացվել կաթողիկոսությունից:

Ղուկասի և Իսրայելի միջև եղած անվստահությունը գնալով խորանում էր, չնայած երկուսն էլ նամակներով վստահեցնում էին միմյանց փոխադարձ սիրո և նվիրվածության մեջ: Ղուկաս Կարնեցին արգելեց Իսրայելին էջմիածին այցելել, երբ վերջինս 1781 թ. օգոստոսի 16-ի նամակով հաջորդ ամսին նրա հետ տեսակցելու մտադրություն հայտնեց:

Ամենայն հավանականությամբ Ղուկաս Կարնեցին ենթադրում էր, որ գալով էջմիածին Իսրայելը կարող է կաթողիկոսական ընտրություններից դժգոհ էջմիածնի մի շարք միաբանների օգտագործել իր դեմ[108]:

Իսրայելն էջմիածին այցելելու թույլտվություն ստացավ միայն հաջորդ 1782 թ. հունիսին[109]: Այդ ժամանակ Ղուկաս Կարնեցու դիրքերն ամրապնդվել էին: 1781 թ. մայիսին Կ. Պոլսի պատրիարք Զաքարիան աքսորվեց Բուրսա, իսկ նորընտիր պատրիարք Հովհաննես Համադանցին դիմեց սուլթանին և նույն թվականի օգոստոսին ստացավ Ղուկաս Կարնեցու հաստատման ֆերմանը[110]:

1782թ. գարնանը Ղուկաս Կարնեցու համար բարենպաստ իրավիճակ ձևավորվեց և հնարավորություն առաջացավ հեռացնելու Իսրայելին Հաղպատից օգտագործելով Վրաստանում Ռուսաստանի գործերի հավատարմատար Յակոբ Ռայնեգսի ազդեցությունը Հերակլի վրա:

Մի քանի խոսք վերջինիս անձի մասին: Յակոբ Ռայնեգսը նույն ինքը Յակոբ Էիլիխը ծնվել է 1744 թ. Սաքսոնիայի Էյսելեր քաղաքում: Բժշկական պրակտիկա ձեռք բերելուց հետո ուղևորվել է Թուրքիա, այնտեղից էլ Հայաստան և Վրաստան: 1778 թ. էջմիածնում հանդիպում է ունեցել Սիմեոն Երևանցու հետ: Վրաստանում 3 տարի ծառայել է Հերակլ Բ-ին: Սակայն ինչ-որ բանից դժգոհելով վրաց արքայից, Ռայնեգսը որոշում է թողնել Վրաստանում իր ծառայությունը: 1781 թ. նամակով դիմում է Ղուկաս Կարնեցուն և հայտնելով հայադավանություն ընդունելու մասին խնդրում էջմիածնում բնակվելու թույլտվություն տալ: Վախենալով Ռայնեգսի էջմիածնում հաստատվելու դեպքում Հերակլի հետ իր հարաբերությունների վատթարացումից Ղուկասն արգելում է Ռայնեգսին

[108] Մատենադարան, ձեռ. N 4481, էջ 1ա; Դիվան, Գիրք Դ, էջ Լե:
[109] Մատենադարան, ձեռ. N 3738, էջ 338բ-339ա:
[110] Դիվան, Գիրք Դ, էջ ԽԱ:

բնակություն հաստատել էջմիածնում:[111] Ռայնեգսը մեկնում է Ռուսաստան և ներկայանում Գրիգորի Պոտյոմկինին:

1782 թ., որպես Ռուսաստանի լիազոր Անդրկովկասում, նա ժամանում է Թիֆլիս: Դեկտեմբերի վերջին գալիս է էջմիածին և Ղուկաս Կարնեցուն հանձնում է Պոտյոմկինի նամակը: Ռայնեգսը լինում է նաև Երևանի Հուսեյն-Ալի խանի մոտ՝ առևտրական կապեր հաստատելու պատրվակով, բայց փաստորեն հետախուզական տեղեկություններ հավաքելու համար: Հունվարի վերջին նա վերադառնում է Թիֆլիս:[112]

Հավանաբար Ղուկաս կաթողիկոսը Ռայնեգսին էջմիածնում խնդրել է՝ օգտագործելով իր՝ որպես Ռուսաստանի ներկայացուցչի ազդեցությունը վրաց արքունիքում, հասնել Իսրայելի վտարմանը Հաղպատից:

Ռայնեգսը հասավ նրան, որ Հերակլ Բ-ն 1783 թ. փետրվարին հրովարտակով արգելեց Իսրայելին էջմիածնի թեմական կենտրոն հանդիսացող Հաղպատում կաթողիկոս կոչվել և կաթողիկոսական կարմիր կնիք գործածել: Հրովարտակում Իսրայելին հրամայվում էր որպես Ամենայն Հայոց կաթողիկոսին ստորադաս հոգևորական՝ վարել Հաղպատի թեմի առաջնորդությունը[113]:

1783 թ. մարտի նամակով Ղուկաս կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց Հերակլ Բ-ին, ապա անդրադառնալով Դավիթ վարդապետին եպիսկոպոս ձեռնադրելու Գեորգի արքայորդու խնդրանքին՝ նշում է, որ ըստ Հայոց եկեղեցու կանոնադրության՝ եպիսկոպոսը պետք է թեմական առաջնորդ լինի: Ղուկասը առաջարկում էր Դավթին առաջադրել Հաղպատի թեմի առաջնորդ, որից հետո ինքը կարող է արդեն նրան եպիսկոպոս ձեռնադրել և նշանակել Հաղպատի թեմի առաջնորդ:

Անդրադառնալով Իսրայելի հետագա ճակատագրին՝ Ղուկաս Կարնեցին հետևյալ առաջարկությունն էր անում Հերակլ Բ-ին. «Իսկ զԻսրայէլ վերադիտօղն Հաղպատու, եթէ կամիցիս, դարձուսցես ի տեղի իւր (Գանձակ-Լ. Մ.), կամ յղեսցես ի Սուրբ Աթոռս, զի իսպառ վերասցի ի յօրհնեցելոյդ քաղաքէդ գժտութիւնն, և մի մնացէ յաւուրդ բարեպաշտութեան քոյին օրինակ անկարգութեան ապագայից»[114]:

[111] Մատենադարան, ձեռ. N 3738, էջ 99ա-100ա, А.Г.яИоаннисянинаРоссияяия армянскоеяосвободительноеядвижениеяв80 – . ягода. яXVIIIястолетияя (այսուհետև՝ РАОД)иЕреванив1947ис.я50 – 5т:
[112] Նույնի էջ. 55-56.
[113] Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 37բ-38ա:
[114] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 244, վավ. 279:

Գեորգի արքայորդուն ուղղված նամակում նույնը վերաշարադրելով Ղուկաս Կարնեցին ավելացնում էր, որ եթե Դավիթ վարդապետին Հաղպատի առաջնորդ հաստատելու իր առաջարկը չընդունվի, և վրաց արքունիքը ցանկանա վերջինիս միայն եպիսկոպոս տեսնել, «ապա եկեալ (Դավիթը-Լ. Մ.) յայդր Իսրեյէլին կամ քահանայից և այլոց ծառայելոց կորագլուխ շրջիցի, այն յոյժ խղճահարութիւն է մեզ և անարգութիւն առաքելական կարգին»:[115] Ղուկաս Կարնեցին, մի նամակով էլ Ռայնեգսին ծանոթացնելով Հերակլ Բ-ին և Գեորգի արքայորդուն գրած իր վերոհիշյալ նամակների բովանդակությանը, խնդրեց նրան իր կողմից ևս աջակցել, որպեսզի Իսրայելի փոխարեն վրաց արքունիքը Հաղպատի առաջնորդ հաստատի Դավթին:[116]

1783 թ. ապրիլին էջմիածին հասան Հերակլ Բ-ի և Ռեյնեգսի նամակները, որոնցով Ղուկաս Կարնեցուն հայտնում էին, որ Իսրայելը հեռացվել է Հաղպատից, ընդ որում եթե Հերակլը խնդրում էր Ղուկասին իր հայեցողությամբ Հաղպատի նոր առաջնորդ նշանակել, ապա Ռայնեգսը առաջարկում էր նշանակել Պետրոս վարդապետին[117]:

Գեորգի արքայորդուն ուղղված նամակում նույնը վերաշարադրելով Ղուկաս Կարնեցին ավելացնում էր, որ եթե Դավիթ վարդապետին Հաղպատի առաջնորդ հաստատելու իր առաջարկը չընդունվի, և վրաց արքունիքը ցանկանա վերջինիս միայն եպիսկոպոս տեսնել, «ապա եկեալ (Դավիթը-Լ. Մ.) յայդր Իսրեյէլին կամ քահանայից և այլոց ծառայելոց կորագլուխ շրջիցի, այն յոյժ խղճահարութիւն է մեզ և անարգութիւն առաքելական կարգին»:[118] Ղուկաս Կարնեցին, մի նամակով էլ Ռայնեգսին ծանոթացնելով Հերակլ Բ-ին և Գեորգի արքայորդուն գրած իր վերոհիշյալ նամակների բովանդակությանը, խնդրեց նրան իր կողմից ևս աջակցել, որպեսզի Իսրայելի փոխարեն վրաց արքունիքը Հաղպատի առաջնորդ հաստատի Դավթին:[119]

Հերակլ Բ-ի հրամանով Հաղպատի թեմը թողնելուց հետո Իսրայել կաթողիկոսը 1783 թ. ապրիլի 27-ին Թիֆլիսից նամակ գրեց Ղուկաս Կարնեցուն[120], որով տեղեկացնում էր, որ վերադառնում է Գանձակ և խնդրում էր իր նկատմամբ բարի վերաբերմունքը չփոխել:

Մայիսի 18-ին Ղուկաս Կարնեցին պատասխան նամակ ուղարկեց Իսրայել կաթողիկոսին, որտեղ հայտնում էր, որ իր վերաբերմունքը նրա նկատմամբ չի փոխել. «Կամիմք և բաղձամք ոչ բնաւ հեռանալ ի սիրոյ: Հաստատուն և անխախտելի ունիմք զնոյն սեր եղբայրական»: Անդրադառնալով Հաղպատից Իսրայելի հեռացվելուն Ղուկասը գրում էր, որ չնայած Հաղպատում կաթողիկոսական անվամբ նրա հաստատվելը «խորթ իմն երևիր նկատչաց»: Սակայն ինքն այդ խնդրի շուրջ չի դիմել ո՛չ Իսրայելին, ո՛չ էլ մեկ ուրիշի: Հերակլ Բ-ն առանց իր միջամտության է արգելել նրան կաթողիկոս կոչվել: Միայն դրանից հետո է ինքը գրել Հերակլին և Ռայնեգսին. «Զայդ մարդ կամ յղեցէք ի Սուրբ Աթոռս, առ ի մնալ աստ պատուով և փառաւորութեամբ և կամ առաքեցէք դարձեալ ի բնիկ վիճակն իւր»: Իսրայելը որոշել է վերադառնալ Գանձակ, որին ինքն էլ հավանություն է տալիս. «Վասն զի ըստ իմաստնոյն Սողոմոնի, լաւ է պատառ մի հեշտութեամբ, քան զտունս լի բազում բարեօք հանդերձ թշնամութեամբ»:[121]

Ներկայացված աղբյուրների օգնությամբ փորձենք պարզել Իսրայելի Գանձակից հեռանալու և Հաղպատում հաստատվելու պատճառներն ու շարժառիթները:

Ղուկաս Կարնեցու Հերակլ Բ-ին ուղղված նամակից տեղեկանում ենք, որ Իսրայելը, տաճիկներից փախչելով, ապաստանել էր Վրաստանում և Հերակլ Բ-ի համաձայնությամբ հաստատվել Հաղպատի վանքում[122]:

Իսրայելը վայելում էր Գանձակի մուսուլման իշխողների՝ Շահվերդի խանի, ապա նրա որդիներ Մահմադ և Զավադ խաների հովանավորությունը: Նրանց անխախտ աջակցության շնորհիվ էր Իսրայելը կարողացել 1763 թ. սկսած պայքարել Աղվանից կաթողիկոսության աթոռի համար դիմագրավելով այնպիսի հզոր հակառակորդների, ինչպիսիք էին Սիմեոն Երևանցին և Ղարաբաղի Իբրահիմ խանը: Իսրայելը չզրկվեց Գանձակի խաների այդ հովանավորությունից և աջակցությունից նույնիսկ այն ժամանակ, երբ ձգտելով աջակցություն ստանալ Իբրահիմ խանից՝ 1767 թ. Գանձակից տեղափոխվեց Ղարաբաղ: Երբ Իբրահիմը չցանկացավ Հովհաննեսի փոխարեն նրան ճանաչել Աղվանից կաթողիկոս, Իսրայելը վերադարձավ Գանձակ՝ չվախենալով, որ տեղի խանը

[115] Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 76ա:
[116] Նույն տեղում:
[117] Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 98բ-99ա:
[118] Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 76ա:
[119] Նույն տեղում:
[120] Նույնի էջ 101բ:

[121] Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 101բ-102ա:
[122] Նույն տեղում, էջ 147ա, բ:

կարող է պատժել նրան Ղարաբաղի խանի աջակցությունը որոնելու համար, ընդհակառակը, Իսրայելը 1777 թ. Գանձակի Մահմադ խանի եղբայր Ջավադ խանի ուղեկցությամբ եկավ Էջմիածին և հաշտվեց Սիմեոն Երևանցու հետ: Այդ պատճառով ճիշտ չի լինի ենթադրել, թե 1780 թ. Իսրայելը տեղափոխվել է Վրաստան՝ Գանձակի խանի ճնշումներից խուսափելու համար:

Գանձակի խանության շարունակվող թուլացման ֆոնի վրա ի հայտ էին գալիս այդ խանության նկատմամբ գերիշխանություն հաստատելու Իբրահիմ խանի նկրտումները: Իբրահիմ խանը, դաշնակցելով Հերակլ Բ-ի հետ, 1780 թ. հեռացնելով Մահմադ խանին իշխանությունից, ձերբակալում է նրան և պահում Ղարաբաղի խանության տարածքում: Գանձակի խանությունը վերածվեց Վրաստանի և Ղարաբաղի խանության կոնդոմինիումի (համատիրության): Այն կառավարվում էր Հերակլի և Իբրահիմ խանի նշանակած կառավարիչների կողմից[123]:

Ամենայն հավանականությամբ Իբրահիմ խանին և Գանձակում նրա ներկայացուցիչներին ի նկատի ուներ Ղուկաս Կարնեցին, երբ Հերակլ Բ-ին հասցեագրած նամակում գրում էր, թե Իսրայելը ապաստանել է Վրաստանում՝ փախչելով տաճիկներից[124]:

Սակայն «տաճիկների» ճնշումներն Իսրայելի՝ Գանձակից հեռանալու միակ պատճառը լինել չէին կարող: Իսրայելը Վրաստան եկավ, երբ Սիմեոն Երևանցին մահամերձ հիվանդ էր: Այդ ժամանակ նրա նպատակը ոչ թե Հաղպատի թեմին տիրանալն էր, այլ Սիմեոն Երևանցու մահից հետո Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռը զբաղեցնելը: Հավանաբար միայն այն ժամանակ, երբ այդ ուղղությամբ նրա ջանքերը ձախողվեցին, և կաթողիկոս դարձավ Ղուկաս Կարնեցին, Իսրայելը որոշեց ամուր կերպով հաստատվել Հաղպատում: Շիրվանի թեմը Հովհաննեսին անցնելուց հետո Իսրայելի եկամուտները զգալիորեն փոքրացան, քանի որ հենց Շիրվանն էր համարվում Աղվանից կաթողիկոսության ամենահարուստ թեմը, և այնտեղից ստացվող նյութական միջոցները գերազանցում էին Ղարաբաղի և Գանձակի խանության թեմերի հոգևոր հասույթները, դրա համար էլ այդ թեմը կռվախնձոր էր Ամենայն Հայոց և Աղվանից կաթողիկոսությունների, ինչպես նաև Աղվանից հակաթոռ կաթողիկոսների միջև: Նյութական միջոցների այդ պակասը լրացնելու համար Հերակլ Բ-ն Իսրայելին տվեց Հաղպատի թեմը: Շատ հավանական է՝ Հաղպատում եղած երեք տարիների ընթացքում Իսրայելը շարունակում էր ղեկավարել նաև Աղվանից կաթողիկոսության Գանձակի խանությունում գտնվող թեմերը և միայն իր կաթողիկոսանիստն էր Գանձակից տեղափոխել Հաղպատ:

1783 թ. Իսրայելի Գանձակ վերադառնալու համար նպաստավոր պայմաններ էին ձևավորվել: Իբրահիմ խանի և Հերակլ Բ-ի հարաբերությունները կտրուկ վատթարացան կապված ինչպես Գիորգիևսկում 1783 թ. կնքված պայմանագրի, այնպես էլ Գանձակի խանությանը միանձնյա տիրելու նրանց մրցակցության հետ[125]:

Գանձակ ուղարկելով Իսրայելին՝ Հերակլ Բ-ն, հավանաբար, հրահանգել է Գանձակում իր կառավարիչ Քեյխոսրով Անդրոնիկովին՝ աջակցություն ցույց տալ նրան:

Իսրայելի Գանձակ վերադառնալուց մեկուկես տասնամյակ անց Աղվանից ևս մեկ կաթողիկոս հավակնություններ ներկայացրեց Հաղպատի թեմի նկատմամբ: Դա Հովհաննես Թ-ի (1763-1786) եղբայր Սարգիս Հասան-Ջալալյանն էր: Նա 1791 թ., նեղվելով Ղարաբաղի Իբրահիմ խանի բռնություններից, փախել էր Գանձակ և տեղի Ջավադ խանի ու մինչ այդ Գանձակում ապաստանած Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքների օժանդակությամբ 1794 թ. կաթողիկոս օծվել:

Գանձակում Սարգիսը մնաց վեց տարի և 1798 թ. տեղափոխվեց Վրաստան: Գանձակից Սարգսի հեռանալու պատճառ դարձան միմյանց հերթագայող ավերիչ արշավանքները, դրանց հետևած սովն ու ժանտախտի համաճարակը, որոնց հետևանքով Ղարաբաղի և Գանձակի հայ ազգաբնակչությունը զանգվածաբար արտագաղթեց Վրաստան: Վրաստան գաղթեց նաև Գանձակի ու Ղարաբաղի մելիքական տների մեծ մասը: Իր հոգևոր հոտից ու մելիքների աջակցությունից չզրկվելու համար Սարգիսը հետևեց նրանց և տեղափոխվեց Վրաստան:

Սարգիս Հասան-Ջալալյանը և մելիքները բարեհաճ ընդունելություն գտան Վրաստանում: Գեորգի ԺԲ-ն շահագրգռված էր Ղարաբաղից և Գանձակից գաղթած մելիքների և նրանց հպատակ հայ ազգաբնակչության՝ Վրաստանում հաստատվելու մեջ: Մելիքները կարող էին աջակցել նրան ինչպես լեռնականների արշավանքները ետ մղելու, այնպես էլ Հերակլ Բ-ի այրու՝ Դարեջան թագուհու և նրա որդիների՝ թագին տիրելու նկրտումներին հակահարված տալու համար:

---

[123] Г.яАбдуллаевиЙзяисторииясеверо – ВосточногоязербайджанаяБакуи1958и. док.яN17и.с.я179 – 180.

[124] Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 147ա-148բ:

* Հաղպատի թեմին ուղղված կոնդակներից մեկը թվագրված է 1780 թ. մարտ ամսով [Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 23, վավ. 178]:

[125] Г.яАбдуллаевиЙշված աշխատություն, էջ 129.

Գեորգի ԺԲ-ն համակրանքով վերաբերվեց Սարգիս Հասան-Ջալալյանի էջմիածնից անկախ Ղարաբաղի և Գանձակի գաղթականության հոգևոր հովվապետությունը ստանձնելու ցանկությանը: Ռաֆֆին նշում է, որ Գեորգի ԺԲ-ի հարաբերությունները էջմիածնի հետ լարված բնույթ ունեին, որը նպաստում էր Սարգիս Հասան-Ջալալյանի այս ծրագրին:[126] Սարգսի ծրագրերին Գեորգի ԺԲ-ի կողմից աջակցություն ցուցաբերելը միտված էր նաև Վրաստանում էջմիածնի դիրքերի թուլացմանը:

1798 թ. աշնանը Գեորգի ԺԲ-ն նամակ հղեց Ղուկաս Կարնեցուն: Նամակում վրաց թագավորը խնդրում էր Ղուկաս կաթողիկոսին՝ Սարգսին հաստատել Ղարաբաղի և Գանձակի գաղթականության հոգևոր առաջնորդ, ինչպես նաև նրան տալ Հաղպատի թեմը:

1780 թ. Իսրայելին Հաղպատի թեմի առաջնորդությունը հանձնելուն Ղուկաս Կարնեցին չդիմադրեց, կամ որ ավելի ճիշտ է, դիմադրելու հնարավորություն չուներ, քանի որ այդ ժամանակ նրա դիրքերը շատ խախուտ էին, և այդ պայմաններում Հերակլ Բ-ի հետ բախումը կարող էր կործանարար լինել:

1798 թ. նման վտանգ գոյություն չուներ, և բնական է, որ Ղուկաս Կարնեցին կտրուկ մերժեց Վրաստանում էջմիածնի դիրքերի թուլացմանը միտված Գեորգի ԺԲ-ի խնդրանքը:

1798 թ. նոյեմբերի 4-ին Գեոգի ԺԲ-ին ուղղված պատասխան ուղերձում Ղուկաս Կարնեցին «անկարելի է» համարում թագավորի խնդրանքի կատարումը[127]:

Այսպիսի պատասխան ստանալուց հետո էլ Գեորգի ԺԲ-ն շարունակեց հաստատակամ պահանջել, որպեսզի Ղուկաս Կարնեցին Հաղպատի թեմը հանձնի Սարգսին և նրան Ղարաբաղից ու Գանձակից տեղափոխված գաղթականների հովվապետ հաստատի:

Ղուկաս կաթողիկոսը 1799 թ. մարտի 2-ին Գեորգի թագավորին գրած իր պատասխանում նորից մերժեց վրաց թագավորի խնդրանքը: Ի տարբերություն 1798 թ. նոյեմբերի 4-ի իր հակիրճ նամակի՝ այս ուղերձում նա ծավալուն և մանրակրկիտ հիմնավորում էր Սարգսին Հաղպատի առաջնորդ չհաստատելու իր շարժառիթները:

Անդրադառնալով Գանձակում Սարգսի կաթողիկոս օծման հանգամանքներին և այդ օծումը «սեղանազերծ յանդգնութիւն և լրբենի ապօրինութիւն» անվանելով՝ Ղուկասը գրում էր, որ Սարգիսը «ի Գեանջայ ևս չհանդարտելով եկեալ է ի Վրաստունդ» և ցանկանում է

[126] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 287-288:
[127] Մատենադարան, ձեռ. N 4501, էջ 477բ:

Հաղպատի թեմը «ի վիճակի սրբոյ էջմիածնի կաթուղիկոսութեան առնել»:

Նամակի վերջում Ղուկաս Կարնեցին ստեղծված իրավիճակից դուրս գալու երկու ելք է առաջարկում: Մի դեպքում Գեորգին պետք է ստիպի, որպեսզի Սարգիսը հրաժարվի կաթողիկոս կոչվել, որից հետո թագավորական հրամանագրով պետք է մեկնի Գանձակ և ստանձնի Գանձակի թեմի առաջնորդությունը: Այդ պարագայում ինքը կհաստատի Սարգսին Գանձակի առաջնորդ: Մյուս դեպքում Սարգիսը, հրաժարվելով կաթողիկոսական տիտղոսից, պետք է գնա էջմիածին և մտնի էջմիածնի միաբանության շարքերը: Սարգսի կողմից այս առաջարկների մերժման դեպքում Ղուկաս Կարնեցին սպառնում է. «Սարգսի անուանց զառագաստիւ բանադրեալ գոլն դորա յայտ առնելոց եմք կոնդակաւ մերով առ ամենայն ժողովուրդս վիճակին մերոյ»[128]:

Տեսնելով, որ խնդրանքներին և հորդորներին Ղուկաս Կարնեցին անընդհատ մերժողական պատասխաններ է տալիս, Գեորգի ԺԲ-ն սպառնաց Վրաստանի հայերի առաջնորդական թեմ հանդիսացող Հաղպատը հանել էջմիածնի ենթակայությունից և արգելել էջմիածնի հոգևոր տուրքեր ժողովող հոգևորականներին մուտք գործել Վրաստանի սահմանները[129]:

Ղուկաս Կարնեցին, վախենալով, որ Գեորգին կիրականացնի իր սպառնալիքը, փոխզիջման տարբերակ առաջարկեց: Նա համաձայնեց Սարգսին հաստատել Հաղպատի թեմի և Ղարաբաղի ու Գանձակի գաղթականների առաջնորդ՝ պայմանով, որ Սարգիսը հրաժարվի կաթողիկոսական տիտղոս ու կնիք գործածելուց, և ներկայանալով էջմիածին՝ արքեպիսկոպոսական աստիճան ստանա[130]:

Գեորգի թագավորը և Սարգիսը համաձայնեցին Ղուկաս Կարնեցու այս առաջարկին, որից հետո Սարգիսը 1799 թ. օգոստոսին ժամանեց էջմիածին:

Ռաֆֆին գրում է, որ էջմիածնում Սարգիսը խիստ սառը ընդունելության արժանացավ, սակայն Ղուկաս Կարնեցին Գեորգի ԺԲ-ի հետ հարաբերությունները կարգավորելու համար Սարգսին արքեպիսկոպոսական աստիճան և Հաղպատի թեմի առաջնորդության կոնդակ շնորհեց[131]:

[128] Մատենադարան, ձեռ. N 4501, էջ 485ա-486ա:
[129] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 288:
[130] Նույն տեղում, էջ 289; Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 98բ-99ա:
[131] Նույն տեղում:

1799 թ. օգոստոսի 18-ով թվագրված այդ կոնդակում ասվում էր. «Զի սա ի վտանգաւոր բերմանց աշխարհի դիմեալ է ի հովանի այդր տերութեան և ոչ կարէ այժմ դառնալ յետն տեղի, և զի հաստատուն պայմանագրով եցույց զինքն իբրև զմի ոք ի եպիսկոպոսաց վիճակի սրբոյ Աթոռոյն Էջմիածնայ, վորոյ և մեք որպես նոր պատուաստեալ ի սուրբ գահս և ի մեզ, ոչ ևս օտարություն դնելով ի միջի իբր զմի ոմն ի մերայնոց հարազատաց կարգեցաք առաջնորդ և հոգևոր հովիւ բանաւոր հօտիդ և կառաւարիչ սրբոյ վանորայդ ձերում»[132]:

Հաղպատի թեմի առաջնորդ հաստատելով Սարգսին՝ Ղուկաս Կարնեցին սահմանափակում էր վերջինս առաջնորդական իրավունքները՝ զրկելով նրան ֆինանսական անկախությունից: Նույն կոնդակով Հաղպատի թեմի դրամական մուտքերը վերահսկելու նպատակով Ղուկաս կաթողիկոսը Եսայի Թալոյանին և Ազա Փիթոյանին հավատարմատարներ նշանակեց և նրանց պատվիրեց «ի բոլոր սրտէ հաւատարմութեամբ մուղայէթ լինիլ արդեանց սրբոյ վանիցն, զի ի հարկաւորս խարծեսցին արդիւնքն և մի ընդ ունայն վատնեսցին»[133]:

1799 թ. սեպտեմբերի 13-ի հրովարտակով Գեորգի ԺԲ-ն հրամայում է Հաղպատի թեմի հայերին հնազանդվել Սարգիս արքեպիսկոպոսին և կատարել նրա հրահանգները[134]:

1800 թ. հունվարի 26-ի հրովարտակով Գեորգի ԺԲ-ն Սարգսին հանձնեց նաև Ղարաբաղի գաղթականության հովվապետությունը[135]:

Սարգիս Հասան-Ջալալյանի՝ Հաղպատի թեմի և Ղարաբաղի գաղթականների առաջնորդ դառնալուց քիչ անց տեղի ունեցան բախտորոշ փոփոխություններ: Անդրկովկասը թևակոխեց սոցիալ-քաղաքական և տնտեսական զարգացման նոր շրջան:

Ռուսական տիրապետության հաստատումը շրջադարձային էր նաև Հայ Առաքելական եկեղեցու համար: Ռուսաստանը Հարավային Կովկասում իր հետապնդած շահերը կենսագործելու նպատակով մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ: Հենց Ռուսաստանի հրահրմամբ էլ դարասկզբին սկիզբ առավ Էջմիածնի կաթողիկոսական աթոռը զբաղեցնելու համար եկեղեցու ներսում երկու խմբավորումների պայքարը, որը այդ խմբավորումները գլխավորողների անունով կոչվեց «Դավիթ-Դանիելյան վեճ»:

Թիֆլիսում հաստատված ռուսական իշխանությունների աջակցությամբ Դավիթ Էնգաթցին (Ղորղանյան) 1801 թ. ապրիլի 28-ին Էջմիածնում կաթողիկոս օծվեց: Նույն թվականի օգոստոսին Կ. Պոլսում ռուսական դեսպան Տոմարայի ակտիվ միջամտության շնորհիվ սուլթան Սելիմ Գ-ն (1789-1807) ֆերմանով հաստատեց Դավթի կաթողիկոսությունը[136]:

Սարգիս Հասան-Ջալալյանը, որի թեմն ընդգրկում էր Ռուսաստանին կցված Արևելյան Վրաստանի տարածքը, չէր կարող ռուսական հովանավորության տակ գտնվող Դավիթ Էնգաթցուն կաթողիկոս չճանաչել:

Դավիթ Էնգաթցու կաթողիկոսությունը ճանաչեց նաև Ամարասի վանքում նստող Իսրայել կաթողիկոսը: Գյուտ Աղանյանցի կազմած «Դիվանում » առկա է Դավիթ Էնգաթցու չթվագրված պատասխան նամակը Իսրայելին[137], ուր Դավիթը շնորհակալություն է հայտնում «Տանն Աղուանից Իսրայէլ սրբասէր և ծերունազարդ կաթուղիկոսին» և ներողություն խնդրում պատասխանը ուշացնելու համար: Նամակում խոսք է գնում մի հոգևորականի մասին, «որ կայ ի Գեանջայ ընդվզեալ անդր քան զչափն: Առ որ յանդիմանական բանիւ մարգելս է, ի հուղղութիւնս վերածելս թողաք ի ներկայումս, սակս անձեռնահասութեան մերոյ, և Աստուծով յետ փոքր միջոցի ի խաղաղանալս հոգացույց զայնմանէ, լեր ընդ ամենայնի միամիտ»:

Դավիթ Էնգաթցին 1802 թ. նոյեմբերի 17-ին Իսրայելին հաստատագրած նամակում[138] նորից անդրադառնում է Գանձակում գտնվող խռովարար հոգևորականի խնդրին: «Ոչ եղև դիպող ժամ մեզ ի յուղղել զստահակսն, որք որջացեալք կան յամենայն դարանի և խածեալք զգարշապարս մեր և ձեր, յորոց և մինն է ի Կեանջայ եղեալ սնագլուխն, զորմէ գրեալ էիք, զոր և ունիմք ի մտի և յայտնեմք Աստուծով ի դեպ ժամու վրեժխնդիր լինելոց եմք այնպիսեաց չարաշշուկ խռովչաց, ըստ գործոց իւրեանց ի նուցունց որոնց հանգոյս լիցի սիրելի եղբայրդ մեր»:

Հավանաբար Գանձակում հաստատված հոգևորականը կա՛մ Դավթի հակառակորդ այն հոգևորականներից էր, որ նրա օծումից հետո փախել էր Էջմիածնի վիճակի սահմաններից, կա՛մ Սարգսի՝

---

[132] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 6, վավ. 152:
[133] Նույն տեղում:
[134] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ 240, վավ. 152:
[135] Մատենադարան, ձեռ. N 4331, վավ. 99բ:

[136] Н.яДубровинИсторияявойныяиявладычествяруссски. янаяКавказеиг.яIVи СПбиш888ис.ягут – ту7.
[137] Նույն տեղում, Գլուխ ՃԾԸ, էջ 307-309:
[138] Նույն տեղում, Գլուխ Յե, էջ 626:

Վրաստան տեղափոխվելուց հետո Գանձակում մնացած հոգևորական էր: Գանձակի Ջավադ խանը, չցանկանալով, որ իր թշնամի Իբրահիմ խանի դրածո Իսրայելը տիրի Գանձակի թեմին, բարյացակամ է վերաբերվել այդ հոգևորականին:

Լինելով Ամենայն Հայոց կաթողիկոսին ենթակա թեմական առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը 1801 թ. ամռանը այցելեց Էջմիածին: Դավիթ Էնագեթցին Սարգսին վերահաստատեց Հաղպատի թեմի առաջնորդ և Հաղպատի թեմականներին պատվիրեց եկեղեցական հասույթները հանձնել Սարգսի ժողովարար հոգևորականներին[139]: Սակայն 1 տարի անց 1802 թ. հոկտեմբերի 24-ին վիցե կանցլեր Ա. Բ. Կուրակինին ուղղված դիմումում Դանիել Սուրմառեցու կողմնակից մի շարք բարձրաստիճան հայ հոգևորականների թվում Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանն էլ է բողոքում Դավիթ Էնագեթցու աջակից և նրա կողմից Ռուսաստանի հայերի առաջնորդ հաստատված Գրիգոր Աքերմանցուց (Ջաքարյանց)[140]:

Այս դիմումին Սարգիս արքեպիսկոպոսի մասնակցությունը ցույց է տալիս, որ ինչպես 1801 թ. Սարգիսը հնազանդություն էր հայտնել Դավիթ Էնագեթցուն, քանի որ վերջինս այդ ժամանակ ռուսական աջակցության շնորհիվ էր կաթողիկոս դարձել, այնպես էլ դիմումը գրելու ժամանակ նա հրաժարվել էր Դավթին օրինական կաթողիկոս համարել և անցել էր Դանիելի կողմնակիցների ճամբարը, քանի որ 1802 թ. սեպտեմբերի 15-ին կայացած թագադրման արարողությունից հետո Ալեքսանդր Ա կայսրը, փոխելով իր վերաբերմունքը Դավիթ Էնագեթցու նկատմամբ, հրովարտակով կաթողիկոս էր հաստատել Դանիել Սուրմառեցուն[141]:

1802 թ. մայիսի 26-ին կաթողիկոս օծվելու հաջորդ օրը, Դանիել Սուրմառեցին Բագրևանդի «Երեք խորան» վանքից կոնդակ ուղարկեց Թիֆլիս՝ Էջմիածնից այստեղ փախած Հովհաննես Գեղարդակիր (հայտնի է նաև Ակներցի, Կենդանի Նահատակ անուններով) և Սարգիս Հասան-Ջալալյան արքեպիսկոպոսներին, ուր հայտնում էր իր կաթողիկոս օծվելու մասին[142]: Վարդան Օձնեցին գտնում է, որ դրանով Դանիել Սուրմառեցին նպատակ ուներ «Զմինն ցաւեցուցանել և զմիւսն ուրախացուցանել, զի Յովաննէս Կենդանի

[139] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 116բ:
[140] Присоеденение Восточной Армении к России и г. Ереван 1 97 т. и док. № 94.
[141] Լեո, Հայոց պատմություն, հ. IV, Երևան, 1984, էջ 137-138:
[142] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 124բ-125ա:

Նահատակն էր դանելական, իսկ Սարգիսն Հասան-Ջալալեանց դաւթական»[143]:

Սեփական գավազանի տակ վիրահայությանը ժողովելու համար Սարգիս Հասան-Ջալալյանի և Հովհաննես Գեղարդակրի միջև պայքարը Վարդան Օձնեցին ներկայացնում է որպես դավթականների և դանիելականների պայքարի բաղկացուցիչ մաս: Մինչդեռ, ինչպես վերը ներկայացված դիմումից տեսանք, Սարգիս արքեպիսկոպոսը, ռուսական իշխանությունների կողմից Դանիելին կաթողիկոս ճանաչելուց հետո, փոխելով կողմնորոշումը, անցել էր դանիելականների ճամբարը: Սարգիսը 1802 թ. լուրջ հակասություններ չուներ նաև Հովհաննես Գեղարդակրի հետ: Կ. Պոլսի պատրիարք դառնալու կապակցությամբ Գրիգոր Խամսեցի արքեպիսկոպոսին ուղղված 1802 թ. հոկտեմբերի 12-ի նամակում Սարգիս Հասան-Ջալալյանը մասնավորապես գրում էր. «Ունեմք սէր անլոյծ ընդ քաղաքիս Թիֆլիս Առաջնորդ և սրբոյն գահին Էջմիածնի ծայրագոյն նուիրակ Յովհաննէս Արքեպիսկոպոս եղբօր մերոյ»[144]:

Սարգիս Հասան-Ջալալյանի և Հովհաննես Գեղարդակրի հարաբերությունները սկսեցին լարվել, երբ 1802 թ. սեպտեմբերին կայսերական հրովարտակով Կովկասի և Վրաստանի կառավարչապետ նշանակված իշխան Պավել Ցիցիանովը 1803 թ. փետրվարին Թիֆլիսում հաստատվելուց հետո[145] սկսեց հովանավորել Հովհաննես Գեղարդակրին՝ ի վնաս Սարգսի:

1804 թ. հունվարի 3-ին Գանձակը ռուսների կողմից գրավվելուց հետո Ցիցիանովի համաձայնությամբ Գանձակի թեմը տրվեց Հովհաննես Գեղարդակրին[146]:

Հովհաննես Գեղարդակրի ազդեցությունը կտրուկ աճեց, երբ 1804 թ. ռուսական զորքերի Երևանյան առաջին արշավանքի ժամանակ Երևանի խանությունից գաղթած 11 հազար հայ ընտանիք Հովհաննես Գեղարդակրի կողմից ցուցակագրվելուց հետո 1804 թ. հոկտեմբերին բնակություն հաստատեց Թիֆլիսի Հավլաբար և Տումի թաղամասերում[147]:

Երևանի խանությունից գաղթածների առաջնորդությունը ստանձնեց Հովհաննես Գեղարդակիրը: Այսպիսով, Հաղպատի թեմը բաժանվեց երկու մասի՝ Թիֆլիսի՝ Կուր գետով բաժանված արևել-

[143] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 124բ-125ա:
[144] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 13, վավ. 298:
[145] Լեո, Հայոց պատմություն, հ. IV, էջ 166:
[146] Նույն տեղում, էջ 191:
[147] Նույն տեղում, էջ 238:

յան մասը, ուր գաղթականներ էին հաստատվել, առանձին առաջնորդության կարգավիճակ ստացավ, իսկ քաղաքի՝ Կուրից արևմուտք ընկած մասի հայ բնակչությունը մնաց Սարգիս Հասան-Ջալալյանի առաջնորդության տակ[148]: Վարդան Օձնեցին գրում է. «Ի բաժանիլ երկուց Առաջնորդութիւնս բացավ ճանապարհ կորզելոյ զքէմն Հաղբատայ վանից, զոր ի վերուստ որոնէին էջմիածնեցիք: Օգնեաց նոցայ ժամանակն և փոփոխութիւնք կառավարութեանց»[149]:

Սարգիս Հասան-Ջալալյանի և Հովհաննես Գեղարդակրի միջև հոգևոր առաջնության համար սուր պայքար սկսվեց: Սարգիս արքեպիսկոպոսը փորձում էր պաշտպանել իր առաջնորդական լիազորությունները և իրավունքները՝ ռուսական իշխանություններին որպես ապացույց ներկայացնելով Գեորգի ԺԲ-ի կողմից իրեն շնորհված հրովարտակը:

Որպես հակաքայլ՝ Հովհաննես Գեղարդակիրը 1804 թ. սեպտեմբերի 30-ին դիմեց Ցիցիանովին խնդրելով արգելել ռուսական տեղական իշխանական մարմիններին՝ միջամտել եկեղեցու գործերին[150]:

Ցիցիանովը, որ Դանիելին կաթողիկոս հաստատելու պատրվակով ձգտում էր ամրապնդել Ռուսաստանի դիրքերը Երևանի խանությունում, վիրահայության հոգևոր իշխանության համար Սարգսի և Հովհաննես Գեղարդակրի պայքարում աջակցում էր վերջինիս, քանի որ նա, ի տարբերություն 1801 թ. Դավիթ Էնգաբեգու կաթողիկոսությունը ճանաչած Սարգիս Հասան-Ջալալյանի, դանիելականների ամենաաչքի ընկնող պարագլուխներից էր և դեպի Արարատյան դաշտ ռուսական առաջխաղացման համար ավելի նպաստավոր դեր կարող էր ունենալ:

Սարգիս արքեպիսկոպոսը փորձեց փոխել Ցիցիանովի այս դիրքորոշումը: 1805 թ. հունվարին Ցիցիանովին ուղղված խնդրագրում հայտնում էր, որ ամբողջ Վրաստանի տարածքը, համաձայն հայ և վրաց թագավորների ու կաթողիկոսների հրովարտակների և կոնդակների, մտնում է Հաղպատի թեմի մեջ և միայն մի փոքր մասն է պատկանում Էջմիածնի վանքին: Ապա գրում էր, որ եղբոր՝ Գանձասարի կաթողիկոս Հովհաննեսի սպանությունից հետո ինքը փախել է Գանձակ, այնտեղից էլ տեղափոխվել Վրաստան, որի

[148] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 155ա:

[149] Նույն տեղում:

[150] АктыисобранныеяКавказскойяар. еогра–ическойякомиссиейя(ujuıtıtıtı Акты)иг.яIяиГи–лися1868ядок.я540ис.яг76.я

«հանգուցյալ արքա Գեորգին շնորհեց ինձ վերոհիշյալ վանքի արքեպիսկոպոսությունը, ինչի մասին ձերդ պայծառափայլությանը հայտնելով, խոնարհաբար խնդրում եմ սույնին կցված հրովարտակի (Գեորգի ԺԲ-ի – L. U.) համաձայն վերահաստատել իմ իրավունքները և ինձ ձեր հովանավորության տակ առնել: Մեր եկեղեցուն առընչվող գործ ի հայտ գալու դեպքում դրանք իրականացնելը ինձ հանձնարարել, ինչպես դա եղել է այժմյան կառավարման սկզբնավորման ժամանակ, երբ ինձ հրամայվեց հայ ժողովրդի հետ հավատարմության երդում տալ Ռուսաստանյան տերությանը»:[151]

Ցիցիանովը Սարգիս արքեպիսկոպոսի այս խնդրագիրն անպատասխան թողեց և 1 ամիս անց՝ 1805 թ. փետրվարի 28-ին, դիմեց Ալեքսանդր Ա-ին: Դիմումում ասվում է, որ Հովհաննես արքեպիսկոպոսը նվիրված է Ռուսաստանին: Այդ նվիրվածության ապացույց է ներկայացվում Երևանյան արշավանքից հետո 11 հազար ընտանիք Երևանից Վրաստանում բնակեցնելը: Ցիցիանովը կայսրին խնդրում էր, մինչև Էջմիածնում Դանիելի հաստատվելը, «Վրաստանի հայ հոգևորականների մեջ հաստատել Հովհաննեսի առաջնայնությունը և որպես բարձրագույն բարեհաճության նշան եպիսկոպոսական պնակե շնորհել»:[152]

1805 թ. ապրիլի 29-ին ցարը հաստատեց Հովհաննեսի առաջնայնությունը և պանագիա շնորհեց:

Սարգիս Հասան-Ջալալյանը 1806 թ. փետրվարի 6-ին Բաքվում Ցիցիանովի սպանությունից հետո փորձեց ետ ստանալ Հաղպատի թեմը: Նա հույս ուներ, որ Կովկասի նոր կառավարչապետ Գուդովիչը չի աջակցի Հովհաննես Գեղարդակրին և անկողմնակալ կլինի Վրաստանի հայերի հոգևոր առաջնության համար իր և Հովհաննես Գեղարդակրի պայքարում: Այդ պատճառով 1807 թ. փետրվարի 12-ին Գուդովիչին հասցեագրված դիմում-բողոքում Սարգիս արքեպիսկոպոսը գրում էր, թե Հովհաննես Գեղարդակիրը, լինելով միայն Թիֆլիսում հաստատված, Երևանի խանությունից գաղթած հայերի առաջնորդը, ապօրինի կերպով միջամտում է իր առաջնորդության տակ գտնվող Հաղպատի թեմի կառավարման գործին և իրեն գրած նամակներում չի հիշատակում իր՝ «Հախպատի թեմի արքեպիսկոպոս» տիտղոսը[153]: Սարգիս արքեպիսկոպոսի այս բողոքին մարտի 17-ի պատասխանում Գուդովիչը գրում էր, որ Հովհաննես Գեղարդակիրը Դանիել կաթողիկոսի կողմից Վրաստանի հայ հոգևորա-

[151] ПрисоеденениеяВосточнойяАрменииякяРоссиииг.яIяидок.яг04ис.яг84.

[152] Актыя..иг.яIяидок.я541ис.яг76.

[153] ПрисоеденениеяВосточнойяАрменииякяРоссиииг.яIяидок.яу4уис.яи01 – 40т.

կանների մեջ առաջատար է ճանաչվել, հաստատվել է նաև կայսերական հրովարտակով: Դրանից հետևում է, որ Սարգիս արքեպիսկոպոսը, ստորադաս լինելով Հովհաննես Գեղարդակրին, պարտավոր էր իր գործողության համար հաշվետու լինել նրան և կատարել նրա բոլոր հրահանգներն ու պահանջները[154]:

1807 թ. աշնանը Սարգիս արքեպիսկոպոսը եկեղեցական հասույթները հավաքելու համար մեկնում է Հաղպատի թեմի մեջ մտնող Կախեթ:

Տեղեկանալով այդ մասին Հովհաննես Գեղարդակիրը բողոքում է Գուդովիչին՝ հայտնելով, որ Սարգիսը Կախեթ է մեկնել առանց իր իմացության[155]:

1807 թ. նոյեմբերի 9-ի նամակով Գուդովիչը Սարգսից պահանջեց դադարեցնել եկեղեցական հասույթների հավաքումը, անմիջապես ներկայանալ Հովհաննես Գեղարդակրին և տալ հաշվետվություն[156]:

Չբավարարվելով Գուդովիչի օժանդակությամբ, Սարգիս արքեպիսկոպոսի առաջնորդական իրավունքների սահմանափակմամբ՝ Հովհաննես Գեղարդակիրը որոշեց իր հոգևոր իշխանության տակ գտնվող Երևանի խանությունից գաղթածների առաջնորդությանը Հաղպատի թեմը միացնելու միջոցով վերջնականապես ասպարեզից հեռացնել Սարգսին: Այդ նպատակով Հովհաննես Գեղարդակիրը Հաղպատի թեմին պատկանող գավառներում տեղի անվանի հայերի միջոցով Դանիել կաթողիկոսին ուղղված ընդհանրագրեր կազմել տվեց: Այդ ընդհանրագրերում Սարգիս արքեպիսկոպոսը մեղադրվում էր Հաղպատի թեմը անկման հասցնելու մեջ:

Վարդան Օձնեցին 1808 թ. նշում է որպես այս ընդհանրագրերի ի հայտ գալու տարի[157]:

Հովհաննես Գեղարդակիրը այս ընդհանրագրերը ներկայացնում է Դանիել Սուրմառեցուն, որը դիմում է Ալեքսանդր Ա-ին՝ խնդրելով հրովարտակով Հաղպատի թեմը և Թիֆլիսում գտնվող Երևանի խանությունից գաղթածների առաջնորդությունը միացնել և միացյալ թեմի առաջնորդ հաստատել Հովհաննես Գեղարդակրին[158]:

[154] ПрисоеденениеяВосточнойяАрменииякяРоссиии.яядок.ях/4уис.я401 – 40т.
[155] Նույն տեղում, վավ. 375, էջ 425-426.
[156] Նույն տեղում:
[157] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 155ա, բ:
[158] Նույն տեղում:

Վարդան Օձնեցին առանց տարեթիվ կամ ամսաթիվ նշելու գրում է, որ Ալեքսանդր Ա-ն բավարարել է Դանիել Սուրմառեցու խնդրանքը[159]:

1808 թ. օգոստոսի սկզբին Դանիել Սուռմայեցու կոնդակով[160] զրկվելով Հաղպատի թեմական առաջնորդի պաշտոնից՝ Սարգիս Հասան-Ջալալյանը փորձեց օժանդակություն ստանալ Կովկասի ռուսական կառավարչապետ Գուդովիչից և Դանիել Սուրմառեցուն հաջորդած Եփրեմ Չորագեղցուց: Սակայն այս փորձերը ձախողվեցին, ինչը ստիպեց Սարգսին վերադառնալ Ղարաբաղ:

§ 4 Գանձակի խանության թեմեր

Գանձակի և նրան հարակից տարածքները միշտ եղել են Աղվանից կաթողիկոսության կազմում: IX-XII դարերում Գանձակը այս կաթողիկոսության աթոռանիստն էր[161]: Բացառություն կարելի է համարել Թահմասպ Ա-ի հրովարտակով Գանձակի անցումը Էջմիածնին[162]: Աղբյուրներում հիշատակվող Գանձակը մեկ առանձին հոգևոր թեմ չէր, այլ Գանձակի խանության տարածքն էր, ուր մի շարք առաջնորդական թեմեր գոյություն ունեին: Երևանի Մատենադարանում պահվող վավերագրերից տեղեկանում ենք, որ Գանձակի խանության տարածքը բաժանված էր Գանձակ քաղաքի, Գետաբակի, Գետաշենի, Խորանաշատի, Թարգմանչաց, Ամենափրկիչ վանքերի թեմերի միջև, որոնց առաջնորդները արքեպիսկոպոսական աստիճան ունեին[163]:

XIX դարի սկզբում Հարավային Կովկասում ռուսական իշխանության հաստատումը վճռական նշանակություն ունեցավ Գանձակի խանության տարածքում գտնվող թեմերը Աղվանից կաթողիկոսությունից անջատելու և Էջմիածնի վերահսկողության տակ դնելու գործում: Ռուսաստանը շահագրգռված էր Ամենայն Հայոց կաթողիկոսության դիրքի և ազդեցության ամրապնդման մեջ, քանի որ ծրագրում էր օգտագործել Ամենայն Հայոց

[159] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 155ա, բ:
[160] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 19, վավ. 82:
[161] Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., էջ 65; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 243:
[162] Տես վերը, էջ 15
[163] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 257, վավ. 250; թղթ. 240, վավ. 3:

կաթողիկոսության ազդեցությունը Իրանում և Օսմանյան կայսրությունում բնակվող հայության վրա և ներազդել այդ պետությունների վարած քաղաքականության վրա:

Ահա այդ պատճառով 1804 թ. (Գանձակի գրավումից հետո), Կովկասի կառավարչապետ Պավել Ցիցիանովը Գանձակի խանության տարածքում գտնվող թեմերը հանձնեց Թիֆլիս քաղաքի առաջնորդ Հովհաննես Գեղարդակրին:

Հովհաննես Գեղարդակիրը, լինելով էջմիածնի կաթողիկոսության արքեպիսկոպոս ու իրեն հռչակելով Գանձակի առաջնորդ, անջատում էր այդ թեմերը Աղվանից կաթողիկոսությունից: Այդ պատճառով անխուսափելի էր այս թեմերի համար նրա և Ամարասում նստող Իսրայել կաթողիկոսի շահերի բախումը:

Ռուսների կողմից Գանձակը գրավելուց և Ջավադ խանի զոհվելուց հետո Իսրայել կաթողիկոսը փորձել էր վերահաստատել Գանձակի թեմի նկատմամբ իր իշխանությունը և այդ նպատակով բազմիցս խնդրագրերով դիմել էր Ցիցիանովին[164]:

1805 թ. մայիսի 14-ին Գանձակի և Ղարաբաղի սահման հանդիսացող Քյուրակ-չայ գետի ափին Ռուսաստանին Ղարաբաղի խանության միացման պայմանագրի կնքման արարողություններին ներկա էին Հովհաննես Գեղարդակիր արքեպիսկոպոսը և Իսրայել կաթողիկոսը: Վերջինս Գանձակի խանության թեմերի նկատմամբ իր իշխանությունը վերահաստատելու համար դիմել էր Իբրահիմ խանի միջնորդությանը, որը Քուրակ-չայի հանդիպման ժամանակ Գանձակի խանության թեմերը Իսրայելին հանձնելու խնդրանքով դիմեց Ցիցիանովին[165]: Սակայն Ցիցիանովը կտրուկ մերժեց Իբրահիմի միջնորդությունը[166]:

Ցիցիանովը, մերժելով Գանձակի թեմը հանձնել Իսրայել կաթողիկոսին, դեռևս ռուսական իշխանության տակ չգտնվող և անկախ խանություններ համարվող Շամախու, Շաքիի, Բաքվի և Դերբենտի հայերին ուղղված հրովարտակում «ողորմածաբար» կարգադրում էր հնազանդվել Իսրայելին և եկեղեցական հասույթները նրան հանձնել: Սակայն այս հրովարտակում չէր նշվում ո՛չ Իսրայելի անունը, ո՛չ նրա կաթողիկոսական տիտղոսը, այլ միայն ասվում էր «որ մինչև այժմ հնազանդվել եք և հաստատված կանոնների ու օրենքների համաձայն հոգևոր տուրքերը հանձնել եք Աղվանքի լուսավորիչ Գրիգորիսի եկեղեցուն և նրա ազնվագույն կաթողիկոսին, այնպես էլ այժմ պետք է տուրքերը հանձնեք, ծառայեք, ինչպես նաև հպատակվեք վերոհիշյալ եկեղեցուն»: Այսպիսի ձևակերպումից բացի Ցիցիանովը մի կարևոր վերապահում էր անում՝ հայտարարելով, որ սույն հրովարտակը ուժը կորցրած պետք է համարվի Դանիել կաթողիկոսի՝ էջմիածնում հաստատվելուց հետո, որից էլ կախված է լինելու ինչպես այդ թեմերի, այնպես էլ տեղի հոգևորականների ճակատագիրը[167]:

Փաստորեն ռուսական իշխանությունները, հանձինս Ցիցիանովի, չէին ճանաչում Աղվանից կաթողիկոսության և նրա կաթողիկոսի՝ էջմիածնից անկախ կարգավիճակը: Հենց այդ էր հրճվանքով շեշտում Հովհաննես Գեղարդակիրը 1805 թ. մայիսի 30-ին Մինաս Լազարյանին գրած նամակում[168]:

Իսրայել կաթողիկոսը 1806 թ. փետրվարին Բաքվում Ցիցիանովի սպանությունից հետո փորձեց վերականգնել Գանձակի թեմերում իր իշխանությունը: Սակայն նրան հուսախաբություն էր սպասում, քանի որ Ցիցիանովը Հարավային Կովկասում ռուսական քաղաքականության իրականացնողն էր, իսկ նրա սպանությամբ այդ քաղաքականությունը չփոխվեց: Իսրայելը մտադիր էր մեկնել Պետերբուրգ և այս թեմերի նկատմամբ իր իշխանությունը հաստատող ցարական հրովարտակ ստանալ: Սակայն նրա ծրագրերը միայն Գանձակի խանության թեմերին տիրելով չէին սահմանափակվում: Իսրայելը ձգտում էր նաև Աղվանից կաթողիկոսությանը վերադարձնել Սիմեոն Երևանցու օրոք էջմիածնին անցած Աստրախանի հայերի առաջնորդությունը:

1806 թ. հուլիսի 10-ին Մինաս Լազարյանին հասցեագրված նամակում Հովհաննես Գեղարդակիրը գրում էր, որ Իսրայելը հայտարարել է. «Ո՞վ է Յովհաննէս և ո՞վ է Եփրեմն, որք զվիճակս իմ առեալ են ձեռացս, գնալոց եմ մինչև ի Յաշտարխան և զայն ևս առնուլ»[169].

Տեղեկանալով, որ Կովկասի նոր կառավարչապետ Գուդովիչը գտնվում է Հյուսիսային Կովկասի Գիորգիևսկ ամրոցում, Իսրայել կաթողիկոսը 1806 թ. օգոստոսի 19-ին մի խնդրագիր ուղարկեց նրան, որի վերջում ասվում էր. «Ձերդ պայծառափայլության արդարադատության նկատմամբ հույս ունենալով, խոնարհաբար խնդրում եմ պաշտպանության տակ առնել արդարադատությունը, ում անհրաժեշտ է հրահանգել, որպեսզի ինձ թույլ տրվի նախկինի

---

164 Դիվան, Գիրք Ե, Թիֆլիս, 1902, Գլուխ ՃԿԲ, էջ 447-450:
165 Նույն տեղում:
166 Նույն տեղում:

167 Актыит.яПиидок.ябутис.яг7т.
168 Դիվան, Գիրք Ե, էջ 447-450:
169 Նույն տեղում, էջ 488-491:

պես կառավարել իմ վիճակի այն մասը, որի հայ ժողովուրդը բնակվում է Ելիզավետապոլի օկրուգում, ինչպես նաև թույլ տալ կառավարել իմ հրամանի տակ գտնվող մյուս երկրները»[170]:

Ինչպես երևում է խնդրագրի վերջին նախադասությունից, ռուսական իշխանությունները ոչ միայն թույլ չէին տալիս Իսրայելին իր հոգևոր իշխանությունը հաստատել Գանձակի խանության թեմերում, այլև, չնայած Ցիցիանովի տված հրովարտակին, Իսրայելի առջև արգելքներ էին հարուցում Շիրվանի թեմում:

Տեղեկանալով Իսրայելի Գուդովիչին ուղղված այս խնդրագրի մասին Մինաս Լազարյանը սեպտեմբերի 17-ի նամակով խնդրում է Գուդովիչին մերժել Գանձակի թեմերի նկատմամբ Իսրայելի նկրտումները և այդ հարցում աջակցել Վրաստանի հայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակրին[171]:

Գուդովիչն անպատասխան է թողնում Իսրայելի այս դիմումը: Իսրայելը նորից է դիմում Գուդովիչին խնդրելով իրեն Ռուսաստան մեկնելու թույլտվություն տալ նպատակ ունենալով Գանձակի խանության թեմերը ետ ստանալու համար խնդրագիր ներկայացնել անմիջապես Ալեքսանդր Ա կայսերը:

Գուդովիչը 1806 թ. նոյեմբերի 16-ի իր պատասխանում մերժում է Իսրայելի Ռուսաստան մեկնելու խնդրանքը[172]: Գուդովիչն այս նամակում օգտագործում է преосвященс2вояդիմելածները. այսպես դիմում էին եպիսկոպոսներին, իսկ պատրիարքին կամ կաթողիկոսին դիմելիս օգտագործում էին свя2ейшес2во դիմելածները: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Գուդովիչը Իսրայելին կաթողիկոս չէր ճանաչում[173]:

Այսպիսի պատասխան ստանալով Իսրայել կաթողիկոսը ստիպված է լինում Ռուսաստան ուղարկել Ալեքսանդր Ա-ի անունով խնդրագիրը միայն, ապա ժամանում է Թիֆլիս: Նա 1806 թ. նոյեմբերի 24-ին Գուդովիչին նոր դիմում է հասցեագրում պահանջելով մինչև կայսերն ուղղված իր խնդրագրի պատասխանի ստացվելը թույլ տալ հաստատվել Գանձակում[174]: Գուդովիչը բավարարում է այդ պահանջը:

Հաստատվելով Գանձակում Իսրայելը սկսում է հոգևոր տուրքեր հավաքել: Այդ մասին տեղեկանալով Հովհաննես Գեղարդակիրը

[170] Актыиг.яIIияГи –лисяI869иядок.яI49ияс.я79 – 90.

[171] ПрисоеденениеяВосточнойяАрмениияжяРоссиииг.яIIядок.яу09ияс.яу76.

[172] Նույն տեղում, վավ. 323, էջ. 388.

[173] Նույն տեղում:

[174] Նույն տեղում, էջ. 390-391.

գանգատվում է Գուդովիչին, որի կարգադրությամբ էլ Իսրայելից հավաքած գումարը ետ վերցնելու նպատակով 1807 թ. նոյեմբերին Գանձակ է մեկնում Մինաս եպիսկոպոսը: Այս առիթով Գանձակում խռովություն ծագեց: Եկեղեցու զանգերի ազդանշանով հավաքվում է 500 հոգուց բաղկացած մի բազմություն, որը ծեծում և քարկոծում է Մինաս եպիսկոպոսին[175]:

Գուդովիչը, ինչպես և ենթադրում էր Իսրայելը, խիստ արձագանքեց և 1807 թ. նոյեմբերի 11-ի հրամանագրով կարգադրեց գեներալ Նեբոլսինին գտնել և պատժել մեղավորներին, իսկ Իսրայել կաթողիկոսին ռուս սպայի հսկողության տակ ուղարկել Ղարաբաղ[176]:

Այսպիսով Գանձակի թեմի համար պայքարում Իսրայելը պարտություն կրեց և արտաքսվեց Ղարաբաղ, որտեղ էլ հաջորդ 1808 թ. հուլիսի 3-ին վախճանվեց[177]:

[175] Актыиг.яIIядок.яI51.

[176] Նույն տեղում:

[177] Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, Կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, արձանագրություն 581, էջ 168:

ԳԼՈՒԽ 2

ՀԱԿԱԹՈՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

XVI դարի թուրք-պարսկական պատերազմները ծանր հարված հասցրին Հայ Առաքելական եկեղեցուն: Եկեղեցու ներսում տարբեր խմբավորումների միջև ծավալված պայքարի հետևանքով հոգևոր դասի հեղինակությունը և վարկը ծայրահեղ անկման հասավ, վատթարացավ եկեղեցու տնտեսական վիճակը:

Առաքել Դավրիժեցին գրում է, որ էջմիածնի կաթողիկոսական աթոռը միաժամանակ զբաղեցնում էին մի քանի կաթողիկոսներ. «Զի ոչ թէ մի էր, այլ երեք և չորք կաթուղիկոսք, վասն զի յաղագս փառամոլութեան և ագահութեան իբրև զմաքսաւորս ղաբալայիւ և հարկիւ ի Պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթուղիկոսութեան և զսուրբ աթոռն էջմիածին... Կաթուղիկոսքն որպէս ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք զաստիճան կաթուղիկոսութեան, սոյնպես և ինքեանց ձեռնադրեալ եպիսկոպոսունքն և քահանայք տգէտք խոտանք և անպիտանք»[178]:

Հակամարտ կաթողիկոսները իշխանության և էջմիածնի տնտեսական միջոցները տնօրինելու համար պայքարում ջլատում և թուլացնում էին եկեղեցին, վատնում նրա տնտեսական ներուժը: Միևնույն թեմում առանձին հավաքած նվիրական գումարները և հոգևոր այլ հասույթներ օգտագործում էին երկպառակտչական պայքարում առավելության հասնելու, հակառակորդին նսեմացնելու, տեղական և կենտրոնական մահմեդական իշխանավորներին կաշառելու համար:

Միևնույն անմխիթար վիճակն էր տիրում Հայ Առաքելական եկեղեցու չորս ճյուղերից մեկը հանդիսացող Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունում: XVI դարի կեսից աթոռակալական պայքար էր ծավալվել այդ աթոռը զբաղեցնող Խաչենի Հասան-Ջալալյան իշխանական տան ներկայացուցիչ հոգևորականների և կաթողիկոսական աթոռին ժառանգաբար տիրելու նրանց իրավունքը վիճարկողների միջև:

Երկպառակտչական այս պայքարը հրահրվում էր Պարսից արքունիքի կողմից, որը նպատակ ուներ թուլացնել Աղվանից կաթողիկոսությունը և խամաճիկների վերածել այդ կաթողիկոսության աթոռի համար պայքարողներին: Հարկ է նշել նաև, որ այս պայքարը պարսկական իշխանությունների համար նաև եկամտի աղբյուր էր: Բացի կաշառքներից, որ շահին և շահական դիվանին, բարձրաստիճան պաշտոնյաներին հաստատման հրովարտակ ստանալու համար տալիս էին կաթողիկոսական գավազանի հավակնորդները, վերջիններս հաստատագրված գումար էլ էին մուծում շահական գանձարանին[179]:

Այս շարժառիթներից ելնելով Թահմասպ Ա շահը, 1555 թ. հրապարակած հրովարտակով Աղվանից կաթողիկոս հաստատելով Գրիգոր Հասան-Ջալալյանին[180], քիչ անց նրա փոխարեն կաթողիկոս է հաստատում ոմն Ամիրի որդի Մաղաքիայի, որը պարտավորվել էր ամեն տարի հարկ-մուղադա վճարել: Մաղաքիային չի հաջողվում ամուր հաստատվել կաթողիկոսական աթոռին: Թահմասպ Ա-ն իր մեկ այլ հրովարտակով 1570 թ. ապրիլի 19-ին կաթողիկոսական աստիճանը կրկին հանձնում է Գրիգոր Հասան-Ջալալյանին[181]: Սակայն Աղվանից կաթողիկոսությունում տիրող հեղհեղուկ վիճակը դրանով չի ավարտվում: Պարսից արքունիքի պարտադրանքով 1574 թ. Գրիգոր կաթողիկոսը ուրանում է իր հավատը և մահմեդականություն ընդունում:[182] Գրիգոր կաթողիկոսի ուրացությունը ակնառու ապացույց է այն հանգամանքի, թե ինչպիսի ստորացման էին հասցրել օտար բռնակալները ամբողջ Հայ Առաքելական եկեղեցին և մասնավորապես Աղվանից կաթողիկոսությունը: Այս դեպքից հետո շուրջ 80 տարի Աղվանից կաթողիկոսությունը դառնում է փառամոլ և կարճատես հոգևորականների պառակտիչ պայքարի թատերաբեմ:

Գրիգոր կաթողիկոսի ուրացությունից հետո կաթողիկոսական աթոռը, յուրաքանչյուրը մեկական տարով, զբաղեցնում են Դավիթ և Փիլիպոս կաթողիկոսները: Առաջինին աթոռակալելուց քիչ անց կախում են Գանձասարի վանքի զանգակատնից[183]: Փիլիպոսը, Հակոբ Փափազյանի կարծիքով, գահընկեց է արվում և վտարվում

---

[178] Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեան, Երևան, 1990, էջ 242:

[179] Закарий Канакерци, Хроника, пер. с. арм., комментарии М. Дарбинян-Меликян, Москва, 1969, с.159 (1870 թ. հայերեն հրատարակության մեջ այս տեղեկությունը բացակայում է):

[180] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Ա, վավ. 18, էջ 65-66:

[181] Նույն տեղում:

[182] Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Մաս Ա, կազմեց Սմբատ Տեր-Ավետիսյանը, Վիեննա, 1970, էջ 127:

[183] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 138; Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 21; Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դաղեանի, Մաս Ա, Վաղարշապատ, 1898, էջ 39:

Հասան-Ջալալյանների կողմից[184]: Կաթողիկոսական աթոռին բազմում է Հասան-Ջալալյան Հովհաննեսը: Աղվանից կաթողիկոսների ժամանակագրական ցանկերի համաձայն Հովհաննեսը վախճանվել է 1586 թ.: Նրան հաջորդել է Շմավոն կամ Սիմեոն Քոլատակեցին[185]: Հակառակ այս ցուցակների բերած տվյալների Հակոբ Փափազյանը գտնում է, որ Հովհաննեսը ոչ թե վախճանվել, այլ հեռացվել է կաթողիկոսական աթոռից և 1606 թ. Աբբաս Ա-ի հրովարտակով նորից ձեռք բերել այդ աթոռը՝ կաթողիկոսելով ընդհուպ մինչև իր մահը 1634 թ.[186]:

Հակոբ Փափազյանի այս պնդման հետ չի կարելի համաձայնել, քանի որ 1606 թ. Ջալալ իշխանի պատվերով գրված հիշատակարանում Ջալալի եղբայր Հովհաննես կաթողիկոսին հիշատակարանի գրիչը դասում է իշխանի մահացած հարազատների շարքը:[187] Ավելի վաղ՝ 1589 թ., Խաչենում գրված հիշատակարանից տեղեկանում ենք, որ այդ ժամանակ Աղվանից կաթողիկոս էր Սիմեոն կամ Շմավոն Քոլատակեցին. «թագաւորութեան մեծին Ճալալին և կաթուղիկոսութեան տեղիս տէր Սիմաւոնին ի սուրբ ուխտիս Գանձասարայ... Ի թուիս Հայոց ՌԼԸ»:[188] Հավանական չէ, որ Հովհաննես կաթողիկոսի կենդանության դեպքում նրա եղբայր Ջալալ իշխանի կողքին հիշատակարանում նշվեր կաթողիկոսական աթոռը խլած անձի անունը:

Այս հիշատակարանները հավաստում են կաթողիկոսական ցանկերի իսկությունը: XVI դարի երկրորդ կեսում և XVII դ. սկզբին Աղվանից կաթողիկոսությունում աթոռակալել են Հովհաննես անունով երկու կաթողիկոսներ: Առաջինը 1576-1586 թթ., երկրորդը՝ 1606-1634 թթ.: Այս երկու կաթողիկոսների աթոռակալության միջև ընկած ժամանակահատվածում Աղվանից կաթողիկոսական աթոռը զբաղեցրել են չորս կաթողիկոսներ: Խաչիկ Դաղյանի «Ձեռագրաց ցուցակ»-ի և Մատենադարանում պահվող վավերագիր կաթողիկոսական ցանկերի համաձայն 1587 թ. կաթողիկոս է օծվել Սիմեոնը կամ Շմավոնը, մեկ տարի անց՝ 1588-ին՝ Արիստակեսը, 1593 թ.՝

[184] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Բ, էջ 154-155:
[185] Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դաղեանի, Մաս Ա, էջ 89; Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 132:
[186] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Բ, էջ 154-155, 180-181:
[187] Մատենադարան, ձեռ. N 5794, էջ 207ա:
[188] Մատենադարան, ձեռ. N 378, էջ 7ա:

Մելքիսեթը և 1596 թ. Սիմեոնը:[189] Երկու ցանկերում էլ տրված են կաթողիկոսների աթոռակալման առաջին տարիները: Ի տարբերություն Խաչիկ Դաղյանի «Ցուցակ ձեռագրաց»-ի ցանկի Մատենադարանում պահվող վավերագրի կաթողիկոսական ցանկում նշված է Սիմեոն կամ Շմավոն կաթողիկոսի աթոռակալության վերջին տարին՝ 1612 թ.: Այսպիսով պարզ է դառնում, որ այս կաթողիկոսները աթոռակալել են ոչ հաջորդաբար: Նրանք կամ եղել են աթոռակիցներ, կամ, որ ավելի հավանական է, հակաթոռներ:

Հակոբ Փափազյանը ոչ Հասան-Ջալալյան է համարում այս կաթողիկոսներին և ենթադրում, որ նրանց ու Հասան-Ջալալյանների միջև աթոռակալական կռիվներ են եղել[190]: Այս ենթադրությունը մերժում է Բագրատ Ուլուբաբյանը, որը, հենվելով Խաչիկ Դաղյանի «Ցուցակ ձեռագրաց»-ի տված այն տեղեկության վրա, թե այդ կաթողիկոսները Քոլատակ և Շահմասուր գյուղերից էին, գրում է, որ այս «գյուղերը Հասան-Ջալալյանների իշխանանիստներից էին, և այդ տեղերում նստող իշխանական զարմիկներն էին, որ բազմում էին Գանձասարի աթոռին»:[191]

Աղբյուրներն ուղղակի տեղեկություն չեն տալիս տվյալ կաթողիկոսների այս կամ այն տոհմին պատկանելու և ծավալված աթոռակալական պայքարի վերաբերյալ: Սակայն մեր տրամադրության տակ եղած վավերագրերից կարելի է որոշակի եզրակացություն կատարել: Մատենադարանում առկա են քննարկվող ժամանակաշրջանից ավելի ուշ աթոռակալած Եսայի Հասան-Ջալալյանի անունով տրված Սուլթան-Հուսեին շահի երկու հրովարտակները: Դրանցից առաջինը շահը Հիջրայի 1111 թ. ռամազան ամսին (1700 թ. փետրվարի 20-մարտի 22) շնորհել է Եսայի Հասան-Ջալալյանին, երբ ողջ էր նրա հորեղբայր Երեմիա կաթողիկոսը, իսկ Եսային նրա աթոռակիցն էր[192]: Երկրորդ հրովարտակը Սուլթան-Հուսեին շահը հրապարակել է Հիջրայի 1113 թ. ջումադի ալ ավալ ամսին (1701 թ. հոկտեմբերի4-նոյեմբերի3), երբ Եսայի կաթողիկոսը, ներկայանալով շահական արքունիք, հայտնել է Երեմիա կաթողիկոսի մահվան մասին: Շահը այդ հրովարտակով Աղվանից կաթողիկոս է հաստատել Եսայիին[193]:

[189] Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դաղեանի, Մաս Ա, էջ 89; Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 132:
[190] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Բ, էջ 154-155:
[191] Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., էջ 377:
[192] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 131.:
[193] Նույն տեղում, վավ. 141:

Այս վավերագրերից պարզվում է, որ չնայած Աղվանից ավագ աթոռակալ կաթողիկոսների կենդանության օրոք հրովարտակներ էին շնորհվում նրանց աթոռակիցներին, բայց վերջիններին կաթողիկոս էին հաստատում միայն ավագ աթոռակալների մահից հետո:

Վերն ասացինք, որ Հովհաննես է Հասան-Ջալալյանին (1574-1586) հաջորդած Սիմեոն կամ Շմավոն կաթողիկոսը աթոռակալել է մինչև 1612 թ.:

Աբբաս Ա շահը (1571-1629) մեկ այլ Հովհաննես անունով Հասան-Ջալալյան հոգևորականի կաթողիկոս է հաստատում 1606 թ. այսինքն Սիմեոն կաթողիկոսի կենդանության օրոք: Հրովարտակում նշվում է, որ Հովհաննեսը շահին է ներկայացրել իր հորեղբայր Գրիգորին Աղվանից կաթողիկոս հաստատելու հրամանագիրը:[194] Հրովարտակում ոչ մի խոսք չի ասվում Սիմեոն կաթողիկոսի մասին: Պարզ է, որ Հովհաննեսը չէր կարող Սիմեոնի աթոռակիցը լինել:

Ներկայացված վավերագրերի տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 1586-1606 թթ. Աղվանից կաթողիկոսությունում միմյանց հակամարտ կաթողիկոսներ են իշխել:

1606 թ. շահական հրովարտակով կաթողիկոս հաստատված Հովհաննես Ը Հասան-Ջալալյանին (1606-1634) չի հաջողվում միանձնյա աթոռակալել: Երկպառակտչական պայքարը շարունակվում է նաև նրա օրոք: Նուգզար գյուղին կից Ամենափրկիչ վանքի արձանագրություններից մեկում հիշատակվում է Աբբաս Ա-ի օրոք աթոռակալած Աղվանից Տրդատ կաթողիկոսի մասին[195]: Դիզակի Խանձաձոր գյուղում գրի առված Ավետարանի 1604 թ. հիշատակարանում հանդիպում է Աղվանից կաթողիկոս տեր Պետրոս սրբասերի անունը[196]: Խաչիկ Դադյանի «Ձեռագրաց ցուցակի» ցանկում 1633 թ. հիշվում է Հովհաննես Շահմասուրեցին[197]: Նրանք չէին կարող լինել Հասան-Ջալալյան Հովհաննես Ը կաթողիկոսի աթոռակիցները, քանի որ վերջինիս մահից հետո ոչ թե այս երեքից մեկն է հաստատման շահական հրովարտակ ստացել, այլ Գրիգոր Հասան-Ջալալյանը: Փաստորեն և՛ Տրդատը և՛ Պետրոսը, և՛ Շահ-

[194] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 5, էջ 84-85:

[195] Երվանդ Լալայան, Գանձակի գավառ, «Ազգագրական հանդես», Ե գիրք, 1899, էջ 346:

[196] Ալեքսան Յակոբեան, Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարավային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա,1999, էջ283:

[197] Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դադեանի, Մաս Ա, էջ 89:

մասուրեցի Հովհաննեսը վիճարկում էին կաթողիկոսական գավազանը Հովհաննես Ը Հասան-Ջալալյանից:

Հակոբ Փափազյանը այս պայքարի հետ է կապում Քուստի գավառի Հախում գյուղի Ավետարանի 1633 թ. հիշատակարանի հաղորդումը, համաձայն որի Հովհաննես կաթողիկոսը «մատնեցաւ ի ձեռն պարսիկ ազգին, տարան ի դուռն Շահին...»[198]:

Հովհաննես Հասան-Ջալալյանին հաջողվում է հաղթանակ տանել աթոռակալական պայքարում և վերստին իր կաթողիկոսական իրավունքների հաստատման հրովարտակ ստանալ:[199]

1634 թ. վախճանված Հովհաննեսին շահ Սեֆիի 1634 թ. դեկտեմբերի 31-ի հրովարտակով հաջորդում է Գրիգոր Հասան-Ջալալյանը (1634-1653)[200]: Վերջինս 1639 թ. Գանձակում գրված մի Ավետարանի հիշատակարանում անվանվում է «նորընծա Գրիգոր կաթուղիկոս»[201]: Հիշատակարանի տվյալը թույլ է տալիս եզրակացնել, որ 1634 թ. վերջին շահի կողմից հաստատված Գրիգոր Հասան-Ջալալյանը կաթողիկոս է օծվել շատ ավելի ուշ, ինչի պատճառը, հավանաբար, շարունակվող աթոռակալական վեճերն էին:

Համաձայն Մատենադարանի մի վավերագրի Աղվանից կաթողիկոսությունը այնքան էր թուլացած, որ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսին հաջողվեց 1634 թ. ձեռք բերել շահ Սեֆիի հրովարտակը, որով բուն Ղարաբաղը տրվում էր էջմիածնին, իսկ նրա կաթողիկոսին պետք է հանձնվեր այստեղ հավաքվող հոգևոր ամբողջ տուրքը[202]: Այս հրովարտակի հավաստի լինելը ապացուցվում է Փիլիպոս Աղբակեցու կոնդակով, որում Փիլիպոս կաթողիկոսը գրում է, որ տեսել է Ջրաբերդի մելիքությունում գտնվող Եղիշե առաքյալի վանքը ավեր, իսկ նրան պատկանող գյուղերը անառաջնորդ և անհովիվ: Նույն կոնդակով նա ոմն Կիրակոս վարդապետին նշանակում է սույն վանքի առաջնորդ[203]:

Եղիշե առաքյալի վանքի առաջնորդ եպիսկոպոսը ավանդաբար նշանակվում էր Աղվանից կաթողիկոսի կողմից և ենթարկվում էր վերջինիս: Էջմիածնի կողմից այս վանքի առաջնորդի նշանակումը ակնհայտորեն ցույց է տալիս, որ Գրիգոր Հասան-Ջալալյան կա-

[198] Մակար Բարխուտարեանց, Արցախ, էջ 333; Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Բ, էջ 180-181:

[199] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Բ, վավ. 23, էջ 110:

[200] Նույն տեղում:

[201] Մատենադարան, ձեռ. N 7980, էջ 294բ:

[202] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1ա, վավ. 57:

[203] Մակար Բարխուտարեանց, Արցախ, էջ 48-49, Բագու, 1896 թ.

թողիկոսը կորցրել էր վերահսկողությունը նույնիսկ Խաչենին (որտեղ գտնվում էր Գանձասարի վանքը) հարևան Ջրաբերդի մելիքությունում գտնվող վանքի նկատմամբ:

Էջմիածնի դեմ այս պայքարը դրամական մեծ ծախսեր է պահանջում Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսից, և քանի որ Աղվանից հարուստ թեմերից հոգևոր տուրքեր չէին ստացվում, Գրիգոր կաթողիկոսը սկսում է պարտքով գումարներ վերցնել: 1650 թ. հրապարակվում է Շահ-Աբբաս Բ-ի հրովարտակը, որով Շիրվանի թեմը տրվում է Էջմիածնին: Այս թեմը Աղվանից կաթողիկոսության ամենահարուստ թեմերից մեկն էր, և այնտեղից ստացվում էին զգալի եկեղեցական տուրքեր: Շիրվանի թեմի կորուստը անհանգստացնում է Գրիգորի պարտատերերին, որոնք պահանջում են վերադարձնել պարտքերը: Գրիգոր կաթողիկոսին չի հաջողվում պարտքերը լրիվ հատուցել և Գանձակում նստող Ղարաբաղի բեկլարբեկ Մուրթուզա-ղուլի խանը պարտատերերի պահանջով նույն թվականին բանտարկում է կաթողիկոսին: Գրիգոր կաթողիկոսը ազատ է արձակվում միայն այն պայմանով, որ շրջելով իրեն դեռևս ենթարկվող թեմերում՝ ժողովարարություն անի և այդպիսով մարի պարտքը[204]:

Այս ամենին գումարվում է Աղվանից կաթողիկոսության ներսում ծայր առած երկպառակտչական պայքարը:

Կաթողիկոսանիստ Գանձասարի վանքի միաբանները Պետրոս եպիսկոպոսի ղեկավարությամբ Գրիգորից պահանջում են հրաժարվել կաթողիկոսությունից՝ պատճառաբանելով, որ Հասան-Ջալալյանները Գանձասարի կաթողիկոսական աթոռը ժառանգական սեփականության են վերածել[205]:

Պետրոս եպիսկոպոսը Ղարաբաղի գավառներում աջակցություն է ստանում. «Յարեան և կուսակիցք նորա (Պետրոսի-Լ. Մ.) բազում ի միաբանից Գանձասարայ և ի ժողովրդոց Արցախայ գաւառակացն Վարանդու, Գյուլիստանու և Ջրաբերդու: Վիշտս ոչ սակաւ հասուցին կաթողիկոսին Տէր Գրիգորի, յորմէ նուազել սկսաւ միաբանութիւն Գանձասարայ և անշքանալ Աթոռն կաթուղիկոսական»:[206] Թերևս Պետրոս եպիսկոպոսի և նրա կողմնակիցների նկրտումներին վերջ տալու և նրանց սանձելու համար է Գրիգորը դիմել Շահ-Աբբաս Բ-ին, որը Հիջրայի 1062 թ. ջումադ ալ-շանի

[204] Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1641-1660), հ. Գ, Երևան, 1984, էջ 411,:

[205] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 9բ:

[206] Նույն տեղում:

ամսին (1651 թ. մայիսի 10-հունիսի 8) տրված հրովարտակով վերստին Գրիգորին հաստատել է Աղվանից կաթողիկոս՝ հրամայելով հնազանդվել նրան[207]: Սակայն այս հրովարտակը Գրիգոր կաթողիկոսի դիրքերը չամրապնդեց:

Աղվանից կաթողիկոսության հիմքերը խարխլող այս պայքարին վերջ տալու նպատակով Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսի կողմնակիցները ստիպված էին դիմել զիջումների և փոխհամաձայնության եզրեր փնտրել Պետրոս եպիսկոպոսի հետ:

Խաչենի մելիք Աբաբեկ Հասան-Ջալալյանի նախաձեռնությամբ համաձայնություն կայացվեց, ըստ որի Պետրոսը դառնում էր Գրիգոր կաթողիկոսի որդեգիրը և դրանով՝ նաև Հասան-Ջալալյան տոհմի անդամը: Գրիգորի մահից հետո Գանձասարի կաթողիկոսական աթոռին նստելու էր Պետրոսը:[208] Վարդան Օձնեցին իր «Պատմութիւն Հայոց» աշխատությունում մեջ է բերել Պետրոս եպիսկոպոսի երդմնագիրը, որի տակ իրենց կնիքն են դրել Խաչենի մելիք Աբաբեկ Հասան-Ջալալյանը և Գրիգոր կաթողիկոսի կողմնակից երեք եպիսկոպոսներ. «Հառաջի Աստուծոյ և Սուրբ Աջոյն Գրիգորիսի և Սուրբ Աթոռոյս Գանձասարայ ես՝ Պետրոս եպիսկոպոս, որդիութեան գիր տուի Գրիգոր կաթուղիկոսին, որդի և ժառանգ լիցիմ նմա: Ոչ միայն հոգևոր հօրն, այլ եղբայրքն նորա, իմ լիցին եղբայր և 'ի կենդանութեան իմում տացից (կաթողիկոսությունը-Լ. Մ.) եղբօր որդւոցն իմոց: Գրեցաւ թուին ՌԵ և մեկին (1652 թ.)»[209]:

Սրանով Պետրոս եպիսկոպոսը, որը ծնունդով Խաչեն գավառի հարավում գտնվող Խանձք գյուղից էր[210], դառնում է Հասան-Ջալալյան տան որդեգիրը և արդեն որպես Հասան-Ջալալյան տոհմի անդամ՝ իրավունք է ստանում փոխարինել իրեն որդեգրած Գրիգոր կաթողիկոսին Աղվանից կաթողիկոսական աթոռին: Որդեգրման այս ակտով փաստորեն Աղվանից կաթողիկոսական աթոռին Հասան-Ջալալյանների ժառանգական իրավունքները ճանաչվում էին, և Հասան-Ջալալյան տոհմի կաթողիկոսների հերթագայությունը չէր ընդհատվում: Պետրոսը պարտավորվում էր նաև իր մահից առաջ Աղվանից կաթողիկոս օծել միայն Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցչին. կաթողիկոսությունը «տացից

[207] Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մաս Բ, Տփխիս, 1853, էջ 488-489:

[208] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 10ա:

[209] Նույն տեղում, էջ 10ա-10բ:

[210] Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, էջ 143:

եղբօր որդոցն իմոց»: Այս աղբյուրը հայտնում է, որ կնքված համաձայնությունից հետո երկպառակությունը դադարում է, Գանձասարի կաթողիկոսությունը վերագտնում է կորսված հեղինակությունը և հարստությունը[211]:

Բ. Ուլուբաբյանը իր «Պետրոս Խանձքեցի» հոդվածում գրում է, որ Պետրոսը Աղվանից կաթողիկոս է դարձել 1647 թ. և Հասան-Ջալալյանների Խանձքում բնավորված ճյուղից է: Վերը հիշատակված որդեգրման ակտը թույլ է տալիս պնդել, որ Պետրոսը չէր պատկանում Հասան-Ջալալյան տոհմին:

Ինչ վերաբերում է Պետրոս Խանձքեցուն կաթողիկոս օծելու Բ. Ուլուբաբյանի նշած թվականին (1647), ապա, վիճարկելով այն կարող ենք ենթադրել, որ Պետրոս Խանձքեցին կարող էր հակաթոռ կաթողիկոս օծվել Հասան-Ջալալյան Գրիգոր կաթողիկոսից դժգոհ եպիսկոպոսների կողմից[212]:

Դեռևս կենդանության օրոք Գրիգորը կաթողիկոս է օծում Պետրոս եպիսկոպոսին, որը նրա վախճանվելուց հետո 1663 թ. Աբբաս Բ-ի հրովարտակով հաստատվում է Աղվանից կաթողիկոս[213]: Վարդան Օձնեցին, չնշելով Գրիգորի մահվան թվականը, հայտնում է, որ նրա մահից հետո, Հիջրայի 1073 թ. (1663թ.) Աբբաս-Բ շահը Պետրոսին հաստատում է Աղվանից կաթողիկոս[214]:

Համաձայն Մատենադարանում պահվող վավերագրերից մեկում առկա Աղվանից կաթողիկոսների ցուցակի, Պետրոսը սկսել է գահակալել 1653 թ.[215]:

Աղվանից կաթողիկոսների Հովհաննես Շահխաթունյանի կազմած ցուցակում ևս Պետրոս կաթողիկոսի նվիրապետության սկիզբ է նշվում 1653 թվականը[216]:

Այսպիսով, եթե Պետրոսը կաթողիկոսի հոգևոր պաշտոնը ստանձնել է Գրիգորի մահից անմիջապես հետո, ինչու՞ է Շահ-Աբբաս Բ-ն նրա հաստատման հրովարտակը արձակել Հիջրայի 1074 թվականի սաֆար ամսին (1663 թ. սեպտեմբերի 4-հոկտեմբերի 3)[217], այսինքն, Գրիգորի մահից և Պետրոսի Աղվանից կաթողիկոսական աթոռը զբաղեցնելուց 10 տարի անց:

[211] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 10բ:
[212] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Երևան, 1983, էջ 258:
[213] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 10բ:
[214] Նույն տեղում:
[215] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 132:
[216] Յովհաննէս Շահխաթունեան, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ. հ. երկրորդ, էջմիածին, 1842, էջ 334:
[217] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 58բ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշ գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորի վրա գոյություն ունի հետևյալ բովանդակությամբ արձանագրություն. «Շինեցաք զսուրբ Ամենափրկիչ եկեղեցիս յիշատակ հոգւոց մերոց և ննջեցելոց ի հայրապետութեան Աղուանից տեառն Երեմիայի ... Թուին էր ՌԵՂ (1655 թ.)»[218]:

Այս արձանագրությամբ վկայակոչվող Երեմիա հայրապետը Գրիգոր կաթողիկոսի եղբորորդի Երեմիա Հասան-Ջալալյանն է, որը միայն 1675 թ. է (այսինքն, Պետրոս կաթողիկոսի մահից հետո) Սուլեյման շահի կողմից կաթողիկոս հաստատվել[219]:

Այս տվյալներից կարելի է եզրակացնել, որ Գրիգոր կաթողիկոսի մահից հետո Պետրոսի կաթողիկոսության սկիզբն այնքան էլ հանգիստ ու հարթ չի եղել: Ամենայն հավանականությամբ, Հասան-Ջալալյան տոհմի այն ներկայացուցիչները, որոնք դժգոհ էին 1652 թ. կայացած համաձայնությունից, և Պետրոսի հակառակորդ մի շարք հոգևորականներ փորձել են Պետրոսին հակառակ առաջ քաշել Հասան-Ջալալյան Երեմիային: Պետրոս կաթողիկոսին հաջողվել է ստանալ Ղարաբաղի բեկլարբեկ և Գանձակի խան Մուրթուզա-Ղուլի խանի աջակցությունը, որը Հիջրայի 1066 թ. ջումադի ալ-ավալ ամսի (1656 թվականի փետրվարի 26-մարտի 27) հրովարտակով հրամայել է Ղարաբաղի, Գանձակի և Շիրվանի հայ ավագանուն Աղվանից կաթողիկոս ճանաչել Պետրոսին[220]:

Չնայած այս հրովարտակի հետևանքով Աղվանից կաթողիկոսական աթոռի նկատմամբ Երեմիա Հասան-Ջալալյանի նկրտումները կասեցվել են, և մինչև 1675 թվականը Երեմիան որպես կաթողիկոս այլևս չի հիշատակվում, սակայն Աղվանից կաթողիկոսության կախումն ուժեղացնելու համար Սպահանի շահական դիվանը Պետրոսին Աղվանից կաթողիկոս հաստատելու հրովարտակի հրապարակումը 10 տարի ձգձգել է:

Աղվանից կաթողիկոսական գավազանի նկատմամբ իր իրավունքի դեմ նոր ելույթները կանխելու համար Պետրոս Խանձքեցին զգում էր Ամենայն Հայոց կաթողիկոսության աջակցության կարիքը: Ահա այդ պատճառով, կարգավորելով էջմիածնի հետ Շիրվանի թեմի համար վեճը, Պետրոս Խանձքեցին վերականգնեց ավանդական եկեղեցական կանոնը՝ Աղվանից կաթողիկոս հաստատվելով

[218] Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, արձանագրություն 495, էջ 145:
[219] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 201 (ռուսերեն պատճեն):
[220] Նույն տեղում, թղթ. 2ա, վավ. 47:

էջմիածնում Հակոբ Ջուղայեցու կողմից[221]:

Աղվանից կաթողիկոսության Գանձակի և Շիրվանի թեմերը վերադարձնելուց և էջմիածնի կաթողիկոսության հետ հարաբերությունները բարելավելուց բացի, Պետրոս կաթողիկոսը ակտիվորեն և հաջողությամբ զբաղվել է կաթողիկոսության ներքին կարգուկանոնի վերականգնմամբ՝ անհրաժեշտության դեպքում անմիջապես դիմելով շահին:

1661 թ. հուլիսին Պետրոս կաթողիկոսը կարգավորում է մի կողմից Դադիվանքի, Խաթրավանքի, մյուս կողմից մի խումբ հոգևոր աշխարհիկ հողատերերի վեճը: Վանքերի հողային սեփականության մի մասը վիճարկող այս խումբը պարտավորագիր է տվել Պետրոս կաթողիկոսին, որով վերջիններս պարտավորվում էին դադարեցնել դեռ իրենց նախնիների կողմից սկսած «վանքի ու թեմի դաւին» և բավարարվել Ատրենիս, Ըռուցփոր, Քավթառանց, Հաճավ, Բորու, Քարվաճառ, Գումերն, Ջվար գյուղերի մուլքերով: (Այս բոլոր գյուղերը գտնվում են Քելբաջարի շրջանի տարածքում)[222]:

1669 թ. օգոստոսին Պետրոս կաթողիկոսը դիմում է Սուլեյման շահին՝ բողոքելով, որ Ղարաբաղի, Զարուզբիլի և Շամախու մուսուլման իշխանավորները կրոնական հալածանքի են ենթարկում նույն գավառների հայերին և թույլ չեն տալիս հայոց եկեղեցու ծեսերի կատարումը:

Սուլեյման շահը Ղարաբաղի բեկլարբեկ Ուղուրլու-խանին ուղղված հրովարտակում հայտարարելով, որ քրիստոնյաներին կրոնական հալածանքի ենթարկելը դեմ է շարիաթի կանոններին, հրամայում է քննել Պետրոս կաթողիկոսի բողոքը և սանձել մուսուլման իշխանավորների և ավատատերերի կրոնական մոլեռանդությունը[223]:

Շահը մեկ այլ հրովարտակով հարկերից ազատում է Գանձասարի վանքը և հրամայում է Ղարաբաղի մուսուլման իշխանավորներին չանհանգստացնել և հարգանքով վերաբերվել Ղարաբաղի հայ հոգևորականությանը[224]: Վանքն ազատվում էր այն բոլոր հարկերից ու պարտավորություններից, որոնք պարտադիր կերպով գանձվում էին բնակչության այլ խավերից:

[221] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 10բ-11ա; Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 66:

[222] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 160:

[223] Կթղկ. դիվան, թղթ 2ա, վավ. 76; Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մաս Բ, էջ 491-492:

[224] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 77:

Սույն հրովարտակից կարող ենք եզրակացնել, որ վանքին տրվում էր հարկային իմունիտետի կամ մուաֆության իրավունք:

Պետրոս կաթողիկոսը պայքարում է նաև այն ընչասեր հոգևորականների դեմ, որոնք իրենց նյութական շահախնդրությունից դրդված՝ մասնատում էին եկեղեցական թեմերը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Հերհեր գյուղի Սուրբ Գրիգորիսի եկեղեցու բեմի արձանագրությունից տեղեկանում ենք. «Կամաւն Աստուծոյ, ես Պետրոս կաթուղիկոս Աղուանից սուրբ աթոռոյն Գանձասարայ, նորոգեալ սուրբ աթոռս Ամարասայ՝ արհիեպիսկոպոսութեանն բոլոր նահանգի Վարանդու և Քոչիզու*, քանզի փեռեկտեալ և պատառեալ էին զվիճակ սորին՝ արարեալ ըստ իւրաքանչիւր կամաց: Իսկ մեք զցանկ հայրենի նորոգեալ, ժողովեցաք, նորոգեցաք ... զի եղիցի այս երկու աթոռս մի»[225]:

Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի կողմից ձեռք առնված այս միջոցառումները նպաստում էին ոչ միայն Աղվանից կաթողիկոսության հոգևոր ազդեցության աճին, վանական տնտեսության զարգացմանը, այլև նյութական հենարան ստեղծում նրա մշակութային գործունեության համար: Պետրոս Խանձքեցու օրոք մեծ թափ ստացավ կիսավեր վանքերի վերականգնումը և նոր եկեղեցիների կառուցումը: Վերականգնվեց V դարի վանական համալիր Ամարասը[226]: Կառուցվեցին Խաչենի գավառի Առաջաձոր գյուղի Սուրբ Աստվածածին (1668 թ.)[227], Պետրոս կաթողիկոսի ծննդավայր Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոս (1673 թ.)[228], Վարանդայի Հերհեր գյուղի Սուրբ Գրիգորիս (1673 թ.)[229], Փառիսոսի Հին Փիփի գյուղի (1670 թ.)[230] եկեղեցիները և Չարեքա անապատի զանգակատունը (1659 թ.)[231]:

Աղվանից կաթողիկոսության վարկի ու հեղինակության աճի արտահայտությունն էր նաև այն, որ Նոր-Ջուղայի հայ առևտրական ընկերությունները Ռուսաստանում իրենց առևտրային գործառ-

* Քոչիզը Ծովատեղ գյուղի նախկին անունն է, գտնվում է Մարտունու շրջանի Հերհեր գյուղից մի քանի կիլոմետր հյուսիս: Այս գյուղում է գտնվում Մելիք-Փաշայանների տոհմական դամբարանը (Մակար Բարխուտարեանց, Արցախ, էջ 106):

[225] Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, արձանագրություն N 580, էջ 168:

[226] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ 240, վավ. 132:

[227] Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, արձանագրություն N 271, էջ 89:

[228] Նույն տեղում, արձանագրություն 484, էջ 143:

[229] Նույն տեղում, արձանագրություն N 571, էջ 164:

[230] Նույն տեղում, արձանագրություն N 1036, էջ 269:

[231] Նույն տեղում, արձանագրություն N 1035, էջ 268:

նությունները կարգավորելու համար դիմում են ոչ թե Հակոբ Ջուղայեցուն, այլ Պետրոս Խանձքեցուն, որը 1672 թ. դեկտեմբերի 2-ին նամակ է գրում Ալեքսեյ Միխայլովիչ ցարին, որտեղ խնդրում էր հովանավորել Նոր-Ջուղայի՝ Ռուսաստանում առևտրով զբաղվող խոջաներին և ամբողջ հայ ժողովրդին[232]:

Պետրոս Խանձքեցու օրոք Աղվանից կաթողիկոսության ծաղկման մասին վկայում է նաև Ամենայն հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցին (1706-1714), որը իր կոնդակներից մեկում գրում է, որ Պետրոս կաթողիկոսի օրոք միայն Գանձասարի վանքն ունեցել է 80 միաբան, բազմաքանակ եկեղեցական սպասք և դրամ[233]:

Չի չափազանցում գրիչ Գրիգոր Երեցը, որ Պետրոս կաթողիկոսին կոչում է «կրկին լուսավորիչ, որ խնամօք Աստուծոյ և շնորհօք Սուրբ Հոգւոյն և բարի քաղաքաւարութեամբն իւրով լուսաւորեայ զխաւարեալ տունս Աղուանից և պայծառացոյց զեկեղեցիս կարգաւորութեամբ»[234]:

1674 թ. սահմանագծին վախճանվեց Պետրոս Խանձքեցի կաթողիկոսը: Վարդան Օձնեցին գրում է, որ մեռնելուց առաջ նա, համաձայն 1652 թ. տված իր պարտավորագրի, Աղվանից կաթողիկոսությունը թողեց Հասան-Ջալալյանների տոհմի ներկայացուցիչ Երեմիային[235]: Այս անգամ էլ Գանձասարի վանքի միաբանները ընդդիմանում են Գանձասարի կաթողիկոսական աթոռի նկատմամբ Հասան-Ջալալյանների ժառանգական իրավունքների վերականգնմանը: Գանձակի և Պարտավի առաջնորդները, չճանաչելով Երեմիայի կաթողիկոսական իրավունքները, նույնիսկ «կամեցին առանձին ունիլ զթէմս իւրեանց անկախ ի կաթուղիկոսացն Աղուանից և էջմիածնայ»[236]: Երեմիա կաթողիկոսը այս ընդդիմությանը վերջ տալու նպատակով կաթողիկոս դառնալուց մեկ տարի անց կաշառքով Գանձակի և Բարդայի խաներից հրովարտակներ է ձեռք բերում, որոնցով խաները նրան կաթողիկոս են ճանաչում՝ հրամայելով իրենց իշխանության տակ գտնվող հայերին՝ հնազանդվել նրան[237]:

Ապա Վարդան Օձնեցին գրում է. «Յետ չորս ամաց կաթուղիկոսութեան Տէր Երեմիայի հաճեալ զկամս Բեկլար բէկին Բարդայու,

[232] Армяно-русские отношения в XVII веке, том I, Ереван 1953, с. 91-92.
[233] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 15բ-18բ:
[234] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարանները, հ. Գ, էջ 851:
[235] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 11ա:
[236] Նույն տեղում, էջ 11բ:
[237] Նույն տեղում:

Սիմէօն եպիսկոպոս՝ առաջնորդ Բարդաբասանու և Ջրաբերդու՝ ի թուին հայոց ՌԾԻԳ (1674) օծաւ հակառակ աթոռ կաթուղիկոս Աղուանից»[238]: Այստեղ «յետ չորս ամաց»-ը վրիպակ է, պետք է լինի «յետ չորս ամսոց», քանի որ պարբերության վերջում նշվում է Սիմեոնի կաթողիկոս օծվելու տարեթիվը՝ «թուին հայոց ՌԾԻԳ (1674)»:

Փորձենք պարզել այս մութ պատմությունը՝ դիմելով այլ աղբյուրների օգնությանը:

Մատենադարանի թիվ 8965 Ավետարանի հիշատակարանը քննարկվող հարցի վերաբերյալ լրիվ հակառակ տեղեկություններ է տալիս:

Ըստ այդ հիշատակարանի՝ Պետրոս կաթողիկոսը 1675 թվականին կտակով Աղվանից կաթողիկոսական աթոռը հանձնում է իր աշակերտ Սիմեոնին, որ չէր պատկանում Հասան-Ջալալյան տոհմին: Սիմեոնը, Պետրոս Խանձքեցու վախճանվելուց հետո «կամակցութեամբ ամենայն մեծամեծաց տանս Աղուանից» օծվում է Աղվանից կաթողիկոս և մեկնելով Ղազվին՝ միաժամանակ հաստատվում է Աղվանից կաթողիկոս և՛ Սուլեյման շահի հրովարտակով, և՛ այդ ժամանակ Պարսկաստանում գտնվող Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու կոնդակով[239], որը հալածվելով Երևանի Սեֆի-Ղուլի խանի կողմից, ապավինելով շահի արդարադատությանը, 1673-1675 թթ-ին գտնվում էր Սպահանում[240]: Այս հիշատակարանը միակ աղբյուրն է, ըստ որի Սիմեոն կաթողիկոսը Հակոբ Ջուղայեցուց հաստատման կոնդակ է ստացել: Իսկ Սուլեյման շահի՝ Երեմիային Աղվանից կաթողիկոս հաստատելու հրովարտակում ասվում է, թե Երեմիան, ներկայանալով շահին, հայտնել է, որ իր հորեղբայր Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսի մահից հետո իր անչափահաս լինելու պատճառով կաթողիկոս է դարձել Պետրոսը, որը դեռ իր կենդանության օրոք կաթողիկոսությունը իրեն է հանձնել:

Երեմիան շահին ներկայացրել է Աղվանքի հայ իշխանների համախոսականը, որով նրանք հայտնում էին, որ Գանձասարի կաթողիկոս են ճանաչում Երեմիային և «երախտապարտ են» նրան:

* Բարդաբասանը գավառակ է Արցախում, տարածվում է Ջրաբերդի գավառից արևելք (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, Երևան, 1986, էջ 620):
[238] Նույն տեղում, էջ 12ա:
[239] Մատենադարան, ձեռ. N 8965, էջ 361 բ:
[240] Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության (այսուհետև՝ Դրվագներ), Գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 158-161:

Շահը բավարարել է Երեմիայի խնդրանքը և նրան «Նապաստակի տարվա սկզբից» հաստատել է Ղարաբաղի, Գանձակի և Շամախու կաթողիկոս: Հրովարտակը տրվել է Հիջրայի 1086 թ-ի սաֆար ամսին (1675 թ. ապրիլի 27-մայիսի 26)[241]:

Այս հրովարտակից հետևում է, որ Երեմիան իր հորեղբոր մահից հետո Պետրոսի՝ Գանձասարի կաթողիկոս դառնալու փաստը պատճառաբանում է իր անչափահասությամբ: Այստեղ ոչ մի խոսք չի ասվում 1652 թ. դեռ եպիսկոպոս Պետրոս Խանձքեցու և Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսի միջև կայացած համաձայնագրի մասին:

Շոշ գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու արձանագրությունը վկայում է, որ Երեմիան Աղվանից հայրապետ է կոչվել Պետրոսի կաթողիկոսության օրոք՝ 1655 թ.[242]:

Երեմիան շահին է ներկայացնում Աղվանքի հայ իշխանների՝ իր անունով մուջալա-համախոսականը, սակայն նրա այն պնդումը, թե Պետրոսը իր կենդանության օրոք Աղվանից կաթողիկոսական աթոռը հանձնել է իրեն, շարադրվել է բանավոր: Մեր կարծիքով, եթե Երեմիան ունենար իր անունով Պետրոս կաթողիկոսի գրավոր կտակը, ապա այն կներկայացներ Սուլեյման շահին: Մինչդեռ հրովարտակում հստակ նշված է, որ Երեմիան հայտնել է, թե Պետրոս Խանձքեցին կաթողիկոսությունը հանձնել է իրեն և ներկայացրել է միայն Աղվանքի հայ իշխանների գրավոր համախոսականը:

Հրովարտակը գրվել է 1675 թ. ապրիլ-մայիս ամիսներին, սակայն շահը Երեմիայի կաթողիկոսությունը հաստատում է «Նապաստակի տարվա սկզբից» այսինքն հետին թվով, նույն 1675 թ. փետրվարի երկրորդ կեսին:

XVIII դ. երկրորդ կեսին կազմված Աղվանից կաթողիկոսների գավազանագրում Պետրոս Խանձքեցուց հետո հիշատակվում են ոչ միայն Սիմեոնն ու Երեմիան, այլև ոմն Մելիքսեթ Արեշեցի, որին գավազանագիր կազմողը կեղծ կաթողիկոս է անվանում՝ հաղորդելով, որ նրա հայրապետության թվերը իրեն հայտնի չեն[243]: Այս Մելիքսեթից հետո հերթականորեն նշված է Սիմեոնի անունը, որին կազմողը անվանում է շնորհալիր հայրապետ Մեծ Կունեցի*: Երեմիայի անունը տեղադրված է Սիմեոնի անունից հետո: Երեմիայի վերաբերյալ, որին գավազանագիրը կազմողը Երեմիա

[241] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 201, Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մաս Բ, էջ 491-492:

[242] Տես վերը, էջ

[243] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 132:

* Մեծ Կունեցը Մեծկվենք, Մեծկունացը Մակար Բարխուտարյանցը տեղադրում է Թարթառ և Քուրակ-չայ գետերի միջև: Տես, Մակար Բարխուտարեանց, Արցախ, էջ 25:

ճալեցի է անվանում և նրա կաթողիկոսության սկիզբ է նշում 1676 թ., գրված է. «Հակառակեալ, անձամբ առեալ կաթուղիկոսութիւն ի միասին վարին չարչարանօք, որ խոտեալ և աղճատեալ ոմն եղիայ անուն եպիսկոպոս անուան կաթողիկոս և նա ձեռնադրէ Տէր Երեմիային անուանին կաթուղիկոս»[244]:

Այս գավազանագրի համաձայն Երեմիային անվանական-անօրինական կաթողիկոս է օծել ոմն Եղիա եպիսկոպոս, որը նույնպես անօրինական կերպով իրեն կաթողիկոս էր հորջորջում: (Պետք է ենթադրել, որ Երեմիայի «օծումը» տեղի է ունեցել ոչ թե 1675-ին, այլ 1655 թ.-ից ոչ ուշ, երբ Երեմիան վիճարկում էր Աղվանից կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցուց): Սրանից հետո Երեմիան, դեմ գնալով եկեղեցական կանոնադրությանը, Սիմեոնի հետ միասին «չարչարանօք» է աթոռակալել: Ինչպես տեսնում ենք, այս աղբյուրը Երեմիա Հասան-Ջալալյանին է հակաթոռ համարում:

Սիմեոն Երևանցին թեև նույնպես Զրաբերդցիների կաթողիկոսական տոհմի հիմնադիր Սիմեոնին անվանում է ինքնընծա և առանց Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու հաստատման Գանձասարում աթոռակալած, սակայն շատ հետաքրքիր տեղեկություն է տալիս: Ըստ Սիմեոն Երևանցու՝ Սիմեոնը իրեն Աղվանից կաթողիկոս հռչակելուց հետո լքում է կաթողիկոսանիստ Գանձասարի վանքը՝ վերցնելով վանքի ամբողջ գույքը, և տեղափոխվում իր հայրենի գյուղը՝ վայելելով մահմեդական մուլքադարի հովանավորությունը[245] (Մակար Բարխուտարյանցը Սիմեոնի ծննդավայր է համարում Զրաբերդի գավառի Թրղի գետի ձորում գտնվող Խոտորաշենը[246]): Այդ պատճառով Հակոբ Ջուղայեցին բանադրում է Սիմեոնին և Աղվանքից էջմիածին կանչելով ոմն Երեմիա աբեղայի՝ նրան միաժամանակ ձեռնադրում է եպիսկոպոս, ապա օծում Աղվանից կաթողիկոս[247]: Սիմեոն Երևանցին Երեմիային աբեղա է անվանում և գրում է, որ Հակոբ Ջուղայեցին նրան եպիսկոպոս ձեռնադրելուց հետո է կաթողիկոս օծել: Այսինքն պետք ենթադրել, որ էջմիածինը չէր ճանաչում Եղիայի ձեռքով Երեմիայի կաթողիկոս օծվելը, հակառակ դեպքում նա միայն հաստատման կոնդակ և կամ Պետրոս Խանձքեցու նման կաթողիկոսական գավազան կստանար:

[244] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 132:

[245] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 80:

[246] Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Բ, էջ 68:

[247] Նույն տեղում:

Սիմեոն Երևանցին չի տալիս Հակոբ Ջուղայեցու կողմից Երեմիա Հասան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս օծելու թվականը, այլ միայն նշում է, որ այն տեղի է ունեցել Սիմեոնի կաթողիկոս օծվելուց և ապա աթոռանիստ Գանձասարի վանքը լքելուց ու հայրենի գյուղ տեղափոխվելուց հետո: Սիմեոն Երևանցին գրում է, որ Սիմեոն Խոտորաշենցին բանադրվել է Հակոբ Ջուղայեցու կողմից ոչ թե «ինքնընծա» կերպով Աղվանից կաթողիկոսական աթոռը զբաղեցնելուց անմիջապես հետո, այլ այդ աթոռը Գանձասարի վանքից տեղափոխելու համար: Սա կասկածի տեղիք է տալիս. չէ՞ որ նույն Հակոբ Ջուղայեցին քիչ անց՝ 1677 թ. փորձում էր հաշտեցնել Սիմեոնին և Երեմիային: Հավանաբար նման բանադրանք չի եղել:

Շուշիի Ագուլեցոց եկեղեցում պահված Ավետարանի հիշատակարանը հաղորդում է. «Արդ գրեցաւ վարդափթիթ և ոսկեզօծ սուրբ և աստուածաշունչ Աւետարանս... ի թուականին Հայոց ՌԵԻԹ, ամսեան սեպտեմբերի, որոյ էին աւուրք Ժ (1680 թ. սեպտեմբերի 10): Ի թագաւորութեան պարսից Շահ-Սուլէմանին և ի հայրապետութեան տանս. Աղուանից Տեառն Երեմիայի սրբազան և նորընծայ կաթուղիկոսի»[248]:

Հիշատակարանի հեղինակը 1680 թ. սեպտեմբերին Երեմիային նորընծա կաթողիկոս է անվանում, երբ հայտնի է, որ դեռ 1675 թ. Երեմիան շահից կաթողիկոս հաստատվելու հրովարտակ է ստացել:

Այս հիշատակարանի հաղորդումը կապելով Սիմեոն Երևանցու՝ վերը մեջբերված տեղեկության հետ՝ կարող ենք եզրակացնել, որ Հակոբ Ջուղայեցու կողմից Երեմիային Աղվանից կաթողիկոս օծելը տեղի է ունեցել 1680 թ. մոտ ընկած ժամանակահատվածում: Հակոբ Ջուղայեցին 1677 թ. էջմիածնի խորհրդաժողովի որոշումները իրականացնելու նպատակով արտասահման գնալու համար Վրաստան է եկել նույն 1677 թվին:[249] Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, որ 1677 թվին Վրաստանում Հակոբ Ջուղայեցին հանդիպել է Աղվանից հակառակորդ կաթողիկոսներին՝ Սիմեոնին և Երեմիային, և հաշտեցրել է նրանց[250]:

Այս ամենի համադրումից թերևս կարելի է եզրակացնել, որ Երեմիան կաթողիկոս է օծվել կա՛մ Վրաստանում այս հանդիպման ժամանակ, կա՛մ քիչ ավելի վաղ:

[248] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 260, վավ. 130, էջ 2ա:
[249] Ա.Գ. Հովհաննիսյան, Դրվագներ, Գիրք երկրորդ, էջ 208-209:
[250] Նույն տեղում:

Փորձենք ի մի բերել միմյանց միաժամանակ և՛ հակասող, և՛ լրացնող աղբյուրների այս հաղորդումները:

Պետրոս Խանձթեցին մահից առաջ Աղվանից կաթողիկոսությունը սեփական կտակի համաձայն հանձնում է իր աշակերտ, Գանձասարի վանքի աթոռակալ, Գանձակի թեմի և Մեծ Կուենքի կամ Բարդաբասանի եպիսկոպոս Սիմեոն Խոտորաշենցուն: Վերջինս Պետրոս Խանձթեցու մահից հետո՝ 1675 թ., մեկնում է Պարսկաստան և Սուլեյման շահի ու այդ ժամանակ Պարսկաստանում գտնվող Ամենայն Հայոց Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից հաստատվում է Աղվանից կաթողիկոս: Երեմիա Հասան-Ջալալյանը, որը դեռ Պետրոս Խանձթեցուց էր փորձել խլել կաթողիկոսական աթոռը, հենվելով իր հորեղբայր Գրիգոր կաթողիկոսի և Պետրոս Խանձթեցու՝ 1652 թ-ի համաձայնագրի, ինչպես նաև իր տոհմակից Հասան-Ջալալյանների ու Աղվանքի մի շարք աշխարհիկ և հոգևոր տերերի օժանդակության վրա, կաշառքով ստանում է հրովարտակներ, որոնցով Բարդայի հաքիմը և Ղարաբաղի բեկլարբեկը Աղվանից կաթողիկոս էին ճանաչում Երեմիային և հրամայում իրենց ենթակա հայերին՝ հնազանդվել նրան[251]:

Երեմիան տեղական իշխողներից իր կաթողիկոսական իշխանությունը հաստատող հրովարտակները ստանալուց հետո, գուցե նույն հնարքը բանեցնելով, 1675 թ. մայիսին իր կաթողիկոսությունը հաստատող հրովարտակ ստանում է նաև Սուլեյման շահից:

Երեմիայի և նրա կողմնակիցների հարաճուն ճնշման տակ Սիմեոն Խոտորաշենցին թողնում է աթոռանիստ Գանձասարի վանքը և ստանալով իր ծննդավայր Խոտորաշեն գյուղի մուսուլման մուլքադարի աջակցությունը՝ տեղափոխվում է այնտեղ:

Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը, որը աջակցության խիստ կարիք ուներ և այդ պատճառով չէր կարող հաշվի չառնել հզոր և հայ իրականության մեջ մեծ համարում ունեցող Խաչենի Հասան-Ջալալյան մելիքական տան և նրանց կողմնակիցների ձգտումները, հավանաբար 1677 թ. կաթողիկոս է օծում Երեմիա Հասան Ջալալյանին:

Աղվանից կաթողիկոսության թեմերը երկփեղկվեցին՝ բաժանվելով երկու հակամարտ հայրապետների միջև: Սիմեոն Խոտորաշենցուն կաթողիկոս էին ճանաչում Գանձակի և Շիրվանի թեմերը, Երեմիային՝ Ղարաբաղի թեմերը[252]:

[251] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ.91, 94ա:
[252] Ձեռագիր N 4331, էջ 12ա:

Վերը նշեցինք, որ Հակոբ Ջուղայեցին 1677 թ. Վրաստանում հանդիպեց Աղվանից հակառակորդ հայրապետներին և հաշտեցրեց նրանց: Այդ հանդիպման արդյունքում Սիմեոն Խոտորաշենցին 1677 թ. օգոստոսի 25-ին պարտավորագիր է տալիս առ այն, որ իր մահից հետո իր ժառանգները զրկվելու են կաթողիկոս դառնալու իրավունքից: Կաթողիկոսության ժառանգականությունը վերապահվում էր Հասան-Ջալալյաններին: Սիմեոնը հայտնում է նաև, որ ինքը թուղթ է տվել Հակոբ Ջուղայեցուն, որով պարտավորվել է ենթարկվել[253]:

Վավերագրում խոսք է գնում նաև Աղվանից կաթողիկոսության վերաբերյալ Սիմեոնի և Երեմիայի միջև կայացած համաձայնագրի մասին, որը հաստատվել է Հակոբ Ջուղայեցու կողմից[254]: Թե ինչ հարցեր էին շոշափվում այդ համաձայնագրում, վավերագրում չի ասվում: Այդ մասին տեղեկանում ենք Վարդան Օձնեցուց, որը գրում է. «Եւ ձեռագիր Սիմէօն կաթուղիկոսն Աղուանից ի թուին Հայոց ՌՃԻԶ օգոստոսի ԻԵ, զի ինքն, որքան կենդանի է, վարեսցէ իշխանութիւն կաթուղիկոսութեան 'ի վերայ մասին Աղուանից՝ Շիրուանայ, Շաքուայ և Գանձակայ»[255]:

Փաստորեն Աղվանից կաթողիկոսությունը բաժանվում էր երկու մասի՝ Շիրվանի և Գանձակի թեմերը տրվում էին Սիմեոն Խոտորաշենցուն, Ղարաբաղի թեմերը՝ Երեմիա Հասան-Ջալալյանին:

Հակոբ Ջուղայեցու այս որոշումից դժգոհ Երեմիան, օգտվելով այն հանգամանքից, որ Հակոբ Ջուղայեցին 1677 թ. իր «փախուստից» հետո վարկաբեկվել էր պարսկական կառավարության աչքում[256], Ղարաբաղի բեկլարբեկ Աբաս-Ղուլի խանից Հիջրայի 1090 թ. ռաբի ալավալ ամսին (1679 թ. ապրիլի 12-մայիսի 12) ստանում է հրովարտակ՝ ուղղված Ղարաբաղի, Գանձակի և Շիրվանի հայերին, որով խանը հրամայում էր հնազանդվել Երեմիա կաթողիկոսին[257]: Նույն տարում Շաքիի Հուսեին խանն էլ իր հպատակ խանության հայերին է հրամայում հնազանդվել Երեմիային[258]:

Սիմեոն Խոտորաշենցին նույնպես խախտում է Հակոբ Ջուղայեցու միջնորդությամբ կայացված համաձայնությունը՝ Երեմիայի գավազանի տակ գտնվող Ջրաբերդի գավառում կառուցելով և

[253] Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 1:
[254] Նույն տեղում:
[255] Ձեռագիր N 4331, էջ 12բ:
[256] Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ, Գիրք երկրորդ, էջ 294:
[257] *Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ.2ա, վավ. 94բ:*
[258] Նույն տեղում, վավ. 95:

1691 թ. օծելով իր աթոռանիստ երից Մանկանց վանքը[259]: Թերևս Սիմեոն Խոտորաշենցու կողմնակիցները թույլ չեն տվել Երեմիա կաթողիկոսի կողմից Ղուզաին* կոչվող գավառակի գյուղերի քորեպիսկոպոս նշանակված Հակոբ Վարդապետին՝ հաստատվել այդ գյուղերի առաջնորդանիստում, այդ պատճառով վերջինս 1682 թ. ստիպված էր կառուցել Ծակուռի գյուղի եկեղեցին և հաստատվել այնտեղ[260]:

1680 թ. Հակոբ Ջուղայեցու մահից հետո, Խաչենի, Վարանդայի, Դիզակի մելիքները համախոսականով դիմում են Ամենայն Հայոց նորընծա կաթողիկոս Եղիազար Այնթափցուն՝ հայտնելով, թե միայն Երեմիա Հասան-Ջալալյանին են ճանաչում Աղվանից կաթողիկոս, խնդրում են բանադրել Սիմեոն Խոտորաշենցուն[261]: Եղիազար Այնթափցու հրամանով էջմիածին եկած Սիմեոնը պարտավորվում է «առանց վարելոյ զիշխանութիւն կաթուղիկոսութեան նստի հանդարտ ի վանս իւր»[262]:

Ինչպես տեսնում ենք, Եղիազար Այնթափցին սահմանափակվում է նրա՝ կաթողիկոսական իշխանությունից հրաժարականի պարտավորությամբ: Վարդան Օձնեցու այս հաղորդումը նշանակում է, որ Սիմեոնը՝ հաստատվելով իր կառուցած երից Մանկանց վանքում, պետք է կառավարեր Ջրաբերդի թեմը, որի եպիսկոպոսն էր մինչ կաթողիկոս հռչակվելը: Վերոհիշյալ մելիքների պահանջի միայն մասնակի բավարարումը հավանաբար կապված էր համահաճությանը չստորագրած Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքների՝ Սիմեոնին ցույց տված աջակցությամբ:

Սիմեոն Խոտորաշենցին չի կատարում կաթողիկոսական աստիճանից հրաժարվելու իր պարտավորությունը և Շիրվանի թեմից նվիրական գումար է հավաքում ու եպիսկոպոս ձեռնադրում:

Եղիազար Այնթափցին 1690 թ. մարտի 15-ին Շիրվանի թեմին ուղղված իր կոնդակում պնդում է, որ այդ թեմը էջմիածնին է պատկանում և պահանջում հավաքած գումարը հանձնել էջմիածնին:

Սիմեոն Խոտորաշենցուն ենթարկվող մի քանի թեմերի առաջնորդներ երես են թեքում նրանից և նրա հակառակորդների հետ 1691 թ. փետրվերի 10-ին կազմում համախոսական, որտեղ հայ-

[259] Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, արձանագրություն N 300, էջ 96:
* Ղուզի թուրքերեն բառ է, որ նշանակում է ոչ արևահայաց, այստեղ Տող լեռան հյուսիսային լանջին ընկած գյուղերն են, նույն լեռան հարավային լանջի գյուղերից բաղկացած գավառակն անվանվում էր Գյունե՝ թուրքերեն՝ հարավ:
[260] Նույն տեղում, արձանագրություն N 600, էջ 172-173:
[261] *Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 31ա:*
[262] Նույն տեղում:

տարարում են, որ Աղվանից կաթողիկոս են ճանաչում միայն Երեմիային և պարտավորվում են եկեղեցական հասույթները ամբողջովին հանձնել նրան, իսկ Սիմեոնին, որն իր հավաքած գումարները «իւր հոր տանն է մսխում և այլ տեղ կորուսանում ... դուրս անիմք մեր մէջէն, ուր կամի գնայ»[263]:

Համախոսականը կնքել էին Քոչիզի, Զրաբերդի, Շամքորի մելիքները, հինգ եպիսկոպոսներ, այդ թվում՝ Փառիսոսի և Ծարի առաջնորդ եպիսկոպոսները, որոնք մինչ այդ ենթարկվում էին Սիմեոն կաթողիկոսին: Վերջինս ստիպված էր թողնել Զրաբերդի գավառում գտնվող իր նորակառույց Երից Մանկանց վանքը և ապաստանել Ամարասի վանքում՝ ստանալով Վարանդայի մելիքի՝ աջակցությունը[264]:

Սիմեոն Խոտորաշենցին, տեսնելով, որ էջմիածինը հակված է իր հակառակորդ Երեմիա Հասան-Ջալալյանի կողմը, փորձում է ստանալ Վատիկանի օժանդակությունը: Տաշյանի կազմած ձեռագրերի ցուցակում առկա է Ոսկան վարդապետ Երևանցու վկայությունը, համաձայն որի, 1688 թ. Աղվանից Ազարիա կաթողիկոսը (Ազարիան Բաբելոնում կրակե հնոցը նետված երեք մանուկներից մեկն է (Դանիել I, 7) և աստվածաշնչյան այս կերպարի անունով է Ոսկան Երևանցին կոչում Երից Մանկանց վանքում նստող Սիմեոն կաթողիկոսին:) մի քանի եպիսկոպոսների համակամությամբ դավանագիր է ուղարկել Ինոկենտիոս ԺԱ (1676-1689) պապին[265]:

Կաթոլիկություն ընդունելու առաջարկ Վատիկանից արվում է նաև Երեմիային, որը Աղվանից Աբաս կաթողիկոս է անվանվում, սակայն վերջինս մերժում է՝ պատասխանելով, թե «Յառաջագոյնքն իմ՝ Պետրոս և Գրիգոր կաթողիկոսունք ոչ ընկալան զայդոսիկ և ես ոչ ընդունիմ»:[266] 1695 թ-ին Սիմեոն Խոտորաշենցին կրկին դիմում է Վատիկանին այժմ Ինոկենտիոս ԺԲ (1691-1700) պապին խնդրելով միջնորդել իր օգտին Սուլթան-Հուսեին շահի առաջ և պաշտպանել իր իրավունքները Երեմիա Հասան-Ջալալյանի դեմ: Պապը բավարարում է այդ խնդրանքը[267]: Շամախիում հաստատված

[263] Կթղկ. դիվան, թղթ.240, վավ. 2:
* Վարանդայի մելիքը XVII դ. 90-ական թվականներին Մելիք Շահնազար Ա-ի որդի Մելիք Բաղին էր: Տես, Մակար Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 24:
[264] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 13բ:
[265] Ցուցակ հայերեն ձեռագրաց,Մատենադարանի Մխիթարյանց ի Վիեննա, Կազմեց Հակոբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 113:
[266] Նույն տեղում:
[267] Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 145:

ճիզվիտական օրդենի ներկայացուցիչներից մեկը 1702 թ. անգամ գրում էր, որ Սիմեոն կաթողիկոսը կաթոլիկ է, սակայն գաղտնի է պահում այդ փաստը[268]:

Երեմիա Հասան-Ջալալյանը վախճանվում է 1700 թ., երկու տարի անց՝ 1702 թ. վերջին իր մահկանացուն է կնքում Սիմեոն Խոտորաշենցին[269]: Բայց մինչ այդ երկու կաթողիկոսները իրենց հաջորդներ են օծում. Երեմիա Հասան-Ջալալյանը՝ Եսայուն, որն իր եղբայր Վելիջանի որդին էր,[270] Սիմեոն Խոտորաշենցին էլ՝ իր ազգական Ներսեսին:

Առաջինը Երեմիան է 1695 թ. «հրամանաւ Նահապետ կաթուղիկոսին» աթոռակից օծում Եսայուն[271], որը դեռ Երեմիայի կենդանության օրոք Հիջրայի 1111 թ. ռամազան ամսին (1700 թ-ի փետրվարի 20-մարտի 22) դիմում է Սուլթան-Հուսեին շահին՝ բողոքելով, որ Ղարաբաղի, Գանձակի, Զարգբիլի և Շիրվանի մուսուլման ֆեոդալները կրոնական ճնշման և հալածանքի են ենթարկում այդ գավառների հայկական համայնքները: Սուլթան-Հուսեինը, համաձայն Սուլեյման շահի կողմից Պետրոս Խանձքեցուն տրված հրովարտակի[272], հրամայում է Ղարաբաղի բեկլարբեկին (Ղարաբաղի բեկլարբեկն էր Քալբալի խանը (1694-1705)) օժանդակել Եսայի կաթողիկոսին և վերջ դնել կրոնական հալածանքին[273]:

Հետևելով Երեմիային՝ Սիմեոն Խոտորաշենցին իրեն աթոռակից է օծում եղբոր որդուն՝ Ներսես վարդապետին, որն այրիացած քահանա էր[274]: Ձեռագրում նշված չէ, թե երբ է Սիմեոն կաթողիկոսը Ներսեսին աթոռակից կաթողիկոս օծել:

Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, որ այդ օծումը տեղի է ունեցել Սիմեոն Խոտորաշենցու կաթողիկոսության վերջին տարում՝ 1702 թ-ին[275]: Սիմեոն Երևանցին Ներսեսի օծման տարի է համարում 1706 թ. նշելով այս տարեթիվը որպես Եսայու հայրապետության հինգերորդ տարի. «Ի հինգերորդ ամ կաթուղիկոսութեան Եսայեայ,

[268] Письма и донесения иезуитов о России, конца XVII и начала XVIII века, СПБ, 1904, с. 294
[269] Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Գիրք երրորդ, էջ 293; Армяно-русские отношения в первой четверти XVIII в., том II, часть I, с. 255:
[270] Հ. Ամառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 144:
[271] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 14ա:
[272] Տես վերը, էջ 12:
[273] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 131:
[274] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ N 14բ:
[275] Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ,Գիրք երկրորդ, էջ 293:

Ներսես անուն ոմն սևագլուխ յազգէ վերոհիշեալ բանադրեցեալ Սիմեօն կաթուղիկոսին, ի յԱղուանս կաշառօք և խաբեութեամբ օծանի կաթուղիկոս՝ խոչ և սատան եսայեայ ի ՌՇՕԵ թուոջ մերում»[276]: Ուրեմն, Եսային կաթողիկոս է դարձել 1701 թ., սակայն նախորդ էջում Սիմեոն Երևանցին գրում է, որ Եսային «նստի յԱղուանս ի ՌՇՕԱ թուոջն»[277]: Այստեղից պետք է եզրակացնել, որ Սիմեոն Երևանցին առաջին դեպքում Եսայու հայրապետության սկիզբ է համարել Երեմիա կաթողիկոսի մահվան հաջորդ տարին, իսկ երկրորդ դեպքում Եսային օծվել է Սիմեոն Խոտորաշենցու վախճանվելուց հետո: Վերը տեսանք, որ Վարդան Օձնեցին Եսայու աթոռակից կաթողիկոս օծվելու տարեթիվ է համարում 1695 թ., եթե այս թվականը համարենք Եսայու կաթողիկոսության առաջին տարին, ապա Եսայի Հասան-Ջալալյանի կաթողիկոսության հինգերորդ տարի և Ներսես Ջրաբերդցու օծման տարեթիվ է դառնում 1700 թ., որը ըստ տվյալների համադրման, Ներսեսի կաթողիկոս օծվելու ամենահավանական թվականն է:

Եսայի Հասան-Ջալալյանը մեկնում է Պարսկաստան և Սուլթան-Հուսեին շահից Հիջրայի 1113 թ. ջումադի ալավալ ամսին (1701 թ-ի հոկտեմբերի 4-նոյեմբերի 3) ստանում է հրովարտակ, որտեղ շահը Եսայիին հաստատում է Աղվանքի կաթողիկոս, հրամայում է Ղարաբաղի, Գանձակի, Զարզբիլի, Շաքիի և Շիրվանի հայերին՝ ճանաչել Եսայիին իրենց կաթողիկոս, ենթարկվել նրա հրամաններին և իրենց հոգևոր տուրքերը հանձնել նրան: Միաժամանակ շահը հրամայում է Ղարաբաղի բեկլարբեկին՝ աջակցություն ցույց տալ իր կողմից Աղվանքի կաթողիկոս հաստատված Եսայիին[278]:

1703 թ. Նահապետ Եղեսացի (1691-1705) կաթողիկոսի պահանջով Եսային գնում է էջմիածին և հաստատվում Աղվանից կաթողիկոս[279]:

Նահապետ Եղեսացու մահից հետո Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռը 16 ամիս թափուր է մնում[280]: Այդ ընթացքում թեժ պայքար է ծավալվում Աղվանից երկու հակամարտ կաթողիկոսների՝ Եսայի Հասան-Ջալալյանի և Ներսես Ջրաբերդցու միջև: Այդ պայքարից հոգնած Շիրվանի թեմը հրաժարվում է ենթարկվել Աղվանից կաթողիկոսությանը և ընդունում է էջմիածնի նվիրակին[281]: Երկպառակտ-

[276] Սիմեոն Երևանցի, Զամբռ, էջ 81-82:
[277] Նույն տեղում:
[278] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ 2բ, վավ. 141:
[279] Սիմեոն Երևանցի, Զամբռ, էջ 81:
[280] Նույն տեղում, էջ 82:
[281] Նույն տեղում, էջ 83:

չական պայքարի հետևանքով դեռևս Երեմիա Հասան-Ջալալյանի և Սիմեոն Խոտորաշենցու պարտքերի վրա «զոր առեալ էին յայլազգեաց և յոմանց հայոց, վասն յաղթահարելոյ զմիմեանս»[282], նրանց հաջորդներ Եսային և Ներսեսը նոր պարտքեր են ավելացնում:

Ամենայն Հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցին (1706-1714) Ներսես Ջրաբերդցու և ԵսայիՀասան-Ջալալյանի միջև շարունակվող պայքարին վերջ տալու և դիզված պարտքերը մարելու համար 1707 թ. գարնանը նրանց կանչում է էջմիածին և առաջ քաշում հետևյալ պայմանը. «կամ ո՛չ առնել զկաթողիկոսութիւն և պարտուց զերծանել, կամ առնել և պարտս տալ»[283]: Եսային համաձայնում է այդ պայմանին՝ հանձն առնելով վճարել պարտքերը: Ներսես Ջրաբերդցին հայտարարում է, որ ո՛չ պարտքը կտա, ո՛չ էլ կհրաժարվի կաթողիկոսությունից: Ալեքսանդր Ջուղայեցու այն փաստարկին, թե Եսայիի կաթողիկոսությունը հաստատվել է շահական հրովարտակով, Ներսեսը պատասխանում է, թե ինքն էլ, Եսայիի նման 300 թուման կաշառք տալով* կարող է իր անունով հրովարտակ ձեռք բերել[284]:

1707 թ. հունիսին Եսայի Հասան-Ջալալյանը, Ալեքսանդր Ջուղայեցուն ներկայացնելով Ներսես Ջրաբերդցու դեմ Աղվանից կաթողիկոսության թեմերի բողոք-համախոսականներ[285], հասնում է նրան, որ Ալեքսանդր Ջուղայեցին 1707 թ. հունիսի 10-ի Աղվանից կաթողիկոսության բոլոր թեմերին ուղղված կոնդակով օրինական և միակ կաթողիկոս է ճանաչում իրեն և բանադրում է Ներսես Ջրաբերդցուն[286]: Սակայն կոնդակը Ներսեսին սանձելու գործում արդյունք չի տալիս, քանի որ Աղվանքի մի շարք հոգևոր առաջնորդներ ու մելիքներ սատար են կանգնում նրան[287]: Ալեքսանդր Ջուղայեցին 1708 թ. փետրվարի 25-ին երկրորդ անգամ է բանադրում Ներսեսին՝ նրան նեռ, իսկ նրա կողմից ձեռնադրված եպիսկոպոսներին նեռնական անվանելով[288]:

[282] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 14բ:
[283] Նույն տեղում, էջ 17բ:
* 300 թումանը հաստատագրված գումար էր, որ կաթողիկոսները տալիս էին Իրանի շահին՝ հաստատման հրովարտակ ստանալու համար: Այպես, Զաքարի Քանաքեռցին նշում է, որ Հակոբ Ջուղայեցին հաստատման հրովարտակ ստանալու նպատակով 300 թուման կաշառք է տվել շահին: Տես, Закарий Канакерци, Хроника, Москва 1969, с. 159:
[284] Նույն տեղում, էջ 18ա:
[285] Սիմեոն Երևանցի, Զամբռ, էջ 82:
[286] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 15բ:
[287] Սիմեոն Երևանցի, Զամբռ, էջ 82:
[288] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 15բ; Սիմեոն Երևանցի, Զամբռ, էջ 82:

Սակայն նույնիսկ կրկնակի բանադրանքը Ներսես Զրաբերդցուց չի վանում նրա աջակիցներին: Այդ պատճառով Ալեքսանդր Զուղայեցին ստիպված մեղմում է իր դիրքորոշումը:

1709 թ. հունիսի 18-ին Ալեքսանդր Զուղայեցին նամակով դիմում է Գանձակի մելիքներ Քյամալին և Բայանդուրին՝ պատվիրելով վերջ դնել Աղվանից կաթողիկոսությունում տիրող երկպառակությանը և «բառնալ ի միջոյ զկուսակցութիւն Ներսիսի»[289], իսկ եթե դա չհաջողվի երկուսից մեկին՝ կա՛մ Եսայիին, կա՛մ Ներսեսին կաթողիկոս ճանաչել, ծայրահեղ դեպքում «երկուքն ևս կայցեն կաթուղիկոսական պատուով»[290]: Մելիքների ճնշման տակ Ներսես Զրաբերդցին և Եսայի Հասան-Զալալյանը հաշտվում են և պարտավորվում համատեղ վճարել կաթուղիկոսության պարտքերը, այդ նպատակով միասին մեկնում են Էջմիածին և 1710 թ. հունիսի 16-ին Ալեքսանդր կաթողիկոսից Ամենայն Հայոց կաթողիկոսության մի շարք թեմերում ժողովարարության կոնդակ են ստանում, որի միջոցով նրանց հաջողվում է մարել պարտքերը: Սակայն Ներսես Զրաբերդցին չի հաստատվում Գանձասարում, այլ շարունակում է մնալ Երից Մանկանց վանքում[291]:

1728 թ. Եսայի կաթողիկոսի մահից հետո Հարավային Կովկասում գերիշխանություն հաստատած թուրքական իշխանությունները՝ հանձին Գանձակում նստող Սարի-Մուստաֆա փաշայի, Հիջրայի 1141 թ. (1728-1729) Ներսեսին Աղվանից կաթողիկոս ճանաչեցին[292], իսկ Գանձասարի վանքի աթոռակալությունը տրվեց Գրիգոր վարդապետին:* Ինչպես գրում է Վարդան Օձնեցին, նա՝ որպես վանքի առաջնորդ եպիսկոպոս, սկսեց կառավարել Գանձասարի վանքի թեմը[293]: Սարի-Մուստաֆա փաշան մեկ այլ հրովարտակով Գանձասարի վանքի թեմին է հանձնում Զարուզբիլ գավառի այն գյուղերն ու հողահանդակները, որոնք Դադիվանքի և Խաթրավանքի սեփականությունն են եղել և այստեղ քրդական ցեղերի ներթափանցումից հետո օտարվել են[294]:

---

[289] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 19ա:

[290] Նույն տեղում:

[291] Նույն տեղում, էջ 19բ:

[292] Նույն տեղում, էջ 26ա:

* Սա Եսայի կաթողիկոսի եղբորորդին էր, Խաչենի մելիքը և ղարաբաղյան սղնախների ղեկավարներից մեկը, որը Եսայի կաթողիկոսի մահից քիչ առաջ հրաժարվել էր աշխարհիկ կյանքից և մտել Գանձասարի վանքի միաբանության շարքերը: Տես, Ռաֆֆի, Նշված աշխատություն, էջ 171-172:

[293] Նույն տեղում:

[294] Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 153, 155:

Մատենադարանում պահվում է Զարուզբիլ գավառի հայ ավագանուն ուղղված Սարի-Մուստաֆա փաշայի Հիջրայի 1141 թ. ռաբի ալշանի ամսին (1728 թ. նոյեմբերի 4-դեկտեմբերի 3) հրապարակված հրովարտակի պատճենը, ուր հրամայվում էր հանգուցյալ կաթողիկոս Եսայիի փոխարեն նրա հորեղբոր որդի Գրիգորին կաթողիկոս ճանաչել[295]:

Սույն վավերագրի և Վարդան Օձնեցու հաղորդած տեղեկությունը համադրելով՝ կարելի է եզրակացնել, որ թուրքական ռազմավարչական իշխանությունները, փորձելով երկփեղկել Աղվանից կաթողիկոսությունը, երկպառակտչական պայքար են սերմանել, դրանով իսկ կաթողիկոսությունը թուլացնելու հետ միաժամանակ փորձել վերացնել այստեղից Ղարաբաղի ազատագրության գաղափարների նոր արծարծման հավանականությունը: Սակայն Գրիգորը, որը ղարաբաղյան սղնախների ղեկավարներից մեկն էր և Եսայի կաթողիկոսի գաղափարակիցը, հասկանալով թուրքերի հետապնդած այս նպատակները, հրաժարվում է կաթողիկոսի նվիրապետական դիրքից և ստանձնում է միայն Գանձասարի վանքի թեմի առաջնորդությունը:

Վարդան Օձնեցու հաղորդման համաձայն, Ներսես կաթողիկոսի և Գրիգորի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվում, ըստ որի. առաջին՝ Ներսես կաթողիկոսի մահից հետո Աղվանից կաթողիկոսական գայիսոնը պետք է նորից անցներ Հասան-Զալալյան տան ներկայացուցչին (սա 1652 թ. Պետրոս Խանձքեցու և 1677 թ. Սիմեոն Խոտորաշենցու տված պարտավորությունների կրկնությունն էր[296]) և երկրորդ՝ Աղվանից կաթողիկոսության հոգևոր եկամուտները հավասարապես բաժանվում էին, և այդ բաժինների տնօրինումը տրվում էր Ներսես կաթողիկոսին ու Գրիգոր Հասան-Զալալյանին[297]: Վերջապես՝ Ներսես կաթողիկոսի նստավայրը պետք է լիներ Երից Մանկանց վանքը, և նա իրավունք չէր ունենալու հաստատվել Գանձասարում, քանզի, ինչպես գրում է Վարդան Օձնեցին, «ոչ հնազանդեին նմա միաբանք Գանձասարայ և ուր ներգործէր զօրութիւն ազգին Հասան-Զալալեանց»[298]:

Ներսես կաթողիկոսին հաջողվեց վերահսկողության տակ առնել Գանձասարի վանքը միայն Գրիգոր Հասան-Զալալյանի մահից (1748 թ.) հետո: Որպես դրա ապացույց կարելի է ներկայացնել այն

---

[295] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 32:

[296] Տես վերը, էջ

[297] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 33բ:

[298] Նույն տեղում, էջ 26ա:

փաստը, որ Ներսես կաթողիկոսի եղբոր թոռ Սարգիսը թաղվել է 1756 թ. Գանձասարի վանքի Հասան-Ջալալյան հայրապետների տապանատանը[299]:

Սիմեոն Երևանցին նույնպես հաստատում է, որ Եսայի Հասան-Ջալալյանի մահից հետո Ներսես Ջրաբերդցին կաթողիկոս է ճանաչվել Աղվանից կաթողիկոսության բոլոր թեմերում. «Բանադրեցեալ» Ներսեսին կաթողիկոս ճանաչելու պատճառ Սիմեոն Երևանցին համարում է Աղվանից կաթողիկոսության թեմերի ժողովրդի «անհաստատ և վայրենաբարոյ» լինելը[300]:

Ըստ Սիմեոն Երևանցու, Ներսես Ջրաբերդցին Աբրահամ Խոշաբեցու (1730-1734) էջմիածնում կաթողիկոս ընտրվելուց հետո, ընդունված կարգի համաձայն գալիս է էջմիածին՝ շնորհավորելու նորընծա կաթողիկոսին՝ նրանից թաքցնելով Ալեքսանդր Ջուղայեցու կողմից իր բանադրված լինելը: Չնայած Աբրահամ Խոշաբեցին տեղյակ էր Ներսես Ջրաբերդցու՝ բանադրանքի տակ լինելուն, սակայն «աղաւնամիտ, հեզահոգի և խղճաբարո» բնավորության տեր լինելով, ցույց է տալիս, թե անգիտակ է այդ մասին ու բարյացակամ ընդունելություն է ցույց տալիս Ներսեսին և հետ ուղարկում[301]: Նույն ձևով է Ներսես Ջրաբերդցին իրեն պահում հաջորդ կաթողիկոս Աբրահամ Կրետացուն (1734-1737) հանդիպելիս: Սիմեոն Երևանցին հաստատապես չի հայտնում՝ տեղյակ էր արդյոք Աբրահամ Կրետացին Ներսեսի բանադրված լինելուն, թե ոչ. «թէ՞ չգիտեաց ևս որպիսիութիւն Ներսեսին, զի ի հեռաստանէ նոր էր եկեալ և անտեղեակ էր կողմանց մերոց և թէ գիտեաց ևս, զանց արար»[302]:

Այսպիսով, Ներսես Ջրաբերդցուն նորից հաջողվում է էջմիածնում բարյացակամ վերաբերմունքի արժանանալ: Սակայն, երբ նա 1739 թ. փորձում է նույնատիպ միջոցով խաբել Ղազար Ջահկեցի (1737-1751) կաթողիկոսին, վերջինս, Հակոբ Շամախեցի եպիսկոպոսի կողմից տեղեկացված լինելով Ներսեսի բանադրված լինելու մասին, ստիպում է նրան խոստովանել և թողություն խնդրելուց ու էջմիածնին Աղվանից կաթողիկոսության հնազանդությունը հավաստող պարտավորագիր տալուց հետո է միայն Ներսեսին բանադրանքից ազատում և ճանաչում Աղվանից կաթողիկոս[303]:

[299] Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, արձանագրություն N 192, էջ 68:
[300] Սիմեոն Երևանցի, Ճամբռ, էջ 85:
[301] Նույն տեղում:
[302] Նույն տեղում:
[303] Նույն տեղում:

Մատենադարում պահվող «Օրինակք գրութեանց Յակոբայ Շամախեցւոյ և Սիմէոնի Երևանցւոյ» ժողովածուի մեջ առկա է 1739 թ. մայիսի 25-ով թվագրված այս պարտավորագիրը, որտեղ Ներսես կաթողիկոսը հայտնում է, որ Ղազար Ջահկեցի կաթողիկոսին տեսակցելու և հնազանդություն հայտնելու նպատակով ինքնակամ եկել է էջմիածին: Խոստովանում է, որ Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի օրոք ապօրինի կերպով, ինքնագլուխ կաթողիկոս է օծվել: Այդ պատճառով բանադրվել է Ալեքսանդր Ջուղայեցու կողմից: Ղազար Ջահկեցի կաթողիկոսը, ներելով և արձակելով բանադրանքից, վերստին Աղվանից կաթողիկոս է հաստատում նրան: Շիրվանի թեմը, որը Ալեքսանդր Ջուղայեցին շնորհել էր Եսայի կաթողիկոսին, այժմ Ղազարի կողմից տրվում են Ներսեսին:

Ներսեսը երդվում է մինչև իր մահը հավատարիմ մնալ էջմիածնի ընդհանրական աթոռին և վերահաստատում է այն կանոնները, որոնց համաձայն Աղվանից կաթողիկոսի թեկնածուն պետք է Աղվանից բոլոր թեմերի կողմից ընդունված, կնքված ընդհանրագրով, այդ թեմերի հոգևոր առաջնորդների և աշխարհիկ իշխանների ուղեկցությամբ ներկայանա էջմիածին և Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից հաստատվի Աղվանից կաթողիկոս[304]: Սակայն Վարդան Օձնեցին հաղորդում է, որ Ալեքսանդր Ջուղայեցին Աղվանից կաթողիկոսության աթոռի համար ծավալված երկպառակտչական պայքարին վերջ տալու նպատակով Եսայի Հասան-Ջալալյանին և Ներսես Ջրաբերդցուն հաստատել է գահակից կաթողիկոսներ: Ապա 1710 թ. հունիսի 16-ին հաշտված և միասին էջմիածին ներկայացած Եսային և Ներսեսը նրանից էջմիածնի թեմերում ժողովարարության կոնդակ են ստացել: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ Ալեքսանդր Ջուղայեցին ինքն է բանադրանքից արձակել Ներսես Ջրաբերդցուն: Այդ դեպքում պետք է կարծել, որ Ներսես կաթողիկոսի պարտավորագրի բովանդակությունը խեղաթյուրվել է: Ղազար Ջահկեցու կողմից Ներսեսին բանադրանքից արձակելու մասին հատվածը հավանաբար ներմուծվել է 1765 թ. դեկտեմբերից հետո, երբ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը գերադասեց Աղվանից կաթողիկոսության աթոռին հաստատել ոչ թե Ներսեսի կողմից կաթողիկոս օծված Իսրայելին, որը վերջինիս ազգականն էր, այլ Հովհաննես Հասան-Ջալալյանին՝ իր այդ քայլով սուր հակամարտության մեջ ներքաշվելով Իսրայելի և նրան աջակից խմբավորման հետ:

[304] Մատենադարան, ձեռ. N 2912, էջ 100ա:

ԳԼՈՒԽ 3

XVIII Դ. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 1Ազատագրական պայքարը Արցախում XVIII դ. 20-ական թթ. և Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը

Շահ-Աբբաս Ա-ի (1587-1629) մահից հետո Պարսկաստանում սկսված տնտեսական և քաղաքական անկումն իր գագաթնակետին հասավ շահ Սուլթան-Հուսեյնի կառավարման տարիներին(1694-1722): Դատարկ գանձարանը լցնելու համար շահական դիվանը վճռառքի էր հանել պետական պաշտոնները, այդ պատճառով գլխապտույտ արագության հասավ խաների հերթափոխությունը: Նյութապես ուռճացած պաշտոնավորողների հեռացումը հաճախ ուղեկցվում էր նրանց գույքի բռնագրավումով: Իրենց հերթին եկամտաբեր պաշտոնի համար կատարած ծախսերը վերադարձնելու նպատակով նորանշանակ պաշտոնյաները թալանում էին իրենց իշխանության տակ ընկած ժողովրդին: Սակայն ճգնաժամն իր ամբողջ ծանրությամբ ընկնում էր հարկատու զանգվածի վրա:

1699 թ. Պարսկաստանի ամբողջ տարածքում, այդ թվում Հայաստանում, մարդահամար անցկացվեց, որի նպատակն էր հին տուրքերի ավելացումը և նորերի սահմանումը: Մինչ այդ հարկերից ազատ հոգևորականության և վանքերի վրա ևս հարկեր սահմանվեցին: 1702 թ. մարդահամարը ավարտելուց հետո սկսվեց ավելացված դրույքաչափերով հարկերի հավաքումը, ընդ որում այդ նպատակով Թավրիզից Գանձակ եկած Ատրպատականի կուսակալ Միրզա-Թահիրը պահանջում էր 3 տարվա հարկը միանգամից վճարել:[305]

Ստեղծված քաղաքական և տնտեսական ծանր պայմաններից դուրս գալու ելքը հայ իշխող վերնախավերը տեսնում էին քրիստոնյա հզոր տերությունների աջակցության մեջ: Արդեն նշել ենք, որ Հռոմից և եվրոպական տերություններից աջակցություն ստանալու նպատակով 1777 թ. էջմիածնի ժողովի որոշմամբ Եվրոպա ուղևորվող Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը նույն տարում հանդիպում է ունեցել Աղվանից իրար հակամարտ Երեմիա և Սիմեոն կաթողիկոսների հետ: Ըստ Աշոտ Հովհաննիսյանի Հակոբ Ջուղայեցին այս հանդիպման ժամանակ նպատակ է հետապնդել ոչ միայն հաշտեցնել Երեմիային և Սիմեոնին, այլև համաձայնեցնել նրանց հետ էջմիածնի ժողովում ընդունված որոշումների շուրջ հանդես գալ նաև Գանձասարի կաթողիկոսության անունից:[306]

Էջմիածնի ժողովի և Հակոբ Ջուղայեցու սկսած գործի շարունակող Իսրայել Օրին նույնպես Հայաստանի ազատագրման հիմնահարցի լուծման մեջ մեծ նշանակություն էր տալիս Գանձասարի կաթողիկոսության դերին: Դրա վկայությունն է այն փաստը, որ Օրու խորհրդով Պֆալցի կուրֆյուրստ Հովհան-Վիլհելմը Վրաստանի Գեորգի ԺԱ թագավորին, հայ մելիքներին և էջմիածնի կաթողիկոսին հասցեագրած նամակների հետ առանձին նամակ է հղել նաև Գանձասարի կաթողիկոսին:[307]

Հովհան-Վիլհելմը իր այս նամակներում ոչ միայն ցանկություն էր հայտնում օժանդակություն ցուցաբերել Հայաստանի քաղաքական ազատագրման գործին, այլև անդրադառնում էր կաթոլիկ և հայառաքելական եկեղեցիների միավորմանը:[308] Սակայն Անգեղակոթի 1699 թ. ժողովին մասնակցած մելիքների կողմից էջմիածնի կաթողիկոս Նահապետ Եդեսացուն հարցի քննարկմանը իրազեկ պահելը և մասնակից դարձնելը բացառվեց:[309]

Հովհան-Վիլհելմին տրված իր հաշվետվության մեջ Օրին հայտնում է, որ Անգեղակոթի ժողովից հետո նա և ժողովին մասնակից մելիքները մեկնել են Ղարաբաղ և հանդիպում ունեցել Գանձասարի կաթողիկոսի և նրա չորս եպիսկոպոսների հետ: Սակայն Օրուն չի հաջողվում Գանձասարի կաթողիկոսության անունից կաթոլիկ եկեղեցուն հնազանդության թուղթ ստանալ:[310]

Մելիքների Հովհան-Վիլհելմին ուղղված նամակում և Օրու հաշվետվությունում Գանձասարի կաթողիկոսը անվանվում է Փիլիպոս:[311] Սակայն XVII դարի վերջին Գանձասարի կաթողիկոսության աթոռը զբաղեցնողների մեջ այդ անունը կրող հայրապետ

---

[305] Մատենադարան, ձեռ. N 8206, Եսայի Հասան-Ջալալեան, Պատութիւն համառօտ Աղուանից երեկրի, էջ 18բ:

[306] Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ..., Գ. II,էջ 209-210:

[307] Эзов Г. А., Նշված աշխատություն, վավ. N 5:

[308] Նույն տեղում:

[309] Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ ..., Գ. II, էջ 318:

[310] Эзов Г. А., Նշված աշխատություն, վավ. N 11:

[311] Նույնի վավ. N 5, 11:

չկա: Հենվելով նշված փաստի, ինչպես նաև այն իրողության վրա, ըստ որի միայն երկու շաբաթ լինելով հայրենիքում, Օրին անկարող պետք է լիներ կազմակերպել երկու ժողով՝ մեկն Անգեղակոթում, Մյուսը Գանձասարում՝ Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, որ 1699 թ-ին Օրին չի եղել Գանձասարում և տեղի կաթողիկոսի հետ բանակցություններ չի վարել:[312]

Ըստ Պֆալցի կյուրֆյուրստին Օրու տրված հաշվետվության՝ կաթողիկոսը ցնծությամբ է ընդունել Օրու հայտարարությունը, թե կուրֆյուրստը նպատակ ունի ազատագրել Հայաստանը, սակայն երբ Օրին անդրադարձել է հայ և կաթոլիկ եկեղեցիների միավորմանը և այդ միավորումը վերահսկելու նպատակով կաթոլիկ հոգևորականներ ուղարկելու կուրֆյուրստի ցանկությանը, կաթողիկոսն ընկրկել է: Ծագել է դավանաբանական սուր վեճ, որի արդյունքում կաթողիկոսը հրաժարվել է գործակցել Օրու և Անգեղակոթի ժողովին մասնակից մելիքների հետ:*

Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, որ Օրու հետ Եսայի կաթողիկոսի առաջին հանդիպումը տեղի է ունեցել Սպահանից Օրու վերադարձից հետո՝ 1709 թ. սեպտեմբերի և 1710 թ. հունիսի միջև ընկած ժամանակահատվածում:[313]

Երևանի Մատենադարանի ձեռագրերից մեկի հիշատակարանից տեղեկանում ենք, որ էջմիածնի կաթողիկոս Նահապետ Եդեսացու մահից մեկ տարի առաջ՝ 1704 թ., «գնաց Աղուանից կաթուղիկոսն Եսայի յերկիրն Հռոմոց»[314], «Հռոմոց երկիրը» Թուրքիան, հավանաբար, Եսայի կաթողիկոսի ուղևորության վերջնական նպատակակետը չէր: Օսմանյան կայսրության տարածքով էր անցնում Արևելյան Հայաստանից դեպի Եվրոպա տանող ամենակարճ ճանապարհը: Հակոբ Ջուղայեցին Եվրոպա ուղևորվելիս նույնպես ընտրեց Թուրքիայով անցնող երթուղին:

Հայտնի է, որ նույն 1704 թ. Օրին Մոսկվայից ուղևորվել է Վիեննա և Հռոմ, որտեղ տեղի ունեցած բանակցությունների արդյունքում 1705 թ. հուլիսին ձեռք է բերել Կղեմես ԺԱ պապի (1780-1721)

[312] Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ ..., Գ. II, էջ 332-334:

* Եթե նույնիսկ տեղի է ունենում Օրու հանդիպումը Գանձասարի կաթողիկոսի հետ, ապա Փիլիպոս անվան տակ պետք է տեսնել Երեմիա Հասան-Ջալալյանին, որը ի տարբերություն Հռոմի հետ գործակցող և Ինոկենտիոս ԺԱ և ԺԲ պապերին հնազանդության թղթեր գրած Սիմեոն Խոտորաշենցու, մերժել էր դավանափոխության առաջարկը (տես վերը էջ 20):

[313] Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ..., Գիրք երկրորդ, էջ 605; Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, Երևան 1972, էջ 143:

[314] Ձեռ. N 3814, էջ 3բ:

հավատարմագիրը՝ ուղղված շահ Սուլթան-Հուսեյնին:[315]

1704 թ. ձեռնարկած իր ուղևորության ընթացքում, թերևս, Եսային միացել է Օրու՝ Եվրոպայում վարած բանակցություններին: Եսայի կաթողիկոսի համար պապի հետ բանակցություններում դժվար թե անհաղթահարելի պատնեշ հանդիսանար Հռոմի կողմից առաջ քաշվող դավանաբանական հիմնախնդիրը:

Շամախում հաստատված մի ճիզվիտ 1702 թ. գրում էր, որ Եսայի կաթողիկոսը բարյացակամ է կաթոլիկ միսիոներների նկատմամբ և կաթոլիկ կրոնին արգահատանքնով չի վերաբերվում:[316] 1712 թ. Եսայի կաթողիկոսը Լեհաստանի թագավոր Ավգուստ Բ-ին (1697-1733) ուղղված նամակում հայտնում էր, որ ինքը հավատարիմ է կաթոլիկ եկեղեցուն:[317] Այս տեսակետից ելնելով՝ 1709 թ. սեպտեմբերի և 1710 թ. հոկտեմբերի միջև Իսրայել Օրու և Եսայի կաթողիկոսի հանդիպումը հաջորդել է 1704-1705 թթ. Եվրոպայում նրանց հանդիպմանը:

Աշոտ Հովհաննիսյանը հավանական է համարում, որ Օրին 1709 թ. սեպտեմբեր և 1710 թ. հոկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում այցելել է Ղարաբաղի բեկլարբեկության կենտրոն Գանձակ, որտեղ հանդիպումներ է ունեցել հայ հոգևոր և աշխարհիկ տերերի հետ:[318] Հավանաբար հանդիպել է Երից Մանկանց վանքում հաստատված Ներսես կաթողիկոսի հետ, և նրա միջնորդությունը մեծ դեր է խաղացել Եսայի և Ներսես կաթողիկոսների հաշտեցմանը: Այս հանդիպումների արդյունքում Եսայի կաթողիկոսը հայ ժողովրդի ազատագրության հիմնախնդրի լուծումը Օրու նման կապեց Ռուսաստանին և պատրաստակամություն հայտնեց մի քանի եպիսկոպոսների հետ ռուսաստանյան իր թեմն այցելելու պատրվակով Օրու ուղեկցությամբ մեկնել Մոսկվա:[319] Հետագայում այդ մասին Եսային գրում էր Պետրոս Մեծին. «Իսրայէլ Օրի դեսպանն եկն երկիրս Հայոց և զհամբաւ բարեմաղթութեանդ սփռեալ տարածեաց ի լսելիս մեր ամենեցուն. և այնքան յորդորեցաք ի սէր քո մինչ ես իմովք միաբանիւք ելեալ ընդ նմա հանդերձ եկինք մինչև ի Յաշքարխան քաղաք առ ի տեսութիւն և երկրպագութիւն մեծ և բարձր թագավորութեանդ»:[320]

[315] Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ..., Գիրք II, էջ 552:

[316] Письма и донесения иезуитов о России, конца XVII и начала XVIII века, СПБ, 1904, с. 294

[317] Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ ..., Գ. II, էջ 612:

[318] Նույնի էջ 605-606:

[319] Эзов Г. А., Նշված աշխատություն, վավ. NN 167, 202:

[320] Նույնի, վավ. N 205:

Օրին և Եսայի կաթողիկոսը Աստրախան հասան 1711 թ. օգոստոսին: Սակայն Օրու անակնկալ մահը (1711 թ. սեպտեմբեր) խանգարեց Եսայի կաթողիկոսի՝ ցարին հանդիպելու մտադրությունը: Նա այլևս չշարունակեց ճանապարհը, այլ ստիպված վերադարձավ Գանձասար:[321]

Օրու մահվամբ նրանց սկսած գործը չավարտվեց:

Ռուսաստանը ուշադիր հետևում էր դեպքերի զարգացմանը Պարսկաստանում: Շահի իշխանության ծայրահեղ թուլացման պայմաններում առաջացել էր օտարերկրյա, առաջին հերթին թուրքական տիրապետության հաստատման և Կասպից ծովի ավազանում թուրքական ուժերի ի հայտ գալու վտանգ: Դրա հետևանքով ռուս-թուրքական սահմանները զգալիորեն կերկարեին: Դա անցանկալի էր Ռուսաստանի համար, որը նույնպես ձգտում էր Կասպից ծովի ափերին իր տիրույթների ընդարձակմանը: Այդ պատճառով ռուսական իշխանությունները շահագրգռված էին օգտագործելու Գանձասարի կաթողիկոսության և նրա կաթողիկոսի ազդեցությունը և դիրքը: Եվ ահա այս ենթատեքստով 1716 թ. Օրու օգնական Մինաս վարդապետ Տիգրանյանը մեկնեց Հարավային Կովկաս: Նրա առաքելության մեջ մտնում էր նաև Գանձասարի աթոռի հետ ընդհատված կապի վերականգնումը: 1716 թ. հուլիսի 15-ին Մինաս վարդապետը հանդիպել է Աստվածատուր Համադանցուն: Վերջինս չնայած կայացած զրույցի ժամանակ իր հավանությունն է հայտնել Պետրոս Մեծի անդրկովկասյան ծրագրերին, սակայն գրավոր օժանդակություն ցույց տալ պարտավորվելուց հրաժարվել է՝ պատճառաբանելով, թե վախենում է պարսիկներից: Էջմիածնից Մինաս վարդապետը եկել է Գանձասար և հանդիպել Եսայի կաթողիկոսին, որը տեղեկանալով նրա գալստյան պատճառին՝ ուրախությամբ հանձն է առել աջակցել ցարի ծրագրերի իրականացմանը և ի տարբերություն Աստվածատուր Համադանցու՝ նամակով դիմել է Պետրոսին:[322] Ցարին ուղղված 1716 թ. օգոստոսի 10-ի իր այդ նամակում Եսայի կաթողիկոսը մասնավորապես խնդրում էր ավելի հստակ տեղեկացնել նրա ծրագրած քայլերի մասին. «զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս»:[323]

[321] Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան 1972, էջ 144; АРО в XVIII в., том II, часть I, վավ. N 380, §6:

[322] Армяно-русские отношения в XVIII веке, том II, часть I, Ереван 1964, վավ. N 154, էջ 367-371:

[323] Լեո, Հայոց պատմություն, հ. III, Երևան 1973, էջ 109-110:

Ինչո՞վ էր պայմանավորված Հարավային Կովկասում Ռուսաստանի ունեցած ծրագրերի հանդեպ երկու կաթողիկոսական աթոռների որդեգրած վերաբերմունքի տարբերությունը:

Ամենայն Հայոց կաթողիկոսությունը բազմաթիվ թեմեր ուներ ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Պարսկաստանում և Օսմանյան կայսրությունում: Պարզ է, որ ռուսամետ դիրքորոշման դեպքում էջմիածինը կզրկվեր այդ երկրներում ունեցած թեմերից:

Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռ էջմիածինը կից էր Զուխուր Սաադի բեկլարբեկության կենտրոն Երևանին և գտնվում էր բեկլարբեկ Մեհր-Ալի խանի (1709-1724) ուժեղ վերահսկողության տակ:

Գանձասարի կաթողիկոսության թեմերը գտնվում էին այն տարածքներում, որոնք Կովկասի լեռնականների անընդմեջ կրկնվող արշավանքների հետևանքով ավերվում և հայաթափվում էին: Գանձասարի կաթողիկոսարանում հույս ունեին, որ ռուսական նվաճումների արդյունքում այդ տարածքները կհայտնվեն Ռուսաստանի տիրապետության տակ:

Իրադրությունը Պարսկաստանում շարունակում էր բարդանալ: Ուզբեկները ասպատակում էին Խորասանը և սպառնում նրա կենտրոն Մեշհեդին: Երկրի հարավում՝ Խուզիստանում, ապստամբել էին արաբները: Իրավիճակը Հարավային Կովկասում ծայրահեղ կերպով լարվել էր: Դաղստանի ֆեոդալները Շիրվանի իրենց դավանակից սուննիներին շիաներից ազատելու պատրվակով անընդմեջ ասպատակում էին Շիրվանը և կից գավառները: Ղարաբաղին հարակից Մուղանի դաշտավայրի թուրք շահսևանները 1717 թ. գլուխ բարձրացրեցին: Լեզգիներից և թուրք քոչվորների ասպատակություններից զերծ մնալու համար դաշտային Ղարաբաղի հայ բնակչությունը ապավինում էր «ի լերինս և ի քարանձաւսն Արցախու և իւրաքաչիւր հանդեպ ամուր տեղիսն զերծեալք ապրուստ իւրեանց հոգային»:[324] Սպառնալից այս իրադարձություններից անհանգստացած Եսայի կաթողիկոսը 1718 թ. սեպտեմբերի 24-ի նամակով[325] հորդորում էր Մինաս վարդապետին կարելվույնս աշխատել, որպեսզի թոթափվի հայ ժողովրդի վրա ծանրացած լուծը: 1718 թ. սեպտեմբերի 25-ով թվագրված նամակում Եսային Պետրոս Մեծին հավաստիացնում էր, որ ռուսական զորքերի՝ Հարավային Կովկաս մուտքի դեպքում «մեք յօժար սրտիւ, համայն հնազանդեցելովք պատրաստ կամք առ ի հնազանդիլ և

[324] Մատենադարան, ձեռ. N 8206, էջ 21բ:

[325] АРО в XVIII веке, том II, часть I, վավ. N 155, էջ 372-373:

ընդունիլ զհրաման արքունի և ըստ կարեաց մերոց և սպասաւորել պիտոյից արքունականաց»:[326]

1721 թ. օգոստոսին 12-օրյա պաշարումից հետո լեզգիները գրավեցին ու կողոպտեցին Հարավային Կովկասի առևտրական կենտրոն Շամախին: Քաղաքի ազգաբնակչությունից սպանվեց 4-5 հազար մարդ, կողոպտվեցին ռուս առևտրականներ, որը և Ռուսաստանը առիթ դարձրեց իր զորքերը մտցնելու Հարավային Կովկաս և Գիլան: Լեզգիները, տիրանալով Շամախուն, ասպատակելով Շիրվանը, Կուր գետի ափին՝ Բարդայի մոտ, ջախջախեցին Երևանի և Գանձակի խաների միացյալ զորքը և հետապնդեցին մինչև Ղարաբաղի լեռները:[327]

Այս դեպքերից առաջ՝ 1721 թ. ապրիլի 1-ին գրած իր նամակում Եսայի կաթողիկոսը հորդորում էր Պետրոս Մեծին՝ չհետաձգել ռուսական արշավանքը Հարավային Կովկաս, քանի որ պարսկական իշխանության բեկորները փորձում են հյուսիսից իրենց սպառնացող Ռուսաստանին փարված հայերին «ի կարողութենէ հատել»:[328] Հաջորդ տարի կովկասյան լեռնաբնակների կողոպտչական արշավանքը, որը գլխավորում էին Սուրխայ շամխալը, Հաջի-Դաուդը և Ալի-Սուլթանը, գարնան գալու հետ կրկնվեց: Պարսից իշխանությունները Չարխաչի խանի գլխավորությամբ զորք ուղարկեցին լեռնականների դեմ: Սակայն այս զորքը Բարգուշատից դեպի արևելք չառաջացավ: Տեղեկանալով, որ լեռնականները հասել են Կուր և Արաքս գետերի միախառնման վայրը, պարսիկներն առանց մարտի բռնվելու փախուստի դիմեցին: Լեռնականները ներխուժեցին Դիզակ և ավարառության ենթարկեցին այն: Այստեղից մտան Վարանդայի գավառը, որի մելիք Բաղիրը գնաց նրանց ընդառաջ և մեծ գումար վճարելով՝ կարողացավ իր գավառը զերծ պահել թալանից ու ավերվելուց: Եսայի կաթողիկոսը այսպես է նկարագրում Խաչենի գավառ մտած այս արհավիրքը՝ «Զգերին և զանասունսն ընդ միմեանց խառնեալ էին իբրև զհեղեղ յորդ և իբրև զբանակ մեծ ի գնալն իւրեանց, զոր և մեք աչօք իսկ նկատեաք, քանզի փախստեալ հասեալ եաք ի կատար լերինն, որ ի վերայ է Սրբոյ Աթոռոյն Գանձասարայ, և ոտք նոցա ոչ հասին առ մեզ: Եւ անտի հայեցեալ տեսանեաք եղելոցն իրագործութիւնն: Եւ այս եղև ի ՌԵՀԱ (1722) թուին, ապրիլ ամսոյ քսան»:[329] Ղարաբաղի մյուս

[326] АРО в XVIII веке, том II, часть I, վավ. N 155, էջ 373-374:
[327] Մատենադարան, ձեռ. N 8206, էջ 26ա:
[328] АРО в XVIII веке, том II, часть I, վավ. N 161, էջ 381-382:
[329] Մատենադարան, ձեռ. N 8206, էջ 29բ:

երկու գավառների՝ Զրաբերդի և Գյուլիստանի բնակչությունը քիչ տուժեց, քանի որ այստեղ լեռնականների հրոսակախմբերը լուրջ դիմադրության հանդիպեցին և զգալի կորուստներ կրելով՝ շարժվեցին դեպի Գանձակ:

XVIII դ. սկզբին Պարսկաստանում ծայր առած համընդհանուր ճգնաժամի և անիշխանության պայմաններում Հարավային Կովկասի հայ ազգաբնակչության գլխին դամոկլյան սրի նման կախվեց տեղի քուրդ ու թրքալեզու ցեղերի և Օսմանյան կայսրության կողմից հրահրվող Դաղստանի լեռնականների հարձակումների վտանգը: Այս վտանգը չեզոքացնելու նպատակով Արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում սկսեցին ձևավորվել ինքնապաշտպանական ռազմա-քաղաքական կազմավորումներ, որոնք ժամանակի գրավոր աղբյուրներում սղնախներ են կոչվում: Նշանավոր էին Զանգեզուրի և Ղարաբաղի տարածքներում գործող սղնախները: Ղարաբաղի վարչական հինգ միավորներին՝ մելիքություններին, համապատասխանում էին նույն քանակի սղնախներ: Յուրաքանչյուր սղնախ ուներ իր պաշտպանական հենակետը՝ բերդը: Ղարաբաղյան սղնախներից առաջինն ընդգրկում էր Գյուլիստանի և Զրաբերդի մելիքությունների տարածքը, որի ռազմաքաղաքական կենտրոնն էր Երից Մանկանց վանքը՝ Ներսես կաթողիկոսի աթոռանիստը, իսկ պաշտպանական հենակետ-ամրություններն էին Գյուլիստանը, Հակառակաբերդը, Ականաբերդը, Զրաբերդը: Երկրորդ սղնախը ընդգրկում էր Խաչենի մելիքությունը՝ կենտրոն ունենալով Գանձասարի վանքը: Նրա պաշտպանական ամրություններն էին Կաչաղակաբերդը, Խոխանաբերդը, Շիկաքարը, որոնք Խաչենի համար ստեղծում էին հզոր պաշտպանական շրջան: Երրորդը ընդգրկում էր Վարանդայի մի մասը՝ Բալլուջա գետից մինչև Դիզափայտի լեռնաշղթան՝ Քոզիչ և Ավետարանոց կենտրոններով, Չորրորդ սղնախի մեջ մտնում էր Վարանդայի գավառի մյուս մասը՝ Շոշ կամ Քարագլուխ կենտրոնով, իսկ հինգերորդը Դիզակի միավորումն էր Տողասարի գագաթին գտնվող Քթիշ կենտրոնով:[330]

Լեռն գտնում է, որ մինչև Գանձակի տակ հայկական և վրացական բանակների հանդիպումը, Ղարաբաղում ռազմա-քաղաքական երեք կենտրոն գոյություն ուներ, «որոնցից առաջինը, որը կոչվում էր Մեծ Սղնախ, գտնվում էր Մռավ լեռներում, Թարթառ գետի վրա, երկրորդը՝ Փոքր Սղնախ անունով, գտնվում էր Վարանդա գավառի Քիրս լեռներում, մինչդեռ երրորդը, որն ինչպես երևում է, Սղնախ

[330] Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ ..., Գ. II, էջ 609:

անունը չուներ, գտնվում էր Ղափան գավառի այն մասում, որը կոչվում էր Փոքր Ղափան»:[331]

Մեծ Սղնախի ներքին կառուցվածքի և ղեկավարման վերաբերյալ պատկերացում կազմելու համար կարևորագույն աղբյուր է Երից Մանկանց վանքի Ներսես Զրաբերդցի կաթողիկոսի 1723 թ. մարտի սկզբին, Պետրոս Մեծին գրված նամակը:[332]

Նամակում ասվում է, որ Ղարաբաղի հյուսիսային երեք գավառներում՝ Գյուլիստանում, Զրաբերդում և Խաչենում, մի քանի հազար մարտիկներից բաղկացած սղնախներ են ձևավորվել, որոնց ղեկավարում են «Եսային, որ է Պարտաւու երկրէն և երկրորդն Սարգիս Չարապերթու երկրէն, որ յառաջագոյն են ի ցեղաց իշխանաց և այլք Շրուանն, Գրիգորն, Սարուխանն, Աւանն, Ուզպաշիք և թապունկ են»:[333]

Այսպիսով, նամակից պարզվում է, որ Մեծ Սղնախը Գյուլիստանի, Զրաբերդի և Խաչենի միավորումն էր: Ռազմա-քաղաքական այս միավորումը՝ Մեծ Սղնախը, ղեկավարվում էր նրա բաղկացուցիչ երեք սղնախների հրամանատարների կողմից:

Նամակից տեղեկանում ենք նաև, որ Գյուլիստանի սղնախի հրամանատար Եսային և Զրաբերդի սղնախի հրամանատար Սարգիսը գերակա դիրք էին զբաղեցնում մյուս երեքի՝ Սարուխանի, Գրիգորի և Ավանի նկատմամբ: Նամակում Ներսես Զրաբերդցի կաթողիկոսը այս երեքին յուզբաշի է անվանում և, հայտնելով, որ նրանք Եսայիին և Սարգսին ենթակա-«թապունկ» են, ավելացնում է, որ «Սարուխանն, Գրիգորն Խաչինու երկրէն են, Գրիգորն ևս իշխանաց ցեղէ»:[334] Պարզվում է, որ երեք յուզբաշիները Խաչենի սղնախի հրամանատարներն են, ընդ որում Սարուխանն ու Գրիգորը բնիկ խաչենցի են:

Նամակում Ներսեսը Մեծ Սղնախի հրամանատարներից երեքին՝ Եսայիին, Սարգսին և Գրիգորին իշխանական-մելիքական ծագում է վերագրում: Սակայն Ներսես կաթողիկոսի այս նամակի հետ միաժամանակ գրված մեկ այլ նամակից պարզվում է, որ ո՛չ Եսային, ո՛չ էլ Սարգիսը մելիքական ծագում չունեին: Այս նամակի հեղինակները հետևյալ կերպ են ներկայանում. «Այր ոմն Շրվան անուն, ևս Սարգիս անուն, որ այս երկուքս Չարայպերթու են, ես

[331] Լեո, Հայոց պատմություն, Հ. III, Գ. II, էջ 140:
[332] АРО в XVIII веке, том II, часть II, վավ. N 175:
[333] Նույն տեղում:
[334] Նույն տեղում:

Եսայիս Պարտայու և Մելիք Յովսեփ ի Գեանջայու»:[335] Ինչպես տեսնում ենք, միայն գանձակեցի Հովսեփն է մելիք կոչվում, մյուս երեքի անվան առջև նման տիտղոս չկա: Ամենայն հավանականությամբ Ներսես կաթողիկոսը Եսայիի և Սարգսի վարկն ու հեղինակությունը ռուսական իշխանությունների մոտ բարձրացնելու նպատակով էր նրանց իշխանական-մելիքական ծագում վերագրում: Դրանում իր դերը պետք է խաղար նաև այն, որ և՛ Եսային, և՛ Սարգիսը Ներսես կաթողիկոսի մերձավոր ազգականներն էին: Համաձայն Հրաչյա Աճառյանի կազմած Թավրիզի հայերեն ձեռագրերի ցուցակում տեղ գտած մի հիշատակարանի, Եսային Ներսես կաթողիկոսի քրոջ որդին էր. «Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ ես՝ Եսայիս, որեմ գուլստանցի, որդի Գևորգին ստացա այս Խորհրդի մեկնիչս, ազատելով ի ձեռաց անօրինաց և ետու վախմ և յիշատակ փառաւոր ուխտի Սուրբ Երից Մանկանց վանից ձեռամբ քեռին իմոյ Ներսէս կաթուղիկոսին Աղուանից... Ի ՌՃՀԴ թուին մարտ ամսոյ Ժ (10. 03. 1725 թ.)»:[336]

Ինչ վերաբերում է Ներսես Զրաբերդցի կաթողիկոսի և Զրաբերդի սղնախի հրամանատար Սարգսի ազգակցական կապին, ապա Գանձասարի վանքին կից գերեզմանատան տապանաքարերից մեկի արձանագրության համաձայն Սարգիսը Ներսես կաթողիկոսի հարազատ եղբայրն էր, «Այս է հանգիստ Սարգսին, որդի Ապրասին և թոռն Ներսէս կաթուղիկոսին եղբայր Սարգիս իշխանին ՌՄԵ (1786)»:[337]

Ի տարբերություն Եսայիի և Սարգսի, որոնք նամակագրի մերձավոր ազգականներն էին, և նրանց իշխանական-մելիքական ծագումը, ինչպես տեսանք, Ներսես կաթողիկոսը հնարել էր, Գրիգորը իսկապես բարձր ծագում ուներ: Նա Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի հորեղբոր՝ Վելիջանի որդին էր և Խաչենի մելիքը:[338]

Ամենասեղմ տեղեկությունը Ներսես կաթողիկոսը տալիս էր Ավան յուզբաշու վերաբերյալ: Նամակից իմանում ենք, որ Ավանը Շիրվանի, Գրիգորի և Սարուխանի նման ենթակա էր Եսայիին ու Սարգսին: Ի տարբերություն վերջին երեք յուզբաշիների, որոնց մասին Ներսես կաթողիկոսը հայտնում էր, թե նրանք բնիկ ղարաբաղցի են, Ավանի մասին նամակագրի հաղորդումը սահմանա-

[335] АРО в XVIII веке, том II, часть II, վավ. N 177:
[336] Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, Կազմեց Հրաչեայ Աճառեան, Վիեննա, 1910, էջ 81:
[337] Դիվան հայ վիմագրության, Արցախ, Պրակ V, արձանագրություն N 193, էջ 168:
[338] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, Հ. X, էջ 171-172:

փակվում է նրանով, որ Ավանը Խաչենի սղնախի հրամանատարներից մեկն է:

Ավան յուզբաշին բնիկ ղարաբաղցի չէր: Նա ծնվել էր Շիրվանի վիլայեթում, Շաքիի գավառի Ավան կամ Ավանդամ գյուղում:[339] Ղարաբաղում սկսված ազգային-ազատագրական պայքարի առաջին օրերից Ավան յուզբաշին Շիրվանաբնակ հայ մարտիկների հետ անցել էր Ղարաբաղ: Այստեղ նրան և նրա զինակիցներին անվանել են «շիրվանցիներ», «Շիրվանայ տղեք»:[340]

Նամակում Ներսես կաթողիկոսը ոչինչ չի ասում սղնախների գործունեության մեջ իր և Եսայի կաթողիկոսի խաղացած դերի մասին:

Ղարաբաղի սղնախների պատմությանն անդրադարձած պատմաբանները միմյանց հակասող գնահատականներ են տալիս Եսայի Հասան-Ջալալյան և Ներսես Ջրաբերդցի կաթողիկոսների գործունեությանը և սղնախների ղեկավարման գործում նրանց դերին:

Համաձայն Ա. Գ. Աբրահամյանի, սղնախները կաթողիկոսներին ենթարկվում էին միայն հոգևոր ոլորտում:[341]

Բ. Ա. Ուլուբաբյանը, ընդհակառակը, գտնում է, որ Եսայի կաթողիկոսը Ղարաբաղում ծավալված ազգային-ազատագրական շարժման, «ժողովրդական բազմամյա պայքարի առաջնորդն էր, արցախյան գնդերի գլխավոր հրամանատարը՝ այս բառի անմիջական իմաստով»:[342]

Մեր կարծիքով ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ գնահատականները չեն համապատասխանում իրականությանը: Լեոն, անդրադառնալով սղնախների կառավարման ձևերին, գրում է, որ «այն (Մեծ Սղնախ-Լ. Մ.) կառավարվում էր իր առաջնորդների, հրամանատարների խորհրդով» և որ այդ ռազմական խորհրդում բոլորը հավասար ձայնի իրավունք ունեին:[343]

Անժխտելի է, որ Եսայի և Ներսես կաթողիկոսները մեծ հեղինակություն ունեին սղնախների ռազմական ղեկավարության շրջանում և, որպես հավասարազոր անդամներ, մասնակցում էին սղնախների ղեկավարության խորհուրդներին: Հատկապես մեծ էր

[339] П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в 1-ой четверти XVIII века, М., 1954, с. 234-235.

[340] АРО в XVIII веке, том II, часть II, վավ. N 278:

[341] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմության, Երևան, 1953, էջ 36:

[342] Բ. Ա. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 213:

[343] Լեո, Հայոց պատմություն, Հ. III, Գ. II, էջ 140-141:

նրանց դերը սղնախների արտաքին հարաբերությունների մշակման և ուղղորդման գործում:

Երբ լեզգիների կողմից պաշարված Գանձակին օգնության եկած վրացական բանակը լեզգիներին դավանակից և դաշնակից Թարաքամա ցեղին պատժելու պատրվակով կողոպուտի և ավարառության ենթարկեց Գանձակից մինչև Թարթառ գետն ընկած ընդարձակ տարածքի բնակչությանը, այդ թվում նաև հայերին,[344] վրաց Վախթանգ Ջ թագավորի հետ բանակցելու նպատակով Գանձակ մեկնած Եսայի կաթողիկոսը չցանկացավ խաթարել ձևավորվող հայ-վրացական զինակցությունը: Նա չխզեց հարաբերությունները Վախթանգի հետ, բանակցությունները շարունակելու նպատակով Եսային վրաց թագավորի հետ մեկնեց Թիֆլիս և մոտ չորս ամիս մնաց այնտեղ:[345]

Մեր կարծիքով հենց Եսայի կաթողիկոսի ազդեցության շնորհիվ Ղարաբաղի հյուսիսային սղնախը, որը կանգնեցրել էր լեզգիներին, այս դեպքում հակահարված չտվեց վրացիներին:

Բանակցությունները Եսայի կաթողիկոսի և Վախթանգ թագավորի միջև շարունակվում էին, երբ օգոստոսին Թիֆլիս եկավ Պետրոս Մեծի բանագնաց Բորիս Տուրկեստանովը, որը բերել էր կայսրի ուղերձը՝ գրված 1722 թ. հուլիսի 2-ին, որտեղ Վախթանգին պատվիրվում էր անհապաղ շարժել իր տրամադրության տակ եղած զորքը լեզգիների դեմ: Իսկ արդեն օգոստոս ամսին հղված նամակում Պետրոսը հայտնում էր, որ ռուսական զորքը հասել է Թարքի և առաջ է շարժվելու դեպի Դերբենտ ու Բաքու: Եթե Վախթանգը չի կարող սեփական ուժերով դեմ կանգնել լեռնականներին, թող այդ դեպքում միանա ռուսական բանակին:[346] Նույն ժամանակ Վախթանգը ստացավ պարսից Սուլթան-Հուսեին շահի հրովարտակը, որով Վախթանգը նշանակվում էր Ատրպատականի սպասալար և հրամայվում էր զորքով դուրս գալ լեզգիների դեմ:[347]

Ցարի և շահի ուղերձներից առաջ ստացվել էր Էրզրումի փաշայի (Սիլահդար-Իբրահիմի) նամակը, որտեղ փաշան սուլթան Սիմեդ Գ-ի (1703-1730) անունից առաջարկում էր Վախթանգին՝ միանալ Պարսկաստանի դեմ շարժվող օսմանյան զորքին: Փոխարենը փաշան խոստանում էր Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Իմերեթիան հանձնել Վախթանգի կառավարմանը:

[344] Մատենադարան, ձեռ. N 8206, էջ 30բ-32բ:

[345] Լեո, Հայոց պատմություն, Հ. III, Գ. II, էջ 130:

[346] АРО в XVIII веке, том II, часть II, վավ. 165, էջ 7-8:

[347] Նույն տեղում, էջ 9:

Երեք կողմերի առաջարկները քննելու, նամակներին պատասխանելու և հետագա գործողությունների շուրջ ծավալված խորհրդակցություններում Եսայի կաթողիկոսը իր ամբողջ ազդեցությունն օգտագործում էր, որպեսզի Վախթանգը ընդունի ռուսական առաջարկը: Եսայի կաթողիկոսը օգոստոսի 18-ին Թիֆլիսից նամակ ուղարկեց Մինաս արքեպիսկոպոսին, որտեղ հայտնում էր, որ Վախթանգը մտադիր է սեպտեմբերի վերջին շահի հրամանով զորքով շարժվել Գանձակ, այնտեղ միանալով հայերի ռազմական ուժերի հետ՝ առաջանալ լեռնականների վերահսկողության տակ գտնվող Շամախի: Եսայի կաթողիկոսը մի կարևոր հավելում էր կատարում. «Այդ բոլորը Վախթանգը կատարում է այն մտադրությամբ, որպեսզի միանալով նորին կայսերական մեծության զորքի հետ՝ մտնի նորին մեծության հովանավորության տակ»:[348]

Շահի հրամանը Վախթագի կողմից օգտագործվում էր Հարավային Կովկասի շիա մահմեդականներին հանգստացնելու համար: Իրականում նա արշավանքի էր ելնում՝ նպատակ ունենալով միանալ ռուսներին:

Նույն նամակում Եսայի կաթողիկոսը գրում էր, որ ռուսների անդրկովկասյան արշավանքի համար պահն ամենաբարենպաստն է: Պարսկաստանն անկարող է դիմադրություն ցույց տալ աֆղանների արշավանքի հետևանքով. նրանք պաշարել են մայրաքաղաք Սպահանը և այնտեղ գտնվող Սուլթան-Հուսեին շահին կտրել երկրի՝ աֆղանների տիրապետությունից զերծ մնացած շրջաններից: Հայերն ու վրացիները սպասում են ռուսների գալստյանը և նրանց հետ են կապում փրկության հույսը: Եսային գրում էր նաև, որ հայերը 40 հազար զինված մարտիկներ ունեն և առաջիկայում կարող են կրկնապատկել իրենց ուժերը:[349]

Այսպիսով որոշվեց, որ վրացական բանակը առաջ կշարժվի դեպի Գանձակ, այնտեղ կգան նաև սղնախների հայկական զորքերը, ապա միացյալ ուժերը կշարժվեն դեպի Շամախի և կսպասեն ռուսական բանակին:[350]

Վրացական բանակը Թիֆլիսից դուրս եկավ 1722 թ. սեպտեմբերին: Երբ բանակը հասավ Խրամ գետի Կոտրած կամուրջին, Սուրբ Խաչի տոնն էր:[351] Դրանից մեկ օր առաջ Եսայի կաթողիկոսը թողեց վրացական բանակը և նրանից առաջ անցնելով՝ մեկնեց

[348] АРО в XVIII веке, том II, часть II, վավ. 165, էջ 15:
[349] Նույն տեղում:
[350] Նույն տեղում:
[351] Մատենադարան, ձեռ. N 8206, էջ 34բ:

Ղարաբաղ, որպեսզի Վախթանգի բանակին միացնելու համար իր հետ բերի Ղարաբաղի հայկական զինական ուժը, որի ղեկավարներն էին Ավան, Շիրվան, Շահնի և Սարուխան յուզբաշիները: «Սոքա ընդ մելիքներացն Ղարաբաղու, զկնի առաջին դառնալոյն Վախտանկին և խախտելոյ իշխանության պարսից, միաբանեալ ընդ ինքնեանս զամենայն քաջասիրտ և արիական և զօրեղ մանկունս և երիտասարդս տանս Աղուանից, ըստ ինքեանս կոչեալ էին զօրս բազումս, ավելի քան զերկոտասան հազար»:[352]

Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե Ղարաբաղի բոլոր սղնախների մարտական ուժերին, որոնց թիվը Մինաս արքեպիսկոպոսին գրված նամակում Եսային 40 հազարի էր հասցնում, այլ միայն Ղարաբաղի հյուսիսային՝ Գյուլիստանի, Զրաբերդի և Խաչենի գավառների սղնախների ուժերին:

Այս եզրակացության իսկությունը հավաստում է Ներսես Զրաբերդցի կաթողիկոսի՝ 1723 թ. գրված նամակը Պետրոս Մեծին, որտեղ նշված յուզբաշիները ներկայացվում են որպես Գյուլիստանի, Զրաբերդի և Խաչենի սղնախների հրամանատարներ:[353] Այս սղնախների զենքի տակ գտնվող 12 հազար մարտիկներից ընտրելով 10 հազարին և գլխավորելով նրանց՝ Եսայի կաթողիկոսը և չորս յուզբաշիները հասան Գանձակի մոտ գտնվող Զոլակի դաշտ, իսկ վրացական բանակը այդ ժամանակ ճամբար էր դրել քաղաքի մյուս կողմում գտնվող Ղարա-արիս կոչվող գետակի ափին:

Լեոն, հենվելով Մինաս արքեպիսկոպոս Տիգրանյանին Մինաս Փերվազյանի գրած նամակի վրա,[354] ենթադրում է, որ Ներսես կաթողիկոսը նույնպես գտնվում էր վրացական բանակին միանալու շարժվող հայկական զորագնդի մեջ՝ Եսայի կաթողիկոսի կողքին:[355]

Չորս օր առանձին բանակելուց հետո վրաց և հայկական զինական ուժերը միացան: Ըստ Եսայի կաթողիկոսի Վախթանգը հավատ չէր ընծայում իր շրջապատի վրացի իշխաններին և ավելի շատ հենվում էր հայերի վրա. «Ոչ այնքան հաւատայր ազգին իւրոյ վրաց, զոր միշտ նենգաւորք, խորամանկ են: Վասըն այն կամէր այս զօրս, մանաւանդ ազգս հայոց իւրն սեփհականացուցանել, որպես տիփլիզեցիք: Ես զի յատկացեալ և ստուգեալ էր գալուստ մեծի կայսերն ըռուսաց Պետրոսի և կամէր հայ և վրացի զօրոք ճոխ և

[352] Մատենադարան, ձեռ. N 8206, էջ 34բ:
[353] АРО в XVIII веке, том II, часть II, վավ. N 175, էջ 26-27:
[354] Նույն տեղում, վավ. 169, էջ 18:
[355] Լեո, Հայոց պատմություն, հ. III, գ. II, էջ 132:

շքեղ յառաջ ելանել նմա»:[356] Վախթանգի ազդեցությունը վրաց բանակում բացարձակ չէր: Զորքը հավաքված էր ֆեոդալական աշխարհազորի սկզբունքով և նրա առանձին ստորաբաժանումները ենթարկվում էին իրենց առանձին իշխաններին: Վախթանգը փորձում էր հենվել հայերի ուժի վրա և դրանով նախ սանձել ինքնագլխություն ցուցաբերող վրաց իշխաններին և ապա Պետրոսի կողմից ավելի բարձր գնահատվել և ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել:

Մինչև հոկտեմբերի վերջը անգործության մատնվելուց հետո Գանձակ հասավ Պետրոսի Դերբենտից Ռուսաստան վերադառնալու լուրը, որի պատճառների մասին Եսայի կաթողիկոսը հավաստի տեղեկություններ չունի: Նա հաղորդում է միայն պտտվող լուրերը, համաձայն որոնց ռուսական ճամբարում կլիմային սովոր չլինելու պատճառով հիվանդություններ էին տարածվել, կամ նավաբեկության հետևանքով զորքի մատակարարումը խախտվել էր: Սակայն սրանք Պետրոսի արշավանքը ընդհատելու երկրորդական պատճառներն էին: Պետրոս Մեծի կասպիական արշավանքը հակասում էր Թուրքիայի շահերին: Ռուսաստանն ապահովում էր իր թիկունքը Կովկասում, մի հանգամանք, որ ծայրահեղորեն սրում էր ռուս-թուրքական հարաբերությունները:

Թուրքիայի մեծ վեզիր Դամադ Իբրահիմ փաշան մի պատվիրակություն ուղարկեց Ռուսաստան, որին հանձնարարված էր բացատրություններ ստանալ ռուսական զորքերի Կովկաս ներթափանցման մասին և տեղեկություններ հավաքել ռուսների հետագա գործողությունների, ծրագրերի վերաբերյալ: Պատվիրակությունը լիազորված էր Պետրոսին հանձնել սուլթան Ահմեդ Գ-ի նամակը, ուր սուլթանը հայտարարում էր, որ թույլ չի տա ռուսական իշխանության հաստատում դավանակից լեզգիների վրա և պահանջում էր հեռացնել զորքերը Կովկասից: Մյուս կողմից, սուլթանը իր հովանավորության տակ վերցնելով լեզգիների պարագլուխ Դաուդ խանին, սպառնում էր վրացիներին, որոնք օժանդակում էին ռուսական զորքերի մուտքը այն տարածքները, որոնք Օսմանյան կառավարությունը ճանաչել էր որպես լեզգիներին պատկանող:[357]

Ռուսների արշավանքը ընդհատելու լուրը հայ-վրացական զորքի վրա ծանր ազդեցություն թողեց: Վախթանգը, առկա ուժերի վրա վստահություն չունենալով, որոշեց վերադառնալ Վրաստան. մա-

[356] Մատենադարան, ձեռ. N 8206, էջ 36ա:
[357] Մ. Զուլալյան, Հայ ժողովրդի XIII-XVIII դդ. պատմության հարցերը ըստ եվրոպական հեղինակների, Գիրք I, Երևան 1990, էջ 196:

նավանդ որ տեղեկություններ ստացվեցին, թե պաշարված Սպահանում, որտեղ գտնվում էր Սուլթան-Հուսեին շահը, շուտով բացելու են դարբասները աֆղանների առջև:[358] Վախթանգի համար առավել մեծ վտանգ էր ներկայացնում Վրաստանից սուրհանդակի բերած լուրը, ըստ որի Կախեթի Կոստանդին իշխանը, որ մահմեդականություն ընդունելով կոչվել էր Մահմադ-Ղուլի խան, օգտվելով Վախթանգ Զ-ի բացակայությունից, ցանկանում էր գրավել արքայանիստ Թիֆլիսը և զրկել նրան գահից:

Պետրոսի վերադառնալու լուրը աշխուժացրեց Հարավային Կովկասի մահմեդականներին. Բորչալուի, Ղազախի թուրքերը, Երևանի և Գանձակի խաները նամակ ուղարկեցին Սպահանից Ղազվին փախած և թագադրված թագաժառանգ Թահմասպին հաղորդելով, թե Վախթանգը ապստամբել է և նրա դրդմամբ են ռուսները ներխուժել Հարավային Կովկաս, և Վախթանգը, իր զորքին միացնելով հայերի զինական ուժերը, ընդառաջ է շարժվում ռուսներին:

Թահմասպը հրամայեց կենդանի կամ մեռած իր մոտ բերել Վախթանգին, իսկ Կախեթի ու Քարթլիի վալի նշանակեց Մահմադ-Ղուլի խանին: Սրան հանձնվեց նաև Ղարաբաղի բեկլարբեկությունը: Այդ պայմաններում Եսայի կաթողիկոսը և հայկական ուժերի հրամանատար յուզբաշիները ստիպված էին հետ քաշվել և ամրանալ ղարաբաղյան սղնախներում:

Մահմադ-Ղուլի խանը Թիֆլիսին տիրելու համար դիմեց լեռնականների օգնությանը՝ խոստանալով քաղաքը գրավելուց հետո թույլ տալ կողոպտել այն: Քաղաքը 1723 թ. մայիսին գրավվեց և թալանվեց, իսկ Վախթանգը «գնացեալ ամրացեալ ի խորին Վրաստան և անտի ստէպ-ստէպ հրեշտակս և դեսպանս առաքէ առ թագաւորն ռուսաց զի զօրս հասանիցէ ինքեան ի թիկունս»:[359]

Վրաստանում ծավալված այս իրադարձությունները սղնախները դատապարտեցին մեկուսացման: Վախթանգի պարտությամբ խախտվեց հայ-վրացական զինակցությունը: Սղնախները ընկան իրանական և թուրքական ուժերի օղակի մեջ:

Իրադրությունը ծայրաստիճան լարվեց, երբ 1723 թ. ամռան սկզբին թուրքերը ներխուժեցին Հարավային Կովկաս:

Էրզրումի Սիլահդար-Իբրահիմ փաշան 40 հազարանոց բանակով հարձակվեց Թիֆլիսում դեռ նոր հաստատված Մահմադ-Ղուլի խանի վրա: Վերջինս համաձայնեց հանձնել Թիֆլիսը, եթե սերասքյարը ճանաչի իրեն Քարթլիի և Կախեթի վալի: Համաձայնություն

[358] Մատենադարան, ձեռ. N 8206, էջ 37ա:
[359] Ձեռ. N 8206, էջ 39բ-40ա:

ստանալով՝ Մահմադ-Ղուլի խանը 1723 թ. հունիսի 12-ին հանձնեց քաղաքի բանալիները Իբրահիմ փաշային, սակայն երբ թուրքերը զբաղեցրին միջնաբերդը, խանը կալանավորվեց:[360] Թիֆլիսին այդքան հեշտությամբ տիրանալուց հետո Սիլահդար-Իբրահիմ փաշան կարծում էր, որ Գանձակին էլ առանց էական դիմադրության կտիրանա, և մտադիր էր առաջիկայում գրավել այն:

Ինչպես երևում է 1723 թ. ամռանը Գյուլիստանի սղնախի հրամանատար Եսայիի՝ մելիք Թամրազին գրած նամակից[361], Զրաբերդի սղնախը դաշնակցային հարաբերություններ ուներ Գանձակի մուսուլմանների հետ, և սղնախի զինված ուժերի մի մասը գտնվում էր Գանձակում: Երբ թուրքերը գրավեցին Թիֆլիսը, հայկական ջոկատները թողեցին Գանձակը և վերադարձան Ղարաբաղ, իսկ երբ Իբրահիմ փաշան 1723 թ. հոկտեմբերին 80 հազարանոց զորքով պաշարեց Գանձակը[362], պահանջեց, որ Գյուլիստանի և Զրաբերդի սղնախները հնազանդվեն թուրքերին և պատվիրակներ ուղարկեն Գանձակը պաշարած թուրքական ճամբարը՝ սպառնալով ավերել երկիրը, իսկ բնակչությանը գերեվարել:

Գիտակցելով, որ առկա ուժերով անկարող են դիմադրել թուրքերին, Սարգիս և Աբրահամ յուզբաշիները ստիպված էին կատարել Իբրահիմ փաշայի պահանջը:[363] Գերի ընկած գանձակեցի հայերը պատվիրակների պահանջով ազատ արձակվեցին:[364]

Թուրքերին չհաջողվեց Գանձակը գրավել: Քաղաքի պաշտպանները 18-օրյա պաշարումից հետո հանկարծակի հակագրոհով ներխուժեցին թուրքական ճամբար: Խուճապի մատնվելով՝ թուրքերը լքեցին հրետանին ու գումակը՝ տալով 9 հազար սպանված:[365]

Այս դեպքերի արդյունքում Գյուլիստանի և Զրաբերդի սղնախների յուզբաշիները գանձակեցիների և մնացած սղնախների կողմից ընկալվեցին որպես դավաճաններ և թուրքերի հետ գործակցողներ: Ծայր առան երկպառակտչական կռիվներ մի կողմից՝ Գյուլիստանի և Զրաբերդի սղնախների, մյուս կողմից՝ գանձակեցիների և մնացած սղնախների միջև: Կողմերը ասպատակում և ավերում

[360] Մ. Զուլալյան, Հայ ժողովրդի պատմության հարցերը, ըստ եվրոպական հեղինակների XIII-XVIII դդ., Գ. I, Երևան 1990, էջ 199:
[361] АРО XVIII веке, том II, часть I, վավ. N 189, էջ 45:
[362] Նույնի վավ. N 195, էջ 51:
[363] Նույնի վավ. 219, էջ 77:
[364] Նույնի վավ. 194, էջ 51:
[365] Նույնի վավ. 195, էջ 53; Եղիա Կարնեցու դիվանը. Առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1968, վավ. 121, էջ 229:

էին միմյանց տարածքի գյուղերը:[366]

Հակասությունների սրմանը նպաստում էր նաև այն, որ Գյուլիստանի և Զրաբերդի սղնախների հրամանատար յուզբաշիները տեղաբնիկ էին, իսկ մյուս սղնախների յուզբաշիների մեծ մասը հիշատակվում էին «շիրվանցի» անունով: Սղնախները այդ պահին բաժանվում են «շիրվանցիներին» կողմ և դեմ հատվածների: «Շիրվանցիների» հակառակորդները հայտարարում էին «Մեր երկիրն այ, մեք կուտենք, դոք օվ էք»:[367]

Լեոն անարդարացի կերպով սղնախներում ներքին պառակտման մեղքը բարդում է Ներսես կաթողիկոսի վրա: Նա գտնում է, թե Ներսես Զրաբերդցին, տեսնելով, որ Եսայի Հասան-Զալալյանը «հայ զինվորության իրական հրամանատարն էր», նախանձից դրդված, մի քանի յուզբաշիների հետ, անջատվելով Մեծ Սղնախից, նոր սղնախ կազմեց՝ դավաճանելով ընդհանուր գործին:[368]

Եսայի Հասան-Զալալյան և Ներսես Զրաբերդցի կաթողիկոսների միջև անձնական թշնամություն չի եղել, նրանք նամակագրական կապ են ունեցել միմյանց հետ: Այսպես, 1724 թ. հունվարին Եսայի կաթողիկոսը նամակով տեղեկացրել է Ներսեսին ռուսական պատվիրակ Իվան-Կարապետի Ղարաբաղ ժամանելու մասին: Պատասխան նամակում տեղեկացնելով, որ չի կարողանում հանդիպել պատվիրակին, իր անունից նրա հետ բանակցել լիազորել է Եսայիին:[369] Պատվիրակ Իվան-Կարապետին և Թարխան յուզբաշուն գրված նամակում Ներսես կաթողիկոսը հայտնում է, որ իր և Եսայի կաթողիկոսի միջև տարաձայնություններ գոյություն չունեն. «Մեր եղբայր Եսայի հոգևոր տէրն թէ տէղտ է մեք խու ջոկութիւն չունենք»:[370]

Թարխան, Սարգիս, Փանի յուզբաշիներին գրված նամակում Ներսեսը ճիշտ էր համարում, որ Գանձասարում վարվեն ռուսական պատվիրակի հետ բանակցությունները և նորից հայտնում էր, որ ինքը Եսայի կաթողիկոսին լիազորել է բանակցություններում հանդես գալ նաև իր անունից. «Թէ տանելոյ եք դեպի Գանձայսար առ Եսայի կաթողիկոսն, բարի է, տանէք, զոր ինչ հեգևոր տէրն

[366] Армяно-русские отношения в XVIII веке, том II, часть II, վավ. N 204, էջ 61:
[367] Նույն տեղում, 8. II փ. II, վավ N 278:
[368] Լեո, Հայոց պատմություն, հ. III, Գ. II, էջ 145:
[369] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Հավելված, վավ. 6, էջ 149:
[370] Նույնի վավ. 8, էջ 151:

գիտէ՝ մէկ ջոկ չեմք: զոր ինչ որպիսութիւն է, հոգևոր տէրն կու գրէ մեզ»:[371]

Վերը շարադրածից պարզվում է, որ երկու կաթողիկոսների միջև անձնական թշնամություն և տարաձայնություններ գոյություն չունեին: Ներսես կաթողիկոսն իր նամակներում ակնարկներ է անում սղնախներում՝ ստեղծված բարդ և հակասական իրադրության մասին: Եսայի կաթողիկոսին հասցեագրած նամակում նա գրում է. «Դու որպէս գիտես հստակութիւն չկայ մեր մեջս: Ես չեմ կարում այտր գալ և քո գալդ գիտեմ՝ չես կարում, հրամանքդ լաւն գիտես»:[372] Ներսես կաթողիկոսի մշուշոտ ակնարկների վրա որոշակի լոկյս է սփռում Իվան-Կարապետի 1724 թ. մարտի 10-ի զեկուցագիրը, ուր նա հայտնում է, թե սղնախների հայերը, մինչև իր Ղարաբաղ ժամանելը սպանել են իրենց առաջնորդներին, իսկ նրանց տիրույթներն իրար մեջ բաժանել: Սակայն այդ տիրույթների բաժանումից դժգոհ մնացածները պայքարում են իրենց օգտին նոր վերաբաժանման համար. «էս հայերին աֆալն էս այ, որ խայտրն տվէլ ան, ուրէն գլխաւորն սպանել ան յառէջմէ, գլխաւորին երկիրն բաժանել: Էսօր էստոնց միջումը երկու մարթ կայ, որ յառէջմէ բաժանածին ղաբուլ չեն, ուրենց միջումն կռիւ ան անում, չուն գլխաւոր չուն է: Մարդն մին երկու գեղ ան զափթէլ, քանի մարդով ուտում ան»:[373]

Մինչև ազատագրական շարժման սկիզբը Ղարաբաղում մելիքների ձեռքում էր կենտրոնացած վարչական, ինչպես նաև ռազմական իշխանությունը: Ամեն մի մելիք ուներ իր մարտական ջոկատները, որոնց ղեկավարում էին մելիքի կողմից նշանակված յուզբաշիները (հարյուրապետերը): Ղարաբաղում ծայր առած ազգային-ազատագրական շարժման սկզբից հետո յուզբաշիների դերը աննախադեպ բարձրանում է: Ղարաբաղի սղնախներին վերաբերող վավերագրերից պարզվում է, որ 1723-1728 թթ. մելիք Թամրազը և մելիք Դանիելը բացակայելիս են եղել իրենց մելիքություններ Գյուլիստանից և Ջրաբերդից: 1726 թ. մայիսին ռուսական արքունիքին տված Գյուլիստանի և Ջրաբերդի հայ բնակչության հավատարմագրերում բացակայում են վերոհիշյալ մելիքների անունները: Նրանց փոխարեն առկա են Գյուլիստանի սղնախի հրամանատար Աբրահամ յուզբաշու և Ջրաբերդի սղնախի հրամա-

[371] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Հավելված, վավ. 6, էջ 149:
[372] Նույնի վավ. 6, էջ 149:
[373] Նույնի վավ. 34, էջ 186-187:

նատար Սարգիս յուզբաշու կնիքները:[374] Այս ամենից կարելի է ենթադրել, որ Գյուլիստանի ու Ջրաբերդի մելիքների և յուզբաշիների միջև ծագած հակասությունների և հակամարտության պատճառով մելիքները լքել էին իրենց մելիքությունների սահմանները:

Մելիքների և յուզբաշիների միջև հակամարտությունը ուղեկցվում էր սպանություններով, ինչի վկայությունն է Իվան-Կարապետի՝ 1724 թ. փետրվարի 2-ի զեկուցագիրը, ուր նա գրում է, թե մելիք Բաղրը, իր մելիքանիստ Ավետարանոց գյուղ հրավիրելով յուզբաշիների, խնջույքի ժամանակ դավադրաբար սպանել է նրանց:[375] Հավանաբար նման արյունոտ միջադեպի մասին է Թարխան, Փանի և Սարգիս յուզբաշիներին գրած նամակում ակնարկում Ներսես կաթողիկոսը: Նա գրում է տեղի ունեցած ինչ-որ չարագործության մասին, ինչի պատճառով չի կարող անձամբ Գանձասար գալ. «Այտ չարիքտ կործեաց, այն օրէն մինչև այսօր ես չեմ եկած այտր, գիտեք որքան տրտմութեան մեջ եմ»:[376]

Իր մեկ այլ զեկուցագրում Իվան-Կարապետը հայտնում էր, որ սղնախների ղեկավարների պառակտումը վերածել է զինված հակամարտության. «Էստոնց միջումն կռիւ այ նայ ասում այ ես լինեմ մեծ, մինն ասում այ, թե ես լինեմ մեծ, էսօր էլ ղոշուն ան բոլորէլ, գնացէլ մինը զմինոյ հետ կռիւ ան անում»:[377]

Պատվիրակի փորձերը՝ օգտագործել հակամարտության մեջ ներքաշված յուզբաշիների նկատմամբ Եսայի կաթողիկոսի հեղինակությունը և նրա միջնորդությամբ հաշտեցնել վերջիններիս, ձախողվեցին: Եսայի կաթողիկոսը, դիմելով Իվան-Կարապետին, դառնությամբ հավաստում էր իր անզորությունը՝ գրելով, որ իր միջնորդությունը զանց է առվել. «Ես ի՞նչ անեմ, մեք խու աջիզ իլանք դոցայ ձեռն իլթիմաս անելէն, մեկին հետ խօսում ես, մեկն է խռովում... Թէ որ մեկ բան զմեզ ուզում են՝ գնում ենք, թէ որ չէ, խօ չէ, մեր խօսքով ո՞վ է, որ մեզ թոհմաթ է գրում»:[378]

Պատվիրակին հասցեագրված այս ուղերձը ակնառու կերպով ցույց է տալիս, որ Եսայի կաթողիկոսը իշխանություն չուներ սղնախների մարտական ուժերի հրամանատարների վրա և շատ

[374] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Հավելված, վավ. 6, էջ 247-248; վավ. 71, էջ 249-250:
[375] Նույնի վավ. 14, էջ 157-158:
[376] Նույնի վավ. 11, էջ 154:
[377] Նույնի վավ. 52, էջ 214:
[378] Նույնի վավ. 29, էջ 178:

Սարգիս ուզբաշին և Աբրահամն և Բ Եսային Օսմանլուն ան ուզում»:[386]

Նույն տարվա փետրվարի 5-ին Եսայի կաթողիկոսը, Ավան, Միրզա յուզբաշիները և մելիք Թամրազը պատասխան նամակ գրեցին, որտեղ հավաստիացնում էին ցարին, որ չնայած զինամթերքի խիստ պակաս են զգում, կշարունակեն դիմագրավել իրենց շրջապատած թշնամու ճնշմանը, միայն թե նա շտապեցնի ռուսական զորքերի մուտքը Ղարաբաղ:[387]

Նամակը Ռուսաստան տանելու համար կազմվեց պատվիրակություն՝ հանձինս շամախեցի Անտոն քահանա Առաքելյանի և Չալաբի քյոխվայի, որոնց ճանապարհին միացավ նաև Շամախու նահանգի Ղաբալայի գավառի հայ համայնքի ներկայացուցիչ Պետրոս քահանան:

Չնայած հուշագրի ընթերցման ժամանակ Ներսես կաթողիկոսի և նրա ազգական յուզբաշիների անունները Իվան-Կարապետը չհիշատակեց, սակայն նա գիտակցում էր, որ իր վրա դրված առաքելության հաջողությունը կապահովվի ոչ թե սղնախների խմբավորումներից մեկի հետ գործակցելով, այլ սղնախների պառակտված բոլոր ուժերը ի մի բերելու և նրանց միջև համագործակցությունը վերականգնելու ճանապարհով: Այդ պատճառով նրա նախաձեռնությամբ Եսայի կաթողիկոսը և մի շարք յուզբաշիներ Ներսես կաթողիկոսին նամակներ հղեցին, որոնցում տեղեկացնելով Պետրոս Մեծի հուշագիրը Գանձասարում հրապարակելու և պատասխան ուղերձ հղելու մասին՝ հրավիրում էին նրան և նրա ազգական յուզբաշիներին մասնակցել Գանձասարի վանքում սկսված խորհրդակցություններին:

Այդ նամակները չեն պահպանվել, և դրանց մասին տեղեկանում ենք Ներսես Չրաբերդցու գրած պատասխան նամակներից:

Մելիք Թամրազին գրած պատասխանում Ներսես Չրաբերդցին գրում էր, որ անտեղյակ է պատվիրակ Իվան-Կարապետի գալստյան նպատակներին: Ներսեսի համոզմամբ միայն անհատ պատվիրակի գալուստը Ղարաբաղ ոչ միայն օգուտ չի բերի, այլև վտանգավոր է, քանի որ այդ մասին թուրքերի տեղեկանալու դեպքում Ղարաբաղի հայերը խստագույնս կտուժեն:

Ելքը ոչ թե առանձին պատվիրակների այցն է, այլ Պետրոսի՝ մեծաքանակ զորքով Ղարաբաղ գալը: Ճիշտ է համարում պատ-

[386] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, վավ. 14, էջ 157-158:
[387] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 208, էջ 67-68:

վիրակի հաստատվելը Ավան յուզբաշու մոտ, քանի որ այդտեղից թշնամու համար ավելի դժվար կլինի տեղեկանալ պատվիրակի գալստյան մասին:[388]

Ներսես Չրաբերդցին Թարխան յուզբաշուն և Իվան-Կարապետին ուղղված պատասխանում իր դժգոհությունն էր հայտնում, որ իրեն և Գյուլիստանի ու Չրաբերդի մյուս առաջնորդներին չեն ծանոթացրել Պետրոս Մեծի հուշագրի բովանդակությանը և այդ հուշագրի պատասխանը գրելուն իրենց մասնակից չեն դարձրել:[389] Սարգիսը Ներսես կաթողիկոսի եղբոր թոռն էր և Ներսեսին հաջորդած Իսրայել Չրաբերդցի կաթողիկոսի եղբայրը:[390]

Այն բանից հետո, երբ պարսկական կողմնորոշում ունեցող Վարանդայի մելիք Բաղին ցարին հպատակություն հայտնեց ու Շոշի սղնախի ղեկավարների հետ հաշտվեց[391], Իվան-Կարապետը մեկնեց Չրաբերդի և Գյուլիստանի սղնախներ՝ ուշադրություն չդարձնելով այն նախազգուշացումներին, թե այդ սղնախների թրքամետ առաջնորդները կսպանեն նրան: Իվան- Կարապետի հետ հանդիպման ժամանակ Սարգիս և Աբրահամ յուզբաշիները, հնազանդություն հայտնելով ցարին[392], 1724 թ. մարտի 5-ի՝ ցարին ուղղված նամակում հավաստում են, որ իրենց տրամադրության տակ 20 հազար մարդ ունեն, որոնց միայն կեսն է զինված, և խնդրում են օգնական զորք ուղարկել:[393]

Սղնախներում պառակտումը վերացնելուց հետո Իվան Կարապետը սղնախների առաջնորդների հետ ձեռնամուխ եղավ Գանձակի շիա մուսուլման ազգաբնակչության հետ թուրքերի դեմ համատեղ գործելու և նախկին թշնամությանը վերջ տալու քայլեր կատարել: Այդ նպատակով Եսայի և Ներսես կաթողիկոսները, ինչպես նաև սղնախների մնացած ղեկավար յուզբաշիներն ու մելիքները լիազորեցին Իվան-Կարապետին սղնախների կողմից հաշտություն կնքել և համագործակցության կոչ անել գանձակեցիներին:[394]

[388] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 247, էջ 111:
[389] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, վավ. 8, էջ 151:
[390] Դիվան հայ վիմագրություն, պրակ V, Արցախ, վավ. 93, էջ 68:
[391] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 198, էջ 56, վավ.207, էջ 66-67:
[392] Նույնի վավ. 219, էջ 77-78, վավ. 227, էջ 84-85:
[393] Նույնի վավ. 220, էջ 78-79:
[394] Նույնի վավ. 233, էջ 91-92:

Ռուսաստանը ներկայացնող Իվան-Կարապետի և Գանձակի բեկ-լարբեկ Մահմադ-Ղուլի խանի մասնակցությամբ և միջնորդությամբ 1724 թ. մարտի կեսին հայկական սղնախների և գանձակեցիների միջև կնքվեց պայմանագիր, համաձայն որի, կողմերը պարտավորվում էին այսուհետև զերծ մնալ փոխադարձ թշնամական գործողություններից և պայմանավորվում, որ կողմերից մեկի թուրքական հարձակմանը ենթարկվելու դեպքում մյուս կողմը պարտավորվում է զինված օժանդակություն ցույց տալ:[395]

Այս պայմանագրով հայկական սղնախների պայքարը, ամբողջովին ուղղվելով թուրքական նվաճողական նկրտումների դեմ, առժամանակ կորցնում էր իր հակապարսկական բնույթը:

Ահա այսպիսի դրություն էր հաստատվել Ղարաբաղում, երբ թարմացնելով և վերախմբավորելով իրենց ուժերը՝ թուրքերը նոր հարձակման անցան: Թուրքական ռազմական հրամանատարության հիմնական նպատակն էր վերացնել Կասպից ծովի՝ ռուսների կողմից ռազմակալված նահանգներից իրենց բաժանող Սյունիքի և Ղարաբաղի հայկական սղնախները: Այս նպատակը իրագործելու համար թուրքերը պետք է գրավեին Երևանի բերդը:

1724 թ. հունիսի 26-ին սերասքյար Արիֆ-Ահմեդ փաշայի հրամանատարությամբ թուրքական 35-հազարանոց զորքը, անցնելով Արաքսը, մտավ Երևանի խանության տարածքը: Հունիսի 30-ին թուրքերը պաշարեցին քաղաքը: Միևնույն ժամանակ Բարձր Դուռը սպառնում էր Ռուսաստանին: Ռուսաստանը, որ նոր էր դուրս եկել երկարատև և հյուծիչ Հյուսիսային պատերազմից, չէր ցանկանում նոր պատերազմի մեջ ներքաշվել դեռևս հզոր Օսմանյան կայսրության հետ: Պետրոս Մեծը որոշեց բանակցությունների միջոցով կարգավորել հակամարտությունը: 1724 թ. հուլիսի 12-ին Պոլսում ստորագրվեց Կովկասում Ռուսաստանի և Թուրքիայի տիրույթների սահմանազատման վերաբերյալ պայմանագիր: Թուրքիան ճանաչում էր Կասպից ծովի արևմտյան ափի 43,5-ից մինչև 119 վերստ (46-ից – 127 կմ) լայնությամբ հողաշերտի անցումը Ռուսաստանին: Այդ շերտից արևմուտք ընկած վրացական և հայկական հողերը մնում էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ:[396]

Երևանը գրավելուց հետո թուրքերը նախապատրաստվում էին Պոլսի պայմանագրի համաձայն իրենց անցած, բայց դեռևս չնվաճված Զանգեզուրի, Ղարաբաղի, Գանձակի վրա արշավել: Մինչ զորքերի առաջխաղացումը փորձում էին այս վայրերի ինքնա-

[395] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 240,էջ 100-101:
[396] История СССР, том. III, Москва, 1967, էջ 340:

պաշտպանության ուժերին համոզել, որ առանց դիմադրություն ցույց տալու անձնատուր լինեն և ճանապարհ տան իրենց:

Այդ նպատակով, օսմանյան բանակի հրամանատարության պահանջով 1724 թ. սեպտեմբերի 4-ին Էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցին նամակ գրեց Եսայի կաթողիկոսին, որով համոզում էր զենքը վայր դնել և ընդունել օսմանյան տիրապետությունը: Հակառակ դեպքում, ինչպես գրում էր Աստվածատուր Համադանցին, թուրքերը, գրավելով Ղարաբաղը, ոչ ոքի չեն խնայի:[397]

Սակայն Եսայի կաթողիկոսը և նրա զինակիցները պատասխան չտվեցին Աստվածատուր Համադանցու միջոցով թուրքերի ուղարկած վերջնագրին և տեղեկություն չունենալով հուլիսի 12-ին Պոլսում կնքված ռուս-թուրքական պայմանագրի մասին, որով փաստորեն Ռուսաստանը լքում էր հայկական սղնախները, նորից օգնություն խնդրեցին Ռուսաստանից:

1724 թ. հոկտեմբերի 18-ին գրված նամակում Եսայի կաթողիկոսը, պատվիրակ Իվան Կարապետը, մելիքներ Գրիգորն ու Մեջլումը, Ավան, Թարխան, Սարգիս, Բաղի յուզբաշիները աղերսում էին ցարին՝ շտապ զորք ուղարկել Ղարաբաղ, և սննդամթերքի մատակարարումը ամբողջովին պարտավորվում էին իրենք կատարել: Եթե ռուսական օգնություն չստացվի, ապա երկու-երեք ամսից ավել չեն կարող դիմադրել Թավրիզը, Բորչալուն և Ղազախը արդեն նվաճած և այժմ իրենց վրա արշավող մեծաքանակ օսմանյան բանակի հարձակմանը:

Ներսես Զրաբերդցի կաթողիկոսը հրաժարվեց իր կնիքը դնել այդ նամակի տակ[398] պատճառաբանելով, թե թուքական սպառնալիքն արդեն անմիջականորեն կախված է իրենց վրա՝ «յոթգլխանի վիշապը չորս բոլորը պատելով պոչը մեզ է հասցրել»:[399]

Ներսեսը կարծում էր, որ ռուսական պատվիրակի գտնվելը սղնախներում ոչ միայն անօգուտ, այլև խիստ վտանգավոր է: Նա Եսայի կաթողիկոսին կոչ էր անում հետ այսու ուղերձներ հղել յուզբաշիներից գաղտնի, քանի որ իրենց խորհուրդները անտեսող ինքնագլուխ յուզբաշիները կարող են հարվածի տակ դնել եկեղեցին:

Լեոն գտնում է, որ հոկտեմբերի 18-ի նամակին նախորդել է ցարին ուղղված մեկ այլ նամակ, որի տակ էլ Ներսես Զրաբերդցին

[397] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 285, էջ 197-198:
[398] Նույնի վավ. 286, էջ 198-199:
[399] Նույն տեղում:

հրաժարվել է դնել իր կնիքը, և միայն Եսայի կաթողիկոսի հետ նոր համաձայնություն կայացնելուց հետո նրա հետ համատեղ մասնակցում է հոկտեմբերի 18-ի նամակը գրելուն:[400] Սակայն մինչև հոկտեմբերի 18-ը այդպիսի նամակ չի գրվել: Հոկտեմբերի 18-ի նամակի տակ միայն Եսայի կաթողիկոսի և վերը նշված մելիքների ու յուզբաշիների կնիքներն են, իսկ Ներսես Զրաբերդցու կնիքը բացակայում է: Շփոթության պատճառը եղել է հոկտեմբերի 18-ի նամակի սկզբի պարբերությունը. «Նուաստացեալ ծառայիցս Հայաստանեայց Եսայի և Ներսես կաթողիկոսաց»: Ըստ երևույթին նամակը Գանձասարում գրվելուց հետո ուղարկվել է Երից Մանկանց վանքը, որպեսզի Ներսես կաթողիկոսը ևս դնի իր կնիքը, և վերջինիս հրաժարվելուց հետո առանց վերախմբագրման ուղարկվել է Ռուսաստան:

Հաջորդ 1725 թ. գարնան գալու հետ թուրքերը առաջին խոշոր հարձակումը ձեռնարկեցին ղարաբաղյան սղնախների վրա: 4700 հեծյալից բաղկացած թուրքական զորագունդը երեք փաշաների հրամանատարությամբ, շրջանցելով Գանձակը, մարտի 1-ին հանկարծակի արևելքից ներթափանցեց Վարանդայի գավառ: Սղնախների հրամանատարությունը, առերես հպատակություն հայտնելով, օթևան տալու պատրվակով նրանց բաժանեց մանր խմբերի և տեղավորեց տարբեր գյուղերում: Գիշերը թուրքական ամբողջ զորախումբը կոտորվեց, 4700 մարդուց փախուստով փրկվեց միայն 150-ը:[401] Սակայն սղնախների ղեկավարության համար պարզ էր, որ թուրքերը անպատասխան չեն թողնի այս պարտությունը, և առաջիկայում սպասվում են թուրքական շատ ավելի մեծաքանակ զորքերի հետ ծանր բախումներ: Այդ պատճառով օգնություն հայցող նամակներ հղվեցին Պետրոս Մեծին, Վախթանգ Զ-ին և Շահնավազ խանին:[402] Որոշվեց զինակցել նաև պարսիկների հետ: Այդ նպատակով պատվիրակություն ուղարկվեց Թահմազ շահի մոտ:[403]

Սակայն սղնախների ինքնապաշտպանական ուժերին խոր հիասթափություն էր սպասում: 1725 թ. մայիսի 16-ին Ղարաբաղ վերադարձան 1724 թ. փետրվարին Ռուսաստան ուղարկված Անտոն քահանան և Քյոխվա Չելեբեն: Նրանք բերել էին Պետրոս Մեծի հրովարտակը, որտեղ զինական օժանդակության փոխարեն առաջարկվում էր թողնել իրենց հայրենիքը և վերաբնակվել ռուսական զորքերի կողմից գրավված Կասպից ծովի արևմտյան ափի նահանգներում:[404]

Հրովարտակում ասվում էր, որ Անտոն քահանան և Քյոխվա Չելեբին հայտնել էին սղնախների ղեկավարների ցանկությունը՝ Ղարաբաղի հայ ազգաբնակչության հետ գաղթել ռուսներից գրավված Կասպից ծովի առափնյա նահանգները:

Անտոն քահանան և Քյոխվա Չելեբին այդպիսի հայտարարություն անելու լիազորություն չունեին:

Հրովարտակի հրապարակումից հետո Անտոն քահանան փախավ՝ պատժից խուսափելով: Չալաբի քյոխվան հայտարարեց, որ Շամախիում Անտոն քահանան ոչնչացրել է Եսայի կաթողիկոսի նամակը՝ ուղղված Պետրոս Մեծին, և ինքը դրա փոխարեն նոր նամակ է գրել:[405]

Եսայի կաթողիկոսը նամակ էր գրել նաև Մինաս վարդապետին[406], սակայն այդ նամակը նույնպես չի հասել հասցեատիրոջը: Մինաս վարդապետի՝ ցարին ուղղված զեկույցից տեղեկանում ենք, որ Եսայի կաթողիկոսը ցանկություն է հայտնել, որպեսզի վերադարձող Անտոն քահանայի և Քյոխվա Չելեբու հետ նա ցարի կողմից որպես պատվիրակ ուղարկվի Ղարաբաղ:[407] Մինաս վարդապետը իր կողմից նույնպես խնդրագիր ուղարկեց Պետրոսին, ուր գրում էր, որ եթե ոչ որպես դեսպան, ապա գեթ որպես պատվիրակ իր մեկնելը Ղարաբաղ ավելի օգտակար կլինի, քան Մոսկվայում մնալը:[408] Սակայն ցարը ինչ-ինչ պատճառներով հարմար չգտավ Մինաս վարդապետին մեկ անգամ ևս Ղարաբաղ ուղարկել: Մինաս վարդապետը վերադարձող Անտոն քահանայի և Քյոխվա Չելեբու հետ նամակ ուղարկեց Եսայի կաթողիկոսին[409], սակայն այս նամակը նույնպես հասցեատիրոջը չհասավ:

Լեոն, Անտոն քահանայի արարքը անվանելով ոճրագործություն, գրում է, որ նա ծախվել է Դերբենտ քաղաքի հայերի հոգևոր առաջնորդ հաստատվելու դիմաց:[410]

Սակայն միայն իր այս նպատակին հասնելու համար ինչու՞ պետք է Անտոն քահանան ոչնչացներ Եսայի կաթողիկոսի՝ ցարին և

[400] Լեո, հայոց պատմություն, Հ. III, Գ. II, էջ 159-161:
[401] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 309, էջ 233-234, վավ. 310, էջ 235-236:
[402] Նույն տեղում:
[403] Նույնի վավ. 312, էջ 243:

[404] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 293, էջ 208:
[405] Նույնի վավ. 318, էջ 254:
[406] Նույնի վավ. 317, էջ 252:
[407] Նույնի վավ. 306, § 4, էջ 225:
[408] Նույնի § 14, 15:
[409] Նույնի § 12, էջ 226-227:
[410] Լեո, Հայոց պատմություն, Հ. III, Գ. II, էջ 161, 162-163, 167:

Մինաս վարդապետին ուղղված և Մինաս վարդապետի կողմից Եսայի կաթողիկոսին գրած նամակները: Ցավոք, այս հարցի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները սակավ են և կցկտուր, որպեսզի հնարավոր լինի հստակորեն բացատրել Անտոն քահանայի կողմից վերոհիշյալ նամակների ոչնչացման շարժառիթները: Հայտնի է միայն, որ Մինաս վարդապետն իր՝ ցարին ուղղված հաշվետվության մեջ անհրաժեշտ էր համարում Անտոն քահանային արգելել հետ վերադառնալ:[411] Իսկ Եսայի կաթողիկոսը Մինաս վարդապետին գրված նամակում հայտնում էր, որ Անտոն քահանան արդեն կարգալույծ է արվել:[412] Անտոն քահանայի հանցանքը կրոնական բնույթի չէր, ընդհակառակը, նա ցանկանում էր Դերբենտում հայկական հոգևոր համայնք ստեղծել և շիա մահմեդականների մզկիթը, որ լեզգիները ամբարի էին վերածել, վերագործածել իբրև եկեղեցի:[413]

Հարցի բացատրությունը պետք է փնտրել այլ հարթության վրա: Գուցե Անտոն քահանան Շամախու «էջմիածնական» հայ հոգևորականներից էր, և այդ մասին տեղեկանալով կամ կասկածներ ունենալով է Գանձասարի կաթողիկոսության թեմի առաջնորդ Մինաս վարդապետը ցարին խորհուրդ տվել արգելել Անտոն քահանայի ելքը Ռուսաստանից, իսկ Եսայի կաթողիկոսը կարգալույծ է արել նրան: Անտոն քահանայի նկատմամբ կասկածանքն այնքան մեծ էր, որ Պետրոս Մեծի մահվան մասին սղնախների ղեկավարներին նրա տեղեկացնելուց հետո էլ, ինչպես Եսայի կաթողիկոսն էր Մինաս վարդապետին գրում, որոշվեց նոր խնդրագիրը հասցեագրել Պետրոսին:[414]

Այսպիսով՝ Ռուսաստանից օգնություն ստանալու հույսը չիրականացավ: Ղարաբաղի հայությունը կանգնած էր՝ մի կողմից թուրքական վտանգի, մյուս կողմից Պետրոս Մեծի՝ մերձկասպյան նահանգներ գաղթելու առաջարկի առջև: Իրադրությունը հանգամանալից կշռադատելուց հետո որոշվեց նոր դիմում գրել: 1725 թ. հուլիսի 25-ին գրված նամակում Եսայի և Ներսես կաթողիկոսները, մելիքներն ու յուզբաշիները բացարձակ չէին մերժում գաղթելու առաջարկը: Նրանք առաջ էին քաշում մի շարք պայմաններ, որոնց իրագործումը ռուսների համար անհնարին էր. խնդրում էին, որ ռուսական զորքերը առաջ շարժվեն մինչև Շամախի և այդպիսով

[411] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 306, § 12, էջ 227:
[412] Նույնի վավ. 317, էջ 252:
[413] Նույնի վավ. 292, § 2, էջ 207:
[414] Նույնի վավ. 317, էջ 253:

ապահովեն գաղթող ժողովրդի անվտանգությունը:[415] Նման բան ռուսական բանակը չէր կարող անել, քանի որ դրանով կխախտեր 1724 թ. հուլիսի 12-ի Թուրքիայի հետ կնքած պայմանագիրը: Բացի դրանից Իվան-Կարապետը, իր կողմից նամակ գրելով կանցլեր Գոլովկինին, հայտնում էր գաղթեցման հետ կապված դժվարությունները և զգացնել տալիս, որ հայերը համաձայն չեն իրենց հայրենիքից գաղթելու առաջարկին:[416] Այդ նամակները Ռուսաստան տարավ Քյոխվա Չալաբին, սակայն կաթողիկոսների, մելիքների և յուզբաշիների նամակում հայտնվում էր, որ վերջինս բերանացի հայտարարություններ անելու իրավունք չունի:[417]

Ղարաբաղի սղնախների շուրջն օղակն ավելի սեղմվեց, երբ 1725 թ. հոկտեմբերին թուրքերը գրավեցին Գանձակը:[418] Հավանաբար Գանձակը գրավելուց հետո է թուրքական բանակի զորահրամանատարներից մեկը հանդիսացող Օմար փաշան վերջնագիր ներկայացրել Ղարաբաղի սղնախներին՝ պահանջելով սուլթանին հնազանդություն հայտնել:[419]

Եսայի կաթողիկոը Դերբենտում և Բաքվում գտնվող ռուսական զորքերի գեներալներ Մատյուշկինին և Գոլիցինին 1726 թ. մարտի 26-ի նամակներում գրում էր, որ Գանձակի գրավումից հետո թուրքերի ճանապարհին մնացել են միայն հայկական սղնախները: Չորս տարուց ավելի սղնախները դիմադրում են իրենցից հզոր թշնամուն և այդ ընթացքում ռուսական կողմից միայն «յուսադրական խօսք և թուղթ է եկած»: Իրական օգնության բացակայության պատճառով շատերը հուսալքվելով դադարեցնում են պայքարը և դրա հետևանքով սղնախների մարտիկների քանակը նվազում է: Եսայի կաթողիկոսը խնդրում էր մինչև ապրիլի 10-ը զորք ուղարկել Շամախի: Հակառակ դեպքում թուրքերը սղնախների ուժերը ուժերը ջախջախելուց անմիջապես հետո շարժվելու են դեպի Դերբենտ և Բաքու:[420]

Եսայի կաթողիկոսը 1726 թ. հուլիսի 15-ին վերջին անգամ օգնություն ստանալու հույսով նամակ գրեց Վախթանգ թագավորին, որտեղ տեղեկացնելում էր, թե հունիսի 10-ին Գանձակից թուրքական մի խոշոր զորաբաժին ասպատակել է Խաչենի գա-

[415] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 315, էջ 248-250:
[416] Նույնի վավ. 318, էջ 254-255:
[417] Նույնի վավ. 315, էջ 250:
[418] Հայ ժողովրդի պատմություն, Հ. IV, Երևան, 1972, էջ 158:
[419] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 327, § 12, էջ 226:
[420] Նույնի վավ. 327, էջ 277-278; վավ. 378, էջ 278-279:

վառի Ղազանչի, Ջանյաթաղ և Ղապարթու գյուղերը: Նա խնդրում էր կամ շտապ զորք ուղարկել Շամախի, կամ հստակ հայտնել, որ սղնախներին օգնություն չի տրամադրվելու:[421] Պրոֆեսոր Ա. Գ. Աբրահամյանը «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» գրքի վավերագրերի բաժնում հետաքրքրության արժանի մի նամակ է ներկայացրել:[422] Նամակը գրվել է Գանձակում, տարեթիվը բացակայում է, նշված է միայն ամսաթիվը՝ հունիսի 15:

Պրոֆեսոր Աբրահամյանը նամակի հեղինակ է համարում Ներսես կաթողիկոսին և գրում է, որ Ներսեսը այս նամակը 1724 թ. հունիսի 15-ին հասցեագրել է Եսայի կաթողիկոսին:

Նամակը սկսվում է «Մեծի տեառնդ Ներսիսի հոգէոր տիրոջ հրամանացն, շնորհազարդ դիտապետիտ իմոյ վերոյգրեալ հրամանացն հայտն արարից» հղումով: Այս հղումից երևում է, որ նամակագիրը ստորադաս է հասցեատիրոջ նկատմամբ: Մինչդեռ Ներսեսը Եսայիին դիմում էր որպես իրեն հավասարի՝ «Մեր պատիվ եղբայրութիւն քում»:[423]

Նամակագիրը ոչ թե Ներսես Զրաբերդցին է, այլ նրան ստորադաս մի անձ, որը Ներսես Զրաբերդցու Զրաբերդցու Զրաբերդցու հրամանով տեղեկություն է հաղորդել թուրքերի կողմից գրավված Գանձակի խանության իրադրության վերաբերյալ: Մասնավորապես հայտնում է, որ թուրքերը 200 հազարից ավել զորք են կուտակել, իսկ փաշաներից մեկը 12-հազարանոց զորագնդով շարժվել է դեպի Ղարաբաղի սղնախների հյուսիսային սահման հանդիսացող Քուրակչայ գետը: Նամակում խոսք է գնում նաև Խաչենի գավառի Ղազանչի գյուղը թուրքական ջոկատի կողմից ասպատակվելու մասին: Այս դեպքը տեղի է ունեցել 1726 թ. հունիսի 10-ին:[424] Փաստորեն նամակը գրվել է ոչ թե 1724 թ. հունիսի 15-ին, ինչպես ներկայացնում է Ա. Գ. Աբրահամյանը, այլ երկու տարի անց՝ 1726 թ. հունիսի 15-ին, Ղազանչի գյուղը թուրքերի կողմից ասպատակվելուց 5 օր հետո:

Շուտով հայտնի դարձավ, որ Պոլսի 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրի համաձայն, նոր սահմանագիծ անցկացնելու նպատակով ստեղծված հանձնաժողովի ղեկավարների՝ Անդրկովկասում

[421] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 344, էջ 284-285:
[422] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, վավ. 51, էջ 213:
[423] Նույնի վավ. 6, էջ 149:
[424] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 344, էջ 285:

թուրքական բանակի հրամանատար Սարի-Մուստաֆա փաշայի և Ռուսաստանի ներկայացուցիչ Ռումյանցևի միջև հանդիպում պետք է տեղի ունենա:

Այս տեղեկությունը սղնախներում նորից պառակտում առաջացրեց: Եսայի կաթողիկոսը և Ղարաբաղի մի խումբ մելիքներ ու քյադխուդաներ, անիմաստ համարելով հետագա դիմադրությունը, որոշեցին վայր դնել զենքը:

Ի տարբերություն Եսայի Հասան-Ջալալյանի, Ներսես կաթողիկոսը հարեց դիմադրությունը շարունակելու կողմնակիցներին: Այդ մասին է վկայում 1727 թ. ամռանը գեներալ Դոլգորուկովին հասցեագրված նամակը, որտեղ Ներսես կաթողիկոսը և մի քանի յուզբաշիներ հազորդում էին, թե հաջողությամբ շարունակում են պայքարը թուրքերի դեմ և հաղթանակ են տարել վերջիններիս նկատմամբ:[425]

Թուրքերի հետ համաձայնության եզրեր գտնելու նպատակով Եսայի կաթողիկոսի գլխավորությամբ մի պատվիրակություն հուլիսին մեկնեց Շամախի՝ հանձնաժողովի անդամների հետ հանդիպման: Պատվիրակները հանդիպում ունեցան միայն Սարի-Մուստաֆա փաշայի հետ, Ռումյանցևին հանդիպել չհաջողվեց:[426]

Սղնախների ղեկավարների մյուս մասը Ավան յուզբաշու գլխավորությամբ, դեռևս հույս տածելով ռուսական օժանդակության վրա, դեմ էր թուրքերին հնազանդվելուն և շարունակում էր բախումները Ղարաբաղ ներխուժող զորաջոկատների հետ: Այդ բախումներից մեկում սպանվում է թուրք փաշաներից մեկը: Տեղեկանալով այդ մասին՝ Սարի-Մուստաֆա փաշան, ընդհատելով հանձնաժողովի աշխատանքները, 40-հազարանոց զորքի գլուխն անցած, արշավում է Ղարաբաղի սղնախների վրա:[427]

Կործանարար և անիմաստ համարելով դիմադրությունը՝ Եսայի կաթողիկոսը և Ղարաբաղի մելիքների ու քյադխուդաների մեծամասնությունը գնում են հարձակվող բանակին ընդառաջ և 1726 թ. նոյեմբերի 15-ին Բարդայում հանդիպելով Սարի-Մուստաֆա փաշային՝ հնազանդություն են հայտնում նրան: Դիմադրության չհանդիպելով՝ թուրքական բանակը առաջանում է մինչև Վարանդայի գավառի Քարագլխի սղնախը և պաշարում այն:[428] Ավան,

[425] Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, էջ 130:
[426] Նույնի վավ. 345, էջ 285-286:
[427] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 356, էջ 296:
[428] Նույնի վավ. 346, էջ 286-287:

Օհան և Սիմոն յուզբաշիների հրամանատարությամբ Քարագլխի սղնախի պաշտպանները հետ են մղում ճնշող գերազանցություն ունեցող թուրքերի գրոհները: 8-օրյա պաշարման ընթացքում մեծաքանակ զոհեր տալով, այդ թվում երկու զորահրամանատար, Սարի-Մուստաֆա փաշան ստիպված է լինում դադարեցնել պաշարումը և հեռանալ Գանձակ:[429]

Թուրքերի՝ Ղարաբաղ ներխուժումից հետո Ղարաբաղում ներքին պառակտումը վերաճում է զինված հակամարտության մի կողմից՝ Եսայի կաթողիկոսի գլխավորած մելիքների և քեդխուդաների, մյուս կողմից՝ Ավան յուզբաշու և նրան աջակից այն ուժերի միջև, որոնք դեռևս հավատում էին ռուսների՝ օգնություն ուղարկելու խոստումներին:[430]

Օտար լծի դեմ դարաբաղյան սղնախների պայքարի ամբողջ ընթացքում Եսայի կաթողիկոսը եղել է այդ պայքարի առաջին շարքերում: Թուրքերը բազմիցս փորձել էին զանազան խոստումներով և նույնիսկ կաշառքով իրենց կողմը գրավել նրան, բայց կաթողիկոսը շարունակել էր նվիրված մնալ ազատագրական պայքարին[431], իսկ այժմ ինքն էր գլխավորում նրանց, ովքեր հնազանդություն էին հայտնում թուրքերին: Պատճառն այն էր, որ Եսայի կաթողիկոսը հասկացավ, թե Ռուսաստանը, շահագործելով հայերի հավատը քրիստոնյա մեծ տերության նկատմամբ, վստահ չլինելով Թուրքիայի հետ բախման դեպքում հաղթանակի վրա, սին խոստումներ տալով, օգտագործել է նրանց իբրև կենդանի պատնեշ Կասպից ծովի մերձափնյա նահանգների և օսմանյան զորքերի միջև: Եսայի կաթողիկոսի համար պարզ էր, որ առանց օգնություն ստանալու, կղզիացած սղնախները չեն կարող երկար ժամանակ դիմադրել հզոր Օսմանյան կայսրության բանակների հարձակումներին և Ղարաբաղը կոտորածներից ու ավերվելուց զերծ պահելու համար անհրաժեշտ էր համարում լեզու գտնել թուրքերի հետ և ճանաչել նրանց գերիշխանությունը:

Համատարած հուսալքության մթնոլորտում Ղարաբաղում ծայր առած երկպառակտչական պայքարի երկու կողմերն էլ իրենց անհաջողությունների և զրկանքների մեղքը բարդեցին Եսայի Հասան-Ջալալյանի վրա, ինչը ստիպեց նրան հեռանալ քաղաքական և եկեղեցական ակտիվ գործունեության ասպարեզից:

[429] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 346, էջ 286-287:
[430] Նույն տեղում:
[431] Նույնի վավ. 380, § 12,էջ 327:

Բացառությամբ Մինաս արքեպիսկոպոսի՝ արդեն Եսայիի մահից հետո՝ 1736 թ., Սալտիկովին գրած զեկույցի[432] Եսայի կաթողիկոսի անունը այլևս տվյալ ժամանակին վերաբերող սկզբնաղբյուրներում չի հիշատակվում: Ահա այդ պատճառով էլ, մեր կարծիքով, Սիմեոն Երևանցին նրա մահվան տարեթիվ է նշում 1726 թ.:[433] Իրականում, համաձայն Գանձասարի վանքի գերեզմանատանը գտնվող նրա տապանաքարի արձանագրության, Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանը վախճանվել է 1728 թ.:

§ 2 Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության մասնակցությունը XVIII դ. 80-ական թթ. ազգային-ազատագրական շարժմանը

XVIII դարի 80-ական թվականներին Հարավային Կովկասում նկատվում է Ռուսաստանի ակտիվության ուժեղացում: Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Եկատերինա Բ-ի կառավարման ժամանակ որոշվում էր մի շարք հիմնական խնդիրներով, որոնք դեռևս Պետրոս Մեծի ժամանակ էին գծագրվել: Այդ խնդիրների մեջ առանձնակի տեղ էր զբաղեցրել դեպի հարավ առաջխաղացումը և Սև ու Կասպից ծովերի ափերին ռուսական դիրքերի ամրապնդումը: Ստեղծված պայմանները ձեռնտու էին այդ խնդրի լուծմանը: Օսմանյան կայսրությունն անկում էր ապրում, իսկ Իրանը Նադիր շահի մահից հետո ընկել էր երկպառակտչական պատերազմների հորձանուտը և զուրկ էր կենտրոնական իշխանությունից:

Թեև 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը զգալիորեն ամրապնդեց Սև ծովում ռուսական դիրքերը, սակայն Հյուսիսային Կովկասի մի մասը դեռևս գտնվում էր թուրքերի տիրապետության տակ: Այդ պատճառով արդեն միայն օսմանյան կայսրության դեմ պայքարը և Սև ծովի հյուսիսային ափին տիրելը պահանջում էր Կովկասում ռուսական ազդեցության ամրապնդում և տարածում: Բայց խնդիրը դրանով չէր սահմանափակվում: Ռուսական արտաքին քաղաքականության ղեկավարներին պարսկական խնդիրը պակաս չէր հետաքրքրում, քան թուրքականը:

[432] АРО в XVIII в., том II, часть II, վավ. 380, § 12,էջ 327:
[433] Զամբռ, էջ 85:

Պարսկական առևտուրը Ռուսաստանի համար առաջնային նշանակություն ուներ: Արդեն Պետրոս Մեծը Կասպից ծովի արևմտյան և հարավային ափին տիրելու փորձ կատարեց: Ռուսաստանը տիրացավ Դերբենտ, Բաքու քաղաքներին և Աստարաբադի, Գիլանի, Մազանդարանի նահանգներին: Բայց այդ բոլոր տարածքները 10 տարի անց՝ Աննա Իվանովնայի օրոք, վերադարձվեցին Պարսկաստանին: Մինչդեռ Ռուսաստանի համար կասպիական առևտրի դերը պակաս կարևոր չէր: Դա պարզ արտահայտվեց հատկապես 80-ական թթ. սկզբին, երբ, կապված անգլո-ֆրանսիական պատերազմի հետ, ռուսական իշխանությունները սկսեցին լուրջ հույսեր փայփայել՝ հնդկական առևտուրը Պարսկաստանի և Կասպից ծովի վրայով ուղղելու Ռուսաստան:

Կասպից ծովի ափին տիրելը այժմ նորից հրատապ խնդիր էր դառնում: Բայց ծովափին տիրելը չէր կարող ամուր լինել, առանց հարակից երկրների վրա գերիշխանության: Հետևաբար ռուսական տիրապետության հաստատումը Հարավային Կովկասի արևելյան շրջաններում նույնպես այժմեական էր դարձել: Ռուսական տիրապետությունը, Հարավային Կովկասում, ամրապնդելով Ռուսաստանի դիրքերը Կասպից ծովում և Պարսկաստանում, միևնույն ժամանակ նոր, հարմար հենակետ կստեղծեր Թուրքիայի դեմ: Հարավային Կովկասի ռազմավարական նշանակությունը լրիվ հաշվի էր առնվում ռուսական դիվանագիտության կողմից:

Այդ նպատակով XVIII դ. 80-ական թթ. սկզբին Ռուսաստանում եռանդուն կերպով պատրաստվում էին Պարսկական արշավանքին: Ռուսների ռազմավարական ծրագրերում նախատեսվում էր Հարավային Կովկասը գրավելուց հետո այնտեղ ստեղծել Ռուսաստանից կախման մեջ գտնվող վրացական և հայկական պետություններ, որոնք պատնեշի դեր էին կատարելու Թուրքիայի և Ռուսաստանի միջև, ինչպես նաև այս պետությունների միջև ծագած հետագա պատերազմներում Ռուսաստանի համար հենակետ էին ծառայելու Թուրքիայի վրա արևելքից հարձակվելու համար և մեծացնելու էին Ռուսաստանի ազդեցությունը Հյուսիսային Կովկասում: Կովկասյան լեռնաշղթայի մյուս կողմում ռուսական էքսպանսիայի համար շահավետ պայմաններ գոյություն ունեին. Պարսկաստանի և Թուրքիայի լծի տակ գտնվող վրացիներն ու հայերը որպես ազատարարների էին նայում ռուսներին, և Ռուսաստանը XVIII դ. 20-ական թթ. Հարավային Կովկաս ներթափանցելու համար որպես լծակ օգտագործում էր վրաց թագավորին, Ղարաբաղի հայ մելիքներին և հայկական եկեղեցին:

70-ական թվականների երկրորդ կեսից վրացական թագավորության դրությունը ծանր էր: Հերակլ Բ-ի՝ հզոր կառավարում ստեղծելու փորձերը դեմ էին առնում վրաց ազնվականության մեծ մասի համառ դիմադրությանը: Կովկասյան լեռնականների անընդմեջ կողոպտիչ արշավանքները ամայացնում և արյունաքամ էին անում երկիրը: Ավելի ու ավելի իրական էր դառնում թուրքական վտանգը, ընդ որում թուրքերը, ի դեմս Ախալցխայի փաշայի, սերտ կապ էին պահպանում Դաղստանի հետ: Դրա հետևանքով Հերակլ Բ-ն ստիպված էր առավել հաստատակամորեն իր հայացքն ուղղել դեպի հյուսիսային հզոր հարևանը: XVIII դ. 80-ական թթ. պետության ֆինանսական և ռազմական ծանր վիճակը ստիպեց Հերակլ Բ-ին՝ հետամուտ լինել ռուսական հովանավորության նպատակներին և ցանկություններին:

Նադիր շահի սպանությունից հետո Պարսկաստանում ծայր առած միջֆեոդալական երկպառակտչական պայքարի ժամանակ հայկական մելիքությունների համար անբարենպաստ պայմաններ ստեղծվեցին: Ուժեղանում է թուրք քոչվորների ճնշումը: Ջիվանշիրների առաջնորդ Փանահ-Ալին, իրեն ենթարկելով Մուղանի դաշտավայրի մյուս ցեղերին և ձեռք բերելով խանի տիտղոս, ներթափանցում է Ղարաբաղ և օգտագործելով մելիքությունների միջև ծագած երկպառակտչական պայքարը՝ իրենից վասալական կախման մեջ է գցում Վարանդայի, Խաչենի և Դիզակի մելիքներին և հարկադրում պայքարից հյուծված Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքներին՝ հպատակ ազգաբնակչության հետ հեռանալ Ղարաբաղից և հաստատվել հարևան Գանձակի խանությունում: Փանահին հաջորդած Իբրահիմ-Խալիլ խանի հետ համաձայնության գալով՝ մելիքները 1767 թ. վերադառնում են իրենց տիրույթները, սակայն շարունակվող հալածանքները և աճող ճնշումները հարկադրում են նրանց Ղարաբաղի խանի լուծը թոթափելու համար օգնություն հայցել Ռուսաստանից:

Հայ Առաքելական եկեղեցին այդ ժամանակ ընկալվում էր հայ ժողովրդի համար ոչ միայն որպես հոգևոր, այլև որոշ առումով նաև քաղաքական ղեկավար: Հարավային Կովկասում առկա էին հայոց եկեղեցու երկու աթոռները՝ Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունները:

Էջմիածնի կաթողիկոս Ղուկաս Կարնեցին թեև կողմնակից էր ռուսական վերոհիշյալ ծրագրերին, սակայն զգուշանում էր ակտիվորեն աջակցել նրանց իրականացմանը, քանի որ բազմաթիվ թեմեր ուներ ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ

Պարսկաստանում և ռուսների հետ համագործակցության մեջ կասկածի դեպքում կզրկվեր այդ թեմերը տնօրինելուց:

Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի դիրքորոշումն այս հարցում էապես տարբերվում էր Ղուկաս Կարնեցու դիրքորոշումից: Հովհաննեսին ենթակա թեմերը գտնվում էին Հարավային Կովկասի Շաքիի, Շամախու, Դերբենտի, Ղուբայի, Բաքվի և Ղարաբաղի խանությունների տարածքում: Բացառությամբ Ղարաբաղի խանության, մնացած բոլոր խանությունները գտնվում էին ռուսական կողմնորոշում ունեցող Ղուբայի Ֆաթալի խանից կա՛մ ուղղակի գերիշխանության, կա՛մ կախման մեջ:

Հովհաննես կաթողիկոսը ձգտում էր ծերբազատվել Գանձասարի կաթողիկոսության գործերին Ղարաբաղի խանի աճող միջամտությունից:

Իբրահիմ խանն իր ազդեցությունը Գանձասարի կաթողիկոսության վրա խորացնելու նպատակով օգտագործում էր Իսրայել և Հովհաննես հակաթոռ կաթողիկոսների պայքարը: 1767-72 թթ. Իբրահիմը թույլ էր տվել Իսրայելին հաստատվել Ղարաբաղի խանության տարածքում և չէր միջամտել, երբ վերջինս փորձել էր տիրանալ Վարանդայի և Դիզակի մելիքություններում գտնվող Գանձասարի թեմերին: Չնայած 1772 թ. նա Ղարաբաղից հեռացրեց Իսրայելին, սակայն չէր կարելի բացառել, որ հետագայում Իբրահիմ խանը չէր փոխի իր դիրքորոշումը:

Հովհաննես կաթողիկոսը Խաչենի Հասան-Ջալալյան մելիքական տոհմի անդամ էր և իր աշխարհական եղբայրների հետ շահագրգռված էր վերականգնելու իր տոհմի մելիքության իրավունքները Խաչենի գավառի նկատմամբ, որը Ղարաբաղի խաների կողմից խլվել և հանձնվել էր Խնգրիստան գյուղի քյոխվային և նրա ժառանգներին:

Աջակցություն ստանալու նպատակով Ռուսաստանի հետ կապեր հաստատելու գործում Հովհաննես կաթողիկոսի համար նպաստավոր էր այն հանգամանքը, որ Սիմեոն Երևանցու մահից հետո էջմիածնի վերահսկողությունը զգալիորեն նվազել էր: Դեռ 1767 թ. Հովսեփ Էմինի հետ հանդիպման ժամանակ Հովհաննես կաթողիկոսը այն միտքն էր արտահայտել, որ ազատագրական ծրագրերը կենսագործել հնարավոր է միայն Սիմեոն Երևանցու մահից հետո:[434]

1780 թ. ռուսները արշավանք էին ծրագրում դեպի Հարավային Կովկաս: Այդ նպատակով արշավանքի հրամանատար նշանակված

[434] А.Г. Иоаннисян, Овсеп Эмин, Ереван, 1943, с. 224.

Ա. Վ. Սուվորովը հունվարի 2-ին Պետերբուրգում հանդիպում ունեցավ ռուսահայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի և մեծահարուստ վաճառական Հովհաննես Լազարյանի հետ: «Եներալ պոռօճիկ Ալեքսանդր Վասիլիչ Սուվորովն եկն առ մեզ ի տեսութիւն,- գրառում է իր օրագրում Արղությանը,- և մեր ազնիւ Աղայ Յովհաննէսն ընդ նմա ի վերայ նոյն նիւթոյն և ի վերայ երկրացն մերոց բազումն հարցմունս արար մինչև ցերկու ժամս: Էհարց և մանրամասնաբար զկացութենէ սրբոյ Աթոռոյն Էջմիածնայ և յուսադրութիւն արար յոյժ, որպէս թէ նորոգելոց իցեն ի մեզ իշխանութիւն ինչ՝ որ և ի մենջ ելեալ գնացեալ էր առ պայծառափայլ քնեազն Գրիգոր Ալէքսանդրիչ Պոտէմկինն և պատմեալ նմա զամենայն ասացեալսն մեր վասն քաղաքաց»:[435]

Դեպի Հարավային Կովկաս արշավանքը ձգձգվում էր: Ղարաբաղի հայերի վիճակը գնալով ծանրանում էր: 1781 թ. սեպտեմբերի 2-ին Ջրաբերդի մելիք Ադամը, Գյուլիստանի մելիք Բեգլարը օգնության խնդրանքով նամակներ են ուղարկում ռուսական իշխանություններին:[436]

Այս խնդրագրերը մնացին անպատասխան, իսկ արշավանքը իշխան Պոտյոմկինի հրամանով հետաձգվեց: 1781 թ. դեկտեմբերին Սուվորովը Աստրախանից կանչվեց Կազան:[437] Արշավանքի հետաձգումը պայմանավորված էր Ղրիմում և Կուբանում իրադրության փոփոխությամբ: Թուրքիան հրահրում էր Ղրիմի ռուսական դրածո Շահին-Գիրեյ խանի հակառակորդներին՝ հանդես գալ խանի և նրան հովանավորող Ռուսաստանի դեմ:

Միայն մոտ մեկ տարի անց՝ 1782 թ. աշնանը ռուսական կառավարությունը որոշում կայացրեց շարունակելու արշավանքի պատրաստությունները: Արշավանքի հրամանատար նշանակվեց իշխան Գրիգորի Պոտյոմկինի ազգական գեներալ-պորուչիկ Պավել Պոտյոմկինը:

Պավել Պոտյոմկինը միջոցներ ձեռնարկեց, որպեսզի անձամբ, անմիջականորեն շփում հաստատի Ղարաբաղի մելիքների և Հովհաննես կաթողիկոսի հետ: Այդ նպատակով նա Ղարաբաղ ուղարկեց իր երկու վստահված անձանց՝ Գաբրիել Կարախանովին և Մկրտիչ Գեկազովին, որոնք երկուսն էլ ծնունդով Ղարաբաղից էին:

Ըստ 1782 թ. նոյեմբերի 23-ին Կարախանովին տրված հրահանգի, գեներալը նրան կարգադրում էր մելիք Ադամին և մելիք Բեգ-

[435] Լեո, հայոց պատմություն, Հ. III, Գ. II, էջ 338:
[436] Հայ ժողովրդի պատմություն, Հ. IV, էջ 221:
[437] А. В. Суворов, Письма, Москва, 1987, письмо N 118, с. 84.

լարին հայտնել, որ նրանց 1781 թ. սեպտեմբերի նամակները հասցեատերերին են հասել: Նա պատվիրում էր հուսադրել և իր անունից ողջույններ հաղորդել բոլոր «բարենպատակ մելիքներին», խնդրել նրանց, որ նամակաբերի միջոցով տեղեկացնեն տիրող իրադրության մասին: Հանձնարարվում էր նաև տեսակցել Հովհաննես կաթողիկոսի հետ և նրան խնդրել ուղերձ գրել գեներալ Պոտյոմկինին: Միաժամանակ Կարախանովին հրահանգված էր տեղում տեղեկություններ հավաքել Պարսկաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին, «ստույգ իմանալ, թե ինչպիսի վերաբերմունք ունեն ռուսների նկատմամբ Ղարաբաղի և Ղարադաղի հայերը և ինչպիսի մտադրության են պարսկական ժողովուրդները»:[438]

1783 թ. վերադարձած Գեկազովն իր հաշվետվության մեջ հայտնում էր, որ ժամանելով Ղարաբաղ՝ նա սկզբում ներկայացել է Գյուլիստանի նորընծա մելիք Աբովին: Մելիք Բեգլարը 1781 թ. սեպտեմբերին Ռուսաստան առաքած իր դիմումներից քիչ անց զոհվել էր լեզգիների հետ ընդհարման ժամանակ: Նրա մահից հետո մելիք էր դարձել եղբայրը՝ Մելիք-Հովսեփի կրտսեր որդին՝ Աբովը, որին էլ Գեկազովը հաղորդեց Պ. Պոտյոմկինի բանավոր հանձնարարությունը: Երիտասարդ մելիքը «հույժ ուրախացավ» և հայտնեց կայսրուհուն ծառայելու իր ցանկության մասին:

Գյուլիստանից Գեկազովը մեկնեց Ջրաբերդ՝ մելիք Ադամի մոտ, և նրան հաղորդեց գեներալի «բանավոր հրամանը»: Ծերունի մելիքը «գոհություն էր տալիս աստծուն, որ գեներալը շնորհ է արել հուսադրել իրեն»: Մելիք Ադամը խոստացավ իր հպատակներով ծառայել Ռուսաստանին, «միայն թե ազատվի մահմեդական լծից»:

Գեկազովը վերջում հաղորդում էր, որ բոլոր հայերը «աղոթում են աստծուն, որպեսզի ռուսների օգնությամբ ազատվեն մահմեդականներից»:[439]

Կարախանովը, որին Պ. Պոտյոմկինը դեռևս նոյեմբերի վերջին էր հանձնել իր հրահանգը, չկարողացավ անմիջապես մեկնել Ղարաբաղ: Այդ պատճառով էլ դեկտեմբերին իր հետ հանդիպելու համար Գեորգիևսկ եկած Հովսեփ Արղությանին Պ. Պոտյոմկինը առաջարկեց Կարախանովի հետ նամակ ուղարկել Հովհաննես կաթողիկոսին և մելիքներին: Այդ մասին տեղեկանում ենք Արղությանի նամակից՝ հասցեագրված Հովհաննես Լազարյանին, որտեղ նա հաղորդում էր, որ գեներալը պատվիրել է իրեն Ղարաբաղ մեկնող ոմն Գաբրիելի հետ նամակներ գրել Հովհաննես կաթողիկոսին և Գյուլիստանի ու Ջրաբերդի մելիքներին, ինչը և ինքը կատարելով վերջիններիս է հաղորդել իշխան Գ. Պոտյոմկինի ողորմածության մասին և հուսադրել նրանց:[440]

Այսպիսով, Կարախանովը Ղարաբաղ ժամանեց ոչ միայն Պ. Պոտյոմկինի բանավոր հանձնարարությամբ, այլև Արղությանի նամակներով: Ինչպես տեղեկանում ենք մելիքների պատասխան նամակներից, նա փետրվարի 15-ին ներկայացավ մելիք Ադամին և մելիք Աբովին, որոնց մոտ գտնվում էր մինչ այդ ժամանած Գեկազովը: Ապա մելիքների առաջարկով այցելեց Գանձասար:[441]

Մարտին Գեկազովն ու Կարախանովը մեկնեցին Ռուսաստան մելիքների և Հովհաննես կաթողիկոսի կողմից իրենց տրված մի ամբողջ շարք նամակներով:

1783 թ. մարտին՝ այն ժամանակ, երբ գրվել են այդ նամակները, Ղարաբաղում իրադրությունը վատթարացավ: Ղուբայի Ֆաթալի խանը՝ Ղարաբաղի Իբրահիմ խանի հին թշնամին, որը նախկինում բազմիցս հարձակվել էր նրա տիրույթների վրա, 1783 թ. սկզբին նորից ներխուժեց Ղարաբաղ և ստիպված էր հեռանալ միայն այն բանից հետո, երբ Իբրահիմի դաշնակից Հերակլ Բ-ն զորքով հանդես եկավ նրա դեմ: Գեկազովն իր զեկույցում գրում էր, որ Ֆաթալի խանը, ինչպես թաթարական (ադրբեջանական), այնպես էլ բազմաթիվ հայկական գյուղեր է ավերել՝ գերելով 2000 մահմեդական և 100 հայ:[442] Իրենց նամակներում մելիքները նույնպես նկարագրում էին այդ ասպատակությունը, որը, նրանց ասելով, երկրին մեծ ավերածություններ պատճառեց: Դրա հետ մեկտեղ նրանք ավելացնում էին, որ հայ ռազմիկները խիզախորեն դիմագրավել են Ֆաթալի խանի հրոսակներին և նրանցից շատերին սպանել:[443]

Ֆաթալի խանի արշավանքը համընկավ Ղարաբաղի խանի անընդհատ աճող կեղեքումների հետ, որը բոլոր միջոցներով ճնշում և կողոպտում էր հայ մելիքներին՝ հատկապես ինքնագլխություն ցուցաբերող Ադամին և Աբովին: Վերջինս Արղությանին ուղղված իր նամակում հոր և եղբոր մահից հետո խանի կողմից

[438] АРО в XVIII в., том IV, Ереван, 1990, док. 122, с. 200.

[439] А.Г. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1949, с. 228-230.

[440] Մատենադարան, ձեռ. N 4496, էջ 167ա:

[441] АРО в XVIII в., том IV, док. 128, с. 223.

[442] А.Г. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, с. 228-230.

[443] АРО в XVIII в., том IV, Ереван, 1990, док. 128, с.223-224.

իրենից խլված դրամի և արժեքավոր իրերի մի ամբողջ ցուցակ է ներկայացնում այդ թվում 10 270 ռուբլու ոսկեդրամ, 35 800 ռուբլու արծաթ:[444]

Այս ամենից կարելի է հետևություն անել, որ Իբրահիմը սիստեմատիկ թալանի էր ենթարկում հայ մելիքներին՝ նպատակ ունենալով վերջնականապես ընչազրկել և ջախջախել նրանց: Կարելի է ենթադրել, որ Իբրահիմ խանը համանման մեթոդներ գործադրում էր նաև Գանձասարի կաթողիկոսության ղարաբաղյան թեմերի նկատմամբ:

Պարզ է, որ մարտին գրված նամակներում ինչպես Հովհաննես կաթողիկոսը, այնպես էլ երկու մելիքները, ոչ միայն ջերմորեն ողջունում էին սպասվող ռուսական արշավանքը, այլև պատրաստակամություն էին հայտնում իրենց ուժերի ներածին չափով օժանդակություն ցուցաբերել:

Այդ նամակներից առավել պաշտոնական բնույթ էր կրում մարտի 5-ի համատեղ ուղերձը: Այն գրվել է Գանձասարում Հովհաննես կաթողիկոսի անունից և ստորագրվել մելիք Աբովի, մելիք Ադամի, կաթողիկոսի եղբայրների և մի քանի եպիսկոպոսների կողմից:[445] Սակայն, ինչպես երևում է Զրաբերդում մարտի 4-ին մելիքների գրած նամակից, վերջիններս Գանձասար չեն գնացել, այլ այնտեղ են ուղարկել Կարախանովին, որպեսզի նա Հովհաննես կաթողիկոսին տեղեկացներ գեներալ Պ. Պոտյոմկինի բանավոր ուղերձի և Արդուբյանի նամակների բովանդակության մասին և բերեր պատասխանը:[446] Մելիք Աբովի մարտի 15-ի նամակից տեղեկանում ենք, որ Կարախանովը համապատասխան ուղերձով վերադարձավ Գանձասարից:[447]

Մարտի 5-ի իրենց ուղերձում Գանձասարի Հովհաննես կաթողիկոսն ու մելիքները հաղորդում էին գեներալ Պ. Պոտյոմկինին, որ Արդուբյանի նամակից տեղեկացել են, թե գեներալը հրաման է ստացել ազատագրել հայ ժողովրդին և իրենց երկիրը: Այդպիսի մտադրություն ուներ նաև Պետրոս Մեծը: Իրենց նախնիները Պետրոսի հրամանով 10 տարուց ավելի մարտնչել են ինչպես թուրքերի, այնպես էլ պարսիկների դեմ՝ մինչև Նադիր շահի կողմից նվաճվելը:

[444] А.Г. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1949, с. 226.
[445] АРО в XVIII в., том IV, док. 129, с. 225-226.
[446] Նույնի վավ. 128, с. 223-224.
[447] Նույնի վավ. 144, с. 235-236.

Այժմ լսելով այդ բարի լուրը՝ նրանք հոգով ու մարմնով ցնծում են և իրենց ամբողջ ժողովրդի և զորքի հետ պատրաստ են գործադրել բոլոր հնարավորությունները՝ նախատեսված ծրագրի իրականացման համար՝ զոհաբերելով նույնիսկ սեփական կյանքը: Նրանք տեղեկացել են, որ գեներալը մտադիր է գալ իրենց երկիրը 12-հազարանոց զորքով և ցանկանում է պարզել՝ հնարավոր կլինի՞ իրենցից ձեռք բերել անհրաժեշտ սննդամթերքը և ապահովել ձիերի կերը: Իրենց կարծիքով ռուսական բանակը պետք է բաղկացած լինի ոչ թե 12 հազար, այլ առնվազն 30 հազար զինվորից, որպեսզի պատշաճ տպավորություն ստեղծի մահմեդականների վրա: Նամակագիրները հավաստիացնում էին, որ լրիվ կապահովեն բանակի մատակարարումը և վստահեցնում, որ կարող են 20-30 տարիների ընթացքում պահել 30-հազարանոց ռուսական բանակը: Իրենք նույնպես որոշել են իրենց մարտական ուժերը միացնել ռուսական զորքին, հենց որ այն կմոտենա Ղարաբաղի սահմաններին: Ինչ վերաբերում է մահմեդական ազգաբնակչությանը և խանական զորքին, ապա նրանք ռուսների նկատմամբ սարսափով են պատված և չեն կարող դիմագրավել նրանց:

Կաթողիկոսն ու մելիքները խնդրում էին միայն արագացնել արշավանքի նախապատրաստական աշխատանքները, քանի որ ծգծգման դեպքում մահմեդականները կարող էին կոտորել քրիստոնյաներին:

Արդուբյանին ուղղված նամակում Հովհաննես կաթողիկոսը և մելիքները, հայտնելով գեներալ Պ. Պոտյոմկինին իրենց պատասխանների մասին, խնդրում էին ապահովել ուղերձների ճշգրիտ թարգմանությունը, աջակցել արշավանքը շուտափույթ սկսելուն, ջանալ, որ ընդունվի նրանում ոչ թե 12-հազարանոց, այլ 30-հազարանոց զորաբանակի ներգրավման իրենց միջնորդությունը:

Ինչպես երևում է այս նամակներից և Գեկազովի հաշվետվությունից, նա հարաբերություններ է հաստատել միայն Հովհաննես կաթողիկոսի և երկու մելիքների՝ Աբովի և Ադամի հետ: Մյուս երեք մելիքները՝ Խաչենի մելիք Ալավերդին՝ Միրզախանի որդին, Վարանդայի մելիք Շահնազարը և Դիզակի մելիք Բախտամը չէին ներգրավվել բանակցություններում: Ինչ վերաբերում է Հովհաննես կաթողիկոսին և Գյուլիստանի ու Զրաբերդի մելիքներին, ապա նրանք ողջունեցին դեպի Հարավային Կովկաս ծրագրվող ռուսական արշավանքի լուրը և անմիջապես պատրաստակամություն հայտնեցին աջակցություն ցույց տալ ռուսական բանակին: Միակ հանգամանքը, որը անհանգստացնում էր նրանց, արշավանքի հրամանատար, գեներալ Պ. Պոտյոմկինի կողմից գրավոր ուղերձի

բացակայությունն էր: Ինչպես իր զեկույցում հաղորդում էր Գեկազովը, մելիքները պատվիրել էին իրեն խնդրել գեներալին՝ իրենց նամակ գրել և նորից Ղարաբաղ գալ գրավոր պատասխանով:

Ստանալով Ղարաբաղից ուղարկված նամակները՝ գեներալ Պ. Պոտյոմկինը 1783 թ. ապրիլի վերջին Ղարաբաղ ուղարկեց Կարախանովին:[448]

Իր ներկայացրած մանրամասն զեկույցում Կարախանովը հետևյալ կերպ էր ներկայացնում իր երկրորդ այցելության արդյունքները և Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները:

Կատարելով իրեն տրված հանձնարարությունը՝ նա գեներալ Պ. Պոտյոմկինի նամակները հանձնեց Հովհաննես կաթողիկոսին և մելիքներին: Ծանր հիվանդ մելիք Ադամը հանձնարարեց փոխանցել գեներալին՝ «շուտափույթ զորքերով ժամանելու» խնդրանքը:

Դիզակի մելիք Բախտամը, որը մինչ այդ իրազեկ չէր Ռուսաստանի հետ վարվող բանակցություններին, Պ. Պոտյոմկինի նամակներին ծանոթանալուց հետո «դարձավ հասարակության հետ նրանց ձեռնարկներում համակամ: Հասարակության հավաքի ժամանակ կաթողիկոսի և այլ կարգադիր եպիսկոպոսների մասնակցությամբ դրեց իր անվանական կնիքը Ձերդ բարձր գերազանցությանն ուղարկված նամակում և երդումով հաստատեց իր կողմնակցությունը»:

Կարախանովն իր հաշվետվության վերջում ծայրահեղ անհանգստացնող նորություն էր հաղորդում: Համաձայն իր ստացած տեղեկությունների՝ մելիք Շահնազարի որդի Ջումշուդը Իբրահիմ խանին հաղորդել էր, որ «մելիք Աբովը հաճախակի մարդիկ է ուղարկում Ռուսաստան՝ գեներալի մոտ»: Խանը, լսելով այդ, «սպառնալից հայտարարել է, որ դա իրեն հայտնի է, և որ Ռուսաստան մարդիկ ուղարկելը միայն մելիք Աբովի կողմից չի կատարվում, այլ նաև ուրիշների համաձայնությամբ»:[449]

Կարախանովն այս անգամ Ղարաբաղ ժամանեց ոչ միայն բանավոր հանձնարարականներով: Գեներալ Պ. Պոտյոմկինը, կատարելով մելիքների խնդրանքը, գրավոր ուղերձ ուղարկեց: Այդ ուղերձի բովանդակությանը տեղեկանում ենք Կարախանովին տրված պատասխան նամակից:

1783 թ. հուլիսի 5-ով թվագրված այս նամակում Հովհաննես կաթողիկոսն ու մելիքները շնորհակալություն էին հայտնում Պ.

[448] А.Г. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, с. 89.
[449] АРО в XVIII в., том IV, док. 157, с. 251-253.

Պոտյոմկինին՝ «չարամիտ այլահավատների հալածանքներից հայ ժողովրդին հովանավորելու և անկման վիճակից բարեկեցության աստիճանի վերականգնելու համար»: Կայսրուհու բարեհաճությանն ապավինելով՝ նրանք պատրաստակամություն էին հայտնում, «առանց իրենց կյանքը և ամբողջ կալվածքը խնայելու, հավերժ նվիրված լինել նրա ամենաբարձրյալ գահին»:

Անդրադառնալով գեներալ Պ. Պոտյոմկինի ուղերձում առաջ քաշված սննդամթերքի և ձիերի համար կերի մատակարարման և վարձատրության հարցին՝ կաթողիկոսն ու մելիքներն իրենց պատասխանում գրում էին, որ հաճույքով պատրաստ են ձրի մատակարարել ռուսական բանակին, բայց քանի որ գեներալը հարցն այդպես է դնում, ապա ծանուցում են, որ հացի փութը Ղարաբաղում 40 կոպեկ է, կորեկինը՝ 20 կոպեկ:

«Անհրաժեշտ միջոցները լավագույնս կարգավորելու համար» իր մոտ հատուկ մարդ ուղարկելու մասին Պ. Պոտյոմկինի պահանջը կաթողիկոսն ու մելիքները մերժում էին՝ պատճառաբանելով, թե այն ժամանակ, երբ ստացվեց գեներալի նամակը, մահացավ մելիք Ադամը: Վերջինիս մի ամբողջ շաբաթ տևած հուղարկավորության արարողություններին բազմաթիվ մարդիկ էին մասնակցում՝ այդ թվում նաև Իբրահիմ խանի որդին՝ 200 հոգիանոց շքախմբով: Այդ պատճառով վտանգավոր են համարել նման պայմաններում իրենց ներկայացուցչին Ռուսաստան ուղարկել և դժբախտ հետևանքներից խուսափելու համար որոշել են առայժմ նամակով սահմանափակվել: Հավելյալ տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում գեներալը կարող է դիմել Արղությանին, Միրզաբեկ Վահանովին և Գաբրիել Կարախանովին:

Նամակի վերջում նորից շեշտվում է արշավանքը հնարավորին շատ շուտ սկսելու անհրաժեշտությունը: Ժամանակի կորստի դեպքում իրադրությունը կարող է վատթարանալ, քանի որ «այլահավատները կարգավորում են իրենց ամրոցները» և կարող են մեծ վնասներ հասցնել հայերին:[450]

Այս նամակը ստորագրված էր Հովհաննես կաթողիկոսի, նրա եղբայրների, եպիսկոպոսների, ինչպես նաև երեք մելիքների՝ Աբովի, Բախտամի և հանգուցյալ մելիք Ադամի որդի, Ջրաբերդի նորընծա մելիք Մեջլումի կողմից: Նամակը գրվել էր մելիք Ադամի նստավայր Քաղաքատեղ կոչվող բնակավայրում, որտեղ հավաքվել էին հուղարկավորությանը մասնակցելու: Հենց այստեղ տեղի ունեցած հավաքում, ինչպես նշվում է և՛ այս նամակում, և՛ Կարա-

[450] АРО в XVIII в., том IV, док. 154а, с. 249-251.

խանովի զեկույցում, մելիք Բախտամը, առաջին անգամ տեղեկանալով Ռուսաստանի հետ վարվող բանակցությունների մասին, հանդիսավոր երդումով միացավ «հայկական հասարակության» կողմից ծրագրված «ձեռնարկին»: Հավանաբար այդ հավաքը ի նկատի ուներ Արղությանը, երբ հետագայում 1790 թ., իշխան Գ Պոտյոմկինի պահանջով Ղարաբաղի մելիքների վերաբերյալ ծանուցագրում գրում էր, որ մելիք Ադամի և մելիք Հովսեփի մահից հետո նրանց որդիները՝ Մեջլումն ու Աբովը, հրավիրել են մելիք Բախտամին և այցելելով Հովհաննես կաթողիկոսին «նրա ներկայությամբ և հավաքած ամբողջ հոգևորականության, աշխարհիկ պետերի և ժողովրդի մեջ հանդիսավոր հայտնել են իրենց նվիրվածությունը հավատակից Ռուսաստանին: Խաչն ու Ավետարանը համբուրելով և սեփական ձեռքի ստորագրությամբ, որը ուղարկել են նորին գերազանցություն Պավել Սերգեևիչ Պոտյոմկինին, հավասարապես նաև ինձ՝ որպես իրենց գործերում գլխավոր միջնորդի միաձայն հաստատել են իրենց հավատարմատարությունը»:[451]

Միաժամանակ նույն 1783 թ. հուլիսի 5-ին Հովհաննես կաթողիկոսը նամակ գրեց Արղությանին: Հովհաննեսը խնդրում էր նրան լինել իրենց «միջնորդն ու հավատարմատարը», ամեն ջանք գործադրել, որպեսզի ռուսական բանակը շուտով մտնի Ղարաբաղ՝ խոստանալով վավերացնել այն ամենը, ինչ Արղությանը անհրաժեշտ կգտնի կատարել: Միևնույն ժամանակ նա տեղեկացնում էր էջմիածին՝ Ղուկաս կաթողիկոսին այցելելու իր մտադրության մասին:[452]

Ամենայն հավանականությամբ Ղուկաս Կարնեցուն էջմիածնում տեսակցելու գաղափարը Հովհաննեսին տվել էին Հովսեփ Արղությանը և գեներալ Պոտյոմկինը՝ ռուսական արշավանքին տեղում նպաստող գործողությունների համադրում և համակարգում հետապնդելով: Իշխան Գ. Պոտյոմկինին իր զեկույցում գեներալ Պ. Պոտյոմկինը հայտնում էր. «Այս օրերին երկու հայրապետները՝ այսինքն Արարատյանը և Գանձասարինը, վճռել են գաղտնի տեսակցություն ունենալ, և երբ ժամանեն զորքերը, ամեն տեսակի սննդամթերքով նրանց նպաստելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ պայմանավորվեն»:[453]

[451] АРО в XVIII в., том IV, док. 251, с. 381.
[452] Նույնի док. 155, с. 251.
[453] Նույնի док. 150, с. 255.

Ղարաբաղցիների հետ համատեղ գործելու առաջարկ պարունակող նամակներով Ղուկաս Կարնեցուն դիմեցին Հովհաննես Լազարյանը և Հովսեփ Արղությանը:

Ղուկաս Կարնեցին զգուշավոր և խուսափողական դիրք որդեգրեց: 1783 թ. ապրիլին Արղությանին ուղղված նամակում նա հետևյալն էր գրում. «Այլև գրեալ էիր, թէ ընդ Արցախեցւոյն (Հովհաննես կաթողիկոսին) խոսեսցիս, կամ զԱւետիքն (Արղության նամակաբերը) յղեսցես: Նա ու՞ր, մեք ուր: Որպե՞ս կարեմք խորհրդակցիլ ընդ նմա: Աւետիքին գնալն ես տարակուսանք բերէր, զի ընդ որում ի ձեռ մերմէ փոխեցեալ էր յայլ կերպարան, գուցէ վնաս ինչ պատահիցեր, որոյ աղագաւ ինքն ես ոչ յօժարեցաւ գնալ»:[454]

Նույն թվականի սեպտեմբերի 5-ին Լազարյանին գրած պատասխանում Ղուկաս Կարնեցին, անդրադառնալով վերջինիս խորհրդին միաբանվել Հովհաննես կաթողիկոսի և Ղարաբաղի մելիքների հետ, գրում էր, որ նամակագրական կապ էջմիածնի և Ղարաբաղի մելիքների ու Հովհաննես կաթողիկոսի միջև գոյություն ունի, սակայն արշավանքի և դրան հայկական կողմի մասնակցության վերաբերյալ ո՛չ Հովհաննես կաթողիկոսը, ո՛չ մելիքները իրեն չեն գրել. «Զի ճանապարհքն սրիկայից և աւազակաց բնակութիւնք են: Մանաւանդ և նեղիչքն, որք զմեօք ոչ սակաւք են, հանճարեղք ի չարիս և զգաստք առ ի հասու լինիլ այնպիսի իրաց, մի գուցէ տեղեկասցին հետևմանց մերոց և սկսանիցեն գիշատել յորոց ի բերանսն իսկ կամք»:[455]

1783 թ. հունիսի 28-ին գեներալ Պ. Պոտյոմկինին գրած նամակում նա իր զգուշավորությունը հետևյալ կերպ էր արդարացնում. «Բովանդակ ազգն մեր ցիր և ցան ի ներքոյ այլոց իշխանութեանց, զայսպիսի խորհրդակցական բանս ոչ կարեմք գրել նոցա, զի մի վնաս ինչ պատահիցի ... Իսկ Արցախու մելիքքն և այլքն, գոլով ազատք կերպիւ ինչ ի նեղութեանց և կիրք պատերազմունս յօժարութեամբ կամին և սպասեն ձերում, և ի կողմանէ ուտելեաց ես ունին զպատրաստութիւն, որպէս գրեալ ես են առ մեծութիւնդ, յորոց թղթոյն լիալիրն իմացեալ էք»:[456]

Այստեղից երևում է, որ արցախցիների պատրաստությունների մասին ինքը՝ Ղուկաս կաթողիկոսը, տեղեկացել էր Արղությանից, որին ուղղված պատասխաններում անընդհատ գրում էր, որ Արցախի

[454] Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 142բ-144բ:
[455] Նշված ձեռագիր, էջ 132բ-134բ:
[456] Նշված ձեռագիր, էջ 156ա-157ա:

հետ ինքը կապ չունի. «չև ևս զմարդ կամ զգիր տեսաք ի յԱրցախու» (գրվել է 1783 թ. հուլիսի 26-ին):[457]

Արղությանի և Լազարյանի անընդհատ կրկնվող հորդորներին տեղի տալով՝ Ղուկաս Կարնեցին ի վերջո 1783 թ. հունիսին նամակ գրեց Հովհաննես կաթողիկոսին՝ պատասխանելով շուրջ մեկ տարի առաջ՝ 1782 թ. հոկտեմբերի 12-ի նրա ուղերձին: Ղուկաս կաթողիկոսն իր նամակում մշուշոտ հղում է անում Հովհաննեսի ուղերձից՝ Արցախում տիրող «անխաղաղ և վրդովալից» իրավիճակի մասին արտահայտում է իր «ցաւն ու տրտմութիւնը», ինչպես նաև շնորհակալություն է հայտնում Հովհաննեսի կողմից ընծա ուղարկված գորգի համար: Նամակում ոչ մի խոսք չկա սպասվող ռուսական արշավանքի մասին:[458]

Կարելի է հետևություն անել, որ Ղուկասը, քաջատեղյակ լինելով նախատեսվող ռուսական արշավանքի և դրա հետ կապված Ղարաբաղի մելիքների ու Հովհաննես կաթողիկոսի գործունեության մասին, խուսափում էր այդ ժամանակաշրջանում նամակագրություն ունենալ նրանց հետ և միայն Արղությանի ու Լազարյանի համառ խնդրանքներից հետո նամակ գրեց Հովհաննես կաթողիկոսին՝ շրջանցելով սպասվող ռուսական արշավանքի թեման: Հովհաննես կաթողիկոսը նույնպես համանման դիրքորոշում էր որդեգրել, քանի որ չնայած Արղությանին հասցեագրած նամակում էջմիածին մեկնելու պատրաստակամության արտահայտմանը՝ նա այդպես էլ էջմիածին չգնաց: Այդ մասին Արղությանին տեղեկացնում էր Ղուկաս Կարնեցին՝ գրելով, որ 3 ամիս է, ինչ Հովհաննեսը նամակով իրեն տեղեկացրել է, որ նպատակ ունի այցելել էջմիածին, բայց այդպես էլ չի եկել:[459] Ամենյան հավանականությամբ և՛ Ղուկաս Կարնեցին, և՛ Հովհաննես կաթողիկոսը կա՛մ միմյանց չէին վստահում, կա՛մ վախենում էին, որ այդ նամակները կընկնեն մուսուլման իշխողների ձեռքը:

1783 թ. ռուսական արշավանքը Հարավային Կովկաս տեղի չունեցավ: Դեռ սեպտեմբերին Արղությանը գրում էր Լազարյանին, որ արշավանքը ընթացիկ տարում հավանաբար չի կայանա, քանի որ դրան խանգարում են լեռնականների խռովությունները:[460]

1783-84 թթ. ձմռանը Ղարաբաղում ծայր առած իրադարձությունների մասին տեղեկանում ենք մելիքների խոսքերից: Իբրահիմ

[457] Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 165 բ:
[458] Նշված ձեռագիր, էջ 312բ-313ա:
[459] Նշված ձեռագիր, էջ 126ա:
[460] Մատենադարան, ձեռ. N 4496, էջ 87 բ:

խանի կողմից Շուշի կանչված մելիք Աբովը բանտարկվեց Շուշու բերդում: Դրանից հետո նույն բախտը վիճակվեց նաև մելիք Մեջլումին, որը նույնպես արգելափակվեց. Մելիքները ազատ արձակվեցին միայն «յետ բազում կտտանաց և նախատանաց, յետ քանի ամսոյ հազիւ թէ արձակեալ եկին»:[461]

Այն ժամանակ, երբ Վրաստանում գտնվում էր ռուսական բանակի երկու գումարտակ, Իբրահիմ խանը Ռուսաստանի հավատարիմ ծառայի դեր էր կատարում և չէր կարող վերջնականապես հաշվեհարդար տեսնել իրեն թշնամի մելիքների հետ: Աբովի և Մեջլումի կարճատև ձերբակալությունը միայն նպատակ ուներ նորից թալանելու և դրանով իսկ թուլացնելու նրանց: Հավանաբար այդ ձերբակալությամբ խանը ցանկանում էր միաժամանակ պարզել, թե ինչքան է հեռու գնացել ռուսների հետ մելիքների կապը, և ինչ չափով են նրանք գտնվում Ռուսաստանի հովանավորության տակ:

Մինչ մելիքների ձերբակալությունը՝ 1783 թ. աշնանը Ղարաբաղ ժամանեց Կարախանովը՝ գեներալ Պ. Պոտյոմկինից և Հովսեփ Արղությանից նոր նամակներ բերելով: Պ. Պոտյոմկինի նամակը թվագրված էր սեպտեմբերի 12-ով և գրված էր թուրքերեն, քանի որ վախճանվել էր թարգմանիչ Միրզաբեկ Վահանովը և գեներալը հայերենի թարգմանիչ դեռևս չուներ: Հետևաբար դրա հետ է կապված հասցեատիրոջ անվան շփոթումը՝ «Աստվածահաճո սուրբ Գանձասարի վանքի հեզաբարո և խոնարհ կաթողիկոս Ղուկասին»:[462]

Պ. Պոտյոմկինը հայտնում էր, որ Կովկասյան լեռներով անցնող ճանապարհը համարյա լրիվ վերանորոգված է և հավաստիացնում էր, որ ինքը առաջվա պես մտածում է հայ ժողովրդի ազատագրման մասին:

Հովհաննես կաթողիկոսը և մելիքները հնարավորություն ունեցան պատասխանել գեներալին միայն շատ ամիսներ անց՝ 1784 թ. մայիսի 10-ին: Շնորհակալություն հայտնելով, որ նա հիշել է իրենց մասին և պատվել է իրենց ուղերձով, նրանք շատ բացորոշ արտահայտություններով նկարագրում էին իրենց համար ստեղծված ծանր իրավիճակը: Հաղորդելով, որ «քսու արք յայտնեալ են բռնաւորին մերոյ զմարդ և թուղթ գալն առ տերութեանդ ձերտասնապատիկ և հարիւրապատիկ աւելեալ է չարչարանք, վշտակրութիւնք, նեղսակրութիւն մեր», նրանք պատմում էին մելիքներ

[461] АРО в XVIII в., том IV, док. 200, с. 304.
[462] А. Г. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, с. 250.

Աբովի և Մեջլումի ծերբակալության մասին: Այդ պատճառով չեն կարողացել ժամանակին պատասխանել գեներալի ուղերձին՝ «զմահս մեր առաջի աղաց մերոյ ունեաք»:

Հայտնում էին, որ որոշ ժամանակ անց նամակ են ստացել Սարգիս Մելիքովից, որը տեղեկանալով իրենց ծանր կացության մասին՝ խուսափել է անձամբ Ղարաբաղ գալուց, որպեսզի դրանով ևս չվնասի իրենց: Մելիքովի խորհրդով իրենք ուղարկել են մահտեսի Գրիգորին և Մելիքովի կողմից Ղարաբաղ առաքված Դանիելին, որպեսզի «զքուղթ Սարգիս աղայի ձեռամբ եկեալն բերցեն»: Սակայն Գրիգորը գերի է ընկել և այդ նամակը չի բերել:

Անդրադառնալով պարենի գներին՝ Հովհաննես կաթողիկոսը և մելիքները գրում էին, որ պատրաստ լինելով նույնիսկ կյանքը չխնայել, նյութական նկատառումները իրենց համար ոչ մի դեր չեն խաղում:

Իրենց տանջանքները ներկա ժամանակ հարյուրապատիկ ավել են ծանրացել: Խանը թալանում և տարաբնույթ ձևերով կեղեքում է իրենց: Այդ պատճառով խնդրում են հստակ գրել, թե երբ կարող են սպասել ռուսական զորքերի գալստյանը: Կաթողիկոսները և մելիքները, տեղեկանալով ռուսների և թուրքերի միջև հաշտության կայացման մասին, երկյուղում էին, որ այդ հանգամանքը անբարենպաստ ձևով կանդրադառնա իրենց վրա:[463]

Այս նոր նամակը իր բնույթով կտրուկ կերպով տարբերվում էր Հովհաննես կաթողիկոսի և մելիքների նախկին նամակներից: Այժմ նրանք համակված չէին նախկին լավատեսությամբ: Այս նամակում ակնառու և անթաքույց կերպով կասկածանք էր արտահայտվում ռուսական զորքերի ժամանման կապակցությամբ: Նկարագրելով Ղարաբաղի հայերի համար ստեղծված ծանր կացությունը՝ նամակագիրները նախկին հաճոյախոսությունների փոխարեն ուղղակի մեղադրում էին ռուսական կողմին իրենց անիրագործելի խոստումներ տալու և հանդուգն գործողությունների դրդելու մեջ: Պահանջում էին կա՛մ անհապաղ զորք ուղարկել, կա՛մ հստակ կերպով մերժել, որպեսզի իրենք փորձեն որևիցե այլ ելք գտնել:

Գանձասարի վանքում գրված այս նամակը կրում էր Հովհաննես կաթողիկոսի, նրա եղբայրների, մի քանի եպիսկոպոսների, ինչպես նաև երեք մելիքների՝ Աբովի, Մեջլումի և Բախտամի կնքադրոշմները: Վերջինս հավանաբար այն կնքել էր ոչ Գանձասարում, քանի որ նամակում ուղղակի ասվում է, որ նա նամակը գրելու պահին բացակայում էր և գտնվում էր Արաքսի ափին: Բայց քանի որ

[463] АРО в XVIII в., том IV, док. 200, с. 304.

նամակի վերջում կա նաև նրա կնքադրոշմը, որտեղ նա նամակը ավելի ուշ է կնքել:

Սույն նամակի տակ իրենց կնիքները դրած անձանց շարքում հանդիպում ենք նաև Հովհաննես կաթողիկոսի եղբայր Մելիքբեկ Հասան-Ջալալյանի անվանը: Այդ անունը հանդիպում է նաև ընդհանրական ուղերձներում: Այս նամակում, սակայն, նա անվանում է «վէքիլ երկրին Խաչենու», այսինքն Խաչենի մելիքության լիազոր կառավարիչ: Խաչենի մելիքությունը, որի տարածքում գտնվում էր Գանձասարի վանքը, Հասան-Ջալալյան տոհմի ժառանգական տիրույթն էր: Նույն տոհմից սերում էր նաև Հովհաննես կաթողիկոսը: Սակայն դեռ Փանահ խանը, սպանելով օրինական մելիք Ալավերդուն, նրա փոխարեն Խաչենի մելիք կարգեց իր դրածո և կամակատար Միրզախանին՝ Խնձորստանի գյուղապետին, որի մահից հետո նրան փոխարինեց որդին՝ Ալավերդին: «Ստոր» ծագում ունենալով՝ վերջինս մյուս մելիքների կողմից չէր ընդունվում որպես օրինական իշխող: Իբրահիմ խանի կառավարիչ Ալավերդու մելիքությունը իհարկե չէին ճանաչում նաև Հասան-Ջալալյանները: Հովհաննես կաթողիկոսի եղբայրներից մեկն էլ այդ պատճառով ընդունվում էր որպես «վէքիլ Խաչենու»: Այսպիսով, Պ. Պոտյոմկինին հասցեագրված նամակը Գյուլիստանի, Ջրաբերդի, Դիզակի մելիքների հետ մեկտեղ կնքել էր նաև Հասան-Ջալալյան իշխանական տան անդամը, որը ներկայացնում էր Խաչենի մելիքությունը, չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակ այս մելիքությունը գտնվում էր խանի դրածոյի իշխանության տակ:

Նամակը տրվեց Դանիել Հովհաննեսովին, որը լիազորված էր ոչ միայն հասցեատիրոջը հանձնել այն, այլև բանավոր տեղեկացնել Ղարաբաղում տիրող իրադրության և մելիքների ու կաթողիկոսի խնդրանքների մասին:

Վերադառնալով Ռուսաստան՝ Դանիել Հովհաննեսովը հունիսի 7-ի իր բացատրագրում հայտնում էր, որ Հովհաննես կաթողիկոսն ու մելիքները իր միջոցով գեներալ Պ. Պոտյոմկինին ուղղված նամակից բացի մի նամակ էլ գրել են Արղությանին, որին խնդրում էին մեկնել գեներալ Պ. Պոտյոմկինի մոտ և իրենց փրկելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու խնդրանք հաղորդելու նրան: Նամակը Արղությանին հասցնելու պարտավորությունը դրվել էր մի աբեղայի վրա:

Ըստ Հովհաննեսովի զեկույցի, մելիքները գեներալ Պ. Պոտյոմկինին երկու ծրագիր էին առաջարկում՝ կա՛մ Դերբենտի վրայով արշավանք ձեռնարկել դեպի Ղարաբաղ, կա՛մ, ծայրահեղ դեպքում, Վրաստանում գտնվող ռուսական զինվորական միավորումներն

ուղարկել Գանձակ: Վերջին դեպքում, օգտագործելով ռուսական զորքերի մոտ լինելը, իրենք կարող են խանի դեմ բացահայտ հանդես գալ և նույնիսկ փորձել դավադրություն կազմակերպել նրա դեմ, այդ դեպքում իրենց կարող են աջակցել Իբրահիմի որոշ ազգականներ: Հայտնի է, որ Իբրահիմի ազգականների մի մասը նշված ժամանակ թշնամական հարաբերություններ ուներ նրա հետ: Եվ մելիքների՝ այս հանգամանքն օգտագործելու հաշվարկը այդ պատճառով հիմնազուրկ չէր:

Մելիքներն ու կաթողիկոսը հաղորդում էին նաև, որ Իբրահիմը և Հարավային Կովկասի մնացյալ խաները բանակցում էին թուրքական էմիսարների հետ և ձգտում Թուրքիայի օժանդակությամբ հակառուսական ճակատ կազմել:[464]

Մայիսի 21-ին նորից Ղարաբաղ ժամանեց Կարախանովը՝ իր հետ բերելով Պ. Պոտյոմկինի նոր նամակը: Այն նոր հուսադրանքներ էր պարունակում, քանի որ Հովհաննես կաթողիկոսի մայիսի 29-ի պատասխանը այլ բնույթ ունի, քան երկու շաբաթ առաջ գրված նամակը: Նորից հուսադրված՝ կաթողիկոսը շնորհակալություն էր հայտնում գեներալին՝ նրա մտադրությունների անփոփոխ մնալու և իրենց ճակատագրով նրա շահագրգռված լինելու համար: Իր և մելիքների անունից Հովհաննեսը նորից հաստատում էր իրենց պատրաստակամությունը՝ «ծառայելոյ միշտ ըռուստաց անյաղթելի տէրութեանն մինչև զմահ, եթէ կայսրուհի Եկատերինէ ազատիցէ ի ձեռաց նեղչաց մերոց, զորս միշտ պէս-պէս գանիւք և խոշտանկանօք կտտեն զմեզ և կամին իսպառ ի վայր ձգել և ոչնչացուցանել զմեզ»:

Նամակում հաղորդվում էր, որ ռուսական արշավանքի հետաձգման պատճառով մահմեդականները «սիրտ առին և կամին հաշտիլ ընդ միմյանս»: Իբրահիմ խանը, հաշտվելով Խոյի Ահմեդ խանի հետ, մտադիր է միանալ նրա հետ, ինչպես նաև հարաբերությունները նորմալացնել Շաքիի, Շամախու և Դերբենտի խաների հետ: «Նաև միշտ օսմանցոց գիրն և մարդ գայ առ սոսա, թէ ժրացարուք և քաջ կացէք, մի՝ հնազանդիք ըռուսին և այլ պէսպէս յուսադրական բանս գրեն սոցա օսմանցիք»:

Վերջում, նորից ռուսական զորքի մուտքը տեսնելու հույս հայտնելով, նշվում էր այն վտանգը, որ ներկայացնում էր իրենց համար հաճախակի մարդկանց ու նամակների առաքումը Ղարաբաղ և բացահայտ կերպով գեներալին կոչ էր արվում այդպես չվարվել:[465]

[464] АРО в XVIII в., том IV, док. 208, с. 318-319.
[465] Նույնի վավ. 204, с. 311-312.

Անհրաժեշտ է նշել, որ գեներալ Պ. Պոտյոմկինի նոր թարգմանիչ Վարլամ Վահանովի կողմից կատարված նամակի ռուսերեն թարգմանության մեջ[466] այս խնդրանքը բերված չէ: Հավանաբար բնագրում «շտկումներ» կատարել հրահանգել էր Հ. Արղությանը:

Չնայած գեներալ Պ. Պոտյոմկինի խոստումներին և հավաստիացումներին՝ ռուսական արշավանքը Հարավային Կովկաս տեղի չունեցավ: Դրա պատճառն այն էր, որ Ռուսաստանի համար այդ ժամանակ հնարավորություն առաջացավ առանց ծավալուն ռազմական գործողությունների դիմելու գրավել անվանապես Պարսկաստանի մաս համարվող հարավկովկասյան խանությունները:

Պարսկաստանի թափուր գահի հավակնորդներից մեկը՝ Քերիմ խան Զենդի եղբայր Ալի-Մուրադ խան Զենդը, իրեն ենթարկեց Պարսկաստանի զգալի մասը՝ բացառությամբ մերձկասպյան մարզերի, որոնք գտնվում էին Աղա-Մահամադ խան Ղաջարի տիրապետության տակ: Ռուսաստանի կողմից շահ ճանաչվելու, ինչպես նաև Աղա-Մահմադ խանի դեմ պայքարում և հնարավոր թուրքական ռազմական միջամտության դեպքում Ռուսաստանի աջակցությունը ստանալու նպատակով Ալի-Մուրադ խանը 1784 թ. սկզբին Ռուսաստան ուղարկեց իր դեսպան Մահմադ խանին:

Ալի-Մուրադ խանը պատրաստակամություն էր հայտնում, օժանդակություն ստանալու դիմաց, Ռուսաստանին զիջել ոչ միայն մերձկասպյան՝ Դերբենտի, Բաքվի, Գիլանի և Մազանդարանի, այլև Շամախու, Շաքիի, Ղարաբաղի, Գանձակի, Երևանի և Նախիջևանի խանությունները:

Ալի-Մուրադ խանի այս առաջարկությունը չափազանց հետաքրքրեց ռուսական կողմին: Իշխան Գ. Պոտյոմկինին ուղղված նամակում Եկատերինա Բ-ն գրում էր. «Պարսկական երկրի կենտրոնի տիրակալ Ալի-Մուրադ խանը ցանկանում է դաշինք կնքել Ռուսաստանի հետ ... Հնարավորություն է առաջանում խաղաղ կերպով անջատել պարսկական Հայաստանը»:[467]

Իշխան Գ. Պոտյոմկինը համարում էր, որ «գտնված է պարսկական գործերն ավարտելու հուսալի միջոց», այդ թվում նաև «Ղարաբաղի հարցի լուծման խաղաղ ուղին»:[468] Կանցլեր Բեզբորոդկոյի գնահատմամբ, Ալի-Մուրադ խան Զենդի հետ պայմանագիրը «Պարսկաստանը Ռուսաստանի հնարավոր թշնամուց կվերածի

[466] АРО в XVIII в., том IV, док. 204, с. 312-313.
[467] О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII в., М., 1966, с. 188.
[468] Բորիս Բալայան, Հայ պետականության վերականգնման պարսկական մի ծրագիր, «Իրան-Նամէ», 1993, N 2.

դաշնակցի»:[469]

Կարծելով, որ Հարավային Կովկասի կցումը Ռուսաստանին այժմ արդեն կլուծվի ռուս-պարսկական պայմանագրի շնորհիվ, Եկատերինա Բ-ն իշխան Գ. Պոտյոմկինին հրահանգեց դադարեցնել արշավանքի նախապատրաստությունները. «Պարսից գործերը փառավոր են ընթանում, դրանով ուրախանում եմ»:[470]

1780 թ. սեպտեմբերի 11-ին իշխան Գ. Պոտյոմկինը գնդապետ Տոմարային հայտնեց Եկատերինա Բ-ի հրամանը՝ «Ռուսաստանի համար կարևոր օգուտներ քաղել Ալի-Մուրադ խանի ռուսական կայսերական գահի հետ դաշինք կնքելու ցանկությունից» և կարգադրեց մեկնել Սպահան՝ «Օսմանյան Բարձր Դռան անհաշտության պայմաններում նախանձոտ այդ դրացուն դիմակայելու և նրա մտադրությունները խափանելու» առաքելությամբ:[471]

Սակայն Տոմարային վիճակված չէր իրագործել այդ առաքելությունը: 1785 թ. փետրվերի 7-ին Ալի-Մուրադ խանը վախճանվեց ջրգողությունից, Սպահանից ոչ հեռու գտնվող Կոգրու գյուղում, իսկ նրա բանակը քիչ անց ջախջախվեց Աղա-Մահմադ խանի կողմից: Ռուսական դեսպանության համար ուղևորությունը դեպի Սպահան դարձավ անիմաստ, և Տոմարան հետ վերադարձավ:[472]

Այսպիսով, արշավանքը չկայացավ նաև 1784 թ.: Հայերին ամբողջովին հուսակտուր չանելու համար ռուսական կողմը, հանձին Գ. Պոտյոմկինի, առաջարկեց լիազոր ներկայացուցիչ ուղարկել Պետերբուրգ: Այդ մասին տեղեկանալով Արղությանի նամակից՝ Ղուկաս Կարնեցին Ռուսաստան ուղարկեց Ստեփան Դավթյանին, որին Արղությանը իր նամակագրության մեջ «Արարատյան դեսպան» է անվանում[473]: Այս հանգամանքից ոգևորված Արղությանը 1785 թ. փետրվարի 5-ին հուսադրական մի նոր նամակ գրեց Ղարաբաղ՝ Հովհաննես կաթողիկոսին, որով տեղեկացնելով ռուսական արքունիք Դավթյանի ուղևորության մասին՝ առաջարկում էր հատուկ գրությամբ ճանաչել վերջինիս նաև Ղարաբաղի հայերի ներկայացուցիչ: «Գիտասջիք զոր ինչ լինելոց է. յայսմ ամի կատարումն լինելոց է այնց ... Աստուծով յունայն չէ անցանելոց և զայլ ինչ զոր դուք գիտասցէք»:[474]

[469] Բորիս Բալայան, Հայ պետականության վերականգնման պարսկական մի ծրագիր, «Իրան-Նամէ», 1993, N 2:

[470] Նույն տեղում:

[471] Նույն տեղում:

[472] Նույն տեղում:

[473] Դիվան հայ վիմագրության, պրակ VII, կազմող Գ. Գրիգորյան, Երևան, 1996, էջ 312

[474] Լեո, Հայոց պատմություն, Հ. III, Գ.II, էջ 356:

Դեպի Հարավային Կովկաս ռուսական արշավանքի ծրագրերը վերջնականապես ի դերև ելան լեռնականների հզոր հակառուսական զինված ելույթով, որը ղեկավարում էր իրեն մարգարե հռչակած շեյխ Մանսուրը: 1785 թ. նրա դեմ ուղարկված ռուսական պատժիչ զորախումբը ջախջախվեց: Մանսուրի այս հաջողությունը ոգևորեց Կովկասում ռուսական նվաճողական քաղաքականությունից դժգոհ լեռնականներին: Շեյխ Մանսուրի աջակիցների թիվը բազմապատկվեց: Ռուսական հրամանատարությունը ստիպված էր տեղում առկա բոլոր ուժերը կենտրոնացնել, որպեսզի կասեցնի լեռնականներից եկող վտանգը:

Իբրահիմ խանը, որը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական վայրիվերումներում թրծված ճարպիկ քաղաքական գործիչ էր, նկատելով իրեն սպառնացող արտաքին քաղաքական սպառնալիքի աղոտանալը, վճռեց կասեցնել իր խանության գլխին կախված ներքին վտանգը, որը գալիս էր անհնազանդ հայ մելիքներից և Հովհաննես կաթողիկոսից: Բացահայտ առճակատման գնալ վերջիններիս հետ վտանգավոր էր, այդ պատճառով Իբրահիմ խանը դիմեց արդեն կիրառված և իրեն արդարացրած խարդավանքի և դավադրության մարտավարությանը: 1788 թ. հունվարին Եկատերինա Բ կայսրուհուն ուղղված նամակում մելիքները հստակ կերպով ներկայացնում էին Իբրահիմ խանի կողմից իրենց և Հովհաննես կաթողիկոսի նկատմամբ հաշվեհարդար տեսնելու պատճառները և շարժառիթները: Նամակում նրանք գրում էին, որ երբ Ղարաբաղի խանը համոզվեց, որ «շնորհք և ողորմութիւն կայսերական մեծութեան ձերոյ ոչ ևս աճեցաւ ի վերայ երկրիս Վրացտանու՝ յորմէ առ մեզ էր ծաւալելոց, ապա այնուհետև համարձակ և յայտնի կամեցաւ բնաջինջ առնել զմեզ և ազգս մեր՝ ծառայից ձերին մեծութեան, պատրանօք կոչեաց առ ինքն ի յամրոցն Շուշի ի սպանեալ զմեզ»:[475]

Մելիքներին և կաթողիկոսին ձերբակալելու առիթ հանդիսացավ գեներալ Պ. Պոտյոմկինի պատվիրակ Գաբրիել Կարախանովի մատնությունը: Ինչպես գեներալ Պ. Պոտյոմկինին 1787 թ. օգոստոսի 7-ի իր զեկույցում[476] գրում էր Բուռնաշովը. «Գաբրիել Կարախանովը պարտքերի պատճառով ձերբակալվել է Գյանջայում և տարվել Շուշի, իսկ այնտեղ արդեն հայտնել, որ Գանձասարի կա-

[475] АРО в XVIII в., т. IV, док. 342, с. 374.

[476] А. Г. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, с. 178.

թողիկոսին և մելիքներին նամակներ է բերել, և նրանք էլ կտտանքների տակ խոստովանել են և դրանք տվել»:

Այստեղ անհրաժեշտ է ևս մեկ անգամ շեշտել, որ Կարախանովի ծերբակալությունը և ռուսական կողմի հետ մելիքների և կաթողիկոսի նամակագրական կապի առկայության նրա խոստովանությունը վերջիններիս նկատմամբ Իբրահիմի հաշվեհարդարի համար կարող էր միմիայն որպես առիթ ծառայել: Իբրահիմ խանը վաղուց էր տեղյակ Հովհաննես կաթողիկոսի և մելիքների՝ Ռուսաստանի հետ նամակագրության մասին: Դեռ 1783 թ. օգոստոսի 11-ին խանի հավատարիմ դաշնակից մելիք Շահնազարին ուղղված նամակում[477] գեներալ Պ. Պոտյոմկինի պատվերով Հովսեփ Արղությանը ակնարկել էր այդ նամակագրության առկայությունը: Կաթողիկոսի և մելիքների նկատմամբ հաշվեհարդարի պատճառը շեյխ Մանսուրի ղեկավարությամբ Կովկասի լեռնականների մեծ թափ ստացած զինված շարժման հետևանքով Հարավային Կովկասի նկատմամբ Ռուսաստանի ուշադրության թուլացումն էր:

Հովհաննես կաթողիկոսի եղբայր Սարգիս Հասան-Ջալալյանի կողմից 1800 թ. Պ. Ա. Կովալենսկուն[478] և 1801 թ. գեներալ Կ. Կնորինգին[479] ուղղված խնդրագրերում նշվում է, որ Հովհաննես կաթողիկոսն ու մելիքները ծերբակալվել են 1784 թ. նոյեմբերի 5-ին:

Աբգար Հովհաննիսյանը կարծում է, որ Սարգիս Հասան-Ջալալյանը ճիշտ չի նշել ծերբակալության տարեթիվը և գտնում է, որ կաթողիկոսն ու մելիքները ծերբակալվել են երկու տարի անց՝ 1786 թ. նոյեմբերի 5-ին: Նրա այս եզրակացության ճշմարտացիությունը ապացուցում է նույն Սարգիս Հասան-Ջալալյանի մեկ այլ խնդրագիրը՝ գրված 1823 թ. մայիսի 8-ին՝ ուղղված Ա. Պ. Երմոլովին: Այս խնդրագրում նշված է, որ կաթողիկոսն ու մելիքները ծերբակալվել են 1786 թ.:[480]

Իբրահիմ խանը հարցաքննությունների ժամանակ Հովհաննես կաթողիկոսին մելիքներից առավել հանցավոր է ճանաչում. «Արար պարտաւորութիւնք և վերայ կաթուղիկոսին, թէ այս բանս դու ես արարել վասն ազգին Հայոց, որոյ յաղագս մշտապես մախայր ընդ կաթուղիկոսին և սպառնայր մահացուցանել»:[481] Իբրահիմ խանն

[477] АРО в XVIII в., т. IV, док. 161, с. 255-257.
[478] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 147:
[479] Акты...., т. I, Тифлисъ, 1866, док. 883, с. 638-639.
[480] Присоеденение Восточной Армении к России (այսուհետև՝ ПВАР), Ереван, 1978, т. II, док. 89, с. 124-125.
[481] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 147:

իրականացնում է իր սպառնալիքը և թունավորելով սպանում Հովհաննես կաթողիկոսին:[482]

Աբգար Հովհաննիսյանը կարծում է, որ Հովհաննեսի սպանությունը կատարվել է հաջորդ՝ 1787 թ. սկզբին:[483] Սակայն կարող ենք հստակ նշել, որ Հովհաննես կաթողիկոսը սպանվել է ոչ թե 1787 թ., ինչպես գտնում է Հովհաննիսյանը, այլ 1886 թ.:

Դրա ապացույցն է Հովհաննես կաթողիկոսի՝ Գանձասարի վանքի մոտ գտնվող տապանաքարի արձանագրությունը. «Այս է տապան Յոհաննէս Աղուանից կաթուղիկոսին, որ է յազգէն Ջալալ Դօլին. թուին ՌՄԼԵ (1786)»:[484]

Հետագայում Ղարաբաղի խանության դեմ ուղղված քայլերին Գանձասարի կաթողիկոսների ուղղակի մասնակցության կամ աջակցության հավանականությունը նվազագույնի հասցնելու նպատակով Իբրահիմ խանը որոշում է տնտեսապես թուլացնել Գանձասարի կաթողիկոսությունը: Նրա հրամանով առգրավվում են Գանձասարի վանքի կալվածքները (30 հազար դեսյատին-տես՝ Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 139), ինչպես նաև կողոպտում է վանքի կանխիկ դրամով և շարժական գույքով արտահայտված ունեցվածքը:[485] Ըստ Սարգիս Հասան-Ջալալյանի, կողոպտված ունեցվածքը կազմում էր 5600 թումանից[486] մինչև 78000 ռուբլի[487] այդ ժամանակի համար հսկայական մի գումար: Համեմատության համար նշենք, որ մելիքներին ազատելով կալանքից՝ Իբրահիմ խանը նրանցից վերցրել էր ընդհանուր առմամբ 15000 ռուբլի:[488]

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ նաև Ռաֆֆու կողմից օգտագործված այն ժողովրդական ավանդապատումին, ըստ որի մելիքների և Հովհաննես կաթողիկոսի նկատմամբ Իբրահիմ խանի գործած հաշվեհարդարին աջակցել է Գանձակում հաստատված Իսրայել կաթողիկոսը:[489] Ռաֆֆին գրում է, որ Իսրայելը, առերես համերաշխություն և համակամություն ցուցաբերելով, նվաճել է Հովհաննեսի վստահությունը և մասնակից դարձել Ռուսաստանի

[482] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 147:
[483] А. Г. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, с. 180-181.
[484] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 69:
[485] Акты..., т. I, док. 883, с. 638-639.
[486] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 147:
[487] ПВАР, т. II, док. 89, с. 124-125.
[488] АРО в XVIII в., т. IV, док. 235, с. 353.
[489] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Հ. X, էջ 231:

հետ տարվող նամակագրությանը: Իբրահիմ խանը, Գանձակի Ջավադ խանի հետ թշնամական հարաբերությունների մեջ լինելով, դիմում է Իսրայելին և խնդրում նամակներն իրեն ուղարկել՝ փոխարենը խոստանալով Գանձասարի կաթողիկոսական աթոռը: Իսրայելն առանց վարանելու կատարում է խանի խնդրանքը: Ռաֆֆու հաղորդած այս ավանդապատումի ճշմարտացիությունը հավանական են համարում Լեոն[490] և Աբգար Հովհաննիսյանը[491]:

Սակայն այս ավանդապատումի պատմական հիմքը բավականին խախուտ է: Պետք է նշել, որ Ռուսաստան ուղարկված նամակներում Իսրայելի անունը ընդհանրապես բացակայում է: Այդ ժամանակաշրջանում Գանձակի խանությունը վերածվել էր Վրացական թագավորության և Ղարաբաղի խանության կոնդոմինիումի: Այդ պատճառով Ռաֆֆու այն հաղորդումը, թե Իբրահիմ խանը Ղարաբաղից ուղարկած նամակները ձեռք գցելու նպատակով դիմեց Իսրայել կաթողիկոսին, քանի որ թշնամական հարաբերությունների մեջ էր Գանձակի Ջավադ խանի հետ, դժվար թե մոտ լինի իրականությանը:

Հավաստի պետք է համարել Բուռնաշովի հաղորդածը, ըստ որի նամակատարը պարտքեր ունենալու պատրվակով ձերբակալվել է Գանձակում և տարվել Ղարաբաղ: Իբրահիմի հրամանով նամակատարի ձերբակալումը Գանձակի խանության տարածքում մեծ դժվարություն չէր ներկայացնում, քանի որ Իբրահիմն այդ խանության նկատմամբ կոնդոմինիումի տեսքով վերահսկողություն ուներ:

XVIII դ. 80-ական թվականներին Ղարաբաղում ծավալված ազատագրական շարժումը ինչպես 60 տարի առաջ՝ 20-ական թվականներին, պարտություն կրեց: Այդ պարտության պատճառները շատ նման էին 20-ական թվականների ազատագրական շարժման պարտության պատճառներին: Դրանք էին՝ Ռուսաստանի կողմից բազմաթիվ, ոչնչով չամրագրված խոստումներից հետո հայերին լքելը, Ղարաբաղի մելիքությունների տարանջատված և միմյանց հակառակորդ լինելը, շարժման տեղայնացված բնույթը, հայ ժողովրդի վերնախավի՝ մելիքների և հոգևոր դասի կողմից տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումներում քաղաքական կարճատեսություն հանդես բերել:

[490] Լեո, Հայոց պատմություն, Հ. III, Գ. II, էջ 360:

[491] А. Г. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, с. 181.

XVIII դ. 80-ական թվականներին Ղարաբաղում ծավալված ազատագրական շարժման պարտությունը շատ ավելի ծանր ու անշրջելի հետևանքներ ունեցավ և՛ Ղարաբաղի մելիքությունների, և՛ Հայ Առաքելական եկեղեցու չորս թևերից մեկի՝ Գանձասարի կաթողիկոսության համար, քան նույն դարի 20-ական թվականների շարժման պարտությունը: Եթե 20-ական թվականներին պարտություն կրելուց հետո մելիքություններին հաջողվեց մեկ տասնամյակի ընթացքում ոչ միայն վերականգնել իրենց քաղաքական և տնտեսական դիրքը, այլև համեմատած մինչ ազատագրական շարժումը ավելի ընդարձակել և ամուր հիմքերի վրա դնել այն, ապա 80-ականների պարտությունը վերջնականապես խարխլեց մելիքությունների ռազմական և տնտեսական ներուժը:

Նույնը կարելի է ասել նաև Գանձասարի կաթողիկոսության վերաբերյալ: Եթե մինչ XVIII դ. 20-ական թվականների ազատագրական շարժումը և այդ շարժման ժամանակ Գանձասարի կաթողիկոսությունը երկփեղկված էր, ապա շարժման պարտությունից հետո եկեղեցական վերնախավը, այդ երկփեղկվածության մեջ տեսնելով իր դիրքերի շարունակվող թուլացման վտանգ, հակահարված տվեց 1724 թ. Ստամբուլի ռուս-թուրքական պայմանագրով Հարավային Կովկասի մեծ մասը գրաված թուրքական ռազմավարչական իշխանությունների՝ Գանձասարի կաթողիկոսության երկփեղկվածության շարունակման ձգտումներին, 80-ական թվականների վերջին անշարժ և շարժական գույքի օտարումն անվերականգնելի ձևով հարվածեց Գանձասարի կաթողիկոսության տնտեսական ներուժին: Իսկ Հովհաննես կաթողիկոսի սպանությունից հետո հուսալքված հոգևորականությունը չկարողացավ համախմբվել մեկ հայրապետի շուրջը և պառակտիչ պայքարի ու հակաթոռության նոր շրջանի սկիզբ դրեց:

ԳԼՈՒԽ 4

ԱՂՎԱՆԻՑ (ԳԱՆՁԱՍԱՐԻ) ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԿՈՒՆԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ 1747-1798 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1747 թ. Նադիր շահի սպանությունից հետո Իրանը սկսեց տրոհվել: Երկրի տարբեր մասերի կառավարիչները, իրենց անկախ հայտարարելով, ձգտում էին տիրանալ շահական գահին: Հարավային Կովկասում անկախ կարգավիճակ ձեռք բերեցին Քարթլիի և Կախեթի վալիությունը, Երևանի, Նախիջևանի, Գանձակի և այլ խանություններ, որոնք իրար հետ անընդհատ բախումների մեջ էին:

Նադիր շահի սպանությունը բացասական հետևանքներ ունեցավ Ղարաբաղի մելիքությունների համար: Օթուզիքի ցեղախումբը ղեկավարող Սարուջալու ցեղի առաջնորդ Փանահ-Ալին իրեն Ղարաբաղի խան հռչակեց: Հպատակեցնելով Մուղանի հարթավայրի բոլոր քոչվոր ցեղերին՝ նա կողոպտչական արշավանքներ է ձեռնարկում Գանձակի խանության և Ղարաբաղի լեռնային շրջանների բնակավայրերի վրա: Իր իշխանությունը Ղարաբաղում ամրապնդելու համար Փանահ խանը փորձում է սիրաշահել կաթողիկոսանիստ Գանձասարի վանքի միաբանությանը: Նա հրովարտակով հաստատում է Գանձասարի վանքի արտոնյալ վիճակը և հրամայում ապօրինի կերպով հարկային պարտավորություններ չբարդել վանքի և նրան պատկանող գյուղերի վրա:

Մատենադարանում պահվում են այդ հրովարտակի հայերեն[493] և ռուսերեն[494] թարգմանությունները: Հայերեն թարգմանությունում հրովարտակի հրապարակման տարեթիվ է նշված հիջրայի 1152 թ. շավալ ամսի 7-ը, որը համապատասխանում է Գրիգորյան տոմարով 1739 թ. հունվարի 19-ին, ռուսերեն տարբերակում տրված է հիջրայի 1162 թ., որը համապատասխանում է Գրիգորյան տոմարի 1749-1750 թվականներին: Մեր կարծիքով ճիշտ է ռուսերեն տարբերակում նշված տարեթիվը, քանի որ Նադիր շահի օրոք Ղարաբաղը անմիջապես ենթարկվում էր նրան, և միայն 1747 թ. Նադիրի սպանությունից հետո Ղարաբաղի խանի տիտղոս ստացած Փանահը կարող էր այդպիսի հրովարտակ հրապարակել: Լեոն

[493] Մատենադարան, Կթղկ դիվան, թղթ. 241, վավ. 202:
[494] Նույն տեղում, վավ 203:

նույնպես, մեջբերելով այդ հրովարտակը, նշում է 1162 թ.:[495]

Փանահ խանի քաղաքականությունը շուտով փոխվեց. և խանը Ղարաբաղի մելիքների դեմ պայքարի ընթացքում սկսեց բռնություններ գործադրել հայ հոգևորականության նկատմամբ: Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքությունները գրավելուց հետո Փանահ խանը պաշարեց Գանձակը, որի խան Շահվերդին ապաստան էր տվել Ջրաբերդի մելիք Ադամին և Գյուլիստանի մելիք Հովսեփին: Խանն ու մելիքները օգնություն խնդրեցին Քարթլիի թագավոր Թեյմուրազից և Կախեթի թագավոր Հերակլից: Նորընծա խանի հզորանալուց անհանգստացած Թեյմուրազն ու Հերակլը 1750 թ. փետրվարին արշավում են Փանահի դեմ: Վերջինս, տեղեկանալով, որ վրացական բանակը փետրվարի 8-ին անցել է Կոտրած կամուրջը, դադարեցնում է Գանձակի պաշարումն ու նահանջում: Խեյվանում վրացական բանակին միանում են մելիք Թեյմուրազն* ու Աղվանից կաթողիկոս Ներսես Ջրաբերդցին, որոնք վրացական բանակի համար պարեն էին բերել[496]:

Ձախջախելով Փանահ խանի բանակը՝ Թեյմուրազն ու Հերակլը հարկադրում են Փանահին հրաժարվել Գանձակի խանության նկատմամբ ունեցած նկրտումներից, սակայն Փանահը պահպանում է Ղարաբաղում ձեռք բերած իշխանությունը[497]:

Այս դեպքերից հետո Ղարաբաղի հայերի համար դրությունը փաստորեն չի բարելավվում: Ներսես կաթողիկոսը, խուսափելով Փանահ խանի վրեժից, ստիպված հեռանում է Ղարաբաղից և մինչև իր կյանքի վերջը մնում է Գանձակում:

Փանահ խանի նման վտանգավոր թշնամի ձեռք բերելուց հետո Ներսես կաթողիկոսը քայլեր ձեռնարկեց Աստրախանի թեմի համար ծավալված պայքարի պատճառով էջմիածնի կաթողիկոսության հետ լարված հարաբերությունները բարելավելու ուղղությամբ: 1759 թ. Հակոբ Շամախեցու կաթողիկոս ընտրվելուց հետո Աղվանից և Ամենայն Հայոց կաթողիկոսությունների միջև տեղի ունեցավ մեռոնի փոխանակություն, ապա Ներսես Ջրաբերդցին այցելեց էջմիածին: Այցելության ընթացքում Ներսեսը վերստին ընդունեց էջմիածնի աթոռի գերագահ լինելը, իսկ Հակոբ Շամախեցին

[495] Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 162:
* Մելիք Թեյմուրազը XVIII դ. 20-ական թվականներին Ղարաբաղի սղնախների ազատագրական պայքարի առաջնորդներից մեկն էր:
[496] M. Brosset, Histoire de la Georgie depuis l'antiquite' jusgu' a' XIX siecle, parte II, St. Peterspurg, 1857, p. 148-149.
[497] Նույն տեղում

պարտավորվեց հոգալ Աղվանից կաթողիկոսության կարիքները[498]: Ներսես Զրաբերդցին էջմիածին իր այս այցելության ժամանակ նաև կոնդակով վերահաստատեց Աղվանից կաթողիկոսների ընտրության և օծման կարգի վերաբերյալ կանոնները[499]:

Փանահ խանին չհաջողվեց իրենից կախման մեջ գցել Աղվանից կաթողիկոսությունը, ինչը զգալիորեն կավելացներ նրա ազդեցությունը ոչ միայն Ղարաբաղում, այլև Ղարաբաղին հարակից այն խանություններում, որտեղ կային Աղվանից կաթողիկոսությանը ենթակա թեմեր:.Ճիշտ է, այդ կաթողիկոսության հայրապետ Ներսես Զրաբերդցին ստիպված էր Զրաբերդի և Գյուլիստանի մելիքների նման տարագրվել Գանձակ, սակայն Ներսես կաթողիկոսը, Ղարաբաղի խանի վերահսկողությունից դուրս գտնվելով, չկորցրեց իշխանությունը Ղարաբաղի թեմերի նկատմամբ:

Այսպիսով, Գանձակում հաստատված Աղվանից կաթողիկոսը Ղարաբաղի խանի համար պակաս վտանգ չէր ներկայացնում, քան Զրաբերդի և Գյուլիստանի մելիքները:

1760 թ. հորը Փանահ խանին, փոխարինած Իբրահիմ-Խալիլ խանը (1760-1806) 1762թ. Ներսես կաթողիկոսին իրեն հնազանդ հոգևորականով փոխարինելու քայլեր ձեռնարկեց: 1762 թ. Խաչենի և Վարանդայի աշխարհիկ և հոգևոր վերնախավի ժողովում քննարկվեց Ներսես Զրաբերդցուն փոխարինելու խնդիրը. «Ծերացեալ է Ներսէս կաթուղիկոսը, մանաւանդ թէ ժառանգ կաթուղիկոսացն Հասան-Ջալալեանց կայ ի միջոյ այսօր: Հարկաւոր է նորոգել ի նոցանէ և մի թողուլ առանց կաթուղիկոսի Աթոռն Գանձասարայ»[500]:

Տեղեկանալով այդ մասին Գյուլիստանի մելիք Հովսեփն ու Զրաբերդի մելիք Ադամը համահաճական ընդհանրագրեր են գրել տալիս և դրանք ներկայացնելով մահամերձ հիվանդ 120-ամյա Ներսես կաթողիկոսին՝ խնդրում նրան՝ կաթողիկոս օծել Իսրայելին: Ներսեսը իրեն հաջորդ կաթողիկոս է օծում Իսրայել Զրաբերդցուն (1763-1808), որին դեռ մանկահասակ տարիքում եպիսկոպոս էր ձեռնադրել[501]: Իսրայել Զրաբերդցու՝ Մատենադարանում պահվող կոնդակներից մեկի կնքադրոշմի վրա կարդում ենք. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Իսրայէլ կաթուղիկոս Աղուանից ՌՄԺ (1761)»[502]:

[498] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 210, էջ 10բ- 11ա:
[499] Նույն տեղում
[500] Մատենադարան, ձեռ. 4331, էջ 46ա:
[501] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 89; Մատենադարան, Արխիվ Ալ. Երիցյանի, թղթ. 250, վավ. 219; Մատենադարան Կթղկ դիվան, թղթ. 257, վավ. 250:
[502] Մատենադարան, Կթղկ դիվան, թղթ. 7, վավ. 5:

Այս տարեթիվը թույլ է տալիս ենթադրել, որ դեռ 1761 թ. Ներսես կաթողիկոսը Իսրայելին իրեն աթոռակից էր օծել:

Ըստ Սիմեոն Երևանցու՝ Իսրայելը Ներսես կաթողիկոսի եղբորորդին է[503]: Լեոն և Մաղաքիա Օրմանյանը, հետևելով Սիմեոն Երևանցուն, նույնպես գտնում են, որ Իսրայելը Ներսեսի եղբորորդին է[504]: Բաֆֆին «Խամսայի մելիքությունները» գրքում գրում է, որ Իսրայելը Ներսես կաթողիկոսի քրոջ և կուսապատցի Ապրես աղայի որդին էր[505]: Երևանի Մատենադարանում պահվող վավերագրերից մեկում նույնպես նշվում է, որ Իսրայելը Ապրեսի որդին էր, սակայն համաձայն այս վավերագրի՝ Ապրեսը ոչ թե Ներսես Զրաբերդցու քրոջ ամուսինն է, այլ Ներսեսի եղբոր որդին[506] : Այս վավերագրի հաղորդածը հաստատվում է Գանձասարի վանքի գերեզմանատան տապանաքարերից մեկի արձանագրությամբ. «Այս է հանգիստ Սարգսին որդի Ապրասին և թոռն Աղուանից կաթուղիկոսին եղբայր Սարգիս իշխանին»[507]: Այսպիսով՝ Իսրայելը Ներսես կաթողիկոսի եղբայր, Զրաբերդի սղնախի հրամանատար Սարգիս յուզբաշու թոռն էր, իսկ տապանագրում հիշատակվող Սարգիսը Իսրայելի եղբայրն էր:

Իսրայել Զրաբերդցու օծումը տեղի է ունեցել Սիմեոն Երևանցու կաթողիկոս օծվելուց 4 ամիս առաջ, ինչպես ինքն էր հայտարարում, «թէ ես չորս ամսովք անդրանիկ եմ քան զնա (Սիմեոն Երևանցին-Լ. Մ.)»[508]: Սիմեոն Երևանցին էջմիածնում կաթողիկոս է օծվել 1763 թ. ապրիլի 20-ին: Հետևաբար, Իսրայել Զրաբերդցին Գանձակում կաթողիկոսացել է նույն թվականի հունվարին:

Մեկ ամիս անց՝ 1763 թ. փետրվարի 5-ին Ղարաբաղում Իբրահիմ խանի գործուն միջամտությամբ տեղի է ունենում մի ժողով, որին մասնակցում են մի քանի մելիքներ և բարձրաստիճան հոգևորականներ: Ժողովը մերժում է Աղվանից կաթողիկոս ճանաչել Իսրայել Զրաբերդցուն՝ պատճառաբանելով, որ Ներսես կաթողիկոսը պարտավոր էր իրենից հետո Աղվանից կաթողիկոսության աթոռը թողնել Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցչին: Ժողովում կաթողիկոս է ընտրվում Եսայի կաթողիկոսի եղբայր Մելիքբեկ Հասան-

[503] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 89:
[504] Լեո, Հայոց պատմություն, Երկերի Ժողովածու, հ. 3, Գ. II, էջ 298; Մ. Օրմանյան, Ազգապատում հ. Բ, Գիրք Գ, էջ 3052-3053:
[505] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 220:
[506] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 5:
[507] Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, արձանագրություն 153, էջ 68:
[508] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, էջ 32ա:

Ջալալյանի որդի Հովհաննես եպիսկոպոսը[509]: Կազմվում է 50 հոգուց բաղկացած մի պատվիրակություն, որը ժողովում կաթողիկոս ընտրված Հովհաննես Հասան-Ջալալյանին ուղեկցում է Էջմիածին:

Էջմիածնում պատվիրակության անդամները, հանդիպելով Հակոբ Շամախեցի կաթողիկոսին, ներկայացրեցին Հովհաննեսին Աղվանից կաթողիկոս ճանաչելու վերաբերյալ Ղարաբաղի թեմերի ընդհանրագրերը և խնդրեցին Հակոբ Շամախեցուն նրան Աղվանից կաթողիկոս հաստատել: Սակայն Հակոբ Շամախեցին մերժում է այդ խնդրանքը: Պատվիրակները վերադառնում են Գանձասար և Ղարաբաղի թեմերի առաջնորդ եպիսկոպոսների ձեռքով կաթողիկոս օծում Հովհաննես Հասան-Ջալալյանին: Ե՛վ Օրմանյանը, և Լե՛ոն գտնում են, որ այս պատվիրակությունը Հովհաննես Հասան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս օծելու խնդրանքով դիմել է Հակոբ Շամախեցուն հաջորդած Սիմեոն Երևանցուն[510]:

Մեր ձեռքի տակ կա Հովհաննեսի օծումից հետո նրան Աղվանից կաթողիկոս հաստատած Ղարաբաղի խանի հրովարտակը, որը հրապարակվել է 1763 թ. մարտի 18-ին,[511] իսկ Հակոբ Շամախեցին վախճանվել է 1763 թ. մարտի 21-ին[512]:

Գանձասարում Հովհաննեսին կաթողիկոս օծվելուց հետո Իբրահիմ խանը և նրա իշխանությունը ճանաչած ու Ղարաբաղից չհեռացած մելիքները, փորձելով կատարված փաստի առաջ կանգնեցնել Հակոբ Շամախեցուն, նամակներով նորից խնդրեցին Աղվանից կաթողիկոս հաստատել Հովհաննես Հասան-Ջալալյանին:

Հակոբ Շամախեցին պատասխան նամակ գրեց միայն Իբրահիմ խանին, որտեղ հայտնում էր, որ մինչև միաբանություն չհաստատվի, ինքը ո՛չ Իսրայելին, ո՛չ Հովհաննեսին հաստատման կոնդակ չի տա[513]: Ղարաբաղի մելիքներին Ամենայն Հայոց կաթողիկոսը հարկ չհամարեց անձամբ պատասխանել: Նրա փոխարեն մելիքներին նամակ հղվեց Էջմիածնի միաբանության անունից:

Նամակագիրները նախատում էին մելիքներին, որոնք աշխարհական լինելով՝ թողել են իրենց գործն ու հոգսերը, երկու մասի են բաժանվել, մի մասը աջակցում է կաթողիկոսության մի թեկնածուին, մյուս մասը՝ մյուսին: Նամակում հայտնվում էր, որ Գանձակում կաթողիկոս օծված Իսրայելը խոստացել էր գալ Էջմիածին և

[509] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 5:
[510] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Գիրք Գ, § 2092, էջ 3052; Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 3, Գ. II, էջ299:
[511] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 210:
[512] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 67:
[513] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 210, էջ 4ա-4բ:

հաստատվել Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից: Եթե նա համաձայնվի մեկնել Գանձասար, «յԱթոռն ձեր յանձն առ նստելն, դուք ևս պարտ էիք հնազանդվիլ»: Բայց Իսրայելը չկատարեց իր խոստումը, իսկ Գանձասարում ինքնագլուխ կաթողիկոս օծվեց Հովհաննեսը: Մինչև համաձայնություն չկայացվի, ո՛չ Իսրայելը, ո՛չ Հովհաննեսը կոնդակ չեն ստանա[514]:

Իսրայել Ջրաբերդցուն աջակից գանձակեցիները նույնպես դիմում են Հակոբ Շամախեցուն և խնդրում կաթողիկոս օծված Իսրայելին հաստատման կոնդակ տալ[515]: 1763 թ. մարտի 5-ի պատասխանում, մերժելով գանձակեցիների այն արդարացումը, թե Ներսես կաթողիկոսն է ցանկացել, որ իր հաջորդը լինի Իսրայելը, Հակոբ Շամախեցին հրաժարվում է վերջինիս հաստատման կոնդակ տալ[516]:

այսպիսով՝ Աղվանից կաթողիկոսության աթոռի շուրջ ծագած վեճի լուծումը շատ բանով կախված էր Ամենայն Հայոց կաթողիկոսի որոշումից: Երկու հակառակորդ կողմերն էլ իրենց թեկնածուի կաթողիկոսության կայուն երաշխիք էին համարում Ամենայն Հայոց կաթողիկոսի հաստատման կոնդակը: Սակայն Հակոբ Շամախեցին և նրան հաջորդած Սիմեոն Երևանցին չէին շտապում հարթել ծագած գժտությունը և հետամուտ էին էջմիածնի ազդեցությանը ենթարկել Աղվանից կաթողիկոսության թեմերը: Դրա ապացույցն է նորընծա Սիմեոն Երևանցու առաջին ուղերձը գանձակեցիներին: Այս ուղերձում Սիմեոն Երևանցին՝ Հակոբ Շամախեցու մահվան գույժը հայտնելուց հետո հորդորում էր գանձակեցիներին.«Դրամք ձեր մի խնայիցեք արկանել ի գանձանակն սրբոյ Աթոռոյս: Բացի նվիրակին մեր ումեք զփարայ մի տայցեք յարդիւնքաց սրբոյ Աթոռոյն, ով որ և իցէ»[517]: Այլ կաթողիկոսների պատկանող թեմերում կամավոր գանձանակադրամ հավաքողները կոչվում էին ժողովարարներ: Սեփական կաթողիկոսության թեմերում նվիրակային պարտադիր եկեղեցական տուրքեր հավաքողները կոչվում էին նվիրակներ, իսկ այստեղ Սիմեոն Երևանցին էջմիածնի գանձանակադրամը հավաքող ժողովարարներին անվանում է նվիրակներ:

Նույն ուղերձում, անդրադառնալով Աղվանից կաթողիկոսության աթոռի երկու հավակնորդներին, Սիմեոն Երևանցին հորդորում էր

[514] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 210, էջ 5ա-5բ:
[515] Նույն տեղում, էջ 8ա-8բ:
[516] Նույն տեղում:
[517] Նույն տեղում, էջ 4ա-4բ:

երկուսից և ոչ մեկին կաթողիկոս չճանաչել, և եթե վերջիններս համաձայնության չգան, ապա երկուսին էլ մերժել[518]:

Իսրայելի կողմնակիցներին ուղղված հաջորդ նամակում Սիմեոն Երևանցին շեշտում է, որ Աղվանից նոր կաթողիկոսի օծումը պետք է տեղի ունենա համաձայն էջմիածնում Ներսես Զրաբերդցու կողմից ընդունած Աղվանից կաթողիկոսների ընտրության կանոնների: Սակայն Սիմեոն Երևանցին կարևոր վերապահում է անում: Նա ցանկություն է հայտնում, որ կաթողիկոս ընտրելիս «զվնասաւոր և զԱստուծոյ ատելի ազգաժառանգութիւն բարձեցեալ եղիցի յետ այսօրիկ կաթուղիկոսարանին և եպիսկոպոսարանին և յամենայն վանօրեից և յանապատած»: Եթե հայտնվի կաթողիկոսական աստիճանին արժանի, բայց Աղվանից նախկին կաթողիկոսների հետ ազգակցական կապ չունեցող մեկ այլ հոգևորական «ոչ լիցի խոտելի, քանզի արժանաւորութիւնն է արժանացուցանող այն աստուծայնոյ աստիճանին և ոչ մեծազգութիւն»[519]: Վերջում Սիմեոնը հայտարարում է, որ հաստատման կոնդակ կտա նրան, ում ընտրության նկատմամբ ընդհանուր համաձայնություն կկայացվի[520]: Ղարաբաղի մելիքները և Իբրահիմ խանը, տեղեկանալով էջմիածնում Սիմեոն Երևանցու կաթողիկոս օծվելու մասին, փորձեցին էջմիածնի նորաօծ կաթողիկոսից իրենց ընտրյալ Հովհաննես Հասան-Զալալյանին Աղվանից կաթողիկոս հաստատող կոնդակ ստանալ: Այդ նպատակով և՛ մելիքները, և՛ Իբրահիմ խանը նամակներ գրեցին Սիմեոն Երևանցուն:

Իբրահիմ խանն իր նամակում սպառնում էր Իսրայելին հաստատելու դեպքում ասպատակել Երևանի խանության տարածքը, ինչպես նաև Սյունիքը և Ղարադաղը դուրս բերել էջմիածնի ենթակայությունից[521]:

Նման բովանդակության նամակ 1763 թ. հոկտեմբերի 14-ին Սիմեոն Երևանցուն հասցեագրեցին Գանձակում գտնվող Զրաբերդի մելիք Ադամը և Գյուլիստանի մելիք Հովսեփը[522]:

Սիմեոն Երևանցին նամակներ գրեց և՛ Հովհաննեսի, և՛ Իսրայելի կողմնակիցներին: Նա մելիքներից պահանջեց չխառնվել եկեղեցական գործերին, այլ զբաղվել միայն իրենց վերաբերող աշխարհիկ գործերով. «Դուք զձեր օնբաշին, իւզբաշին և մինբաշին տեսեք

[518] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 210, էջ էջ 4ա-4բ:
[519] Նույն տեղում, էջ 11ա-15բ:
[520] Նույն տեղում:
[521] Նույն տեղում, էջ 15ա-16ա; Դիվան, Գիրք Ը, Մաս II, Թիֆլիս, 1907, էջ 28:
[522] Մատենադարան, Արխիվ Ալ. Երիցյանի, Թղթ. 256, վավ. 219:

և կարգեցեք, զօր լաւ գիտէք»: Ինքը չի խառնվում մելիքների գործերի մեջ, քանի որ հոգևոր անձ է: Մելիքները չպետք է միջամտեն կաթողիկոսական ընտրություններին, քանի որ «կաթուղիկոսական կարգաւորք և վանականք և հասարակ ժողովուրդն պարտ են ընտրել միաբերան, որն արժանի է»: Սիմեոն Երևանցին մեղադրում է մելիքներին այն բանում, որ վերջիններս, չբավարարվելով նամակներ գրելով, դրդել են Իբրահիմ խանին՝ նամակով պահանջել Սարգիս Հասան-Զալալյանին հաստատման կոնդակ տալ՝ հակառակ դեպքում սպառնալով արյունահեղությամբ: Ինքը ստացել է համանման բովանդակությամբ նամակ հակառակ ճամբարից: Եթե իսկապես մելիքներն իրեն հնազանդ են, ապա պետք է Աղվանից կաթողիկոսության աթոռի երկու թեկնածուներին էլ մերժեն և այլ արժանավոր թեկնածուի միասնաբար ընտրելով՝ ուղարկեն էջմիածին՝ իր կողմից հաստատման կոնդակ ստանալու համար[523]:

Զրաբերդի և Գյուլիստանի մելիքներին, ինչպես նաև Գանձակի խանի և Գանձակի հայ համայնքի անունից իրեն ուղղված նամակներին պատասխանելով՝ Սիմեոն Երևանցին գրում է, որ ո՛չ Հովհաննեսին, ո՛չ Իսրայելին չի պատրաստվում հաստատել կաթողիկոս այնքան ժամանակ, մինչև Աղվանից կաթողիկոսության թեմերում միաբանություն չհաստատվի[524]:

Չնայած Սիմեոն Երևանցուց մերժում ստանալուն՝ Հովհաննես Հասան-Զալալյանը 1763 թ. վերջին ուղևորվեց Շամախի և տեղի խանից հիջրայի 1177 թ. ջումադ ալ շանի ամսին (1763-1764 թթ. դեկտեմբերի 7-հունվարի 5) հրովարտակ ստացավ: Մահմադ - Սայիդ խանը Հովհաննեսին ճանաչում էր Աղվանից կաթողիկոս և Շիրվանի հայ բնակչությանը հրամայում եկեղեցական բոլոր հասույթները հանձնել նրան[525]:

1764 թ. մարտի 23-ին Իսրայել Զրաբերդցին նամակ գրեց էջմիածնի լուսարար եղիազար վարդապետին, որտեղ խնդրում էր աջակցել իրեն և համոզել Սիմեոն Երևանցուն՝ ուշադրություն չդարձնել Հովհաննեսի կողմնակիցների դիմումներին[526]:

1765 թ. գարնանը Իսրայելը Գանձակի հայ համայնքի անունից դիմում է հղում էջմիածին. «Քոյ է որդի սա և քեզ յոժար է ծառայել»[527]:

[523] Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 210, էջ 15ա-16ա:
[524] Նույն տեղում, էջ 16բ-17ա:
[525] Սարգիս Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մաս Բ, էջ 493-494:
[526] Դիվան, Գիրք Ը, Մաս II, էջ 29:
[527] Նույն տեղում, Գիրք Գ, էջ 191:

1765 թ. մայիսի 25-ին ուղարկված պատասխանում Սիմեոն Երևանցին հայտարարում էր, որ և՛ Գանձակում հաստատված Իսրայել Զրաբերդցին, և՛ Գանձասարում նստած Հովհաննես Հասան-Զալալյանը իր երկու անառակ որդիներն են: Նամակի վերջում Սիմեոն Երևանցին վերստին առաջադրում է իր պայմանները, որոնց համաձայն կա՛մ Աղվանից կաթողիկոսության աթոռի հավակնորդները պետք է միասին ներկայանան իրեն, կա՛մ նրանցից մեկը պետք է հրաժարվի կաթողիկոսությունից, իսկ մյուսն ընդհանուր համաձայնության պայմաններում վերստին ընտրվելուց հետո ներկայանալով էջմիածին, հաստատվի, կամ էլ երկուսին հեռացնելով՝ նոր անձ պետք է առաջ քաշվի: Նամակի հասցեատերը՝ էջմիածնի գանձապետ Պապաին Սիմեոնը, հրահանգեց նամակը Իսրայելին չհանձնել, այլ այն հրապարակել եկեղեցում[528]:

Տեսնելով, որ նման եղանակով արդյունքի չի հասնում, Իսրայելը դիմեց Գանձակի Շահվերդի խանի օժանդակությանը: Վերջինս խնդրեց Երևանի Հուսեին-Ալի խանին, որպեսզի Սիմեոն Երևանցին Իսրայելին կաթողիկոս հաստատելու կոնդակ տա[529]:

Սիմեոն Երևանցին կտրականապես մերժեց Գանձակի և Երևանի խաների միջնորդությունը՝ նորից հայտարարելով, որ Իսրայել Զրաբերդցին իր կողմից կաթողիկոս կհաստատվի միայն այն դեպքում, երբ անձամբ կգա էջմիածին և իրեն կներկայացնի Աղվանից կաթողիկոսության բոլոր թեմերի ընդհանրագրերը:

Երևանում գտնվող Գանձակի խանի ներկայացուցիչները խնդրեցին Սիմեոն կաթողիկոսին՝ իր այս պայմանները նամակով հայտնել Իսրայել Զրաբերդցուն: Սակայն Սիմեոնը հրաժարվեց ուղղակի գրել Իսրայելին և սեպտեմբերի 4-ին նամակ հղեց Շահվերդի խանին[530]:

Շահվերդի խանի ճնշումներին վերջ տալու համար Սիմեոն կաթողիկոսը հոկտեմբերի 5-ին նամակով խնդրեց վրաց Հերակլ Բ թագավորին՝ սաստել Գանձակի խանին, որպեսզի վերջինս դադարեցնի խառնվել Աղվանից կաթողիկոսական աթոռի շուրջ ծայր առած վեճին:

Սիմեոն Երևանցին հայտնում էր, որ ցանկանալով վերացնել Աղվանից կաթողիկոսությունում հաստատված գժտությունը՝ կաթողիկոսության երկու հավակնորդներին բազմիցս կանչել է էջմիածին: Այդ նպատակով հրահանգել է Թիֆլիսի առաջնորդ Զաքարիա արքեպիսկոպոս Պաթինյանին՝ ուղևորվել Գանձակ և համոզել Իսրայել Զրաբերդցուն, որ ներկայանա իրեն[531]:

Մեկ այլ նամակով Սիմեոնը Թիֆլիսի առաջնորդ Զաքարիա արքեպիսկոպոսին պատվիրեց իր կողմից ևս դիմել Հերակլին, իսկ եթե վերջինս որոշի նամակ գրել և պատվիրակ ուղարկել Գանձակ, ինքը փորձի ստանձնել նամակատար պատվիրակի դերը[532]:

Հերակլը որոշեց Գանձակ ուղարկել Գեորգի Ցիցիշվիլի իշխանին, որի հետ էլ Զաքարիա արքեպիսկոպոսը Գանձակ մեկնեց[533]:

Տեղեկանալով այս նամակագրության մասին՝ Հովհաննես Հասան-Զալալյանը բազմանդամ շքախմբով 1765 թ. հոկտեմբերի 18-ին ժամանեց էջմիածին: Սիմեոն Երևանցու հետ հանդիպման ժամանակ Հովհաննեսը հայտարարեց, որ Իբրահիմ խանի հրամանով Ղարաբաղի մելիքները պարտադրել են իրեն կաթողիկոս օծվել, իսկ իր նպատակը Աղվանից կաթողիկոսությունը հաստատուն և շեն պահելն է: Սիմեոն Երևանցու ճնշման տակ Հովհաննեսը հրաժարվեց կաթողիկոսությունից՝ հօգուտ Իսրայելի, պայմանով, որ վերջինս թողնի Գանձակը և հաստատվի Գանձասարում: Ինչ վերաբերում է իրեն, ապա եթե Իսրայելը չցանկանա նրան տեսնել Գանձասարում, ինքը համաձայն է մնալ էջմիածնում և ծառայել Սիմեոն Երևանցուն: Հովհաննեսը ներկայացրեց Շաքիի, Շիրվանի, Դերբենտի հայ համայնքների դիմումները, որոնցում հայտնվում էր, որ իրենց կողմից կաթողիկոս կճանաչվի միայն այն թեկնածուն, որին կհաստատի Ամենայն Հայոց կաթողիկոսը, և որի նստավայրը Գանձասարը կլինի[534]:

Իբրահիմ խանի պատվիրակ Աղասին սկզբում Սիմեոն Երևանցուն հանձնեց հարգալից ոճով մի նամակ, որտեղ խանը խնդրում էր կաթողիկոս հաստատել Հովհաննեսին: Երբ Սիմեոն կաթողիկոսը մերժեց այդ խնդրանքը բավարարել, պատվիրակը ներկայացրեց ևս մի նամակ, որտեղ խանը սպառնալիքներ էր տեղում նրա հասցեին[535]: Սիմեոն Երևանցին տեղի չտվեց Ղարաբաղի խանի սպառնալիքներին, առավել ևս որ պատվիրակը հայտնեց, թե Իբրահիմը խիստ մտահոգ է եղել, որ Իսրայել Զրաբերդցին կաթողիկոսական աթոռը կտեղափոխի Գանձակ և Գանձասարի վանքը թափուր կմնա[536]:

---

528 Դիվան, Գիրք Գիրք Գ, էջ 191:
529 Մատենադարան, Ձեռ. N2931, էջ 93ա:
530 Նույն տեղում:

531 Դիվան, Գիրք Գ, էջ 305-306:
532 Նույն տեղում:
533 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, էջ 47ա:
534 Մատենադարան, ձեռ N 2931, էջ 96բ:
535 Նույն տեղում, էջ 97ա:
536 Նույն տեղում

Փաստորեն Իբրահիմ խանը նպատակ չուներ անպայմանորեն Աղվանից կաթողիկոս տեսնել Հովհաննես Հասան-Ջալալյանին: Նրա նպատակը կաթողիկոսին, ով էլ նա լիներ, իր իշխանության սահմաններում տեսնելն էր: Դրանով Իբրահիմ խանը կմեծացներ իր ազդեցությունը հարակից այն խանություններում, ուր Գանձասարի կաթողիկոսության թեմեր և այդ կաթողիկոսությանը ենթակա ստվար հայ ազգաբնակչություն կար, ինչպես նաև կհարվածեր իր վտանգավոր դրկից Գանձակի խանի շահերին:

Սիմեոն Երևանցին հոկտեմբերի 24-ին Իբրահիմ խանին հասցեագրած նամակում պահանջեց չխառնվել Աղվանից կաթողիկոսության աթոռի շուրջ տեղի ունեցող պայքարին.«Դուք պարտիք ի բաց լինիլ, զի ես ընդ կամաց և խնդրոյ ժողովրդեանն, զմինն ի երկուցն ընտրեալ, յԱթոռն նստուցից»[537]:

Շահվերդի խանին հոկտեմբերի 27-ին հասցեագրված ուղերձում Սիմեոն Երևանցին տեղեկացնում էր Իսրայել Ջրաբերդցուն կաթողիկոս հաստատելու և Գանձասարի վանք ուղարկելու վճռի մասին[538]:

Նույն օրը գանձակեցիներին գրված նամակում Սիմեոն Երևանցին մեղադրում էր նրանց՝ հայտնելով, թե Գանձակի հայերի դրդմամբ է տեղի խանը դիմել Երևանի Հուսեին-Ալի խանին՝ խնդրելով միջնորդել Իսրայել Ջրաբերդցու համար. «Եվ վասն ձերոյ ինքնահաճ ապստամբութեան զտաճիկսն դրդեք և յարուցանեք ի վերայ մեր»: Սիմեոն կաթողիկոսը հայտնում էր, որ Հովհաննես Հասան-Ջալալյանը համաձայն է հրաժարվել կաթողիկոսությունից, և հաղորդում էր նրա և Աղվանից կաթողիկոսության մնացած թեմերի առաջ քաշած պայմանների մասին[539]:

Գանձակեցիները, ստանալով Սիմեոն Երևանցու նամակը և տեղեկանալով նրա առաջ քաշած պայմանին, դիմում են Շահվերդի խանին: Վերջինս դրդում է Իսրայելին և նրա կողմնակիցներին՝ ըմբոստ ոճով գրված նամակ ուղարկել Սիմեոն Երևանցուն[540]:

Գանձակի խանն իր կողմից ևս նամակներ հղեց Երևանի խանին և Սիմեոն Երևանցուն: Նա Երևանի խանին հորդորում էր ստիպել Սիմեոնին՝ հեռացնել Հովհաննես Հասան-Ջալալյանին և Իսրայել Ջրաբերդցու կաթողիկոսությունը հաստատող կոնդակ հրապարակել: Փորձելով արթնացնել Երևանի խանի փառասիրությունը՝

[537] Մատենադարան, ձեռ N 2931, էջ 97ա-97բ; Դիվան, Գիրք Գ, էջ 314:
[538] Նույն տեղում, էջ 97բ:
[539] Դիվան, Գիրք Գ, էջ 314-315:
[540] Մատենադարան, ձեռ N 2931, էջ101ա:

Շահվերդի խանն իր զարմանքն էր արտահայտում, թե ինչու է նա այդչափ պատվում Սիմեոնին և թե ինչպիսի իշխանություն ունի, որ նույնիսկ չի կարողանում մի թուղթ վերցնել նրանից[541]:

Սիմեոն Երևանցուն ուղղված նամակում էլ Շահվերդի խանը գրում էր, որ մինչև այժմ խնդրել է օրհնության և հաստատման թուղթ տալ Իսրայել Ջրաբերդցուն, և քանի որ իր խնդրանքը անուշադրության է արժանացել, ապա այժմ դրա անհրաժեշտությունը վերացել է: Հիմա խանը պահանջում է Սիմեոն կաթողիկոսից. «Մի այդքան մեծացուցաներ և խրոխտայր ի վերայ սրայ, զի չես դու կարի իմն մեծ քան զսա և Աթոռն սոցին աւագագոյն է և նախ է քան զձերդ»[542]:

Սիմեոն Երևանցին գանձակեցի նամակաբեր պատվիրակներին հայտնեց, որ պատասխան չի տա, մինչև իր հրամանով Գանձակ մեկնած Թիֆլիսի առաջնորդ Զաքարիա արքեպիսկոպոսից լուր չստանա Գանձակում տիրող իրավիճակից: Պատվիրակները կարող են կա՛մ ետ վերադառնալ, կա՛մ Երևանում սպասել իր պատասխանին: Պատվիրակները ստիպված մնացին Երևանում և ստեղծված իրադրության մասին նամակ հղեցին Գանձակ[543]:

Գանձակում Զաքարիային նորից մերժել էին՝ Իսրայել Ջրաբերդցուն անմիջապես ուղարկել Էջմիածին, և մի անգամ ևս պնդել, որ վերջինս Էջմիածին կուղևորվի գարնանը[544]:

Այդ մասին Զաքարիա արքեպիսկոպոսը նամակով հայտնեց Սիմեոն Երևանցուն: Երևանում գտնվող գանձակեցի պատվիրակները, տեղեկանալով, որ Զաքարիա արքեպիսկոպոսից նամակ է ստացվել, խնդրեցին Սիմեոն Երևանցուն իրենց բերած նամակին պատասխան գրել[545]: Սիմեոն կաթողիկոսը դեկտեմբերի 7-ին պատասխան գրեց միայն Շահվերդի խանին՝ պահանջելով չխանվել հայերի հոգևոր գործերին: Այդ նամակով գանձակեցիները Էջմիածնից մեկնեցին 1765 թ. դեկտեմբերի 9-ին[546]:

Դեկտեմբերի 12-ին Սիմեոն Երևանցին նամակներ հղեց Զաքարիա արքեպիսկոպոսին և Հերակլ Բ թագավորին:

Զաքարիա արքեպիսկոպոսին հասցեագրված նամակում Ամենայն Հայոց հայրապետը հանդիմանում էր նրան, որ չնայած իր զգուշացումներին՝ Զաքարիան թույլ է տվել. որ իրեն խաբեն և հա-

[541] Դիվան, Գիրք Գ, էջ 336-337:
[542] Նույն տեղում, էջ 338:
[543] Նույն տեղում, էջ 342:
[544] Նույն տեղում, էջ 356:
[545] Նույն տեղում, էջ 357-358:
[546] Նույն տեղում:

վաստիացնեն, որ Իսրայել Զրաբերդցին էջմիածին կժամանի գարնանը: Զաքարիան չպետք է նրանց այս հավաստագիրը ուղարկեր էջմիածին: Սիմեոնը պատվիրում էր Զաքարիային, որ վերջին անգամ փորձի համոզել Իսրայելին՝ իր ուղեկցությամբ ներկայանալ էջմիածին: Մերժում ստանալու դեպքում Զաքարիան այլևս չպետք է մնա Գանձակում և պետք է վերադառնա Թիֆլիս՝ գանձակեցիներին վերադարձնելով իրենց հավաստագիրը[547]:

Հերակլ Բ-ին ուղղված նամակում Սիմեոնը տեղեկացնում էր, որ Աղվանից կաթողիկոսության աթոռի շուրջ ծայր առած վեճը վերացնելու նպատակով ինքը այդ աթոռը վիճարկողներին պատվիրել է ներկայանալ էջմիածին: Ներկայացել է միայն Հովհաննես Հասան-Զալալյանը, որի աջակիցներ Ղարաբաղի Իբրահիմ խանի և Ղարաբաղի հայերի նպատակը Աղվանից կաթողիկոսության և Գանձասարի վանքի շենացումն է: Ի տարբերություն Հովհաննես Հասան-Զալալյանի՝ Իսրայել Զրաբերդցին բազմիցս խաբել է իրեն՝ հետաձգելով այցելությունը էջմիածին: Այդ իրավիճակում ամենաճիշտը Հովհաննես Հասան-Զալալյանին Աղվանից կաթողիկոս հաստատելն է: Այդպես են կամենում նաև Աղվանից կաթողիկոսության բոլոր թեմերը և պարտավորվում հնազանդվել Գանձասարում նստող կաթողիկոսին: Սիմեոնը խնդրում էր Հերակլ Բ-ին՝ այլևս ունկնդրության չարժանացնել գանձակեցիներին և նրանց զրկել վրաց արքունիքի օժանդակությունից[548]:

Սիմեն Երևանցին, կշռադատելով բոլոր հանգամանքները, որոշեց Հովհաննես Հասան-Զալալյանին հաստատել Աղվանից կաթողիկոսության աթոռին և դրանով վերջ տալ եռամյա խլրտումներին ու պառակտմանը: Ուստի 1765 թ. դեկտեմբերի 25-ին Սիմեոն կաթողիկոսը եպիսկոպոսական ժողով գումարեց, որտեղ Հովհաննես Հասան-Զալալյանին հայրապետական գայիսոն և խաչ ընծայեց, իսկ պատարագից հետո էջմիածնի միաբանները եկեղեցական հանդեսով Հովհաննես Հասան-Զալալյանին ուղեկցեցին վեհարան, որտեղ նորաօծ կաթողիկոսը բոլոր եպիսկոպոսներից վեր բազմեցվեց: Այստեղ Սիմեոն Երևանցին հայտարարեց, որ Իսրայել Զրաբերդցուն զրկում է կաթողիկոսական աստիճանից և հասարակ հոգևորականի աստիճանի իջեցնում[549]:

[547] Դիվան, Գիրք Գ, էջ 359; Մատենադարան, ձեռ. N 2912, էջ132ա:
[548] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, էջ 52ա-54ա; ձեռ. N 2912, էջ132բ;ձեռ. N 2931, էջ104բ-105ա::
[549] Դիվան, Գիրք Գ, էջ 365-367:

Սիմեոն Երևանցին Հովհաննեսից պարտավորագիր վերցրեց, համաձայն որի վերջինս ցմահ պետք է մնար Գանձասարում և այլ վայր չպետք է տեղափոխեր կաթողիկոսական աթոռը: Հովհաննես Հասան-Զալալյանը պարտավորվում էր նաև իր ենթակայության տակ գտնվող թեմերը կառավարել համաձայն Հայ Առաքելական եկեղեցու կանոնների, հնազանդ լինել էջմիածնում նստող Ամենայն Հայոց կաթողիկոսին, Աղվանից կաթողիկոսության թեմերին չպատկանող հոգևորականներին եպիսկոպոս չձեռնադրել, Աղվանից կաթողիկոսությանը չպատկանող թեմեր նվիրակներ չուղարկել: Հովհաննես Հասան-Զալալյանը վերահաստատում էր Ներսես Զրաբերդցու հաստատած կանոնը, ըստ որի առանց Ամենայն Հայոց կաթողիկոսին տեղյակ պահելու և նրանից հաստատման կոնդակ ստանալու հնարավոր չէ Աղվանից նոր կաթողիկոսի աթոռակալումը[550]:

Նույն օրը Սիմեոն Երևանցին շրջաբերական կոնդակ գրեց Աղվանից կաթողիկոսության բոլոր թեմերին, որտեղ վերաշարադրելով Հովհաննես Հասան-Զալալյանի ընդունած պարտավորագրի կետերը, տեղեկացնում էր, որ վերջինս իր կողմից Աղվանից կաթողիկոս է հաստատվել: Սիմեոն Երևանցին պատվիրում էր հնազանդ լինել Հայ Առաքելական եկեղեցու կանոններին, որոնք հաստատվել են Գրիգոր Լուսավորչի և նրանից հետո Հայոց կաթողիկոսության գահը զբաղեցրած հայրապետների կողմից, իսկ այդ կանոնների համաձայն Աղվանից կաթողիկոսությունը ստորադաս է Ամենայն Հայոց կաթողիկոսությանը: Ըստ այդմ Աղվանից կաթողիկոսության եկեղեցիներում պատարագի ժամանակ սկզբում պետք է հիշատակվի սկզբում Ամենայն Հայոց, ապա միայն Աղվանից կաթողիկոսի անունը: Կոնդակի վերջում Սիմեոն Երևանցին հայտարարում էր, որ եթե ապագայում Աղվանից կաթողիկոսները վատնեն հոգևոր հասույթները և էջմիածնի դեմ ապստամբելու փորձեր կատարեն, ապա «հարկ է մեզ այնուհետև զձեզ վերստին տերունի առնել և զարդիւնս ձեր ի սեպհական մայրս մեր, ի Աստուածածէջ յԱթոռս բերել»[551]: Սիմեոն Երևանցին փաստորեն նկրտումներ ուներ ոչ միայն Շիրվանի թեմի, այլ նաև Աղվանից ամբողջ կաթողիկոսության նկատմամբ և սպառնում էր էջմիածնի հանդեպ Հովհաննես կաթողիկոսի անհնազանդության դեպքում «տերունի առնել» Աղվանից կաթողիկոսությունը կազմող բոլոր թեմերը:

[550] Դիվան, Գիրք Գ, էջ 368-369:
[551] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, էջ 56բ-57ա; ձեռ. N 2912, էջ 133ա-134ա:

Դեկտեմբերի 28-ին Հովհաննես կաթողիկոսը մեկնեց էջմիածնից: Սիմեոն Երևանցու հրահանգով նրան դեպի իր աթոռանիստ Գանձասար ուղեկցում էր Թիֆլիսի առաջնորդ Զաքարիան, որը պետք է Հովհաննես կաթողիկոսի հետ շրջագայեր Աղվանից կաթողիկոսությանը պատկանող թեմերում և աշխատեր ամրապնդել էջմիածնի կողմից հաստատված կաթողիկոսի դիրքերը: Զաքարիա արքեպիսկոպոսն իր հետ տանում էր Սիմեոն Երևանցու նամակները՝ ուղղված Ղարաբաղի, Շամախու, Շաքիի, Ղուբայի խաներին, որոնց խանությունների տարածքում կային Աղվանից կաթողիկոսության թեմեր: Այդ նամակներում Սիմեոն Երևանցին, հայտնելով Հովհաննես Հասան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս հաստատելու մասին, վերոհիշյալ խաներին խնդրում էր աջակցություն ցուցաբերել վերջինիս[552]:

Սիմեոն Երևանցու կողմից Իսրայել Զրաբերդցուն կաթողիկոսական կարգից զրկելու և Հովհաննես Հասան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս հաստատելու վերը նշված պատճառներից բացի կար նաև մեկը, որը եթե ոչ վճռական, ապա որոշակի դեր ունեցավ Սիմեոն Երևանցու կայացրած որոշման վրա: Դա Աստրախանի թեմի պատկանելության հարցն էր: Այդ հարցի շուրջ պայքար ծավալվել էր դեռ Ներսես Զրաբերդցի և Ղազար Ջահկեցի կաթողիկոսների միջև[553]: Չնայած էջմիածինը հրաժարվել էր ճանաչել Աղվանից կաթողիկոսության իրավունքները Աստրախանի թեմի նկատմամբ, սակայն այդ թեմի առաջնորդ Ստեփանոսը, որը եպիսկոպոս էր ձեռնադրվել Ներսես Զրաբերդցու կողմից, ենթարկվում էր Աղվանից կաթողիկոսությանը և հավաքված եկեղեցական հասույթները հանձնում էր Իսրայել Զրաբերդցու ներկայացուցիչներին՝ զանց առնելով Աստրախանում գտնվող էջմիածնի նվիրակին:

Հովհաննես Հասան-Ջալալյանի՝ Աղվանից կաթողիկոս հաստատվելու մասին տեղեկանալով՝ Շահվերդի խանը նամակ գրեց Հերակլ Բ-ին և փորձեց Իսրայել Զրաբերդցու համար ձեռք բերել վրաց արքունիքի հովանավորությունը[554]: Շահվերդի խանից բացի Հերակլ Բ-ին 1766 թ. հունվարի 9-ին համատեղ խնդրագիր ուղարկեցին նաև Իսրայելին սատարող Գանձակ քաղաքի, Գետաշեն գյուղի, Եղիշե առաքյալի, Խորանաշատի, Թարգմանչաց, Ամենափրկիչ վանքերի եպիսկոպոսները, Զրաբերդի, Գյուլիստանի,

[552] Դիվան, Գիրք Գ, էջ 369-370; Մատենադարան, ձեռ. N 2931, էջ 109ա-բ:
[553] Տես գլուխ 1,§ 2:
[554] Դիվան, Գիրք գ, էջ 414:

Գյանջաբասանի, Շամքորի, Գետաշենի ծորի մելիքները[555]: Խնդրագրում ասվում էր, որ համաձայն հանգուցյալ Ներսես կաթողիկոսի կտակի՝ իրենք կաթողիկոս են ճանաչում և հնազանդվում են միայն Իսրայելին: Էջմիածինն իրավունք չունի պարտադրել հրաժարվել իրենց ընտրած կաթողիկոսից. «Զի սուրբ Իշման տեղն Աթոռ է ամենայն հայոց, բայց այլ են աղուանք և այլ են հայք, որպես ոչ երբեք ունին մասն հրեայք ընդ սամարացիս, նոյնպես և մեք չունիմք ընդ նոսա զմասն»[556]:

Այսպիսով, Աղվանից կաթողիկոսական աթոռի համար հակամարտությունը տեղափոխվեց այլ հարթություն: Իսրայել Զրաբերդցուն աջակցող խմբավորումը, անհաջողություն կրելով էջմիածնում, դիմեց այդ ժամանակ Հարավային Կովկասի ամենաազդեցիկ ուժին՝ վրաց Հերակլ Բ թագավորին:

Հերակլ Բ-ն, խորամուխ չլինելով այս հակամարտության մեջ, նամակ գրեց Սիմեոն Երևանցուն, ուր հայտնում էր, որ իրեն Իսրայել Զրաբերդցու անունով բազմաթիվ ընդհանրագրեր են ներկայացրել, այդ պատճառով որոշել է գարնանը Իսրայելին ուղարկել էջմիածին նրա կաթողիկոսությունը հաստատող կոնդակ ստանալու[557]:

Նամակը ստանալուն պես Սիմեոն Երևանցին ուղերձով դիմեց Հերակլ Բ-ին և վրաց կաթողիկոս Անտոնին: Հերակլ Բ-ին ուղղված պատասխանում Սիմեոնը տեղեկացնում էր, որ Իսրայել Զրաբերդցին և նրա կողմնակիցները նամակով հայտարարել են, որ Աղվանից կաթողիկոսները երբեք ենթակա չեն եղել Հայոց հայրապետներին, էջմիածնի կաթողիկոսությունը բարձրագույն է Աղվանից կաթողիկոսությունից, իսկ Իսրայել Զրաբերդցին հոգևոր իշխանությամբ բնավ էլ չի զիջում Սիմեոն Երևանցուն: Այդպիսի պատասխան ստանալուց հետո ստիպված է եղել էջմիածնի կաթողիկոսներին տրված իշխանությամբ կարծեցյալ կաթողիկոսությունից կարգալույծ անել Իսրայել Զրաբերդցուն և Գանձասարում կաթողիկոս հաստատել Հովհաննես Հասան-Ջալալյանին[558]:

Անտոն կաթողիկոսին գրված նամակում նույնը վերաշարադրելով՝ Սիմեոնը խնդրում էր աջակցել իրեն և Հերակլին խորհուրդ տալ՝ բավարարել իր խնդրանքը[559]:

[555] Մատենադարան, Կթղկ դիվան, թղթ. 257, վավ. 250:
[556] Նույն տեղում:
[557] Մատենադարան, ձեռ. N 2912, էջ 108բ:
[558] Նույն տեղում, էջ 108բ-109ա:
[559] Նույն տեղում:

Իսրայել Զրաբերդցու աջակիցների շրջանակը նեղացնելու նպատակով Սիմեոն Երևանցին բանադրեց նրան: 1766 թ. ապրիլի 10-ով թվագրված բանադրագրում Իսրայելը մեղադրվում էր եկեղեցիներում Ամենայն Հայոց կաթողիկոսի անունը պատարագի ժամանակ չհիշատակելու, էջմիածնի գանձանակի հավաքելն արգելելու, Աստրախանն իրեն ենթակա թեմ դարձնելու և այնտեղ նվիրակ ուղարկելու, իր տրված շրջաբերական կոնդակով Գանձակում ժողովարարություն անողից կոնդակը խլելու ու պատռելու, Գանձասարի վանքը կողոպտելու համար[560]: Այս մեղադրանքների մի մասն ուռճացված էր, մյուս մասը չէր համապատասխանում իրականությանը:

Իսրայել Զրաբերդցու հրամանով իրեն ենթակա եկեղեցիներում Սիմեոն Երևանցու անվան հիշատակումը և էջմիածնի գանձանակի հավաքումը դադարեցնելը պատասխան քայլ էր, քանի որ Սիմեոն Երևանցին, մերժելով Իսրայել Զրաբերդցուն կաթողիկոս ճանաչել, հրամայել էր Աղվանից բոլոր թեմերին՝ չհնազանդվել նրան: Ամենայն Հայոց և Աղվանից կաթողիկոսությունների միջև Աստրախանի համար պայքարը առաջ էր եկել դեռ մինչև Սիմեոն Երևանցու և Իսրայել Զրաբերդցու կաթողիկոսացումը: Սիմեոն Երևանցու կոնդակով՝ Գանձակում ժողովարարության արգելքը նույնպես պատասխան էր Սիմեոնի պահանջներին, ինչպիսին էր, օրինակ, Աստրախանում Իսրայելի նվիրակ Խաչատուրից նրա հավաքած գումարը բռնագրավելու հրամանը: Ինչ վերաբերում է Գանձասարի վանքը կողոպտելուն, ապա սա բացարձակ հերյուրանք էր, քանի որ Գանձակում կաթողիկոս օծվելուց հետո Իսրայելը երբեք չէր եղել Գանձասարում:

Վրաց Հերակլ Բ թագավորին և Անտոն կաթողիկոսին գրված նամակները և Իսրայել Զրաբերդու բանադրագիրը Թիֆլիս՝ վրաց արքունիք, տանելու պարտականությունը Սիմեոն Երևանցին դրեց իր տեղապահ Մկրտիչ վարդապետի վրա: Վերջինիս հանձնարարվեց համոզել Հերակլ Բ-ին՝ չսատարել Իսրայելին և նրա կողմնակիցներին՝ հարցի լուծման իրավասությունը թողնելով Սիմեոն Երևանցուն: Այսպիսի հանձնարարականով տեղապահ Մկրտիչ վարդապետը 1766 թ. ապրիլի 14-ին մեկնեց Թիֆլիս[561]: Տեղապահ Մկրտիչ վարդապետի հետ հանդիպում ունենալուց հետո Հերակլը 1766 թ. մայիսին հրամայեց Երևանի և Գանձակի խաներին՝

[560] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, էջ 31բ-32ա, ձեռ. N 2912, էջ 127ա-130բ:
[561] Մատենադարան, ձեռ. N 2931, էջ 114ա,բ:

չխառնվել Աղվանից կաթողիկոսական աթոռի շուրջ ծագած վեճին, ինչպես նաև Թիֆլիս կանչեց Իսրայել Զրաբերդցուն[562]:

Ճամփախափանքի պատճառով ձմեռը Նախիջևանում անցկացնելով՝ Հովհաննես կաթողիկոսը և Թիֆլիսի առաջնորդ Զաքարիան 1766 թ. գարնանը միայն կարողացան Ղարաբաղ հասնել: Այստեղ նրանց մեծ շուքով դիմավորեցին Իբրահիմ խանն ու Ղարաբաղի մելիքները[563]: Իբրահիմ խանը մի հրովարտակ հրապարակեց, որով Ղարաբաղի հայ ավագանուն ու ժողովրդին հրամայում էր կաթողիկոս ճանաչել և հնազանդվել միայն Հովհաննես Հասան-Զալալյանին և եկեղեցական տուրքերը հանձնել նրան[564]:

Ղարաբաղ ժամանելով՝ Հովհաննես կաթողիկոսը և Զաքարիա արքեպիսկոպոսը համատեղ նամակ գրեցին Հերակլ Բ-ին՝ խնդրելով տեղի չտալ Իսրայելի նկրտումներին: Իբրահիմ խանը ևս նույն խնդրանքով նամակ հղեց վրաց գահակալին[565]: Այս նամակները Թիֆլիս տարավ Հերակլ Բ-ի առջև Հովհաննես Հասան Զալալյանի շահերը ներկայացնել լիազորված եղիազար վարդապետը:

1766 թ. մայիս-հունիս ամիսներին Հերակլ Բ-ն մի կողմից Իսրայել Զրաբերդցու, Շահվերդի խանի որդու և գանձակեցի մի քանի անվանի անձանց, մյուս կողմից տեղապահ Մկրտիչ վարդապետի, Հովսեփ Արղության վարդապետի և Հովհաննես Հասան-Զալալյանի ներկայացուցիչ Եղիազարի մասնակցությամբ երեք ժողով էր գումարել: Գեորգի արքայորդին և մի քանի վրացի իշխաններ պաշտպանեցին Իսրայել Զրաբերդցուն, սակայն Հերակլ Բ-ն այս ժողովներում ոչ մի վճիռ չընդունեց[566]: Տագնապած Սիմեոն Երևանցին 1766 թ. հունիսի 17-ին նամակ գրեց Հերակլին, որտեղ խնդրում էր մերժել Իսրայելին և չաջակցել նրան[567]: Հույս չունենալով, որ իր այս նամակը ցանկալի ազդեցություն կունենա, նա նույն ամսին դիմում է Նոր Զուղայի քալանթար Սարգսին՝ խնդրելով Քերիմ խան Զենդի մոտ Աղվանից կաթողիկոսության խնդրի արծարծման դեպքում սատարել էջմիածնի կողմից հաստատված Հովհաննես Հասան-Զալալյանին[568]: Նույն թվականի նոյեմբերի 10-ի նամակով

[562] Մատենադարան, ձեռ. N 2931, էջ 118ա:
[563] Դիվան, Գիրք Գ, էջ 457:
[564] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ.219:
[565] Դիվան, Գիրք Գ, էջ 458:
[566] Մատենադարան, ձեռ. N 2931, էջ 120բ:
[567] Նույն տեղում, ձեռ. N 2912, էջ142բ-143ա; Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, էջ 79բ-81ա:
[568] Նույն տեղում, ձեռ. N 2931, էջ 129բ: Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դաղեանի, Մաս Ա, վավ. 21, էջ 20:

Սիմեոն Երևանցին Սարգիս քալանթարին պատվիրում էր Քերիմ խանից հրովարտակ ստանալ, որով կարգելվեր Հարավային Կովկասի բոլոր աշխարհիկ իշխողներին՝ խառնվել հայոց եկեղեցու խնդիրներին[569]:

Մկրտիչ վարդապետի՝ Թիլիսից Սիմեոն Երևանցուն գրված նամակից տեղեկանում ենք, որ Հերակլ Բ-ն ընդունել էր Սիմեոն Երևանցու մենաշնորհային իրավունքը՝ ըստ իր հայեցողության կարգավորել Աղվանից կաթողիկոսության աթոռի շուրջ ծավալված հակամարտությունը[570]:

Երկու այլ աղբյուր որոշակի լրացումներ են անում Մկրտիչ վարդապետի հիշյալ նամակին: Առաջին աղբյուրի համաձայն հուլիսի 15-ին Հերակլ Բ-ն հայտարարել է կողմերին. «Զո՞ ոք դուք ընտրէք և առ սրբազան կաթուղիկոսն առաքէք և ի ձեռն նորին նստուցանէք ի վերայ ձեր՝ զայն է լինելոց կաթուղիկոս ձեր»[571]:

Երկրորդ աղբյուրը Հերակլ Բ թագավորի 1766 թ. հուլիսի 5-ի հրովարտակն է, որտեղ հայտարարվում է, թե կաթողիկոս պետք է հաստատվի նա, ով ստանալով Աղվանից կաթողիկոսության թեմերի հավանությունը՝ կնստի Գանձասարի վանքում և կջանա վերականգնել Աղվանից կաթողիկոսության շուքն ու հեղինակությունը[572]:

Այսպիսով, Հերակլ Բ-ն էջմիածնին հարցի լուծման մենաշնորհ չէր տալիս: Համաձայն վերը շարադրված երկու աղբյուրների՝ վրաց գահակալը ցանկանում էր, որ Աղվանից կաթողիկոսության ներսում մեկ թեկնածուի շուրջ համաձայնություն կայացվեր, և ապա միայն ընդհանուր թեկնածուն հաստատվեր էջմիածնի կաթողիկոսի կողմից:

Մեկ կարևոր պահանջ էլ էր առաջ քաշում վրաց արքան. կաթողիկոս պետք է ճանաչվեր միայն Գանձասարի վանքում հաստատվելու համաձայնություն տվողը[573]: Ահա այս պահանջը ձեռնտու էր Սիմեոն Երևանցուն և Հովհաննես Հասան-Ջալալյանին, քանի որ Շահվերդի խանի ճնշման տակ Իսրայել Ջրաբերդցին արդեն կտրականապես հրաժարվել էր հաստատվել Գանձասարում:

Պետք է նշել նաև, որ վրաց արքունիքի միջամտությունը ավելի էր խորացնում Աղվանից կաթողիկոսության ճգնաժամը, քանի որ վրաց արքունիքի ներսում՝ հանձին Գեորգի արքայորդու և վրացի

[569] Մատենադարան, ձեռ N 2931, էջ 138բ:
[570] Նույն տեղում, էջ 121ա:
[571] Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դաղեանի, Մաս Ա, վավ. 21, էջ 20:
[572] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ.150:
[573] Նույն տեղում:

մի շարք իշխանների, ի հայտ եկան Իսրայել Ջրաբերդցուն սատարող նոր հզոր ուժեր: Այդ ուժերի երևան գալն էր պատճառը, որ Թիֆլիսում Իսրայելի բանադրագիրը չհրապարակվեց[574]:

Թիֆլիսում տեղի ունեցած այս իրադարձությունից անմիջապես հետո կողմերի միջև սուր պայքար ծավալվեց Շիրվանի թեմի համար:

Սիմեոն Երևանցին օգոստոսի սկզբին նամակներ գրեց Շամախու և Շաքիի ազդեցիկ հայերին, ուր հանձնարարում էր կաթողիկոս ճանաչել և օժանդակել էջմիածնի կողմից հաստատված Հովհաննես Հասան-Ջալալյանին[575]: Սիմեոնը նամակ գրեց նաև Հովհաննեսին և տեղեկացրեց Շիրվանի առաջնորդ Իսահակ եպիսկոպոսի կասկածելի վարվելակերպի մասին: Վերջինս Հովհաննես Հասան-Ջալալյանին հայտնում էր, որ նրան է ենթարկվում, իսկ Իսրայել Ջրաբերդցուն հավաստիացնում էր, թե նա է իրենց կաթողիկոսը: Սիմեոնը Հովհաննեսին պատվիրեց անձամբ մեկնել Շամախի և սաստել Իսահակին: Ամենայն Հայոց կաթողիկոսը գրում էր, որ այդ ուղևորության ժամանակ նրան կուղեկցի և աջակցություն ցույց կտա Ռուսաստան մեկնող Դավիթ վարդապետը[576]:

Հովհաննես կաթողիկոսն անձամբ չմեկնեց Շիրվան, այլ երկու հոգևորականների, Շաքիի ու Շամախու հայերին ուղղված կոնդակներ տալով, ուղարկեց Դավիթ վարդապետի հետ: 1766 թ. աշնանը Դավիթ վարդապետը և Հովհաննես կաթողիկոսի ներկայացուցիչները, ժամանելով Շաքի, լավ ընդունելություն գտան տեղի հայ համայնքում. Սիմեոն Երևանցու՝ Շաքիի խանին ուղղված նամակը ներկայացվել էր Հուսեին խանին, որը նույնպես հավանություն էր տվել Հովհաննես Հասան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս հաստատելուն:

Իսրայել Ջրաբերդցին, տեղեկանալով Դավիթ վարդապետի և Հովհաննես Հասան-Ջալալյանի ներկայացուցիչների Շաքի գալու մասին, մեկնեց Շաքի՝ իր հետ տանելով վրաց թագաժառանգ Գեորգիի՝ Շաքիի և Շամախու խաներին ուղղված նամակները, որոնցում թագաժառանգը գրում էր, որ իր հայրը ցանկանում է Աղվանից կաթողիկոս տեսնել Իսրայել Ջրաբերդցուն և կոչ էր անում խաներին՝ իրենց կողմից ճանաչել Իսրայելին կաթողիկոս[577]:

[574] Մատենադարան, ձեռ. N 2931, էջ 148բ:
[575] Դիվան, Գիրք Գ, էջ 505:
[576] Նույն տեղում, էջ 461; Մատենադարան,ձեռ. N 2931, էջ 121ա, բ:
[577] Նույն տեղում, էջ 148բ:

Շաքիում Իսրայելին թույլ չտվեցին նույնիսկ եկեղեցի մտնել, և նա ներկայացավ Հուսեին խանին՝ նրան հանձնելով Գեորգի արքայազնի նամակը և 50 թուման կաշառք տալով՝ խնդրեց, որ իրեն ենթարկվելու և հնազանդվելու հրաման տալ տեղի հայ համայնքին[578]: Խանը ստիպեց Հովհաննես Հասան-Ջալալյանի անունով հավաքված ամբողջ գումարը տալ Իսրայել Զրաբերդցուն: Վերջինս, դրամը վերցնելով, Շաքիից մեկնեց Շամախի: Ճանապարհին նրան հանդիպեց Շիրվանի առաջնորդ Իսահակ եպիսկոպոսը, որը մեծ շուքով Իսրայելին ուղեկցեց Շամախի[579]:

Այս ամենի մասին տեղեկանալով՝ Սիմեոն Երևանցին 1766 թ. դեկտեմբերի 14-ին բանադրեց Շիրվանի առաջնորդ Իսահակին[580]: Առանձին կոնդակով դիմելով Շամախու հայ համայնքին՝ խստիվ պատվիրեց այլևս չընդունել Իսրայել Զրաբերդցուն և իրենց կարգալույծ առաջնորդին: Նմանատիպ պատվերներով կոնդակներ Ամենայն Հայոց հայրապետը գրեց նաև Բաքվի (1767 թ. մարտ) և Շաքիի (1767 թ. ապրիլ) հայ համայնքներին[581]:

Հովհաննես Հասան-Ջալալյանին 1766 թ. դեկտեմբերի 25-ով թվագրված նամակում Սիմեոնը պատվիրեց հանգիստ չնստել Գանձասարի վանքում, քանի որ այդ ժամանակ նրա հակառակորդ Իսրայել Զրաբերդցին ակտիվ կերպով ջանում է իր կողմը քաշել Աղվանից կաթողիկոսության թեմերը: Սիմեոնը կշտամբում էր Հովհաննեսին անգործության մատնվելու և նրան օժանդակելու համար Գանձասար եկած Դավիթ վարդապետի հետ անձամբ Աղվանից կաթողիկոսության թեմերում շրջագայելու փոխարեն երկու հոգևորականներ ուղարկելու համար. «Սիրտ քոյ եթէ քոյ աղագաւ ոչ զաւիցի, դոցին զի ա՞րդ ցաւի»[582]:

1767 թ. Իսրայել Զրաբերդցուն սատարող հենարանը զգալիորեն թուլացել և սկսել էր ներքուստ քայքայվել: 1767 թ. օգոստոսին Իբրահիմ խանը գրավեց և կողոպտեց Գանձակը[583]: Գյուլիստանի մելիք Հովսեփը, որն Իսրայել Զրաբերդցու հզոր աջակիցներից մեկն էր, գժտվելով Շահվերդի խանի հետ, դեռ 1767 թ. սկզբին վերադարձել էր Ղարաբաղ: Վերադառնալու ցանկություն ուներ նաև Զրաբերդի մելիք Ադամը[584]: Իսրայելի համար Գյուլիստանի և

578 Դիվան, գիրք Գ, էջ 610:
579 Նույն տեղում:
580 Մատենադարան, ձեռ. N 2912, էջ 155բ:
581 Նույն տեղում, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, էջ 86ա,բ:
582 Նույն տեղում, էջ 54ա,բ:
583 А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, с. 154.
584 Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 3, Գ. II, էջ 304-306:

Զրաբերդի հզոր մելիքների աջակցությունից զրկվելը հավասարազոր էր կաթողիկոսական աթոռի համար պայքարում պարտության: Ահա այդ պատճառով էլ Իսրայելը շտապեց միանալ մելիք Ադամին և նրա հետ եկավ Ղարաբաղ, ներկայացավ Իբրահիմ խանին, որը նրան պատվով ու մեծարանքով ընդունեց[585]:

Մելիք Ադամն ու նրա կամակից Դիզակի մելիք Եսային ցանկանում էին հաշտեցնել Իսրայել Զրաբերդցուն Հովհաննես Հասան-Ջալալյանի հետ, որպեսզի կաթողիկոսական կառավարումը երկու մասի բաժանելով՝ կեսը հանձնվի Իսրայելին[586]:

1767 թ. նոյեմբերի 1-ին Սիմեոն Երևանցին նամակներ գրեց Ղարաբաղի մելիքներին, Իբրահիմ խանին, Հովհաննես Հասան-Ջալալյանին:

Մելիքներին ուղղված նամակում Սիմեոն Երևանցին նորից պատվիրում էր Հովհաննես Հասան-Ջալալյանի հետ Իսրայել Զրաբերդցուն հաշտեցնելու փորձ չկատարել[587]:

Իբրահիմին նա հիշեցնում էր, որ երեք տարի հենց Իբրահիմն է ջանացել Հովհաննեսին կաթողիկոսացնել և չպետք է ավերի իր աշխատանքի պտուղները[588]:

Հովհաննեսին խստիվ պատվիրում էր չհաշտվել Իսրայելի հետ. «Դու ի տեղդ մի կամիցիս բնաւ հաշտիլ, զի զայսքան սերս մեր յատելութիւն փոխարկես»[589]:

1768 թ. գարնանը Իբրահիմ խանին գրված ուղերձում Սիմեոն Երևանցին խնդրում էր Իսրայելին և Հովհաննեսին միասին ուղարկել Էջմիածին, որպեսզի ինքն անձամբ հաշտեցնի այդ երկուսին:

Այս բովանդակությամբ նամակներ Ղարաբաղ ուղարկելու պատճառն այն էր, որ Սիմեոն Երևանցին երկյուղում էր, թե Իսրայել Զրաբերդցու և Հովհաննես Հասան-Ջալալյանի հաշտությունից հետո Աղվանից կաթողիկոսության վրա իր վերահսկողությունն ու ազդեցությունը զգալիորեն կպակասի:

Սիմեոն Երևանցու այս մտածելակերպի հետ էր կապված նաև Կ. Պոլսի պատրիարքի եպիսկոպոսական ձեռնադրության կապակցությամբ առաջացած բարդությունը:

1764 թ. Կ. Պոլսի պատրիարք Հակոբի մահից հետո պատրիարք ընտրվեց Գրիգոր Բ Պասմաջյանը (1764-1773): Սակայն Գրիգորը

585 Գրիգոր Տեր-Հովհաննիսյան (Մուրացան), Բաղդասար մետրապոլիտի կենսագրությունը, «Փորձ» ամսագիր, Թիֆլիս, 1880, N 5, էջ 143:
586 Դիվան, գիրք Ը, Մաս II, Թիֆլիս, 1908, էջ 26:
587 Նույն տեղում, էջ 26-27:
588 Նույն տեղում, էջ 27-28:
589 Նույն տեղում, էջ 28-31:

եպիսկոպոս չէր և ձեռնադրվելու համար չէր ցանկանում գալ էջմիածին: Նա նամակով խնդրել էր Սիմեոն Երևանցուց՝ թույլ տալ եպիսկոպոս ձեռնադրվել Կ. Պոլսում, տեղի եպիսկոպոսների կողմից: Կ. Պոլսի հայ համայնքի առաջնորդները նունն էին խնդրել՝ պատճառաբանելով, թե պատրիարքին Բարձր Դուռը թույլ չի տա Օսմանյան կայսրության սահմաններից դուրս գալ[590]: Սակայն Սիմեոնը մերժեց այդ խնդրանքները՝ պատրիարքին ուղղված պատասխանում գրելով. «Ես որպե՞ս կարեմ լինիլ ցանկաքակ առաջնոյն կանոնաց և չար օրինակ ապագայից»[591]:

Գրեթե 4 տարի հետո այս հարցը վերարծարծվեց: Պատրիարքը Կ. Պոլսի նվիրակ Զաքարիա Կաղզվանեցու միջոցով խնդրում էր Սիմեոն Երևանցուն՝ Կ. Պոլիս ուղարկել Աղվանից կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանին, որն էլ իրեն եպիսկոպոս կձեռնադրեր: Սիմեոնը այս խնդրանքը նույպես մերժեց՝ նվիրակ Զաքարիային հասցեագրված նամակում պարզաբանելով, որ որ դա շատ վտանգավոր նախադեպ կարող է դառնալ. «Ապա յետ մեկ անգամ գտանելոյն զիունն և ոտնակոխ առնելոյն, որքան հեշտանայ և լայն և համարձակ ճանապարհ լինի ապագայիցն»: Նա վախենում էր ի վնաս էջմիածնի Աղվանից կաթողիկոսության վարկի և ազդեցության աճից՝ որպես օրինակ ներկայացնելով Աստրախանի հայ համայնքի և էջմիածնի միջև տեղ գտած սառնությունը, ինչի պատճառը, ըստ Սիմեոնի, Գանձասարի կաթողիկոսի կողմից ձեռնադրված եպիսկոպոսն էր[592]:

Աղվանից կաթողիկոսության նկատմամբ խանդոտ վերաբերմունքի և Հովհաննես Հասան-Ջալալյանին քամահրելու արտահայտություն էր նաև Սուքիաս ու Բարսեղ վարդապետների բանադրումը Սիմեոն Երևանցու կողմից 1768 թ.: Բանադրագրում Սիմեոնը հայտարարում էր, որ բանադրում է նրանց, քանի որ էջմիածնի թեմականներ լինելով՝ խախտել են եկեղեցական կանոններն ու օրենքները և եպիսկոպոս ձեռնադրվել Աղվանից կաթողիկոս Հովհաննեսի կողմից, որը «լոկ անումբ է միայն կաթուղիկոս»[593]: Իրականում այս երկու հոգևորականները էջմիածնի թեմականներ չէին, այլ Աղթամարի կաթողիկոսության ներկայացուցիչներ. Սուքիասը Մատնավանից առաջնորդն էր, իսկ Բարսեղը Թոմայի վանքի միաբան էր: Նրանք, պատճառաբանելով, «թէ Աղթամարի կաթու-

590 Մատենադարան, ձեռ. N 2912, էջ 170ա:
591 Նույն տեղում:
592 Նույն տեղում, էջ 217բ; Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, էջ 130ա-132ա:
593 Նոյն տեղում, ձեռ. N 2912 էջ 181բ:

ղիկոսն ամեն տեղ ոչ ընդունէ», 1767 թ. սեպտեմբերի 30-ին եպիսկոպոս ձեռնադրվելու համար դիմել էին Հովհաննես Հասան-Ջալալյանին՝ երդվելով, որ եթե «մեք հայոց կաթուղիկոսի (Սիմեոն Երևանցու-Լ. Մ.) թէմի և վիճակի մարդ լիմիմք, ետ և յառաջ մեկ խօսք և բան լինի, մեք անընդունակ լինիմք հայոց Աղուանից և Աղթամարայ»[594]:

Սիմեոն Երևանցին սքողում էր իր կողմից բանադրվածների Աղթամարի կաթողիկոսության հոգևորականներ լինելը, քանի որ հակառակ դեպքում, հետևելով հենց իր Սիմեոնի փաստարկումներին, այդ հոգևորականներին բանադրելու իրավունքը պատկանում էր ոչ թե Ամենայն Հայոց կաթողիկոսին, այլ Աղթամարի կաթողիկոս Թովմա Բ Աղթամարցուն (1761-1783):

Այս առումով պատահական չէ, որ Հովսեփ Էմինի հետ 1767 թ. հոկտեմբերին Գանձասարում հանդիպման ժամանակ Հովհաննես կաթողիկոսը դառնությամբ էր արտահայտվում Սիմեոն Երևանցու մասին: Սիմեոն կաթողիկոսի վարվելակերպը, ինչպես նաև Հովհաննես Հասան-Ջալալյանին ուղղված նամակներում մեծամիտ, ուսուցողական տոնը վիրավորական էր վերջինիս համար: Առանձնապես հետաքրքիր է այն, որ Էմինի հետ զրույցի ժամանակ Հովհաննեսը արհամարհանքով էր արտահայտվում Սիմեոնի ցածր ծագման վերաբերյալ: Պատկանելով Հասան-Ջալալյանների իշխանական տոհմին Հովհաննեսի համար առանձնապես ծանր էր, որ ստիպված է տանել ավելի ցածր ծագում ունեցող մարդու մեծամիտ և քամահրական վերաբերմունքն իր նկատմամբ[595]:

Ղարաբաղ գալուց հետո Իսրայել Զրաբերդցին անհաջող փորձ կատարեց՝ նորմալացնելու Սիմեոն Երևանցու հետ հարաբերությունները: 1769 թ. հոկտեմբերի 16-ին գալով Գանձակ՝ նա խորհրդակցություն է գումարում Գանձակի խանության ազդեցիկ հայերի մասնակցությամբ: Խորհրդակցության մասնակիցներն իրենց դժգոհությունն են արտահայտում էջմիածնի հետ շարունակվող հակամարտության կապակցությամբ: Իսրայել Զրաբերդցին պատասխանում է. «Ես ոչ ունիմ ընդիմանալ այդպիսոյ խելամերձ բանի, այլ խոնարհիմ յօժարութեամբ զայն կէտ, որ զետեղեալ պահանջին օրենք սահմանի խոնարհութեան»: Սակայն Իսրայելը պատրաստակամ էր ենթարկվել Սիմեոն Երևանցուն միայն այն դեպքում, եթե «նա թուղթ մի գրեսցէ սիրոյ»: Իսրայելը հայտարարում էր նաև, որ Գանձակի խանության եկեղեցիներում

594 Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դաղեանի, Մաս Ա, վա. 25, էջ 21:
595 А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, с. 182-184.

կվերականգնվի էջմիածնի գանձանակադրամի հավաքումը: Խորհրդակցության մասնակիցները հավատարմատար են ընտրում Շամքորի մելիք Ռոստոմին, որը 1769 թ. դեկտեմբերի 5-ի նամակով Սիմեոն երևանցուն ծանուցելով խորհրդակցության արդյունքների մասին խնդրում է ուղերձ հղել Իսրայել Զրաբերդցուն[596]:

Սիմեոն Երևանցին իր պատասխանում, որն ուղղված էր ոչ թե կոնկրետ անձանց, այլ Գանձակի խանության հայերին, հայտարարում է, թե քանի որ գանձակեցիները խնդրում են ներել Իսրայելին, և Իսրայելն էլ զղջում է, ապա հրամայում է Իսրայելին գալ էջմիածին, որտեղ էլ թողություն կստանա: Իսկ մինչ այդ Գանձակի խանության եկեղեցիներում պատարագի ժամանակ պետք է դադարեցվի դեռևս բանադրանքի տակ գտնվող Իսրայելի անվան հիշատակումը և դրա փոխարեն պետք է սկզբում հիշատակվի Ամենայն Հայոց, ապա Աղվանից Հովհաննես կաթողիկոսների անունները[597]:

Սիմեոն Երևանցու այս պահանջների հետ Իսրայել Զրաբերդցին չէր կարող համաձայնվել, քանի որ նրա հիմնական նպատակը ոչ թե բանադրանքից ազատվելն էր, այլ Սիմեոն Երևանցու կողմից Աղվանից կաթողիկոս ճանաչվելը, իսկ Սիմեոնի պատասխան կոնդակում պատարագի ժամանակ Հովհաննես Հասան-Ջալալյանի անվան հիշատակման պահանջից պարզ էր, որ էջմիածինը շարունակում է Աղվանից կաթողիկոս ճանաչել Հովհաննես Հասան-Ջալալյանին: Այդ պատճառով էջմիածնի հետ Իսրայել Զրաբերդցու և Գանձակի խանության հայերի միջև փոխհամաձայնության եզրեր գտնելու այս փորձը ձախողվեց: Իսրայելը չմնաց Գանձակում, այլ նորից վերադարձավ Ղարաբաղ: Քանի որ Զրաբերդի մելիք Ադամը, փոխելով իր դիրքորոշումը, դարձել էր Հովհաննեսի կողմնակիցը, Իսրայելը Զրաբերդի մելիքությունում գտնվող երից Մանկանց վանքից տեղափոխվեց Ամարասի վանքը[598]: 1770 թ. եպիսկոպոս ձեռնադրելով և նույն գավառի առաջնորդ հաստատելով Սիմեոն Երևանցու կողմից բանադրված Ստեփանոս վարդապետին[599]:

Իսրայել Զրաբերդցու դիրքերի թուլացման հետ թուլացան նաև նրա աջակից Շիրվանի թեմի առաջնորդ Իսահակ եպիսկոպոսի դիրքերը, որը ևս ցանկանում էր նորմալացնել հարաբերություններն էջմիածնի հետ: Ահա այդ նպատակով 1767 թ. շամախեցիները դիմեցին Հովհաննես Հասան-Ջալալյանին խնդրելով բանադ-

596 Մատենադարան, Արխիվ Ալ. Երիցյանի, թղթ. 156, վավ. 224:
597 Նույն տեղում, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, կոնդակ N 335, էջ 134բ-140ա:
598 Նույն տեղում, ձեռ. N 4331, էջ 53ա:
599 Նույն տեղում:

ռանքից արձակել իրենց առաջնորդ Իսահակին: Հովհաննեսը, այդ խնդրանքը մերժելով, պատասխանել էր, թե բանադրանքից արձակվելու համար Իսահակը պետք է գնա էջմիածին և ներում ու թողություն հայցի Ամենայն Հայոց կաթողիկոսից[600]:

Տեսնելով, որ Իսրայելը Ղարաբաղում հաջողության չի հասնում, նամավանդ տեղեկանալով, որ Սիմեոն Երևանցին մտադիր է Շիրվանի նոր առաջնորդ նշանակել, Իսահակը 1770 թ. անձամբ եկավ Ղարաբաղ և խնդրեց Իբրահիմ խանին ու մելիք Հովսեփին միջնորդել Սիմեոն Երևանցու առջև, որպեսզի վերջինս ների և թողություն տա իրեն: Սիմեոնը չմերժեց Իբրահիմ խանին և մելիք Հովսեփին, մանավանդ Իսրայելին աջակցողների խմբից Իսահակի դուրս գալը Իսրայելին զրկում էր Շիրվանի հարուստ թեմից հավաքվող նյութական միջոցները տնօրինելուց:

1770 թ. օգոստոսի կոնդակով Սիմեոն Երևանցին Իսահակին արձակեց բանադրանքից: Ստանալով թողության կոնդակը Իսահակը շտապեց էջմիածին գալ և 1770 թ. սեպտեմբերին ներկայանալով Սիմեոն Երևանցուն նրանից Շիրվանի հայերին ուղղված կոնդակ ստացավ, որով Իսահակը վերահաստատվում էր Շիրվանի առաջնորդ: Սիմեոնը կոնդակով պատվիրում էր շիրվանցիներին. «Դուք պարտիք նախապես սրբոյ Աթոռոյս հնազանդիլ և զսա դիտել ձեզ հաւատոյ մայր և գլուխ, Հայրապետն սորին ձեզ պապ և ապա սուրբ Աթոռն Գանձասար»:

Վերջում, անդրադառնալով 1767 թ. Հովհաննես Հասան-Ջալալյանին ուղղված շամախեցիների դիմումին, Սիմեոն Երևանցին շեշտում էր, որ բանադրվածը միայն ուղղակի բանադրողից կարող է արձակում ստանալ դրանով իսկ բացառելով Իսահակի արձակումը անմիջական հոգևոր պետի Աղվանից Հովհաննես կաթողիկոսի կողմից[601]:

Շիրվանի առաջնորդարանի պարտքերը մարելու համար Սիմեոն Երևանցին Իսահակ եպիսկոպոսին Աղվանից կաթողիկոսության այլ թեմերում ժողովարարության կոնդակ տվեց: Այս կաթողիկոսությունում ժողովարարություն անելու կոնդակ տալը բացահայտ ցույց էր տալիս, որ Սիմեոնն իրեն իրավունք էր վերապահում տնօրինել Աղվանից կաթողիկոսության գործերը Հովհաննես Հասան-Ջալալայանին թողնելով միայն իր հրամանները տեղում իրականացնողի երկրորդական դերը:

600 Դիվան, Գիրք Գ, էջ 770-776:
601 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, կոնդակ N 364, էջ 148բ-149ա; ձեռ. N 2912, էջ 240բ-243ա:

Իսրայել Զրաբերդցուն զրկելով Շիրվանի թեմի աջակցությունից՝ Սիմեոն Երևանցին վճռական քայլեր կատարեց, որպեսզի ստիպի Ղարաբաղի մելիքներին դադարեցնել Իսրայելին օժանդակել: 1770 թ. նոյեմբերին Սիմեոնը կոնդակ գրեց՝ ուղղված Ղարաբաղի մելիքներին՝ կտրականապես հրամայելով Գանձասարի վանքը իրենց կաթողիկոսական կենտրոն համարել և անվերապահորեն հնազանդվել այնտեղ նստող Հովհաննես Հասան-Ջալալյանին[602]: Կոնդակը մելիքներին հանձնել և Սիմեոնի հրամանների իրականացմանը հետևել հանձնարարվեց Ամենայն Հայոց կաթողիկոսի հավատարմատար նշանակված Հովսեփ վարդապետ Արղությանին[603]:

Իրեն վստահված առաքելությունը Հովսեփ Արղությանը հաջողությամբ իրականացրեց: Նա կարողացավ փոխել Իսրայել Զրաբերդցու գլխավոր աջակից մելիք Ադամի վերաբերմունքը, որը Հովհաննես Հասան-Ջալալյանի հակառակորդից դարձավ նրա աջակիցը և նույնիսկ սկսեց համոզել մյուս մելիքներին՝ ենթարկվել էջմիածնի պատգամին[604]:

Այդ մասին տեղեկանալով՝ Սիմեոն Երևանցին 1771 թ. գրած կոնդակով ներեց մելիք Ադամին՝ անցյալում Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանները զանց առնելու համար: Ապա Սիմեոնը, հրահանգելով մելիք Ադամին՝ համոզել Իսրայել Զրաբերդցուն գալ էջմիածին՝ գրեց, թե ըստ մելիքների ցանկության կտնօրինի Իսրայելի ճակատագիրը[605]:

Իսրայել Զրաբերդցին, երկյուղելով, որ իրեն բռնի կուղարկեն էջմիածին, նույն թվականին մեկնեց Թիֆլիս և վայելելով թագաժառանգ Գեորգիի հովանավորությունը, նորից աղերսեց Հերակլ Բ-ին՝ աջակցել իրեն:

Իսրայել Զրաբերդցու Վրաստան մեկնելուց հետո Ղարաբաղի հինգ մելիքները նամակ գրեցին վրաց գահակալին, ուր հայտնում էին, որ հրաժարվում են Իսրայել Զրաբերդցուն կաթողիկոս ճանաչել և խնդրում էին ականջալուր չլինել նրա աղաչանքներին[606]: Նամակը Հերակլին հանձնել հանձնարարվեց Հովսեփ Արղությանին[607]:

[602] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205ա, էջ 162բ-163ա; ձեռ. N 2912, էջ, էջ244ա:
[603] Նույն տեղում:
[604] Նշված վավերագիր, էջ 164բ-168ա; նշված ձեռագիր, էջ 246ա-247բ:
[605] Նշված վավերագիր, էջ 167բ, նշված ձեռագիր, էջ 246բ:
[606] Մատենադարան, Կթղկ դիվան, թղթ. 2բ, վավ. 226:
[607] Նույն տեղում:

1772 թ. սկզբին շամախեցիների և Սիմեոն Երևանցու նամակագրությունը փաստում է, որ Հերակլ Բ-ն, ի տարբերություն 1766 թ. հուլիսի 15-ի իր վճռի[608], Աղվանից կաթողիկոս էր ճանաչել Իսրայել Զրաբերդցուն: Նրա խնդրանքով Շամախու խանությանը տիրած Ղուբայի Ֆաթալի խանը հայերից հոգևոր տուրքեր ժողովելու համար մուհասիլ (արաբ. հարկահան) կարգեց՝ հրամայելով հնազանդվել Իսրայել Զրաբերդցուն և հետայսու հոգևոր բոլոր տուրքերը նրա նվիրակներին հանձնել[609]:

Նույն տարվա ամռանը Հերակլ Բ-ն Ղարաբաղ ուղարկեց իր դեսպան Ավքանդիլին, որին հրահանգել էր Իսրայել Զրաբերդցուն էջմիածին ուղեկցել և հաշտեցնել նրան Սիմեոն Երևանցու հետ: Սակայն Իսրայել Զրաբերդցին, երկյուղելով Սիմեոն Երևանցուց, հրաժարվել էր Ավքանդիլի հետ էջմիածին գալ: Վրաց դեսպանը, միայնակ ժամանելով էջմիածին, Սիմեոն կաթողիկոսին հանձնեց Հերակլ Բ-ի և թագաժանգ Գեորգիի նամակները, որտեղ նրանք խնդրում էին Իսրայել Զրաբերդցուն հաստատել Աղվանից կաթողիկոս: Սիմեոն Երևանցին հուլիսի 27-ին Թիֆլիս վերադարձող դեսպանի հետ նամակներ ուղարկեց Հերակլ Բ-ին և Գեորգիին՝ հայտնելով, որ նրանց խնդրանքը հնարավոր չէ կատարել, քանի որ Իսրայել Զրաբերդցին չի եկել էջմիածին[610]:

Իսրայելի՝ Ղարաբաղում լինելու ամբողջ ընթացքում Աղվանից կաթողիկոս հաստատվելու հիմնական նախապայմաններից մեկը Իբրահիմ խանի աջակցությունը ստանալն էր:

1763-65 թթ. Իբրահիմը գործի էր դրել իր բոլոր լծակները, որպեսզի կաթողիկոս դառնա Հովհաննես Հասան-Ջալալյանը: Սակայն 1767 թ., երբ Իսրայել Զրաբերդցին եկավ Ղարաբաղ, խանը բարեհաճ ընդունելություն ցուցաբերեց նրան: Լեոն գրում է, որ Ղարաբաղում Իսրայել Զրաբերդցու հաստատվելուց հետո Իբրահիմ խանը պահանջել է Սիմեոն Երևանցուց՝ Իսրայել Զրաբերդցուն ճանաչել Աղվանից կաթողիկոս[611]: Մեր տրամադրության տակ եղած աղբյուրները հնարավորություն չեն տալիս հավաստել կամ ժխտել Լեոյի հաղորդածը: Սակայն ճիշտ չի լինի կարծել, որ Իբրահիմը ցանկանում է կարգալույծ անել Հովհաննես Հասան-Ջալալյանին: Ի Իսրայել Զրաբերդցուն կաթողիկոս հաստատելով, վերը տեսանք, որ մելիքներ Ադամն ու Եսային ջանում էին Սիմեոն

[608] Տես սուն գլխի էջ 158
[609] Դիվան, Գիրք Ը, Մաս Բ, էջ 175-176:
[610] Նույն տեղում, էջ 241-242:
[611] Լեո, Երկերի ժողովածու,հ. 3, Գիրք II,էջ 345:

Երևանցու կոնդակով օրինականացնել Աղվանից կաթողիկոսության բաժանումը Իսրայելի և Հովհաննեսի միջև, ինչպես դա եղել էր Երեմիա Հասան-Ջալայանի, Սիմեոն Խոտորաշենցու, Եսայի Հասան-Ջալայանի և Ներսես Ջրաբերդցու օրոք: Հավանաբար մելիքների հետևում կանգնած էր հենց Իբրահիմ խանը, որը ցանկանալով կենսագործել այս տարբերակը՝ դրանով իսկ իր կողմից արդեն Ղարաբաղի մելիքությունների նկատմամբ կիրառած «բաժանիր, որ տիրես» սկզբունքով կամակատարների կվերածեր իրար թշնամի կաթողիկոսներին: Սակայն 1772 թ., երբ Իսրայելին կաթողիկոս հաստատելու վրաց արքունիքի ջանքերին միացավ Ղարաբաղի խանի թշնամի Ֆաթալի խանը, Իբրահիմը երես թեքեց Իսրայելից:

Այս ենթադրության հիմնավորում է ծառայում այն փաստը, որ Իսրայել Ջրաբերդցու կողմից Վարանդայի առաջնորդ հաստատված Ստեփանոսին հեռացնելու նպատակով Սիմեոն Երևանցին բազմիցս կոնդակներով դիմել էր Վարանդայի ժողովրդին, սակայն միայն 1773 թ. սեպտեմբերին մելիք Շահնազարի հրամանով Ստեփանոսը զրկվեց Վարանդայի առաջնորդությունից[612]: Մելիք Շահնազարը Իբրահիմի հավատարիմ դաշնակիցն էր և այդ պատճառով, ամենայն հավանականությամբ, Վարանդայի առաջնորդի և՛ նշանակումը 1770թ.[613] և՛ նրան հեռացնելը համաձայնեցված էր Ղարաբաղի խանի հետ: Նույն կերպ միայն 1773 թ. ապրիլին Հովհաննես Հասան-Ջալալյանին հաջողվեց Դիզակի առաջնորդանիստ Սպիտակ Խաչ վանքից վտարել Իսրայել Ջրաբերդցու նշանակած առաջնորդին և այնտեղ նստեցնել Պետրոս եպիսկոպոսին[614]:

Ղարաբաղի խանի և մելիքների՝ իր հանդեպ վերաբերմունքի այսպիսի փոփոխությունից հետո Իսրայել Ջրաբերդցին ստիպված էր վերադառնալ Գանձակ:

Իսրայել Ջրաբերդցու դիրքերը երերուն էին դարձել: Ղարաբաղում նրան չհաջողվեց իր կողմը գրավել խանին և մելիքներին. Շիրվանում միայն Ֆաթալի խանի ճնշման և նրա հարկահանի առկայությամբ էին եկեղեցական տուրքերը հանձնվում Իսրայելի ներկայացուցչին: Աստրախանում Սիմեոն Երևանցու աշակերտ Հովսեփ Արղությանի 1773 թ. առաջնորդ դառնալուց հետո Իսրայելն ամբողջովին զրկվեց Ռուսաստանից եկող նյութական միջոցներից: Թուլացած Գանձակի խանը չէր կարող նախկինի պես

[612] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 53ա:
[613] Տես սույն գլխի էջ 164
[614] Մատենադարան, Կթղկ դիվան, թղթ. 240, վավ. 101:

հզոր նեցուկ ծառայել: Գանձակի խանության հայ համայնքը, որը Իսրայելի գլխավոր հենարաններից մեկն էր, ցանկանում էր վերականգնել խզված հարաբերությունները էջմիածնի հետ և հակամարտության շարունակումը Իսրայելին սպառնում էր նրա վերահսկողությունից հանել Գանձակի խանության տարածքի թեմերը: Ահա ստեղծված այսպիսի իրավիճակից ելնելով՝ Իսրայել Ջրաբերդցին ստիպված էր իրեն Աղվանից միակ կաթողիկոս տեսնելուց հրաժարվել և ուղղակի դիմել Սիմեոն Երևանցու ողորմածությանը:

1776 թ. Իսրայելի թելադրանքով Գանձակի հայ համայնքի անունից նամակ գրվեց տեղապահ Մկրտիչ վարդապետին, որտեղ խնդրվում էր բանադրանքից արձակվելու համար էջմիածին գալու դեպքում երաշխավորել Իսրայելի անվտանգությունը: Չնայած այդպիսի երաշխիքներ ստանալուն՝ Իսրայելը երկնչեց միայնակ ներկայանալ և ներում հայցել Սիմեոն Երևանցուց[615]:

1777 թ. օգոստոսին Իսրայել Ջրաբերդցու համար հնարավորություն առաջացավ էջմիածին գնալ Գանձակի Մահմադ խանի եղբայր Ջավադ խանի ուղեկցությամբ: Նրա հիմնական նպատակը ոչ թե բանադրանքից արձակումն էր, այլ իր կաթողիկոսական աստիճանի հաստատումը: Նա հասկանում էր, որ իր այդ խնդրանքը Սիմեոն Երևանցին կմերժի: Այդ պատճառով Իսրայել Ջրաբերդցին դիմեց Ամենայն Հայոց կաթողիկոսին տեսակցելու պատրվակով էջմիածին եկած Ջավադ խանի աջակցությանը, որը և՛ իր, և իր եղբոր՝ Գանձակի խանի անունից խնդրեց Սիմեոն Երևանցուն՝ Իսրայել Ջրաբերդցուն կոնդակով հաստատել Աղվանից կաթողիկոս: Սիմեոնը սպառնաց Իսրայելին, թե խանի միջնորդությունն ու պահանջները հակառակ արդյունք կտան. «Այդ որ տաճկով կամիս զբանդ առաջացուցանել, նոր քակես տուն քոյ: Տաճիկն ինչ և ասիցէ ես չեմ լսելոց և չեմ առնելոց, թող ի մենջ դժուարանայ և խռով երթայ աստի: Այլ դու այդու պատճառաւ անկելոց ես ի վայր գեր քան զառաջինն և այլևս չես կանգնելոց»[616]:

Սիմեոնը հայտարարեց, որ մտադիր է Հովհաննես Հասան-Ջալալյանին նույնպես էջմիածին կանչել և երկուսի ներկայությամբ կարգավորել տարածայնությունները: Նա հայտնեց, որ եթե նույնիսկ բավարարի էլ Ջավադ խանի միջնորդությունը, ո՛չ Հովհաննես

[615] Դիվան, Գիրք ԺԱ, Թիֆլիս, 1913, Գլուխ ՅԼԸ, էջ 148-151:
[616] Նույն տեղում:

Հասան-Ջալալյանը, ոչ Աղվանից կաթողիկոսության թեմերը չեն ընդունի Իսրայել Զրաբերդցու հաստատումը[617]:

Ջավադ խանը և Իսրայել Զրաբերդցին, տեսնելով Սիմեոն Երևանցու հաստատակամությունը, տեղի տվեցին՝ համաձայնելով խնդրի կարգավորման նրա պայմաններին: Օգոստոսի 23-ին Ջավադ խանը, Իսրայելը և նրանց ուղեկիցները մեկնեցին էջմիածնից՝ հավաստիացում ստանալով, որ Սուրբ Խաչի տոնին և՛ Իսրայել Զրաբերդցին, և՛ Հովհաննես Հասան-Ջալայանը կհրավիրվեն էջմիածին, ու խնդիրը երկու կողմերին բավարարող լուծում կստանա[618]:

Իսրայել Զրաբերդցու մեկնումից չորս օր անց ստացվեց Հովհաննես Հասան-Ջալալյանի նամակը, որտեղ վերջինս հայտնում էր, որ շտապ գալիս է էջմիածին[619]: Հովհաննեսն էջմիածին ժամանեց բազմաթիվ ուղեկիցների հետ, որոնց մեջ էին մելիք Հովսեփի որդի Բեգլարը՝ իր շքախմբով և, չնայած Սիմեոնի՝ էջմիածին մահմեդական չբերելու արգելքին, Իբրահիմ խանի պատվիրակ Մահմադ-Ոզա բեկը: Հոկտեմբերի 9-ին էջմիածին ժամանեց նաև Իսրայել Զրաբերդցին[620]:

Սիմեոն կաթողիկոսը ցանկանում էր այս հանդիպումն օգտագործել և Աղվանից կաթողիկոսության փաստացի երկատվածությունն օրինականացնելով՝ ազդու լծակներ ձեռք բերել նաև Իսրայել Զրաբերդցու և Գանձակի խանության տարածքի թեմերի նկատմամբ: Իսրայելի և Հովհաննեսի դիրքերը ավելի խախուտ դարձնելու նպատակով Սիմեոնը փորձեց սկզբում իր կամքին ենթարկել վերջիններիս ուղեկցող հոգևորականներին, որպեսզի հետո նրանց օժանդակությամբ վերջ տա Աղվանից հակամարտ կաթողիկոսների դիմադրությանը:

Սիմեոնն Աղվանից կաթողիկոսության աթոռի համար ծագած երկպառակության գլխավոր մեղավոր հայտարարեց հոգևորականներին և նրանց արդարացումներն անհիմն համարելով՝ պատվիրեց Իսրայելի և Հովհաննեսի միջև համաձայնություն չկայացվելու դեպքում «իսպառ հրաժարիլ ի նոցանէ և ուր որ կամիցիք երթալ»[621]: Ապա Սիմեոն Երևանցին իր մոտ կանչեց Աղվանից

[617] Դիվան, Գիրք ԺԱ, Թիֆլիս, 1913, Գլուխ ՅԼԸ, էջ 148-151:
[618] Նույն տեղում:
[619] Նույն տեղում, գլուխ ՅԽ, էջ 151-153:
[620] Նույն տեղում, գլուխ ՅԾԱ, էջ 206:
[621] Նույն տեղում, գլուխ ՅԾԲ, էջ 207-208:

հակամարտ կաթողիկոսներին և առաջ քաշեց իր կողմից կազմած պայմանները, որոնց համաձայն.

1. Իսրայել Զրաբերդցին պետք է նստեր Գանձակում, իսկ Հովհաննես Հասան-Ջա-լալյանը՝ Գանձասարում:
2. Մեռոնօրհնությունը պետք է համատեղ կատարվեր, և քանի որ Իսրայել Զրաբերդցին երկնչում էր այդ նպատակով գալ Գանձասար, ապա հանդիպման վայրը յուրաքանչյուր անգամ պետք է համատեղ որոշվեր:
3. Ղարաբաղի թեմերը հանձնվում էին Հովհաննես Հասան-Ջալալյանին, Գանձակի խանության թեմերը՝ Իսրայել Զրաբերդցուն: Շիրվանի թեմը չպետք է բաժանվեր, այլ այստեղ ուղարկված երկու կողմերի նվիրակները, եկեղեցական հասույթները համատեղ հավաքելով՝ դրանք հավասար բաժանելու էին միմյանց մեջ:

Սակայն ոչ Իսրայել Զրաբերդցին, ոչ Հովհաննես Հասան-Ջալայանը չհամաձայնեցին Սիմեոն Երևանցու առաջ քաշած այս պայմաններին: Երկու կողմերի հակասությունները հատկապես սուր արտահայտվեցին Շիրվանի թեմի հարցում, որտեղից ստացվելիք արդյունքները երկուսն էլ չէին համաձայնվում ոչ կիսել, ոչ էլ զիջել: Զայրացած Սիմեոնը սպառնաց երկուսին էլ զրկել կաթողիկոսական աստիճանից և պահելով էջմիածնում՝ այլ հոգևորականի կաթողիկոս օծել կամ Աղվանից կաթողիկոսության թեմերին թողնել Իսրայելի և Հովհաննեսի միջև ընտրություն կատարելը[622]:

Այս սպառնալիքները նպատակին չհասան: Հովհաննեսն ու Իսրայելը խնդրեցին Սիմեոնին, որ վերադառնան ամեն մեկն իր նստավայրը, տեղի աշխարհիկ իշխողները նույնպես մասնակից դառնան կողմերի համար ընդունելի պայմանների մշակմանը, ապա փոխհամաձայնության գալով՝ համատեղ դիմեն էջմիածին:

Փաստորեն և՛ Իսրայել Զրաբերդցին, և՛ Հովհաննես Հասան-Ջալալյանը Սիմեոն Երևանցուն անշահախնդիր միջնորդ չէին համարում ու գտնում էին, որ առանց Ամենայն Հայոց կաթողիկոսի միջամտության ավելի շուտ փոխհամաձայնության կգան:

Սիմեոն Երևանցին, ընդունելով այս խնդրանքը, Իսրայել Զրաբերդցու և Հովհաննես Հասան-Ջալալյանի կախվածությունն իրենից պահպանելու համար սպառնաց չենթարկվելու դեպքում «տերունի առնել» Շիրվանի թեմը: Իսրայել Զրաբերդցին և Հովհաննես Հասան-Ջալալյանն էջմիածնից մեկնեցին 1777 թ. հոկտեմբերի 16-ին:

[622] Դիվան, Գիրք ԺԱ, :Գլուխ ՅԾԲ, էջ 209:

էջմիածնից մեկնելուց հետո էլ Հովհաննես Հասան-Ջալալյանը և Իսրայել Ջրաբերդցին շարունակում էին Շիրվանի թեմի եկամուտները ամբողջականորեն տնօրինելու փորձերը: Այդ նպատակով 1777 թ. վերջին Երևանի խանի դստեր և Գանձակի Մահմադ խանի ամուսնության կապակցությամբ Երևան եկած գանձակեցի հայ և մահմեդական հյուրերը առիթն օգտագործելով՝ ևս մեկ անգամ խնդրել էին Շիրվանի թեմը տալ Իսրայելին:

Իր հերթին Հովհաննես Հասան-Ջալալյանն անհանգստություն էր հայտնել Սիմեոնին՝ գրելով, թե տեղեկություններ ունի, որոնց համաձայն Սիմեոն Երևանցու գործակալները հայտարարում են Կուրից արևելք ընկած Շաքիի, Շիրվանի, Ղուբայի և Բաքվի խանություններում բնակվող հայերին, թե Սիմեոն կաթողիկոսը Շիրվանի թեմը հանձնել է Իսրայել Ջրաբերդցուն: Ժխտելով Հովհաննեսին հասած այս տեղեկությունը՝ Սիմեոն Երևանցին 1778 թ. ապրիլի 22-ի իր նամակում հայտնում էր, որ որոշել է այդ թեմից ստացվող եկամուտները հավասար բաժանել երկուսի մեջ[623]:

Սակայն Շիրվանի թեմը երկու կաթողիկոսների մեջ չկիսելու Սիմեոն Երևանցու ջանքերը հնարավոր չէր իրականացնել նրանց միջև պահպանվող թշնամանքի պատճառով: Սիմեոնը հասկանում էր, որ Շիրվանից ստացվող հասույթների բաժանումն անպատճառ նոր վեճերի և ընդհարումների առիթ կդառնա, որում ինքը ևս ստիպված կլինի ներքաշվել, ինչը նրա վարկի անկման կհանգեցնի: Այդ պատճառով Սիմեոն Երևանցին որոշեց այս թեմը բաժանել Հովհաննես Հասան-Ջալալյանի և Իսրայել Ջրաբերդցու միջև: Շաքին տրվեց Իսրայելին, իսկ Շամախին, Ղուբան, Դերբենտը և Բաքուն հանձնվեցին Հովհաննեսին: Իր որոշման մասին Սիմեոնը 1778 թ. հունիսի 14-ին նամակով հայտնեց Իսրայելին, ինչպես նաև կոնդակ ուղարկեց Շաքիի խանության հայերին[624]:

Սիմեոն Երևանցին հոկտեմբերի 4-ին Հովհաննեսին տեղեկացրեց Շաքին Իսրայելին հանձնելու մասին: Ուշադրության արժանի է այն փաստը, որ ուղերձում չէր հայտնվում, թե Շամախին, Ղուբան, Դերբենտը և Բաքուն տրվել են Հովհաննեսին: Իսրայելին և Հովհաննեսին առաքված նամակների միջև եղած մեծ ժամանակահատվածը, ինչպես նաև Շամախին, Ղուբան, Դերբենտը և Բաքուն Հովհաննեսին տալու մասին վերջինիս չտեղեկացնելը, պարզ է, կարող էին և առաջացրին Հովհաննեսի ծայրահեղ անհանգստությունը, որը կրկին դիմեց Իբրահիմ խանին և Ղարաբաղի մելիքներին՝ իրեն աջակցելու խնդրանքով: Հովհաննեսը ենթադրում էր, որ Շաքին Իսրայելին հանձնելն առաջին քայլն է, որին հետևելու է Շիրվանի թեմի մնացած մասի հանձնումը:

Իբրահիմ խանն ու մելիքները շտապեցին նամակներով դիմել Սիմեոն Երևանցուն, ուր խնդրում էին նոր կոնդակ գրել, որտեղ կհաստատվեր, Գանձակի խանության տարածքի թեմերից բացի Աղվանից կաթողիկոսության մնացած թեմերի պատկանելությունը Հովհաննես Հասան-Ջալալյանին[625]:

Իսրայել Ջրաբերդցին նույնպես դժգոհ էր Սիմեոն Երևանցու այս որոշումից: 1778 թ. հունիսի 14-ի Սիմեոնի՝ նամակը ինչ-ինչ պատճառներով նրան չէր հասել: Իր մտերիմներից մեկին նա դժգոհություն էր հայտնում. «Ես սրբազան վեհին ուխտեցի կալ մինչև ցմահ հնազանդ, և ինքն ուխտեաց ինձ առնել վասն իմ զհոգս և շահել զիս կերպիւ իւիքն, այժմ չերևի այն նշան»[626]:

Սիմեոն Երևանցին ստիպված էր օգոստոսի 1-ին Իբրահիմ խանին և Ղարաբաղի մելիքներին հասցեագրված պատասխան նամակներով փորձել հարթել «թյուրիմացությունը»: Նա հավաստիացնում էր, թե ինքն երբեք մտադրություն չի ունեցել Շիրվանի թեմը հանձնել Իսրայելին: Այս նամակներում խոսք չկար նույնիսկ Շաքին Իսրայելին հանձնելու մասին: Իբրահիմ խանին Սիմեոնը գրում էր. «Այժմոյս ես կրկին գրեցի ի Շամախի և Նուխի, զի մեր առաջին կանոնաւն կացեալք, Գանձասարու ծառայեսցեն»[627]:

Չնայած Սիմեոնը Ղարաբաղի խանին և մելիքներին հավաստիացնում էր, թե Շաքին նույնպես պատկանում է Հովհաննեսին, սակայն Իսրայելին ուղղված նամակում, անդրադառնալով վերջինիս դժգոհությանը և բողոքներին, գրում էր. «Զայն թոհմադսդ թող ի բաց, զի մեք քեզ ոչ ենք չարական: Զի որպես դու գրես, թե ի վերայ իմ ուխտին կամ, մեք ևս ի նոյն մեր խոստման կամք»[628]:

Հաղպատից վտարվելուց և Գանձակում վերահաստատվելուց հետո[629] Իսրայել Ջրաբերդցին փորձեց տիրանալ ամբողջ Շիրվանի թեմին: 1782թ. մահացած առաջնորդի՝ Իսահակ եռիսկոպոսի փոխարեն[630] Իսրայելն իր ներկայացուցչին նշանակեց Շիրվանի առաջնորդ: Շիրվանցիները չհանդուրժեցին դա և առաջնորդ ընտրելով Ոսկան վարդապետին՝ խնդրեցին Հովհաննես Հասան-

[623] Դիվան, Գիրք ԺԱ, : գլուխ ՅԿԳ, էջ 256-257:
[624] Նույն տեղում, գլուխ ՅՀԴ, էջ 310-312:

[625] Դիվան, Գիրք ԺԱ, : գլուխ ՅՀԸ, էջ 386:
[626] Նույն տեղում, գլուխ ՆԱ, էջ 413:
[627] Նույն տեղում, գլուխ ՅՂ, էջ 387:
[628] Նույն տեղում, գլուխ ՆԱ, էջ 413:
[629] Տես գլուխ 1, § 3, էջ 32-37:
[630] Մատենադարան, ձեռ. N 2803, էջ 54ա, բ:

Ջալալյանին՝ հաստատել վերջինիս Շիրվանի առաջնորդ և հեռացնել Իսրայելի դրածոյին[631]:

Սակայն Հովհաննեսին չհաջողվեց Շամախուց հեռացնել Իսրայելի ներկայացուցչին և 1785 թ. մարտի 8-ի նամակով շամախեցիները նույն խնդրանքով դիմեցին Սիմեոն Երևանցուն հաջորդած Ղուկաս Կարնեցուն[632]: Ապրիլին գրած իր պատասխան կոնդակով Ղուկաս Կարնեցին համաձայնություն տվեց Ոսկան վարդապետին Շիրվանի առաջնորդ հաստատելուն և խոստացավ օժանդակել Իսրայելի դրածոյին Շամախուց հեռացնելուն[633]:

1786 թ. Հովհաննես Հասան-Ջալալյանի սպանությունից հետո Իսրայել Ջրաբերդցուն հաջողվեց տիրանալ ոչ միայն Շիրվանին, այլև Ղարաբաղի խանության թեմերին: Հովհաննես Հասան-Ջալալյանի սպանությունից հետո Իբրահիմ խանը ցանկանում էր կաթողիկոսական աթոռին տեսնել այնպիսի հոգևորականի, որը հնազանդ լիներ իրեն, միևնույն ժամանակ առանց բարդությունների հաստատվեր էջմիածնի կողմից և դրա շնորհիվ օրինական կաթողիկոս ճանաչվեր Շիրվանի թեմում: Հասան-Ջալալյաններից կաթողիկոսության նոր թեկնածուն այս ուղղությամբ արգելքների չէր հանդիպի, սակայն Իբրահիմ խանի համար Հասան-Ջալալյանների տոհմի անդամ հոգևորականի կաթողիկոսացումը ձեռնտու չէր, քանի որ Հասան-Ջալալյան կաթողիկոսներն էին XVIII դ. ընթացքում արդեն երկու անգամ հանդես եկել Ղարաբաղում օտար տիրապետության դեմ: Ահա այս պայմաններում Ղարաբաղի խանի ընտրությունը կանգ առավ Գանձակում հաստատված Իսրայել Ջրաբերդցու վրա: Խանը հավանաբար տեղյակ էր, որ Իսրայելի և Ամենայն Հայոց Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի միջև արտաքուստ բարյացակամ, բնականոն հարաբերություններ և մշտական նամակագրություն գոյություն ունեին, և որ էջմիածինը մշտապես արտահայտվում էր Աղվանից կաթողիկոսությունում միասնության հանդես գալու օգտին: Եթե նույնիսկ էջմիածինը մերժեր Իսրայել Ջրաբերդցու գավազանի տակ Աղվանից կաթողիկոսության մնացած թեմերի միավումը, ապա այդ դեպքում, ի նկատի ունենալով այն փաստը, որ Իսրայել Ջրաբերդցին դեռ Սիմեոն Երևանցու օրոք ճանաչվել էր կաթողիկոս, Իբրահիմ խանի առաջ չէր ծառանա իր թեկնածուին էջմիածնի կողմից կաթողիկոս հաստատելու խնդիրը, ինչպես դա եղել էր 1763-1765 թթ. Հովհաննես Հասան-Ջալալյանի պարագայում:

1787 թ. մայիսին Գանձկի և Ղարաբաղի խանությունների թեմերում Իբրահիմ խանի հրահանգով կազմվեցին ընդհանրագրեր, որոնցով այդ թեմերի հայ հավատացյալները իրենց կաթողիկոս էին ճանաչում Իսրայել Ջրաբերդցուն և խնդրում էին նրան հանձնել Սիմեոն Երևանցու կողմից Հովհաննես Հասան-Ջալալյանին տրված Շիրվանի թեմի մյուս կեսը: Այս ընդհանրագրերը, ինչպես նաև խանի պահանջով մելիքներ Աբովի, Մեջլումի և Շահնազարի՝ Իսրայել Ջրաբերդցուն Աղվանից ընդհանրական կաթողիկոս հաստատելու խնդրանք պարունակող նամակները էջմիածին տարան մելիք Մեջլումի ազգական յուզբաշի Հարությունը և Քյարանը[634]: Ղուկաս Կարնեցուն նամակ էր գրել նաև Իսրայել Ջրաբերդցին, որտեղ «ուխտեալ էր խոնարհութեամբ հատուկ մնալ սրբոյ Աթոռոյն և Հայրապետի սորին և խնդրեալ էր զօգնութիւն և զձեռնդրութիւն ինքեան[635]:

Ղուկաս Կարնեցին, ստանալով այդ ընդհանրագրերն ու մելիքների ուղերձները, չցանկանալով հակամարտության մեջ ներքաշվել Ղարաբաղի հզոր խանի հետ, համաձայնեց Իսրայել Ջրաբերդցուն հաստատել Աղվանից ընդհանրական կաթողիկոս: Մայիսի 24-ին նա մի ամբողջ շարք կոնդակներ և նամակներ գրեց՝ ուղղված Աղվանից կաթողիկոսության թեմերին, Ղարաբաղի մելիքներին և Իսրայել կաթողիկոսին:

Շաքի, Շամախի, Բաքու և Դերբենտ ուղարկված շրջաբերական կոնդակում Ղուկաս Կարնեցին պատվիրում էր Գանձակի և Ղարաբաղի խանությունների հավատացյալ ժողովրդին միաբանելով՝ հպատակվել Իսրայել կաթողիկոսին, քանի որ «ի վաղուց օծեցեալ է և այսօր ի պատրաստի գտանիցեալ կաթուղիկոս է ի միջի, զոր թողուլն և ի նորոյ յայլս ձեռն արկանելն իրավունք չէ»[636]: Նույն բովանդակությամբ նամակներ նա գրեց՝ նաև մելիքներ Մեջլումին և Աբովին[637]:

Մելիք Շահնազարին և նրա որդուն՝ Զումշուդին հասցեագրված նամակում Ղուկաս Կարնեցին, անդրադառնալով ղարաբաղցիների ընդհանրագրում տեղ գտած այն արտահայտությանը, թե «շամախեցիք՝ այլ մտօք թուղթ են գրեալ առ մեզ», հայտնում էր, որ

---

631 Մատենադարան, ձեռ. N 448, էջ 3բ:
632 Նույն տեղում:
633 Նույն տեղում, էջ 3բ-4ա;

634 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205բ, էջ 2:
635 Նույն տեղում, էջ 3:
636 Նույն տեղում, էջ 13-16:
637 Նույն տեղում, էջ 11-12:

Շամախուց դեռ ոչ մի նամակ չի ստացել: Եթե նշված բովանդակությամբ նամակ ստացվի, ապա ինքը միջոցներ կձեռնարկի, որպեսզի շամախեցիները նույնպես ընդունեն և հնազանդվեն Իսրայել Զրաբերդցուն[638]:

Ղուկաս Կարնեցու այս նամակից պարզվում է, որ Շամախիում դեմ էին իրենց թեմը Իսրայելին հանձնելուն: Երեք տարի անց՝ 1790 թ. նոյեմբերին, Իսրայելը դիմեց Ղուկաս Կարնեցուն և խնդրեց նրան՝ սաստել շամախեցիներին ու հրամայել, որ վերադարձվեն Գանձասարի վանքին պատկանող երկու ոսկե խաչերն ու մի քանի ձեռագրերը[639]: Ղուկասն իր պատասխանում գրում էր, որ այդ խնդրանքն առայժմ չի կարող բավարարել, որովհետև Շիրվանն Աղվանից կաթողիկոսության թեմ է. «Վասն ինչ իրաց մեր բան գրելն առ նոսա այլ իմն երևի»: Թող սկզբում Իսրայելն ինքը խնդրի շամախեցիներին և մերժում ստանալու դեպքում միայն նորից հայցի իր օժանդակությունը[640]:

Ղուկաս Կարնեցին, ինչպես 1787 թ. մայիսին գրած կոնդակում և նամակներում, այնպես էլ հետագայում՝ 1787 թ. օգոստոսի 25-ին Հնդկաստանի նվիրակ Եփրեմ Զորագեղցի եպիսկոպոսին[641] և 1792 թ. օգոստոսի 16-ին Շահամիր Շահամիրյանին[642] հասցեագրած նամակներում, նշելով Հովհաննես Հասան-Ջալալյանի մահվան փաստը, չի անդրադառնում մահվան հանգամանքներին: Ղուկաս Կարնեցին ինքը 1792 թ. սեպտեմբերին Հովհաննեսի եղբայր Սարգիս Հասան-Ջալալյանին գրած պատասխան նամակում Հովհաննեսի մահվան հանգամանքներին չանդրադառնալը և Սարգսի նամակի պատասխանն ուշացնելը բացատրում է, թե նամակը ստանալուն պես իր մխիթարությունն ու ցավակցությունն անմիջապես չի հայտնել, վախենալով, որ Իբրահիմ խանը կարող է կասկածել, թե Ռուսաստանի հետ բանակցություններում էջմիածինը նույնպես մասնակից է եղել[643]:

Իբրահիմ խանը, Իսրայել Զրաբերդցուն Աղվանից ընդհանրական կաթողիկոս հաստատելով, բնավ մտադիր չէր, որ նա Ղարաբաղի բոլոր թեմերի վերահսկողությունն իր ձեռքում կենտրոնացներ: Այդ պատճառով Հովհաննես կաթողիկոսի սպանությունից 9 ամիս անց՝ 1787 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին,

638 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205բ, էջ 17-18:
639 Նույն տեղում, էջ 22-24:
640 Նույն տեղում:
641 Նույն տեղում, ձեռ.N 4501, էջ 116ա:
642 Նույն տեղում, էջ 380բ-381բ:
643 Նույն տեղում, էջ 315ա-բ:

ազատ է արձակում Հովհաննեսի եղբայր Սարգսին[644] և հաստատում Խաչենի առաջնորդ[645]: Խաչենի առաջնորդությունը ստանձնելուց հետո Սարգիս եպիսկոպոսը՝ հանդիպում է Խաչենի մելիք Ալավերդու՝ Փանահ խանի դրածո Միրզախանի որդու թշնամանքին, որը դիմադրում է Խաչենում Սարգսի հոգևոր իշխանության հաստատմանը և թույլ չի տալիս բնակչությանը, որ եկեղեցական տուրքերը հանձնեն Խաչենի առաջնորդարան հանդիսացող Գանձասարի վանքին: Սարգիսը դիմում է Իբրահիմ խանին և խնդրում արգելել Ալավերդուն՝ խառնվել եկեղեցու գործերին: Խանը, չցանկանալով դժգոհություն հարուցել Ղարաբաղում և նրա տարածքից դուրս մեծ համարում ունեցող Գանձասարի միաբանության շարքերում, հիջրայի 1202 թ. ռաբի ալ շանի ամսին (1788 թ. հոկտեմբեր-նոյեմբեր) թվագրված հրովարտակով հրամայում է Խաչենի մելիք Ալավերդուն և քյադխուդաներին՝ չհակադրվել Սարգիս եպիսկոպոսին և հոգևոր գործերում հպատակվել նրա կարգադրություններին, ինչպես նաև աջակցել, որպեսզի Խաչենի հայ համայնքը Գանձասարի վանքին հասանելիք հոգևոր տուրքն անխախտ կերպով հանձնի վանքին[646]:

Նույն թվականի նոյեմբերին, հավանաբար Իբրահիմ խանի կարգադրությամբ, Ամարասի վանքում հաստատված Իսրայել կաթողիկոսը նամակով պատվիրեց մելիք Ալավերդուն՝ Խաչենի նվիրական արդյունքները հանձնել առաջնորդ Սարգիս եպիսկոպոսին[647]:

Աղվանից կաթողիկոսության հոգևոր վեհապետի սպանությունից և Գանձասարի վանքի հարստության կողոպուտից հետո Իբրահիմ խանն ըստ երևույթին ենթադրում էր, թե Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալյանն ու Գանձասարի միաբանությունը հետայսու անվերապահորեն կենթարկվեն իրեն և Խաչենը հնազանդության մեջ պահելու համար գործիքի կվերածվեն: Սակայն խանի այս սպասումները չարդարացան: Սարգիս եպիսկոպոսը գոնե հոգևոր գործերում դիմադրություն էր ցուցաբերում խանի կամայականություններին: Որպես սույն պնդման ապացույց կարող է ծառայել հետևյալ օրինակը: Իբրահիմ խանը Բայլականի մոտ թաղված V դ. Աղվանից հայրապետ Շուփհաղիշոյի գերեզմանի վրա հրամայում է

644 Присоеденение Восточной Армении к России, т. II, док. 89, с. 124-125.
645 Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 71բ:
* Սարգիս Հասան-Ջալալյանն եպիսկոպոս է ձեռնադրվել 1778 թ.: Տես Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 13, վա. 298:
646 Նույն տեղում, թղթ. 2բ, վավ.235:
647 Նույն տեղում, ձեռ. N 4331, էջ 71բ:

մզկիթ կառուցել: Սարգիսը բողոքում է և փորձում դիմադրել հայոց եկեղեցու արժանապատվությունը ոտնահարող խանի այս ձեռնարկմանը: Իբրահիմը, հայտարարելով, թե «չէ փույթ, որ կաթողիկոս է հայոց», ավարտին է հասցնում շինարարությունը[648]:

Կարելի է ենթադրել, որ այս օրինակը եզակի չէր, և Սարգիս եպիսկոպոսն այլ դեպքերում ևս արիաբար հանդես էր գալիս Ղարաբաղի խանի կամայականությունների դեմ: Իսկ նենգ ու ոխակալ Իբրահիմին դեմ գնալը մահացու վտանգ էր պարունակում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ 1787 թ. Հերակլ Բ-ի դեպի Ղարաբաղ կատարած անհաջող ռազմարշավին վրացիների կողմից հանդես գալուց հետո մելիք Աբովն ու մելիք Մելլումը ստիպված տարագրվել էին Ղարաբաղից[649], և Սարգիսը խանի բռնություններին միակ ընդիմացողն էր:

Սարգիս եպիսկոպոսն իրեն հանգիստ չէր զգում նույնիսկ իր առաջնորդանիստ Գանձասարի վանքում, որտեղ նույնպես Իբրահիմի բազմաթիվ լրտեսներն աչալուրջ հսկում և նրա յուրաքանչյուր քայլի մասին տեղյակ էին պահում խանին[650]: Իբրահիմ խանի հրամանով 1791 թ. Դանիել բեկ և Ջալալ բեկ եղբայրների սպանությունից հետո Սարգիս եպիսկոպոսի շուրջը գցված օղակը սեղմվում էր: Մահացու հանգուցալուծումից խուսափելու համար նա փախավ Գանձակ: Եպիսկոպոսին Գանձասարից փախչելուն օժանդակեց վերոհիշյալ մելիքների զորաջոկատը[651]:

Հետագայում ռուսական իշխանություններին ուղղված խնդրագրերում Սարգիս Հասան-Ջալալյանը Ղարաբաղից իր փախուստի զանազան տարեթվեր էր ներկայացնում: Փախուստի հանգամանքները նույնպես այդ խնդրագրերում զանազան կերպ էին ներկայացվում: 1801 թ. մայիսի 29-ին գեներալ Բ. Ն. Կնորինգին[652] և Վրաստանում Ռուսաստանի լիազոր նախարար Պ. Ի. Կովալենսկուն[653] ուղղված խնդրագրերում Սարգիս Հասան-Ջալալյանը, շրջանցելով իր կենսագրության Գանձասարի վանքի առաջնորդության և Գանձակում եղած ժամանակահատվածը, գրում էր, որ Հովհաննես կաթողիկոսի սպանությունից հետո ինքը և իր մյուս եղբայրները բանտարկվել են, սակայն իրենց հաջողվել է բանտից փախչել և ապաստանել Վրաստանում:

648 Մատենադարան, ձեռ. N 8066, էջ 62ա:
649 Նույն տեղում, ձեռ. N 4501, էջ 121բ:
650 Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 239-240:
651 Նույն տեղում:
652 Акты, т. , док N 883, с. 638-639.
653 Մատենադարան, Կթղկ դիվան, թղթ. 240, վավ. 147:

1806 թ. հունվարին Պ. Դ. Ցիցիանովին ուղղված խնդրագրում նա, չանդրադառնալով Խաչենի առաջնորդ եղած ժամանակահատվածին, գրում էր, որ բանտից փախել է Գանձակ: Այս խնդրագրում նույնպես, ինչպես և Ի. Ֆ. Կնորինգին ու Պ. Ի. Կովալենսկուն ուղղված խնդրագրերում, փախուստի կոնկրետ տարեթիվը նշված չէ[654]:

Միայն 1823 թ. մայիսի 8-ին Ա. Ժ. Երմոլովին հասցեագրված խնդրագրում Սարգիս Հասան-Ջալալյանը գրում է. «Իբրահիմ խանի կինը՝ Բիքի խանումը, որն այդ ժամանակ ողջ էր, մեզ համար միջնորդելով, ազատեց մեզ բանտից: Մենք մեկնեցինք Գանձասարի վանք, որտեղ ես, եղբայրներս և հոգևորականներն Իբրահիմ խանի ահից չկարողացանք այլևս մնալ: Վախենալով նրա կողմից սպանվելուց՝ 1788 թ. փախանք Ելիզավետպոլ՝ տեղի Ջավադ խանի մոտ, ուր մնացինք ութ տարի...»[655]:

Սարգիս Հասան-Ջալալյանն առաջին երեք խնդրագրերում շրջանցում է իր գործունեության այն ժամանակահատվածը, երբ եղել է Ղարաբաղի Իբրահիմ խանի, ապա Գանձակի Ջավադ խանի տիրապետության տակ գտնվող հայերի հոգևոր առաջնորդ: Ամենայն հավանականությամբ, նա դրանով փորձում էր ավելի ցայտուն ներկայացնել իր ռուսամետությունը և ռուսական շահերին իր նվիրվածությունը: Այս ենթադրության օգտին է խոսում նաև այն, որ երեք խնդրագրերում էլ նա նշում է, թե փախել է խանի բանտից՝ դրանով իսկ շեշտելով, որ այդ տառապանքները կրել է Ռուսաստանին նվիրվածության պատճառով: Երմոլովին ուղղված խնդրագրում Սարգիսն արդեն գրում է, որ բանտից ոչ թե փախել է, այլ ազատ է արձակվել, որից հետո չնշելով, որ խանի հավանությամբ վարել է Խաչենի առաջնորդությունը՝ հայտնում է, թե պատսպարվել է Գանձասարի վանքում, որտեղից իբրև թե 1788 թ, փախել է Գանձակ: Առաջին երեք խնդրագրերից շուրջ քսան տարի ավելի ուշ գրված այս խնդրագրում Սարգսի կողմից որոշ մանրամասնությունների վրա լույս սփռելը կապված էր այն իրողության հետ, որ 1823 թ., երբ գրվել է խնդրագիրը, Ղարաբաղում խանական իշխանությունն արդեն վերացվել էր և ռուսական ուղղակի կառավարում էր մտցվել: Ռուսները հնարավորություն ունեին ստուգել Սարգիս Հասան-Ջալալյանի ներկայացրած տեղեկությունների իսկությունը: Սակայն այս խնդրագրում ևս, ինչպես տեսանք, բավականին կցկտուր և մշուշոտ տեղեկություններ է ներկայաց-

654 Присоеденение Восточной Армении к России, т. I, док. 204, с. 204.
655 Присоеденение Восточной Армении к России, т. II, док. 89, с. 124-125.

նում: Մասնավորապես նա գրում է, որ Ղարաբաղից Գանձակ է փախել 1788 թ.:

Վերը նշվեց, որ 1788 թ. նոյեմբերին Իբրահիմ խանը և Իսրայել կաթողիկոսը հրահանգել են Խաչենի մելիք Ալավերդուն՝ չխառնվել Խաչենի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսի վերահսկողության տակ գնվող հոգևոր ոլորտին և չխանգարել նրան: Եթե հավատ ընծայենք 1823 թ. Սարգսի խնդրագրին, ապա պետք է ենթադրել, որ նա Գանձակ է փախել 1788 թ. նոյեմբեր կամ դեկտեմբեր ամիսներին: Սակայն և՛ խանի հրամանը, և՛ կաթողիկոսի կոնդակը ի նպաստ Սարգիս եպիսկոպոսի են, ուրեմն դժվար թե այդպիսի վերաբերմունքից անմիջապես հետո Սարգիսը փախչեր Գանձակ:

Ռաֆֆին, մանրակրկիտ նկարագրելով Սարգիս եպիսկոպոսի փախուստը Գանձակ, նշում է, որ այն տեղի է ունեցել 1791 թ.[656]:

Վարդան Օձնեցու հաղորդման համաձայն Սարգիս Հասան-Ջալալյանը կաթողիկոս է օծվել և Գանձակի Ջավադ խանի կողմից հաստատվել 1791 թ.[657]:

Մատենադարանում պահվում է հիջրայի 1205 թ. զուլ կադա ամսով (1791 թ. հուլիսի 2-օգոստոսի 1) թվագրված Ջավադ խանի հրովարտակի պատճենը, ըստ որի Սարգիս Հասան-Ջալալյանը ոչ թե կաթողիկոս է հաստատվել, ինչպես պնդում է Վարդան Օձնեցին, այլ Գանձակի առաջնորդ եպիսկոպոս[658]: Ռաֆֆին նույնպես գրում է, որ «Սարգիս եպիսկոպոսն իր եղբայրների հետ եկավ Գանձակ 1791 թ: Ջավադ խանը սիրով ընդունեց նրան, եպիսկոպոսին բնակության տեղ տվեց, ռոճիկ նշանակեց և այնուհետև Սարգիսը Գանձակի գավառի հայոց առաջնորդը դարձավ»[659]:

Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալյանի՝ Գանձակի թեմի առաջնորդ դառնալուց հետո այս թեմը փաստացի դուրս եկավ Ամարասում հաստատված Իսրայել կաթողիկոսի վերահսկողությունից: Այնուամենայնիվ, այն համարվում էր Աղվանից կաթողիկոսության մաս կազմող թեմ, իսկ եկեղեցու նվիրապետական կարգի համաձայն՝ Սարգիս եպիսկոպոսը ստորադաս էր Իսրայել Ջրաբերդցուն:

Ղարաբաղից հեռացած մելիքներն ու նրանց հյուրընկալած Ջավադ խանը ձգտում էին վերացնել Գանձակի խանության տարածքի թեմերի նույնիսկ անվանական ենթակայությունը Ղարաբաղի խանի

[656] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 239-240:
[657] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 73ա:
[658] Նույն տեղում, կրկն. դիվան, թղթ. 2բ, վավ. 238բ:
[659] Ռաֆֆի , Խամսայի մելիքությունները, էջ 240:

խամաճիկ Իսրայել կաթողիկոսից: Այդ նպատակով 1794 թ. նրանց գործուն աջակցությամբ Սարգիս եպիսկոպոսն օծվեց Աղվանից կաթողիկոս: Ռաֆֆին գրում է. «Գանձակում գտնված հայոց մելիքները՝ Մեջլումը և Աբովը, Ջավադ խանի հետ միաբանելով, Իբրահիմ խանի հակառակ Սարգիս եպիսկոպոսին Գանձակում կաթողիկոս օծել տվին (1794)»[660]: Սարգսին կաթողիկոս օծելը նաև Շիրվանի թեմը Իսրայելի վերահսկողությունից հանելու և դրանով էլ Իբրահիմ խանի ազդեցությունն այդ տարածքներում սահմանափակելու նպատակ էր հետապնդում:

Մակար Բարխուտարյանցը և Հովհաննես Շահխաթունյանը տալիս են Գանձակում Սարգիս Հասան-Ջալալյանի կաթողիկոս օծվելու կոնկրետ ամսաթիվը: Համաձայն Բարխուտարյանի՝ օծման արարողությունը տեղի է ունեցել 1794 թ. հոկտեմբերի 17-ին[661]: Շահխաթունյանը ուղիղ երկու ամսով ուշ է նշում օծման ամսաթիվը՝ 1794 թ. դեկտեմբերի 15[662]:

Որոշակի առումով այս իրադարձությունները 31 տարի առաջ կատարված դեպքերի կրկնությունն էին: 1763 թ. Գանձակի Շահվերդի խանը, Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքներն Աղվանից կաթողիկոսության հոգևոր գործերում Ղարաբաղի խանի ազդեցությանը հարվածելու համար Իբրահիմ խանի աջակցությամբ կաթողիկոս օծված Հովհաննես Հասան-Ջալալյանի կողքին հակաթոռ կաթողիկոս օծել տվին Իսրայել Ջրաբերդցուն: Այժմ էլ նրանց որդիները՝ Ջավադ խանը, մելիք Աբովն ու մելիք Մեջլումը Իբրահիմ խանի ազդեցությունը սահմանափակելու նպատակով իրենց հայրերի աջակցությամբ կաթողիկոս դարձած Իսրայել Ջրաբերդցու կողքին հակաթոռ կաթողիկոս օծել տվին Հովհաննես Հասան-Ջալալյանի եղբորը՝ Սարգսին: Սակայն եթե 1763 թ. ոչ Հովհաննես Հասան-Ջալալյանը, ոչ Իսրայել Ջրաբերդցին չունեին էջմիածնի հաստատման կոնդակը, Ապա Իսրայել Ջրաբերդցին դեռևս 1787 թ. էջմիածնի կողմից հաստատվել էր Աղվանից ընդհանրական կաթողիկոս:

1794 թ. Ջավադ խանը և մելիքներ Աբովն ու Մեջլումը էջմիածնից Սարգսին Աղվանից կաթողիկոս հաստատող կոնդակ կորզելու նպատակով դիմում են խաբեության: Նրանք նամակներ են ուղարկում էջմիածին՝ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին: էջմիա-

[660] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 242:
[661] Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 122:
[662] Հովհաննես Շահխաթունեան, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. II, էջ 348:

ծին են ուղարկվում նաև Գանձակի խանության հայ ազգաբնակչության և Գանձակում ապաստանած ղարաբաղցի գաղթականների՝ Սարգիս Հասան-Ջալալյանի անունով համահաճական ընդհանրագրերը:

Մելիքների նամակում ասվում էր. «Իսրայէլ կաթուղիկոսն մեր վախճանեցաւ և երկիրս մեր և ժողովուրդն մնացեալ անտերունչ, վասն այն առանց հրամանի ձեր օծեցաք կաթուղիկոս Աղուանից զՍարգիս եպիսկոպոսն Հասան-Ջալալեան: Որոյ խնդրեմք ներել մեզ և հաստատել զնա յԱթոռս Աղուանից կաթուղիկոս և կոնդակաւ ձերով հրապարակել յամենայն երկիրն Աղուանից, զի ճանաչեսցեն զնա հաստատուն կաթուղիկոս իւրեանց»[663]:

Ջավադ խանին, Գանձակի հայերին և վտարանդի ղարաբաղցիներին հասցեագրած պատասխան ուղերձներում Ղուկաս կաթողիկոսը գրում էր, որ Սարգիսը նախապես պետք է ներկայանար էջմիածին և իր գիտությամբ ու հրամանով օծվեր: Քանի որ օծումը Գանձակում արդեն կատարվել է, ապա խանի պատվին կջանա Սարգսին կաթողիկոս հաստատել: Սակայն խռովության ծագման դեպքում ամբողջ պատասխանատվությունը պետք է ընկնի Սարգսի և ոչ իր վրա: Ինչ վերաբերում է հաստատման կոնդակին, ապա Ղուկաս Կարնեցին հնարավոր չէր համարում այդ պահին նման կոնդակ հրապարակել՝ այն կապելով ապագայում իրադրության հստակեցման հետ[664]:

Քիչ անց էջմիածին հասավ Իսրայել Զրաբերդցու նամակը, որտեղ վերջինս հայտնում էր, որ իր մահվան շուրջ պտտվող լուրերը հերյուրանքները և տարածվում են Սարգիս Հասան-Ջալալյանի ու նրա աջակիցների կողմից[665]:

Սարգսի և նրա կողմնակից Գանձակի խանի ու մելիքների համար պարզ էր, որ Իսրայել կաթողիկոսի մահվան վերաբերյալ իրենց կեղծիքը ուշ թե շուտ պետք է բացահայտվի: Դա գիտակցելով՝ նրանք ցանկանում էին էջմիածնից Սարգսին կաթողիկոս հաստատող կոնդակ ստանալուց հետո այն օգտագործել և ձեռք բերել Կուր գետի ձախ ափին գտնվող խանությունների հայկական համայնքների՝ Սարգսին կաթողիկոս ճանաչող համահաճական ընդհանրագրերը: Հետագայում, երբ կբացահայտվեր, որ Իսրայել կաթողիկոսը ողջ է, նրանք կարող էին, օգտվելով ստեղծված խառնաշփոթությունից, այդ համայնքներին թեքել իրենց կողմը:

[663] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 73ա:
[664] Նույն տեղում, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205բ, էջ 35ա-բ:
[665] Նույն տեղում:

Հավանաբար այս հանգամանքը հաշվի առնելով՝ Ղուկաս Կարնեցին կոնդակներ առաքեց Ղարաբաղ, Շաքի, Շամախի, Բաքու և Դերբենտ: Այդ կոնդակներում, հայտնելով, որ Իսրայելի մահվան շուրջ պտտվող լուրերը հերյուրվել են Գանձակում գտնվող Սարգսի և նրա կողմնակիցների կողմից, պատվիրում էր օրինական կաթողիկոս ճանաչել միայն Իսրայելին[666]:

1723 թ. Երմոլովին ուղղված խնդրագրում Սարգիս Հասան-Ջալալյանը գրում էր, որ Գանձակում մնացել է 8 տարի՝ 1788 թ.-ից մինչև 1796 թ., և Վրաստան է տեղափոխվել Վալերիան Զուբովի բանակի հետ[667]: Վերը նշվեց, թե Սարգիս Հասան-Ջալալյանը ձգտում էր իրադարձությունները ներկայացնել այնպիսի լույսի տակ, որ ավելի ցայտուն ներկայանար իր ռուսամետ կեցվածքը: Ահա այդ պատճառով էլ նա Երմոլովին ուղղված խնդրագրում գրում է, որ Գանձակից հեռացել է Զուբովի հրամանատարության տակ գործող ռուսական զորքերի հետ:

Հակառակ Սարգսի այս պնդման՝ Ալեքսանդր Երիցյանը, Ռաֆֆին և Լեոն միանշանակ գրում են, որ Սարգիսը Գանձակից Վրաստան է տեղափոխվել 1798 թ., ընդ որում Ռաֆֆին ներկայացնում է ամսաթիվը՝ 1798 թ. մարտի 25[668]:

Երեքն էլ Գանձակից Սարգսի տեղափոխվելու պատճառ են համարում միմյանց հերթագայող ավերիչ արշավանքները, ապա դրան հետևած սովի ու ժանտախտի հետևանքով Ղարաբաղի ու Գանձակի խանությունների ազգաբնակչության զանգվածային արտագաղթը Վրաստան:

Վրաստան գաղթեց նաև Ղարաբաղի և Գանձակի մելիքական տների մեծ մասը: Իր հոգևոր հոտից և մելիքների աջակցությունից չզրկվելու համար Սարգիս Հասան-Ջալալյանը ստիպված էր հետևել նրանց և տեղափոխվել Վրաստան: Այդ քայլը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ 1796 թ. գարնանը Գանձակի պաշարման ժամանակ մելիք Մեջլումի զոհվելուց հետո[669] նա զրկվեց իր հզոր հենարանից:

[666] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 205բ, էջ 35բ-36ա:
[667] Присоединение Восточной Армении к России, т. II, док. 89, с. 124-125.
[668] Ալ. Երիցեան, Ներսէս եպիսկոպոսը Դանիէլ կաթուղիկոսի ժամանակ, Թիֆլիս, 1877, էջ 251; Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 287; Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, էջ 104:
[669] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 268:

ԳԼՈՒԽ 5

ԱՂՎԱՆԻՑ (ԳԱՆՁԱՍԱՐԻ) ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Վրաստանում Սարգիսը հրաժարվեց կաթողիկոսական տիտղոսից և արքեպիսկոպոսական աստիճանով ստանձնեց Արևելյան Վրաստանի ամբողջ տարածքն ընդգրկող Հաղպատի թեմի առաջնորդությունը: Մեկ տասնամյակ այս թեմը կառավարելուց հետո Հովհաննես Գեղարդակրի մեքենայությունների հետևանքով, 1808 թ. նա հեռացվեց թեմական առաջնորդի պաշտոնից[670]:

Սարգիս Հասան-Ջալալյանը, զրկվելով Հաղպատի թեմի առաջնորդությունից, սկսում է բազմաթիվ դիմումներ ուղղել ռուսական իշխանություններին[671]:

Դեռևս Հաղպատի թեմի առաջնորդ եղած ժամանակ նա խնդրագիր էր ուղարկել Ալեքսանդր Ա-ին, և տեղեկացնելով մատուցած ծառայությունների մասին խնդրել էր իրեն եպիսկոպոսական պանագիա շնորհել[672]: Վերն ասվեց, որ 1805 թ. ապրիլի 29-ին Վրաստանի հայ հոգևորականության նկատմամբ Հովհաննես Գեղարդակրի առաջնայնությունը հաստատելու հետ մեկտեղ Ալեքսանդր Ա-ն նրան եպիսկոպոսական պանագիա էր շնորհել[673]:

Այժմ համանման պարգևատրում հայցելով՝ Սարգիս արքեպիսկոպոսը ձգտում էր Հովհաննես Գեղարդակրի հետ հավասար իրավունքներ ստանալ ռուսական իշխանություններից:

Թեպետ Սարգիսը հույսը դրել էր կայսերական արդարադատության վրա, սակայն ներքին գործերի նախարար Ա. Բ. Կուրակինը խնդիրը լուծելու համար եզրակացության իրավունքը վերապահում է նույն տեղական իշխանությանը՝ Կովկասի կառավարչապետ Գուդովիչին ուղարկելով այդ խնդրագիրը: Գուդովիչը, որը հակված չէր հարցը դրական լուծելու, 1809 թ. փետրվարի 10-ին գրավոր հարցում է անում հենց Սարգսի մրցակից Հովհաննես Գեղարդակրին՝ արտահայտելով իր հակատրամադրվածությունը[674]:

[670] Տես գլուխ 1, §3, էջ 40-49:
[671] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 157բ:
[672] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 21, վավ. 107:
[673] Տես էջ 47
[674] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 19, վավ. 82:

1809 թ. փետրվարի 12-ին Գուդովիչին ուղղված իր պատասխանում, անդրադառնալով Սարգիս արքեպիսկոպոսի հետագա ճակատագրին, Հովհաննես Գեղարդակիրը հայտնում էր Գուդովիչին, որ ցանկանում է նրան՝ որպես թեմական առաջնորդի, ուղարկել Ղարաբաղ: Սարգսին Ղարաբաղի թեմական առաջնորդ հաստատելու նպատակահարմարությունը Հովհաննես Գեղարդակիրը հետևյալ կերպ էր բացատրում. «Առաջին, զի ունի նա պատկանաւորութիւն վարիլ լաւապես ընդ ժողովրդոյ տեղւոյն: Երկրորդ, եղբայր նորա Յովհաննէս ուներ տիտուլ՝ պատրիարգի, յետ մահուան նորայ, տեղւոյն հովուի (Սարգիսը-Լ. Մ.): Սա ևս համանման նորայ կանոնի լավապէս կարէ կառաւարել: Երրորդ, յետ մահուան տիտուլարնի պատրիարգին Իսրայէլի մնացեալ է նորայ եպարխիայն համարեայ թէ թարց կառաւարութեան ջերմեռանդութեան»:

Վերջում Հովհաննես Գեղարդակիրը մի կարևոր վերապահում էր անում. «Միայն այնու կերպիւ, որ նա (Սարգիս Հասան-Ջալալյան-Լ.Մ.) ենթ իշխանութեան իմոյ կառաւարեսցէ զայն, զի այլևս չարագործութիւն չպատահեսցի»:[675]

Հովհաննես Գեղարդակիրը ձգտում էր, որ Սարգիս արքեպիսկոպոսը ռուսական իշխանություններից Ղարաբաղի հոգևոր առաջնորդ հաստատվելու հրամանագիր ստանա: Վարդան Օձնեցին գտնում է, որ նա դրանով ցանկանում էր Սարգսի՝ ռուսական իշխանություններին ուղղված հետագա դիմումներին վերջ տալ և նրան Կովկասում ռուսական կառավարչապետության կենտրոն Թիֆլիսից հեռացնել[676]:

Պետք է նշել, որ Գուդովիչին ուղղված իր այս պատասխան նամակով Հովհաննես Գեղարդակիրը փորձում էր միաժամանակ երկու թիրախ խոցել: Նախ, ինչպես գրում է Վարդան Օձնեցին, հեռացնել Սարգսին Թիֆլիսից և որ ավելի կարևոր է, իր վերահսկողության տակ վերցնել Ղարաբաղը:

Հովհաննես Գեղարդակիրը հասկանում էր, որ Գանձակի օրինակով ուղղակի կերպով իր հոգևոր առաջնորդության հաստատումը Ղարաբաղում խռովության տեղիք կտա, որից կարող են օգտվել իր՝ առանց այն էլ մեծ ազդեցությունից դժգոհ հակառակորդները:

Նա տեղյակ էր, որ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը մտադիր է վերադառնալ Ղարաբաղ և հաստատվելով Գանձասարի վանքում՝ վերստին ստանձնել Խաչենի հոգևոր առաջնորդի պաշ-

[675] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 21, վավ. 7:
[676] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 151բ:

տոնը: Իսկ Ղարաբաղի Մեհտի-Ղուլի խանը սատարում և աջակցություն է ցույց տալիս Սարգսի այս մտադրությանը:

Ահա այդ պատճառով էլ Հովհաննես Գեղարդակիրը որոշեց օգտագործել Ղարաբաղ վերադառնալու Սարգսի մտադրությունը. նա ծրագրել էր ռուսական իշխանությունների միջոցով պարտադրել Սարգսին ճանաչել իր գերազանցությունը և այդ ճանապարհով ձեռք գցել Ղարաբաղի հոգևոր իշխանությունը:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է շեշտել, որ Գուդովիչին հասցեագրված նամակում Հովհաննես Գեղարդակիրը խուսափում է նշել, որ Ղարաբաղը Աղվանից կաթողիկոսության մաս է: Իսկ նրա խնդրանքը՝ իրենից կախյալ վիճակում Սարգսին Ղարաբաղի թեմական առաջնորդ հաստատել, նշանակում էր, որ Ղարաբաղը վերածվելու էր Էջմիածնի կաթողիկոսությանը ենթակա հասարակ թեմի: Ընդ որում լրիվ անտեսվում էր Ղարաբաղում գտնվող Սիմեոն կաթողիկոսը:

Անհրաժեշտ է նշել, որ նամակով առաջին անգամ չէ, որ Հովհաննես Գեղարդակիրը Աղվանից կաթողիկոսության թեմերին տիրելու խնդրանքով դիմում էր Գուդովիչին: Այս պատասխան նամակին նախորդող դիմումում նա Գուդովիչին գրում էր. «Ձերդ պայծառափայլությունը Երևանից ռուսական զորքի հետ վերադառնալով և տեղեկանալով Ղարաբաղի պատրիարք Իսրայելի մահվան մասին, բարեհաճեցիք խոստանալ միջնորդել թագավոր կայսեր առջև, մեր հանգուցյալ Դանիել կաթողիկոսի ցանկության համաձայն, իմ եպիսկոպոսությանը միացնել նոր ձեռք բերված այս երկրամասի հայերին, որպեսզի Բարձրագույն հրամանագրով հաստատվելով, իմ իշխանությունը տարածվեր և նրանց վրա: Որով և համարձակվում եմ խնդրել իրականացնել այդպիսի ողորմած խոստումը: Ձերդ պայծառափայլություն դրանով մինչ գերեզման ինձ կպարտավորեցնեք»[677]: Նշված է միայն այդ խնդրագիրը գրելու տարեթիվը՝ 1809 թ., ամսաթիվը բացակայում է: Քանի որ այստեղ ոչինչ չի ասվում Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի Ղարաբաղի առաջնորդ նշանակելու մասին, և Հովհաննես Գեղարդակիրը խնդրում է նոր նվաճված երկրամասը ուղղակիորեն իր հոգևոր իշխանության տակ դնել, ապա կարելի է եզրակացնել, որ դիմումը գրվել է Գուդովիչի 1809 թ. փետրվարի 10-ի հարցումից և այդ հարցումին Գեղարդակիրի փետրվարի 12-ի պատասխանից առաջ՝ 1809 թ. հունվարին:

[677] Акты, т. III, Тифлис, 1869, док. 152, с. 81.

Գուդովիչը, համաձայն իր հարցումին Հովհաննես Գեղարդակիրի պատասխանի, Կուրակինին ներկայացրած եզրակացության մեջ առաջարկեց Սարգիս արքեպիսկոպոսին Ղարաբաղի թեմական առաջնորդ հաստատել:

Գուդովիչին փոխարինած Ա. Պ. Տորմասովին Սինոդի օբեր պրոկուրոր Ա. Ն. Գոլիցինի 1809 թ. օգոստոսի 18-ի ուղերձում հայտնվում էր, որ կայսերական որոշման համաձայն Սարգիս արքեպիսկոպոսը հաստատվել է Ղարաբաղի թեմական առաջնորդ[678]:

Այս ուղերձը ստանալու նույն օրը՝ 1809 թ. հոկտեմբերի 9-ին, Տորմասովը Հովհաննես Գեղարդակիրին տեղեկացրեց, որ Պետերբուրգից ստացվել է Սարգիս Հասան-Ջալալյանին Ղարաբաղի թեմական առաջնորդ հաստատելու հրահանգը և կարգադրեց այդ հրահանգի համաձայն Ղարաբաղ ուղարկել Սարգսին[679]:

Հոկտեմբերի 12-ին Հովհաննես Գեղարդակիրը ուղերձ հղեց Սարգիս Հասան-Ջալալյանին կարգադրելով Ղարաբաղ մեկնելու պատրաստություն տեսնել: Վերջում շեշտում էր, որ Սարգիսն իր հոգևոր պաշտոնը վարելու ընթացքում պետք է ստորադաս և հաշվետու լինի իրեն. «և լինիլ հոգևոր կառավարութիւն ձերոյ կախեալ զմենջ և մեր հոգ տանիլ այնմ, որպես ամենայն հոգևոր կառավարութեան մերոյ»[680]:

Սարգիս Հասան-Ջալալյանը հրաժարվեց ստանձնել Ղարաբաղի թեմի առաջնորդությունը՝ ստորադաս լինելով Հովհաննես Գեղարդակրին,:

1809 թ. նոյեմբերի 4-ին կաթողիկոսական տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսին և Ներքսես եպիսկոպոս Աշտարակեցուն ուղղված նամակում նա գրում էր, որ Պետերբուրգից ստացվել է իր՝ Ղարաբաղի թեմական առաջնորդ հաստատման հրամանագիրը: Սակայն ինքը հրաժարվում է Հովհաննես Գեղարդակրին ստորադաս լինելու պայմանով ստանձնել այդ առաջնորդությունը և Թիֆլիսից չի հեռանա, մինչև Ռուսաստանից Էջմիածին գալով՝ այդ հարցի լուծմամբ անձամբ չզբաղվի նորընծա Եփրեմ Ջորագեղցի կաթողիկոսը[681]:

Գոյություն ուներ մեկ այլ հանգամանք, ինչը արգելք կարող էր հանդիսանալ Սարգիս Հասան-Ջալալյանի Ղարաբաղում վերահաստատվելուն. Աղվանից կաթողիկոսության աթոռը Իսրայելի մահից

[678] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 153:
[679] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 21, վավ. 89:
[680] Նույն տեղում, վավ. 90:
[681] Նույն տեղում, վավ. 107:

հետո թափուր չէր: Կաթողիկոսության աթոռը այդ ժամակ զբաղեցնում էր Սիմեոնը: Ո՞վ էր Սիմեոնը, և ե՞րբ էր կաթողիկոս դարձել:

1806 թ. հուլիսի 10-ին Մինաս Լազարյանին գրած նամակում Հովհաննես Գեղարդակիրը հայտնում էր, որ Գանձակի խանության տարածքի թեմերը իր իշխանության տակ պահելու համար Իսրայելը մտադիր է մեկնել Պետերբուրգ և ցարից այդ թեմերի նկատմամբ իր իշխանությունը հավաստող հրովարտակ ստանալ: Մեկնելուց առաջ Իսրայելը գահակից կաթողիկոս օծեց Սիմեոնին: Իր նամակում Հովհաննես Գեղարդակիրը այդ մասին գրում էր. «Իսրայէլ տեղակալն Աղուանից, ձեռնադրեալ ի տեղի իւր զեղբայրն, եկեալ է Ելիսավետապոլ»[682]:

Ըստ Հովհաննես Շահխաթունյանի և Մակար Բարխուտարյանցի՝ Իսրայելը իր եղբայր Սիմեոնին կաթողիկոս է օծել 1794 թ.[683]: Ընդ որում Բարխուտարյանցը գրում է, որ Սիմեոնը հաստատվում է Երից Մանկանց վանքում, իսկ Իսրայելը շարունակում է մնալ Ամարասում: Մակար Բարխուտարյանցը Հովհաննես Գեղարդակրի նման գրում է, որ Սիմեոնը Իսրայել կաթողիկոսի եղբայրն էր, բայց գտնում է, որ նրա օծումը տեղի է ունեցել 1794 թ., այսինքն՝ Հովհաննես Գեղարդակրի հաղորդած թվականից 12 տարի ավելի վաղ:

Հովհաննես Գեղարդակիրը, ի տարբերություն Շահխաթունյանի և Բարխուտարյանցի, այդ դեպքերի ժամանակակիցն էր: Եվ պետք է ստույգ համարել Սիմեոնի օծման նրա հաղորդած տարեթիվը: Սիմեոնի օծման նույն տարեթիվն է նշում նաև Առաքել Կոստանյանը իր «Պատմութիւն Արցախի» ձեռագիր աշխատության մեջ. «Ի սոյն թուոջ՝ ՌՄԾԵ (1806) Իսրայէլ կաթուղիկոսն օրհնեց զՍիմէօն եպիսկոպոսն ի յաստիճան կաթուղիկոսութեան»[684]: Ընդ որում Կոստանյանը տեղյակ չէ Իսրայելի և Սիմեոնի ազգակցական կապի մասին:

Երևանի Մատենադարանում պահվող վավերագրերից մեկը խիստ հետաքրքիր տեղեկություն է տալիս քննարկվող նյութի վերաբերյալ: Այն վերոհիշյալ Սիմեոն կաթողիկոսի 1809 թ. մայիսին գրված օրհնության կոնդակն է՝ ուղղված ոմն Իշխան քյոխվայի:[685] Սակայն հետաքրքրության արժանին ոչ թե կոնդակի բովանդակությունն է, այլ կոնդակի կնքադրոշմի մակագրությունը. «Սիմէօն կաթուղիկոս. ՌՄԺԲ (1763)»: Այսինքն, ըստ կնքադրոշմի վրայի թվականի, Սիմեոնը կաթողիկոս է դարձել 1763 թ.՝ Իսրայելի և Հովհաննես Հասան-Ջալալյանի հետ միևնույն տարում:

Արձանագրելով այս փաստը՝ պետք է նշել, որ դա եզակի դեպք չէր Աղվանից կաթողիկոսության պատմության մեջ: Երկրորդ գլխում նշել ենք XVIII դ. երկրորդ կեսին կազմված Աղվանից կաթողիկոսների գավազանագրում տեղ գտած Մելիքսեթ Արեշեցի և Եղիա անուններով կաթողիկոսների մասին, որոնց անունները գավազանագիրը կազմողը տեղադրել է Պետրոս Խանձթեցուց հետո, Սիմեոն Խոտորաշենցի և Երեմիա Հասան-Ջալալյան կաթողիկոսների հետ համատեղ՝ անվանելով նրանց կեղծ և ինքնակոչ կաթողիկոսներ[686]:

Ահա այսպիսի ինքնակոչ էր նաև Սիմեոնը, որը 1763 թ. իրեն կաթողիկոս էր հռչակել և հավանաբար փոքրաթիվ աջակիցներ ունենալով՝ իր «կաթողիկոսության» սահմանները շուրջ 43 տարի սահմանափակել մի քանի գյուղերով:

Հենվելով այն փաստի վրա, որ Սիմեոնը Իսրայելի հետ միևնույն տարում է իրեն կաթողիկոս հռչակել, դժվար է հավաստի համարել Մակար Բարխուտարյանցի և Հովհաննես Գեղարդակրի այն հաղորդումը, թե Սիմեոնը Իսրայելի եղբայրն էր: Մեր այս ենթադրության արժանահավատության օգտին է խոսում Ռաֆֆու տված տեղեկությունը, ըստ որի Սիմեոնը ոչ թե Իսրայելի եղբայրն էր, այլ 1675-1702 թթ. կաթողիկոս եղած Սիմեոն Խոտորաշենցու եղբորորդին[687]: Իհարկե, ժամանակային առումով ավելի ճիշտ կլինի ենթադրել, որ Սիմեոնը ոչ թե Սիմեոն Խոտորաշենցու եղբորորդին է, այլ՝ եղբոր թոռը:

Սարգիս արքեպիսկոպոսի Ղարաբաղ վերադառնալու մտադրությունը և այդ մտադրության նկատմամբ Մեհտի-Ղուլի խանի բարեհաճ վերաբերմունքը, ինչպես նաև Աղվանից կաթողիկոսության թեմերի նկատմամբ վերահսկողություն հաստատելու Հովհաննես Գեղարդակրի նկրտումները խիստ անհանգստություն պետք է պատճառեին Ղարաբաղում գտնվող Սիմեոն կաթողիկոսին և նրան աջակցող հոգևորականությանը:

1810 թ. օգոստոսին, երբ կայսերական հրովարտակով կաթողիկոս հաստատված Եփրեմ Ջորագեղցին Ռուսաստանից էջմիածին ուղևորվելիս կանգ առավ Թիֆլիսում, նրան ներկայացան Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը և Սիմեոն կաթողիկոսը:

---

682 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 21, վավ. 107:

683 Յովհաննէս Շահխաթունեան, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Հատոր երկրորդ, էջ 348; Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 122:

684 Մատենադարան, ձեռ. N 7823, էջ 103բ:

685 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 105:

686 Տես գլուխ 2, էջ 68-69:

687 Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 222:

1814 թ. դեկտեմբերին Ղարաբաղի հոգևորականությանը և ժողովրդին ուղղված կոնդակում Եփրեմ Ջորագեղցին, անդրադառնալով Թիֆլիսում Սարգիս արքեպիսկոպոսի և Սիմեոն կաթողիկոսի հետ իր այս հանդիպմանը գրում է, որ սրանք, իրար հետ անհաշտ լինելով, միմյանցից բողոքներ են ներկայացրել,իսկ ինքը հրաժարվել է խնդրին մենակ լուծում տալ, և հրամայել է երկուսին էլ գնալ էջմիածին և վեճի կարգավորումը հանձնել «Կառավարիչ Ս. ժողովին» (1808 թ. Դանիել կաթողիկոսի կողմից ստեղծված հոգևոր խորհուրդ-Լ. Մ.):[688]

1814 թ. գրած այս կոնդակում Եփրեմ կաթողիկոսը փորձում է 1810 թ. օգոստոսին Թիֆլիսում իր գլխավորությամբ քննարկված հիմնահարցը ներկայացնել զուտ որպես Ղարաբաղի հոգևոր իշխանության համար Սարգիս արքեպիսկոպոսի և Սիմեոն կաթողիկոսի վեճ: Կոնդակում ոչինչ չի ասվում Ղարաբաղի թեմերի նկատմամբ վերահսկողություն հաստատելու Հովհաննես Գեղարդակրի մտադրության մասին: Դրանով իսկ Եփրեմ կաթողիկոսը սքողում էր հարցի հիմնական կողմը, և եթե Գեղարդակրին հաջողվեր իրականացնել այդ մտադրությունը, ապա Աղվանից կաթողիկոսության միջուկը կազմող Ղարաբաղի թեմերը կանցնեին էջմիածնի ենթակայության տակ:

Էջմիածնի հոգևոր խորհրդում այս խնդիրը չքննարկվեց Սիմեոն կաթողիկոսի տարօրինակ հանգամանքներում տեղի ունեցած մահվան պատճառով:

Սիմեոն կաթողիկոսի մահվան հանգամանքների մասին տեղեկանում ենք Ներսես Աշտարակեցուն ուղղված Աբրահամ վարդապետ Աստրախանցու 1810 թ. սեպտեմբերի 26-ին գրված նամակից: Աբրահամ վարդապետը տեղեկացնում էր, որ Սիմեոն կաթողիկոսի հիվանդությունը սկսվել է 1810 թ. սեպտեմբերի 1-ին Թիֆլիսից Ղարաբաղ մեկնելու օրը: Նա մահացավ 1810 թ. սեպտեմբերի 12-ին Գանձակում:

Նույն օրը այն տան առջև, ուր մահացել է Սիմեոնը, մեծաթիվ բազմություն է հավաքվում, որտեղ տանտերը՝ Մկրտում Ֆաթալյանցը մեղադրում է էջմիածնեցի հոգևորականներին Սիմեոնին թունավորելով սպանելու մեջ[689]:

Ռաֆֆին նույնպես գտնում է, որ Սիմեոն կաթողիկոսին թունավորել են, և անվանում է թունավորողին. «Թիֆլիսի էջմիածնականները նրա (Սիմեոն կաթողիկոսի-Լ. Մ.) հետ ցերեմոնիա չարեցին:

[688] Акты, т. V, Тифлис, 1873, док. 522, с. 443.
[689] Մատենադարան, Սրխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164ա, վավ. 438:

«Շահագեղան» Հովհաննես վարդապետի քթախոտի տուփը ձեռնածուի արկղիկի նման երկու խորշեր ուներ. մեկից ինքն էր քաշում, մյուսից առաջարկում էր այն անձիքներին, որոնց հարկավոր էր ուղարկել ոգիների աշխարհը: Սիմեոն կաթողիկոսին վիճակվեցավ վերջին խորշի մեջ ածած քթախոտով կազդուրել իր պնչերը: Նա թունավորվեցավ և թողեց Թիֆլիսը, գնաց Գանձակ: Մինչև այնտեղ չհասած, կաթողիկոսի մորուքի և գլխի մազերը թափվեցան և Գանձակում վախճանեցավ: Դա Երից-Մանկանց վանքի վերջին կաթողիկոսն էր»[690]:

Տարօրինակ հանգամանքներում Սիմեոն կաթողիկոսի մահը բողոքի մեծ ալիք բարձրացրեց Աղվանից կաթողիկոսության բոլոր թեմերում: Ընդհանրագրեր ուղարկվեցին էջմիածին՝ Եփրեմ կաթողիկոսին, ուր հայտարարվում էր, որ հրաժարվում են ճանաչել իրենց թեմերում Հովհաննես Գեղարդակրի և Սարգիս Հասան-Ջալալյանի հոգևոր իշխանությունը և պահանջում են էջմիածնական հոգևորականներ չառաքել իրենց թեմեր[691]:

Հովհաննես Գեղարդակիրը որոշեց սկսված խռովությունը վերացնելու համար անձամբ մեկնել Գանձակ: Եփրեմ կաթողիկոսը ժամանակավրեպ էր համարել այդ որոշումը և խորհուրդ էր տվել մի որոշ ժամանակ՝ մինչև կրքերի հանդարտվելը, հետաձգել Գանձակ մեկնումը: Սակայն Գեղարդակիրը չէր փոխել իր մտադրությունը և այդ մասին տեղեկացնելով Եփրեմին՝ խնդրել էր դիմել Կովկասի կառավարչապետ Տորմասովին, որպեսզի նա հրամայի Ղարաբաղի, Գանձակի և Շաքիի հայերին՝ հնազանդվել էջմիածնի հոգևոր իշխանությանը, և նման բովանդակությամբ կոնդակ էր ուղարկել այդ թեմերը[692]:

Եփրեմ կաթողիկոսը 1811 թ. հունվարի 15-ին նամակ գրեց Հովհաննես Գեղարդակրին, ուր տեղեկացնում էր, որ կատարելով նրա խնդրանքը՝ դիմել է Տորմասովին և սպասում է նրա հրամանագրի էջմիածին հասնելուն, որպեսզի ինքն էլ շրջաբերական կոնդակ գրի վերոհիշյալ թեմերին:

Անդրադառնալով Հովհաննես Գեղարդակրի մտադրությանը, այն է՝ Սարգիս Հասան-Ջալալյանին իրեն ենթակա թեմական առաջնորդի կարգավիճակով Ղարաբաղ ուղարկելուն, Եփրեմ կաթողիկոսը, թեև դրան հավանություն է տալիս, բայց գրում է, որ նրան Ղարաբաղի հոգևոր առաջնորդ կարգելու վերաբերյալ կոնդակը ին-

[690] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 289:
[691] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 19, վավ. 178:
[692] Նույն տեղում:

քը այժմ չի կարող տալ, «զի անդուստ մատուցեալ զբազմակնիքս սաստիկս յառաջադրեն դժկամութիւնս առ որ ընտրելի համարի մեզ, զի թերևս յանցանել աւուրց սաստկութեան ծմռան կարելի լինի կոչել աստ զոմանս ի նոցանէ և այնպես զչափ առնուլ ի նոցանէ, յորժամ կամ կոչեսցուք աստ և զինքն զՍարգիս արքեպիսկոպոսն և կամ ցուցցուք նմա զկարևորն»[693]:

Հովհաննես Գեղարդակրի փորձերը՝ իրեն ենթակա դարձնելու Ղարաբաղ վերադառնալ ծրագրող Սարգիս Հասան Ջալալյանին, և Սիմեոն կաթողիկոսի մահից հետո Աղվանից կաթողիկոսության թեմերում ծայր առած հուզումները հետաձգեցին Սարգսի վերադարձը Ղարաբաղ: Ղարաբաղում և Աղվանից կաթողիկոսության մյուս թեմերում Սարգսին էջմիածնի ներկայացուցիչ էին համարում, որն էլ պատճառ էր դարձել այդ թեմերից Եփրեմ կաթողիկոսին ուղղված ընդհանրագրերում տեղ գտած Սարգսին Ղարաբաղ չուղարկելու պահանջին:

Աղվանից կաթողիկոսության թեմերը իրեն ենթարկելու էջմիածնի փորձերը 1811 թ. հունվարին Հովհաննես Գեղարդակրի մահով չդադարեցին: Ղարաբաղում գտնվող էջմիածնի ներկայացուցիչ Իսրայելը ամեն կերպ ջանում էր Ղարաբաղի թեմերում հաստատել էջմիածնի հոգևոր իշխանությունը: Մենք հստակ տեղեկություն չունենք, թե ինչ կարգավիճակ ուներ Իսրայելը: Նրա մասին տեղեկանում ենք Մեհտի-Ղուլի խանի հրովարտակից, ուր նա էջմիածնեցի է կոչվում[694]: Իսրայելը, հավանաբար, Հովհաննես Գեղարդակրի կողմից Ղարաբաղում առաջնորդական փոխանորդ էր նշանակվել:

Ղարաբաղի խանության առաջացումից հետո Գանձասարում նստող կաթողիկոսները հաստատվում էին Ղարաբաղի խանի հրովարտակով և գտնվում էին նրա վերահսկողության տակ: Էջմիածնի ներկայացուցիչ Իսրայելը Ղարաբաղում հոգևոր գործունեություն էր վարում առանց խանի հրովարտակի և նրա վերահսկողությունից դուրս էր:

Էջմիածինն ակտիվորեն աջակցում էր ռուսական ներթափանցմանն ու խորացմանը Հարավային Կովկասի հոծ հայկական ազգաբնակչություն ունեցող շրջաններում: Էջմիածնին Ղարաբաղի թեմերի ենթարկումով կվերանար խանի վերահսկողությունը Ղարաբաղի հայ հոգևորականության նկատմամբ և դրանով կդադարեր գործել Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը խանի գերիշխանության տակ պահելու լծակներից մեկը:

[693] Մատենադարն, Կթղկ. դիվան, թղթ. 19, վավ. 178:
[694] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 248:

Ղարաբաղի թեմերի էջմիածնի հոգևոր իշխանության տակ անցումը խոչընդոտելու համար Մեհտի-Ղուլի խանը կարիք ուներ այնպիսի բարձրաստիճան հայ հոգևորական գործչի աջակցության, որը բարձր համարում և հեղինակություն ունենալով Ղարաբաղում կկարողանար համախմբել տեղի հոգևորականությանը և ժողովրդին, դիմագրավել Ղարաբաղում իր իշխանությունը հաստատելու էջմիածնի փորձերին:

Խանի ընտրությունը դեռևս 1808 թ. կանգ էր առել Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի վրա: Այդ թվականի ամռանը Դանիել կաթողիկոսի կոնդակով հեռացվելով Հաղպատի թեմի առաջնորդությունից՝ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը որոշեց վերադառնալ Ղարաբաղ և վերստին ստանձնել Գանձասարի վանքի թեմի առաջնորդությունը: Այս մտադրությունն իրականացնելու համար անհրաժեշտ էր ստանալ Ղարաբաղի Մեհտի-Ղուլի խանի համաձայնությունը, որպեսզի հնարավոր լիներ նրա անխոչընդոտ վերադարձը Ղարաբաղ, ինչպես նաև պետք է հետ վերադարձվեր Գանձասարի վանքի հողային սեփականությունը, որը 1786 թ. Հովհաննես կաթողիկոսի սպանությունից հետո մասնակիորեն, ապա 1791 թ. Գանձասարի վանքից Գանձակ Սարգսի փախչելուց հետո ամբողջովին բռնագրավվել էր:

Իր վերադարձի հետ առընչվող այս խնդիրները կարգավորելու համար Սարգիս արքեպիսկոպոսը Ղարաբաղ ուղարկեց իր եղբորորդուն՝ Բաղդասար վարդապետին[695]:

Վերջինիս հաջողվում է Մեհտի-Ղուլի խանից ստանալ հրովարտակներ, որոնցով Իբրահիմ խանի օրոք Գանձասարի վանքից օտարված հողատարածքները վերադարձվում էին:

Այս հրովարտակների հրապարակման թվական է նշված Հիջրայի 1224 թ. մուհարամ ամիսը (1809 թ. փետրվարի 16-մարտի 18): Դրանցից մեկում նշվում է Գանձասարի վանքի վակֆային սեփականություն կազմող հողային տարածքները, որոնք հարկման ենթակա չէին[696]: Մյուս հրովարտակով Մեհտի-Ղուլի խանը հրամայում է Խաչենի մելիք Ալավերդուն և Խաչենի գավառի այն գյուղական համայնքներին և անհատ հողատերերին, որոնք Գանձասարի վանքի հողային սեփականության օտարումից հետո ձեռք էին բերել նախկինում վանքին պատկանող հողահանդակներ, ամբողջովին վերադարձնել դրանք[697]: Երրորդ հրովարտակով խանը հայտարա-

[695] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 319:
[696] Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մաս Բ, էջ 496:
[697] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 159բ:

ռում էր, որ «Խաս գյուղի» (Գանձասարի վանքին կից Վանք գյուղ-Լ. Մ.) հողահանդակները Գանձասարի վանքի մուլքային սեփականությունն են, և անօրինական էր ճանաչում այդ հողերի յուրացումը Քոլանի քրդական ցեղի կողմից[698] (Իբրահիմ խանի հրավերով Երևանի խանությունից Ղարաբաղ են գաղթել 1765 թ.-Լ. Մ.):

Հավանական ենք համարում, որ խանի հրավերից հետո էր միայն Սարգիս Հասան-Ջալալյանը որոշել վերադառնալ Ղարաբաղ և այդ վերադարձը նախապատրաստելու համար այդտեղ առաքել Բաղդասար վարդապետին:

Իր հոգևոր գերազանցությունը Սարգսին պարտադրելու ճանապարհով Ղարաբաղի թեմերի վերահսկողություն հաստատելու Հովհաննես Գեղարդակրի փորձերը, ապա Սիմեոն կաթողիկոսի մահվանից հետո Աղվանից կաթողիկոսության թեմերում ծայր առած հուզումները թույլ չտվեցին Սարգիս արքեպիսկոպոսին վերադառնալ Ղարաբաղ:

Միայն Գեղարդակրի մահից և հուզումների հանդարտվելուց հետո հնարավոր դարձավ 1812 թ. իրականացնել Սարգիս արքեպիսկոպոսի վերադարձը հայրենիք:

Ռաֆֆին գրում է, որ Սարգիսը Ղարաբաղ վերադառնալուց անմիջապես հետո կրկին սկսեց իրեն Աղվանից կաթողիկոս կոչել և «կաթողիկոսական իրավունքներ ի գործ դնել»[699]:

Մեհտի-Ղուլի խանը Սարգիս Հասան-Ջալալյանին Գանձասարի կաթողիկոս ճանաչեց և հիջրայի 1227 թ. շավալ ամսին (10. հոկտեմբեր - 6. նոյեմբեր. 1812 թ.) գրված հրովարտակով հայտարարեց, թե քանի որ Սարգիսը Հովհաննես և Եսայի կաթողիկոսների ժառանգն է, ուստի օրինական է նրա կաթողիկոսությունը, և հրամայեց հնազանդվել Սարգիս կաթողիկոսին:

Հրովարտակում ասվում էր, որ էջմիածնի ներկայացուցիչ Իսրայելը պետք է կա՛մ, ենթարկվելով այս հրամանին, չխառնվի Սարգիս կաթողիկոսի գործերին, կա՛մ թողնի Ղարաբաղը և վերադառնա էջմիածին[700]:

Լեոն մեջ է բերում այս հրովարտակը, սակայն նրա օգտագործած թարգմանության մեջ էջմիածնի ներկայացուցիչ Իսրայելի վերաբերյալ հատվածը թերի է և աղավաղում է հրովարտակի իմաստը. «Ուստի հրամայեմք ձեզ ամենուցուն հնազանդիլ նմա

[698] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 241:
[699] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 319:
[700] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 248:

(Սարգսին-Լ. Մ.) որպէս ծերոյ հարազատ կաթողիկոսի, փոխանակ Իսրայելի»[701]:

Լեոյի օգտագործած թարգմանության մեջ ոչինչ չի ասվում Իսրայելի՝ էջմիածնի ներկայացուցիչ լինելու և Ղարաբաղը թողնելու՝ նրան ուղղված խանի հրամանի մասին: Այսպիսով, այն թյուր կարծիքն է ստեղծվում, թե խանը հրամայում էր հնազանդվել Սարգսին՝ 1808 թ. մահացած Իսրայել կաթողիկոսի փոխարեն:

Այս հրովարտակի հետ միաժամանակ խանը մեկ այլ հրովարտակով Վարանդայի հայ ազգաբնակչությանը հրամայեց հնազանդվել Սարգիս կաթողիկոսի կողմից Ամարասի առաջնորդ նշանակված Բաղդասար Հասան-Ջալալյանին[702]:

Իր եղբորորդի Բաղդասարին Ամարասի առաջնորդ կարգելով՝ Սարգիս կաթողիկոսին հաջողվեց իր հոգևոր իշխանությունն ամուր հիմքերի վրա դնել Վարանդայի մելիքությունում, այն մելիքությունում, որի թեմական կենտրոն Ամարասի վանքը ապաստան էր հանդիսացել Հասան-Ջալալյան կաթողիկոսների հակառակորդներ Սիմեոն Խոտորաշենցու և Իսրայելի համար:

Էջմիածնից Սարգսի կաթողիկոսական աստիճանի հաստատման կոնդակ ստանալու նպատակով Ղարաբաղում Եփրեմ Ձորագեղցի կաթողիկոսին ուղղված ընդհանրագրեր են կազմվում:

Վարդան Օձնեցին գրում է. «Հինգ մելիքք Ղարաբաղու, որոնց անունք էին Մելիք-Խուդադ-բեկ (Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի թոռն էր, Վարանդայի մելիքը-Լ. Մ.), Մելիք Ասլան-բեկ (Բաղդադ-բեկ Մելիք-Ավանյանի որդին էր, Դիզակի մելիքը-Լ. Մ.), Մելիք-Փրիդունի որդի Յովսեփ-բեկ (Գյուլիստանի մելիքն էր-Լ. Մ.), Լալա-բեկ Դիզակայ (Մեհտի-Ղուլի խանի գլխավոր հարկահավաքն էր-Լ. Մ.) խրախուսեալ ի հրովարտակ է Մեհտի-Ղուլի խանի (10 հոկտեմբեր–6 նոյեմբեր 1812 թ. հրապարակած հրովարտակը-Լ. Մ.), մահսէր արարեալ գրեն առ Եփրեմ կաթուղիկոսն յէջմիածին բանիւք վասն ընդունելոյ զՍարգիս կաթուղիկոս Աղուանից»[703]:

Բացի Վարդան Օձնեցու նշած այս ընդհանրագրից, 1812 թ. նոյեմբերի 15-ով թվագրված դիմումներ են գրվում նաև 1808 թ. հիմնադրված Բարձրագույն Ս. ժողովի կամ Սինոդի անդամներ տեղապահ Բարսեղ և Ներսես Աշտարակեցի արքեպիսկոպոսներին: Այդ նամակներից առաջինի հեղինակներն էին Վարանդայի մելիք Խուդադատ Մելիք-Շահնազարյանը, նրա եղբայր Բահրամ-բեկը,

[701] Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, էջ 110:
[702] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 247:
[703] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 163ա:

Շուշիում հաստատված ղազանչեցիների ու ագուլեցիների քյոխվաները և շուշեցի մեծահարուստներ Բաբա Հախումյանն ու Առաքել Խաչատրյանը, երկրորդ նամակի հեղինակը Սարգիս Հասան-Ջալալյանն էր:

Նամակագիրները խնդրում էին Սարգիս Հասան-Ջալալյանին ճանաչել կաթողիկոս: Մեր ձեռքի տակ չկան այդ նամակները, և նրանց բովանդակության մասին տեղեկանում ենք նամակագիրներին հասցեագրված Ներսես Աշտարակեցու պատասխանից:

1812 թ. դեկտեմբերի 20-ին գրած իր պատասխաններում Ներսես Աշտարակեցին, քննադատելով ղարաբաղցիների էջմիածնից անջատ և անկախ կաթողիկոսություն ունենալու ձգտումը, անօգուտ և վնասակար էր համարում փոքրաթիվ հայոց մեջ չորս կաթողիկոսությունների գոյությունը[704]:

Սարգսին ուղղված նամակում Ներսես Աշտարակեցին էջմիածնից զատ Աղվանից կաթողիկոսության առկայությունը համեմատում է մեկ մարմնի վրա բազմաթիվ գլուխների գոյության հետ, հորդորում Սարգսին հրաժարվել կաթողիկոսական տիտղոսից. «Եթէ ձերդ սրբութիւն ևս բարւոքն համարէ վասն ձեր և վասն մեր ժողովրդեանս՝ ի բաց կայջիք ի պախարակեալ յօժարութենէ կամաց ձերոց այն շնորհքն Տեառն Աստուծոյ են: Իսկ եթէ ոչ՝ կամք ձեր են»[705]:

Եփրեմ կաթողիկոսը, ինչպես տեղեկացնում է Վարդան Օձնեցին, ընդհանրապես անպատասխան թողեց ղարաբաղցիների ընդհանրագիր դիմումը. «Վասն այսօրիկ զայրացեալ հայք Ղարաբաղու, ընդ ձեռն խանին ամփոփեն զԱղուանս ի ներքոյ իշխանութեան Սարգսի»[706]:

Հիջրայի 1228 թ. ռաբի ալ շանի ամսին (3. 04. 1813–2. 05, 1813) գրված հրովարտակով Մեհտի-Ղուլի խանը հաստատում էր հայ ժողովրդի կողմից առաջադրված նոր կաթողիկոս Սարգսին: Էջմիածնի կաթողիկոսն իրավունք չունի կասկածի տակ դնել նրա գոյությունը և խառնվել նրա գործերին: Այդ մասին մելիքները հայտնել են Թիֆլիսի սարդարին (Ռտիշչևին-Լ. Մ.)[707]:

Սույն հրովարտակից տեղեկանում ենք, որ Ղարաբաղի մելիքները Սարգսի կաթողիկոսական աստիճանը հաստատելու խնդրանքով դիմել էին Կովկասի կառավարչապետ Ռտիշչևին:

[704] Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164բ, վավ. 29:
[705] Նույն տեղում, վավ. 34:
[706] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 163ա:
[707] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 249:

Մեհտի-Ղուլի խանը անմիջականորեն դիմեց նաև իր երկու հարևան խաներին՝ Շաքիի Ջաֆար-Ղուլի խանին և Շամախու Մուստաֆա խանին՝ խնդրելով Սարգսին Աղվանից կաթողիկոս ճանաչել[708]: Շաքիի և Շամախու խաները նույնպես շահագրգռված էին իրենց հպատակ հայերին հեռու պահել էջմիածնի ազդեցությունից: Այդ պատճառով էլ նրանք նույնպես հրովարտակներով հաստատեցին Սարգսին Աղվանից կաթողիկոս[709]:

1813 թ. ամռանը Ղարաբաղում, Շաքիում և Շամախիում Եփրեմ Զորագեղցուն ուղղված ընդհանրագրեր են կազմվում, որոնցով պահանջվում էր ճանաչել էջմիածնից առանձին Աղվանից կաթողիկոսության գոյությունը, չխառնվել այդ կաթողիկոսության ներքին խնդիրներին և կոնդակով հաստատել այդ կաթողիկոսության հայրապետ Սարգսին: Նույն բովանդակությամբ նամակներով Եփրեմ կաթողիկոսին դիմում են նաև Ղարաբաղի, Շաքիի և Շամախու խաները[710]: Եփրեմ կաթողիկոսը՝ ի պատասխան ընդհանրագրերի և խաների նամակների, 1813 թ. հուլիսի 21-ի կոնդակով Ղարաբաղի, Շաքիի և Շամախու խանությունների հայերի հոգևոր կառավարումը և այստեղից հոգևոր տուրք հավաքելու իրավունքը հանձնեց Սարգսին[711]:

Կոնդակում Եփրեմը խուսափում է անդրադառնալ ընդհանրագրերում և խաների նամակներում տեղ գտած բուն պահանջին՝ ճանաչել Ղարաբաղի և Շիրվանի թեմերի էջմիածնից անկախ կարգավիճակը, նրանց պատկանելը Աղվանից կաթողիկոսությանը և Սարգիս Հասան-Ջալալյանի կաթողիկոսական աստիճանը:

Եփրեմը կոնդակում Սարգսին անվանում է արքեպիսկոպոս ու թեև այդ թեմերի կառավարումը և հոգևոր տուրք հավաքելու իրավունքը հանձնում է նրան, սակայն ոչ իբրև այդ թեմերի ինքնիշխան հոգևոր վեհապետի, այլ որպես էջմիածնի արքեպիսկոպոսի և թեմական առաջնորդի՝ միայն ավելի լայն լիազորություններով: Այս կոնդակով ճանաչվում էր Սարգսի հոգևոր իշխանությունը միայն այն խանությունների հայ ազգաբնակչության վրա, որոնց մահմեդական իշխողները պահանջել էին ճանաչել Սարգսի կաթողիկոսական իրավունքները իրեն հպատակ հայերի նկատմամբ: Փաստորեն Աղվանից կաթողիկոսության մաս կազմող Դերբենտը, Բաքուն և Գանձակը դուրս էին մնում Սարգսի վերահսկո-

[708] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 164ա:
[709] Նույն տեղում, վավ. 255ա, 255բ, 256բ:
[710] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 23, վավ. 185ա:
[711] Նույն տեղում, վավ. 185բ:

ղության շրջանակից:

Կոնդակում Եփրեմը կարևոր շեշտադրում էր անում. Ղարաբաղի և Շիրվանի թեմերի կառավարումը Սարգսին ժամանակավոր էր տրվում:

Վարդան Օձնեցին գտնում է, որ Եփրեմ կաթողիկոսը, այս կոնդակը հրապարակելով, ժամանակ շահելու նպատակ էր հետապնդում[712]:

Եփրեմ կաթողիկոսը, որպեսզի խոչընդոտի Սարգսին Աղվանից կաթողիկոսության թեմերում էջմիածնից անկախ կաթողիկոսել, դիմեց կառավարչապետ Ռտիշչևի միջամտությանը: Վերջինս այդ հարցի կապակցությամբ 1813 թ. հոկտեմբերի 19-ին հրամանագիր ուղարկեց Գանձակի և Ղարաբաղի ռազմա-քաղաքական վարչության ղեկավար իշխան Դմիտրի Օրբելիանուն, ուր հրահանգում էր «Սարգսին խստագույնս արգելել նույնիսկ մտածել անգամ Ղարաբաղի կաթողիկոս կոչվելու մասին: Դրա հետ մեկտեղ բարեվայելուչ կերպով հասկացրեք խանին (Մեհտի-Ղուլիին-Լ. Մ.), որ նա չպետք է միջամտի իրեն չվերաբերող եկեղեցական գործերին, այլ պարտավոր է եռանդորեն ջանալ Նորին կայսերական մեծության կամքի անշեղ կատարման համար»[713]:

Ռտիշչևի այս հրամանագրից տեղեկանում ենք, թե Եփրեմ Ձորագեղցուն կաթողիկոս հաստատող Ալեքսանդր Ա կայսեր հրովարտակում հատուկ շեշտվել է, որ Ռուսաստանը հայ ժողովրդի միակ կաթողիկոս է ճանաչում Եփրեմին:

Ռուսաստանը ծրագրել էր իր սահմանները հասցնել մինչև Արաքս գետը և իր տարածքում հայտնված էջմիածինը պետք է ծառայեր ռուսական ազդեցության տարածմանը Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում և աշխարհի այն երկրներում, որտեղ հայկական գաղթավայրեր գոյություն ունեին: Այդ պատճառով Ռուսաստանն էջմիածինը ճանաչում էր հայերի միակ հոգևոր կենտրոն, դրանով իսկ չէր ընդունվում Օսմանյան կայսրության տարածքում գտնվող մյուս երկու նվիրապետական աթոռների՝ Սիսի և Աղթամարի կաթողիկոսությունների օրինականությունը, որոնց միջոցով թուրքերը կարող էին հակազդել ռուսական ազդեցության հաստատմանը իրենց հպատակ հայ ազգաբնակչության նկատմամբ:

Ակնհայտ է, որ կայսերական հրովարտակում տեղ գտած այս դրույթը պետք է առաջինը գործեր Հայոց եկեղեցու չորրորդ

[712] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 164բ:
[713] Акты, т. V, док. 518, с. 437.

նվիրապետական աթոռի՝ Աղվանից կաթողիկոսության նկատմամբ, որի բոլոր թեմերը Ռտիշչևի այս հրամանագրից մեկ շաբաթ առաջ՝ 1813 թ. հոկտեմբերի 12-ին, Գյուլիստանի պայմանագրով անցել էին Ռուսաստանին:

Չնայած Ռտիշչևի այս հրամանագրին՝ Ղարաբաղի, Շաքիի և Շամախու խաները չդադարեցին Սարգսին կաթողիկոս ճանաչել և շարունակեցին աջակցել նրան: Այդ աջակցության շնորհիվ Սարգիսը չհրաժարվեց իր կաթողիկոսական աստիճանից և 1814 թ. մայիսին մեռոնաբեր նվիրակ ուղարկեց Շիրվան, իսկ տեղի Մուստաֆա խանը հրովարտակով հրամայեց իր հպատակ հայերին՝ հոգևոր տուրքը հանձնել Սարգսի նվիրակին[714]:

Քանի որ Ռտիշչևի 1813 թ. հոկտեմբերի 19-ի հրամանագիրը սպասվելիք ազդեցությունը չունեցավ, Եփրեմ կաթողիկոսը որոշեց ներսից խարխլել Սարգսի և նրա կողմնակիցների դիրքերը: Այդ ծրագրի կենսագործումը դրվեց Ղարաբաղի թեմերին քաջածանոթ Իսրայել արքեպիսկոպոսի վրա, որը մինչև 1812 թ. Սարգսի Ղարաբաղ վերադառնալը էջմիածնի ներկայացուցիչն էր այստեղ և Մեհտի-Ղուլի խանի հրովարտակով 1812 թ. հոկտեմբերին վտարվել էր[715]:

1814 թ. հոկտեմբերի 30-ի կոնդակով Իսրայել արքեպիսկոպոսը՝ որպես «իմտատիաճի» (նպաստահավաք-արաբ. իմդատ բառից), ուղարկվեց Աղվանից կաթողիկոսության թեմերը՝ կամավոր նվիրատվություններ ժողովելու[716]:

Այս կոնդակում Եփրեմ կաթողիկոսը Սարգսին անվանում է արքեպիսկոպոս, բայց ճանաչում է նրա գլխավորած թեմերի՝ էջմիածնից անկախ լինելը. «Դուք, սիրելիքդ մեր յադկապես վիճակեցեալ եք հրաշալի Աթոռոյն սրբոյն Գրիգորիսի՝ թոռինն սրբոյն Լուսաւորչին մերոյ և չունիք ինչ պարտականութիւն հոգևորական նուէրս հասուցանելոյ մեզ»[717]:

Իսրայել արքեպիսկոպոսին հաջողվում է պառակտում առաջացնել մինչ այդ Աղվանից կաթողիկոսության անկախ գոյատևման համար Սարգիս Հասան-Ջալալյանի շուրջը համախմբվածների շրջանում[718]:

[714] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 256ա:
[715] Տես վերը, էջ 194
[716] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 241, վավ. 296:
[717] Նույն տեղում:
[718] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 164բ:

Սարգիս Հասան-Ջալալյանի կողմնակիցների միջից տատանվողներին և Աղվանից կաթողիկոսության թեմերի հասարակ ծխականներին զատելու նպատակ հետապնդելով՝ Եփրեմ կաթողիկոսը բանադրեց Սարգսին և այդ մասին շրջաբերական կոնդակով տեղեկացրեց Սարգսի իշխանության տակ գտնվող թեմերին[719]:

Մենք օգտվել ենք կոնդակի ռուսերեն թարգմանությունից: Այն թվագրված է 1815 թ. (դեկտեմբեր), ինչը լուրջ կասկածների տեղիք է տալիս: Որպես մեր կասկածների հիմնավորում են ծառայում հետևյալ փաստարկները.

1. Եփրեմ կաթողիկոսը 1815 թ. հունիսին Ռտիշչևի և Ներսես Աշտարակեցու միջնորդությամբ Սարգսին Աղվանից մետրոպոլիտ հաստատեց, ինչին հաջորդեց Եփրեմին ուղղված Ռտիշչևի՝ երախտագիտություն արտահայտող նամակը[720]: Եփրեմը, տեսնելով Կովկասի կառավարչապետի շահագրգիռ վերաբերմունքը, դժվար թե վեց ամիս հետո՝ 1815 թ. դեկտեմբրին, բանադրեր Սարգսին:

2. Ի պատասխան Սարգիս Հասան-Ջալալյանի 1815 թ. նոյեմբերի 16-ի նամակի՝ Ներսես Աշտարակեցին նոյեմբերի 26-ին ուղերձ է հղում նրան: Այս պատասխան ուղերձից տեղեկանում ենք, որ Սարգիսը նամակում հայտնել է իր հոգևոր իշխանության տակ գտնվող թեմերում տիրող խաղաղության և բարեկեցության մասին[721]: Ներսես Աշտարակեցին էլ իր պատասխանում ոչ մի ակնարկ չի անում Սարգսին սպառնացող բանադրանքի վերաբերյալ: Մինչդեռ, եթե նման բան սպասվելիս լիներ, առաջինը Ներսեսը պետք է տեղյալ լիներ, քանի որ, ինչպես Լեոն է գրում. «Ողորմելի Եփրեմ կաթողիկոսը առանց նրա խնամակալության, ինչպես ասում են, «յոթ կորածներից» մեկն էր»[722]:

3. Մեհտի-Ղուլի խանը, որը Սարգսին կաթողիկոս էր ճանաչել և աջակցություն ցուցաբերել, այն մտադրությամբ, որ իր խանության հայերը զերծ մնան էջմիածնի ազդեցությունից, Սարգսի էջմիածնում Եփրեմ կաթողիկոսից թողություն խնդրելուց և էջմիածնի ենթակա մետրոպոլիտի կոչում ստանալուց հետո հարկադրել էր Ղարաբաղի հայ աշխարհիկ և հոգևոր վերնախավին՝ 1815 թ. մայիսի 23-ի ընդհանրագրով խնդրել Եփրեմին Ղարաբաղ ետ չուղարկել Սարգսին[723]:

---

719 Акты, т. V, док. 522, с. 443.
720 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 27, վավ. 32:
721 Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ 164բ, վավ. 766:
722 Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. IV, էջ 399:
723 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 27, վավ. 24:

Իր նկատմամբ խանի այդպիսի վերաբերմունքի պայմաններում Սարգիս Հասան-Ջալալյանը, վերադառնալով Ղարաբաղ, դժվար թե այնպիսի գործողությունների դիմեր, որոնց հետևեր Եփրեմի բանադրանքը:

4. Ներսես Աշտարակեցին Եփրեմին ուղղված 1815 թ. օգոստոսի 8-ի նամակում տեղեկացնում է, որ Սարգիսը Ղարաբաղ մեկնելուց առաջ հիվանդ էր և «ընկալեալ է աստ (Թիֆլիսում-Լ. Մ.) զդեղ լուծողական և այնու ամենիւ զվերջին նուազութեան էր ... Ըստ որոյ թեև մնասցե կենդանի զամիսս 10 հազիւ կարողանայ առնուլ զհոգս իւր»:

Հիմք ընդունելով այս նամակը՝ կարող ենք ասել, որ հասնելով Ղարաբաղ՝ Սարգիսը երկար ժամանակ ապաքինվել է և ապաքինվելուց անմիջապես հետո քիչ հավանական է, որ էջմիածնի դեմ ուղղված գործողությունների դիմեր:

5. Սարգսի բանադրման մասին տեղեկացնող իր կոնդակում Եփրեմը հստակ նշում է բանադրման պատճառները՝ Ռտիշչևի հրամանին չենթարկվելը և թեմերում մեռոն բաժանելն ու հոգևոր տուրք հավաքելը:

Ռտիշչևը նշված հրամանագիրը արձակել է 1813 թ. հոկտեմբերի 19-ին, իսկ Սարգսի կողմից նվիրակներ Շաքի և Շամախի ուղարկվել են 1813 թ. և 1814 թ. մայիսին: Քանի որ Եփրեմ կաթողիկոսը 1814 թ. հոկտեմբերի 30-ին Աղվանից կաթողիկոսության թեմերին ուղղված իր շրջաբերական կոնդակում որպես այդ թեմերը կառավարող է Սարգսին անվանում, ապա կարելի է եզրակացնել, որ Սարգսի բանադրման վերաբերյալ կոնդակը գրվել է 1814 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Եփրեմ Չորագեղցին, Սարգսի բանադրման մասին վերջինիս հոգևոր իշխանության տակ գտնվող թեմեր կոնդակ ուղարկելով, հասնում է իր նպատակին: Սարգիս Հասան-Ջալալյանի դիրքերը զգալիորեն թուլանում են:

Սարգիս Հասան-Ջալալյանը հասկանում էր, որ հիմնահարցի լուծման բանալին գտնվում է ռուսական իշխանությունների ձեռքում, իսկ այդ իշխանությունները պաշտպանում են Աղվանից անկախ կաթողիկոսությունը վերացնելու և նրա թեմերին տիրելու ուղղված էջմիածնի քայլերը: Այդ պատճառով Սարգիսը որոշեց դիմել Կովկասի ռուսական իշխանությունների մոտ հեղինակություն վայելող և էջմիածնի հակառակորդների համարում ունեցող Հովսեփ Արղության կաթողիկոսի եղբորորդի, Լոռու գավառի և

Ալավերդու հանքերի տեր իշխան Սողոմոն Արղությանի և Թիֆլիսի մելիք Դարչի Բեհբությանի օգնությանը[724]:

Սողոմոն Արղությանը «Դավիթ-Դանիելյան» վեճի ընթացքում Դավթի ազդեցիկ աջակիցներից էր և չէր համակերպվել դանիելականների հաղթանակի հետ: Թիֆլիսի մելիք Դարչի Բեհբությանի և Ներսես Աշտարակեցու փոխադարձ թշնամանքը, ինչպես գրում է Լեոն, պայմանավորված էր եկեղեցու և եկեղեցական գործերին Թիֆլիսի մելիքի միջամտությանը վերջ տալու Ներսեսի ջանքերի հետ[725]:

Սողոմոն Արղությանը ի պաշտպանություն Սարգսի, դիմումներ է ուղղում Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի զինվորական կառավարիչ Դմիտրի Օրբելյանիին, 1809-1812 թթ. Վրաստանի կառավարիչ, ապա ռուսական 19-րդ դիվիզիայի հրամանատար Հախվերդովին և Սինոդի օբեր պրոկուրոր Գոլիցինին[726]:

Սակայն այս դիմումները անարդյունք են մնում: Ստեղծված իրադրության մեջ Սարգսին ոչինչ չի մնում, քան էջմիածնի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով ուղղակի դիմել Վրաստանի հայոց առաջնորդ Ներսես Աշտարակեցուն: Վերջինս լինելով հեռատես և լայնախոհ քաղաքական ու հոգևոր գործիչ, հասկանում էր, որ էջմիածնի հետ լեզու գտնելու Սարգիս Հասան-Ջալալյանի ցանկությունը բանալի է ծառայում Աղվանից կաթողիկոսության վերացման և նրա թեմերը էջմիածնին ենթարկելու համար:

Ահա այդ պատճառով Ներսեսը բարեհամբույր ընդունելություն է ցույց տալիս Սարգսին: Նրանց հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվում, համաձայն որի Սարգիսը հրաժարվում է կաթողիկոսի աստիճանից և իրեն ենթակա թեմերը նվիրակներ ուղարկելուց: Պարտավորվում է հետայսու այդ թեմերը ղեկավարել որպես էջմիածնի կաթողիկոսին ենթակա արքեպիսկոպոս:

Հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունը Եփրեմ կաթողիկոսի կողմից հաստատելու նպատակով Ներսես Աշտարակեցին Եփրեմին ուղղված 1815 թ. ապրիլի 25-ին գրված նամակով էջմիածին է ուղարկում Սարգիս Հասան-Ջալալյանին: Նամակում Ներսես Աշտարակեցին գրում էր. «Կարգեա զնա (Սարգսին-Լ. Մ.) Առաջնորդ և Արքեպիսկոպոս Գանձասարու և

[724] Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164բ, վավ. 969:
[725] Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. IV, էջ 400:
[726] Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164բ, վավ. 969:

վիճակին նորայ, կա՛մ, որպես ինքն յառաջադրէ վիճակին Գրիգորիսի, զոր վասն գտանի տարածայնութիւն անդ ի վիճակին իւր:

Եւ փոխանակ նուիրակութեան կագեայ վասն նորայ և կառավարութեան վանացն իւրոյ զիմտատիայս, կամ տարեկան, կամ երեք տարեկան և կամ զի արդ վայելուչ դատել լինիցի արժանաւոր: Եւ այնպես բարւոք մխիթարութեամբ և վայելուչ պատշաճութեամբ և խիլայիւք վերադարձուսցէ զինքն առաջնորդական կոնդակաւ ձեր բարձրագոյն քահանայապետութեան»[727]:

Սարգսի հոգևոր իշխանությանը հանձնվող վիճակի անվանման վերաբերյալ նամակում տեղ գտած շեշտադրումը պատահական չէր: Սարգիսը ցանկանում էր, որ այն «Գանձասարի վիճակ» անվանվելու փոխարեն կոչվեր Գրիգորիսի Լուսավորչի թոռան և Աղվանից առաջին եպիսկոպոսի անունով:

Գանձասարի վիճակ ասելով Ներսես Աշտարակեցին ի նկատի ուներ Աղվանից կաթողիկոսության բոլոր թեմերը: Սակայն այս դարձվածքը կարող էր ընկալվել շատ ավելի նեղ իմաստով՝ լոկ որպես Գանձասարի վանքի թեմ: Այդ պարագայում Սարգսի իշխանությունը կտարածվեր միայն Խաչենի գավառի վրա: Այս հանգամանքը հաշվի առնելով Սարգիսը ցանկանում էր, որ իրեն հատկացվող վիճակը անվանվեր Լուսավորչի թոռ Գրիգորիսի վիճակ: Գրիգորիսը ամբողջ Աղվանքի եպիսկոպոսն էր, և վիճակը նրա անունով կոչելու դեպքում Սարգիսը կընկալվեր որպես Աղվանքի բոլոր թեմերի նկատմամբ հոգևոր իշխանություն բանեցնող:

Նամակից տեղեկանում ենք, որ Ներսես Աշտարակեցու և Սարգիս Հասան-Ջալալյանի միջև կայացած համաձայնությամբ վերջինս նվիրակային պարտադիր տուրք ստանալու փոխարեն պետք է բավարարվեր նպաստ-իմդատիայով, որ կամավոր բնույթ ուներ:

Սակայն Եփրեմ կաթողիկոսը համամիտ չէր Սարգսին ամբողջ Աղվանքի առաջնորդ կարգելու Ներսես Աշտարակեցու մտադրության հետ: Որպես մեր այս եզրահանգման ապացույց է ծառայում Սարգսի հետ էջմիածին ներկայացած Գանձասարի վանքի միաբան Մինաս վարդապետ Տեր-Ղազարյանի 1815 թ. մայիսի 1-ի «Երդմնագիրը»: Մինաս վարդապետը բանադրվել էր էջմիածնին անհնազանդ լինելու և Սարգսին աջակցելու համար: Գալով էջմիածին նա թողություն է խնդրել և Եփրեմ կաթողիկոսի կողմից արձակվել բանադրանքից: Մինասը երդվում է հավատարիմ մնալ էջմիածնի Բարձրագույն Սուրբ ժողովին, Եփրեմ կաթողիկոսին և «մանաւանդ

[727] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 164բ, վավ. 970:

ի ներկայ անդ ի կողմունս մեր եղեալ Իսրայէլ Արքեպիսկոպոսին»[728]:

Այս վերջին պարբերությունը թույլ է տալիս ենթադրել, որ 1814 թ. վերջին, բանադրելով Սարգսին, Եփրեմը Աղվանքի հայերի առաջնորդ էր կարգել նույն թվականի հոկտեմբերի 30-ին որպես նպաստահավաք Աղվանք ուղարկված Իսրայել արքեպիսկոպոսին:

Սարգսի համար մեկ այլ աննպաստ հանգամանք ևս ստեղծվեց, երբ էջմիածին հասավ Ղարաբաղի աշխարհիկ և հոգևոր վերնախավի 1815 թ. մայիսի 23-ին գրված ընդհանրագիրը, որում Եփրեմ կաթողիկոսին խնդրվում էր Սարգիս Հասան-Ջալալյանին Ղարաբաղում հոգևոր պաշտոն չտալ[729]:

Այս ընդհանրագիրը գրողների մեծամասնությունը այն անձինք էին, որոնք 1812 թ. և 1813 թ. ընդհանրագրերով խնդրել էին կաթողիկոս հաստատել այժմ անընդունելի և մերժելի դարձած Սարգիս Հասան-Ջալալյանին[730]:

Ընդհանրագրում Սարգսի դեմ ոչ մի կոնկրետ բողոք չէր ներկայացվում: Այս ընդհանրագիրը ո՛չ Սարգիս Հասան-Ջալալյանի ապօրինությունների, ո՛չ էլ Եփրեմ կաթողիկոսի կողմից Աղվանք ուղարկված Իսրայել արքեպիսկոպոսի գործունեության արգասիքն էր: Այն, ինչպես և 1812 թ. և 1813 թ. ընդհանրագրերը, գրել էր պարտադրել Մեհտի-Ղուլի խանը:

Ինչպես վերը ցույց տվեցինք, Ղարաբաղի խանը իր հպատակ հայերի նկատմամբ էջմիածնի հոգևոր իշխանության հաստատումը թույլ չտալու նպատակով էր Սարգիս Հասան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս հաստատել: Տեղեկանալով, որ Սարգիսը Թիֆլիսում, Ներսես Աշտարակեցու հետ կայացած բանակցությունների արդյունքում հրաժարվել է կաթողիկոսական աստիճանից և որպես սոսկ Աղվանքի թեմերի առաջնորդ արքեպիսկոպոս ընդունել է իր ենթակայությունը էջմիածնին, Մեհտի-Ղուլի խանը հրամայեց էջմիածին ուղարկել այդ ընդհանրագիրը:

Հակառակ Իսրայել արքեպիսկոպոսին Աղվանքի հայերի առաջնորդ տեսնելու Եփրեմ կաթողիկոսի ցանկության՝ խանը նոր հայրապետի ընտրությունն իրեն էր վերապահել: Նրա թելադրանքով ընդհանրագրի հեղինակները գրել էին. «Ահա այսուհետև մեր կամեցողութեան ժամանակին ամենեքեան բազմակնիք մահսէր առաքեալ, զմերս մտաց հաճելին, ո՛ոք և իցէ, խնդրելոց ենք ի

[728] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 27, վավ. 22:
[729] Նույն տեղում, վավ. 24:
[730] Տես վերը՝ էջ 195-197:

մեծութիւնեդ մեզ հովիւ»[731]: Այս պարբերությունը ցույց է տալիս, որ Մեհտի-Ղուլի խանի համար անսպասելի էր Սարգսի հրաժարվելը կաթողիկոսական աստիճանից և էջմիածնին ենթարկվելը: Այդ պատճառով նա Սարգսին փոխարինող թեկնածություն դեռևս չէր գտել:

Աղվանքի հայերի նոր հոգևոր վեհապետին հաստատելու իրավունքը իրեն զիջելուն որպես փոխհատուցում՝ Ղարաբաղի խանը պատրաստ էր ճանաչել Աղվանից կաթողիկոսության վերացումը, Ղարաբաղի թեմերի ենթարկումը էջմիածնին, որի արդյունքում այդ թեմերից հավաքվող հոգևոր տուրքը կհանձնվեր էջմիածնի նվիրակներին: Խանի նման զիջումների գնալու արտահայտությունն էր ընդհանրագրում տեղ գտած խնդրանքը՝ մեռոնաբեր նվիրակ Ղարաբաղ ուղարկել[732]:

1815 թ. մայիսի 31-ի՝ Եփրեմ կաթողիկոսին ուղղված Ներսես Աշտարակեցու նամակից պարզվում է, որ Սարգիս Հասան-Ջալալյանը էջմիածնից իրեն նամակ էր գրել, որով հայտնում էր, թե Եփրեմ կաթողիկոսը իրեն չի հաստատում Աղվանքի հայերի հոգևոր առաջնորդ, քանի որ Ղարաբաղի Մեհտի-Ղուլի խանը դեմ է դրան: Պետք է ենթադրել, որ խանի դեմ լինելը Եփրեմ Չորագեղցու համար միայն պատրվակ էր: Իրականում նա ցանկանում էր Աղվանքի թեմերի կառավարումը հանձնել Իսրայել արքեպիսկոպոսին: Ներսեսին նամակ գրելուց քիչ անց Սարգիսը մեկնում է Թիֆլիս՝ հավանաբար իր օգտին միջնորդություն խնդրելու ոչ միայն Ներսես Աշտարակեցուց, այլև Կովկասի կառավարչապետ Ռտիշչևից: Ե՛վ Ներսես Աշտարակեցին, և՛ Ռտիշչևը բավարարում են Սարգսի խնդրանքը և նամակներ գրում Եփրեմ կաթողիկոսին*: Ներսես Աշտարակեցին Եփրեմ կաթողիկոսին գրած 1815 թ. մայիսի 31-ի նամակում, անդրադառնալով Սարգսին Աղվանքի հայերի առաջնորդ հաստատելու Մեհտի-Ղուլի խանի դեմ լինելու պարագային, գրում էր. «Ամենևին անարժան է յայսպիսում քրիստոնեական իշխանութեամբ ծաղկեալ ժամանակ այնպիսի պատճառանօք ի նախատինս մատնել զհամբաւ բարութեան Աթոռոյն:

[731] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 24, վավ. 22:
[732] Նույն տեղում:
* Սարգիս Հասան-Ջալալյանին Աղվանքի հայերի առաջնորդ հաստատելու մասին Եփրեմ կաթողիկոսին ուղղված Ռտիշչևի նամակը մեր տրամադրության տակ չկա: Այդ նամակի մայիսին տեղեկանում ենք Կովկասի կառավարչապետի ավելի ուշ՝ 1815 թ. հունիսի 15-ին Եփրեմ կաթողիկոսին գրած մեկ այլ նամակից, ուր նա շնորհակալություն էր հայտնում Սարգսին Աղվանից առաջնորդ հաստատելու իր խնդրանքը հարգելու համար (Տես, Մատենադարան, Կթղկ. դիվան. թղթ. 27, վավ. 32:):

Պարտավորութիւն ինձ համարիմ առ օգտի և պայծառութեան անարատ և սուրբ կառաւարութեան, զիմս խորհուրդ առնել խնդրագործ առաջի վեհափառ տերութեան ձեր յաղագս ողջամբ վերադարձուցանել զնա (Սարգսին-Լ. Մ.): Քանզի բավական է առժամանակս այնքանն, զի վերացեալ լիցի անունն կաթուղիկոսութեան»[733]:

Եփրեմ կաթողիկոսը չէր կարող Կովկասի կառավարչապետ Ռտիշչևի և ռուսական իշխանությունների մոտ բարձր համարում ու վարկ ունեցող Ներսես Աշտարակեցու ցանկությանը դեմ գնալ: Նա կոնդակով Սարգիս Հասան-Ջալալյանին հաստատեց վերացված Աղվանից կաթողիկոսության թեմերի հոգևոր առաջնորդ:

Այս կոնդակի բնօրինակը կամ պատճենը մեր տրամադրության տակ չկան: Իսկ Աղվանից կաթողիկոսության վերացման հիմնահարցին անդրադարձած ուսումնասիրողները (Ալ. Երիցյան, Բաֆֆի, Օրմանյան, Լեո, Բ. Ուլուբաբյան), ոչինչ չասելով Եփրեմ Չորագեղցի կաթողիկոսի այդ կոնդակի մասին, գրում են, որ 1815 թ. Աղվանից կաթողիկոսությունը վերացվել է, իսկ նրա թեմերը ընդգրկվել են Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության մաս կազմող մետրոպոլիտության մեջ: Այս հոգևոր նոր կազմավորման գլուխ է կանգնել Սարգիս Հասան-Ջալալյանը: Վերջինս հարկադրված հրաժարվել է կաթողիկոսական աստիճանից, որից հետո ստացել է «միտրոպոլիտական տիտղոս արքեպիսկոպոսական աստիճանով»[734]: Այս հեղինակներից Ալ. Երիցյանը ոչ ճիշտ տեղեկություն է տալիս, իբր Սարգիս Հասան-Ջալալյանը հաստատվել է միայն Ղարաբաղի հոգևոր առաջնորդ. «1815 թվին Աղուանից Սարգիս կաթողիկոսն պաշտօնապէս հռչակուեցաւ որպես միայն արքեպիսկոպոս կամ միտրոպոլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի»[735]:

Սարգիս Հասան-Ջալալյանին Աղվանից հոգևոր առաջնորդ հաստատող Եփրեմ կաթողիկոսի կոնդակի վերաբերյալ միայն Վարդան Օձնեցին է որոշակի տեղեկություն հաղորդում. «Կաթուղիկոսն Եփրեմ կոնդակաւ յորդորէ զհնգեքին հայ մելիքս Ղարաբաղայ հնազանդիլ նախնաւանդ սովորութեան, որ ի ժամանակաց Լուսավորչէ մերմէ հասեալ էր ցայն վայր: Ըստ նմին կոնդակաւ անուանէ զՍարգիս մետրապոլիտ ամենայն Տանն Աղուանից և իշխող ի վերայ

[733] Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164բ, վավ. 973:
[734] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 320:
[735] Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթուղիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, հ. 1, Թիֆլիս, 18 94, էջ 251-252:

ամենայն Առաջնորդաց նոցին, յորմէ հետէ իսպառ բարձաւ ի տանէն Աղուանից զանունն կաթուղիկոսի անուանելով մետրապոլիտ»[736]:

Վարդան Օձնեցին հստակ նշում է, որ կոնդակը հասցեագրված է Ղարաբաղի մելիքներին: 1815 թ. մայիսին Եփրեմ կաթողիկոսին գրված Ղարաբաղի աշխարհիկ և հոգևոր վերնախավի ընդհանրագրի հակառակ կողմում ծանուցում է արված. «Պատասխան գրեցաւ յունիսի»: Այս ծանուցումից կարող ենք եզրակացնել, որ Վարդան Օձնեցու նշած կոնդակը այդ ընդհանրագրի պատասխանն է, որը գրվել է 1815 թ. հունիսին:

Քանի որ Սարգիս Հասան-Ջալալյանը հաստատվել է ոչ միայն Ղարաբաղի, այլ Աղվանից կաթողիկոսության Գանձակի և Շիրվանի թեմերի հոգևոր առաջնորդ, ապա Եփրեմ կաթողիկոսը, բացի Ղարաբաղի հայերին ուղղված կոնդակից, պետք է շրջաբերական կոնդակ գրեր այդ թեմերին:

Այս կոնդակին է առնչվում 1815 թ. հունիսի 9-ի Ներսես Աշտարակեցու Եփրեմ կաթողիկոսին գրված նամակը, ուր նա, հայտնելով, որ Սարգիս Հասան-Ջալալյանը ժամանել է Թիֆլիս, խոստանում է պատվով ճանապարհ դնել նրան Ղարաբաղ: Ապա անդրադառնում է Սարգսին Աղվանից առաջնորդ հաստատող շրջաբերական կոնդակի մի արտահայտության, «թէ ի պատիւ կուսակալին և Ներսես եպիսկոպոսին այսպես արարաք»: Այս արտահայտությունը անպատշաճ գտնելով՝ վերադարձնում է կոնդակը՝ խնդրելով նոր կոնդակ գրել, որից այն հանվի[737]:

Եփրեմ կաթողիկոսը հետևում է Աշտարակեցու խորհրդին: Սրբագրված կոնդակը Ներսես Աշտարակեցին ներկայացնում է Ռտիշչևին: Վերջինս 1815 թ. հունիսի 14-ին Ամենայն հայոց կաթողիկոսին գրած նամակում երախտագիտություն է հայտնում Սարգիս Հասան-Ջալալյանին Աղվանից առաջնորդ հաստատելու վերաբերյալ իր խնդրանքը «բարեհաճորեն հարգելու, ինչպես նաև նրա (Սարգսի-Լ. Մ.) նկատմամբ առանձնահատուկ ողորմած վերաբերմունք ցուցաբերելու համար»: Վերջում պարտավորվում է Եփրեմ կաթողիկոսի ցանկության համաձայն իր լիազորությունների սահմաններում բոլոր կարգադրություններն անել, որպեսզի Սարգիս արքեպիսկոպոսը հնարավորություն ունենա կաթողիկոսական կոնդակով իրեն հանձնված հոգևոր հոտը կառավարել[738]:

[736] Մատենադարան, ձեռ. N 4331, էջ 164բ:
[737] Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164բ, վավ. 975:
[738] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 27, վավ. 32:

Նամակի այս վերջին հատվածը ուղղակիորեն առնչվում է Սարգիս Հասան-Ջալալյանի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսության մաս կազմող մետրոպոլիտության առաջնորդի կարգավիճակով Ղարաբաղ մուտք գործելուն Մեհտի-Ղուլի խանի ընդդիմությանը: Ռտիշչևը փաստորեն պարտավորվում էր չեզոքացնել խանի ընդդիմությունը:

Ռտիշչևը կատարում է իր խոստումը, ինչի ապացույցն է 1815 թ. օգոստոսին մետրոպոլիտի տիտղոսով Սարգիս Հասան-Ջալալյանի՝ Ղարաբաղ վերադարձից հետո Մեհտի-Ղուլի խանի Սարգսին առնչվող հրովարտակը՝ գրված հիջրայի 1231 թ. (1815-1816), ուր Սարգիսը արքեպիսկոպոս էր անվանվում[739]:

Անդրադառնանք այն հարցին, թե ինչ կարգավիճակ էր ձեռք բերել Սարգիս Հասան-Ջալալյանը կաթողիկոսականի փոխարեն ստանալով մետրոպոլիտական տիտղոս:

Մետրոպոլիտը մայրաքաղաքի արքեպիսկոպոսն է կամ եկեղեցական թեմի առաջնորդը՝ հատուկ բարձր աստիճանով: Եկեղեցական հանդեսների ժամանակ մետրոպոլիտի առջևից խաչանշան էր տարվում, նրան արտոնվում էր եկեղեցում, սուրբ սեղանի առջև քարոզել ոչ թե հայոց կաթողիկոսի, այլ իր անունից: Մետրոպոլիտը իրավասու էր եպիսկոպոս ձեռնադրել և օրհնել երեխաների ու հիվանդների համար պահվող յուղը, որը ցածրակարգ էր առաքելական կոչվող կաթողիկոսի կողմից օրհնված մեռոնից[740]:

Այսպիսով՝ 1815 թ. հունիսին Սարգիս Հասան-Ջալալյանին վերապահվեց եկեղեցու նվիրապետական աստիճանացանկում մեկ աստիճան ավելի ցածր կարգավիճակ՝ համեմատած նրա 1792-1798 թթ. և 1812-1815 թթ ունեցածի հետ: Սակայն մետրոպոլիտական լիազորություններից էլ Սարգիս Հասան-Ջալալյանը զուրկ էր: Էջմիածինը արգելեց նրան եպիսկոպոսական ձեռնադրություններ կատարել: Մետրոպոլիտի եղբորորդի Բաղդասարը եպիսկոպոս ձեռնադրվեց 1820 թ. սեպտեմբերին Եփրեմ կաթողիկոսի կողմից[741]: Աղվանքի թեմերի հոգևոր կառավարման գործում ևս Սարգիս մետրոպոլիտը ինքնուրույն չէր: Վիրահայության առաջնորդ Ներսես Աշտարակեցին վերահսկողություն էր սահմանել Աղվանքի թեմերի և Սարգիս մետրոպոլիտի գործունեության նկատմամբ: 1815 թ. հոկտեմբերի 2-ի նամակով Աշտարակեցին հրահանգում էր Սարգսին՝ իրեն հանձնված թեմերը կառավարելիս հաշվի

739 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2բ, վավ. 258:
740 Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 106-108:
741 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 257գ, վավ. 196:

առնել Զոհրապ Թառումյանի խորհուրդները[742]: Նոյեմբերի 26-ի նամակում Աշտարակեցին, դժգոհելով Աղվանքի թեմերում Սարգիս մետրոպոլիտի կառավարումից, պահանջում էր ցուցաբերել «յատուկ իմն ջերմեռանդութիւն հոգևոր յովվութեան յայսմհետէ»[743]:

1815 թ. օգոստոսի 8-ին Եփրեմ կաթողիկոսին Ներսես Աշտարակեցու գրած նամակից պարզվում է, որ Եփրեմը Ալեքսանդր Ա. կայսեր հաստատմանն է ներկայացրել Ներսես Աշտարակեցուն Վրաստանի հայերի առաջնորդությունից բացի, Ղարաբաղի և Շաքիի «Վերատեսչությունը» հանձնելու խնդրագիր: Սակայն կայսրը Ներսեսին հաստատել է միայն Վրաստանի առաջնորդ[744]: Փաստորեն, Ներսես Աշտարակեցին կրկնում էր Հովհաննես Գեղարդակրի ձեռնարկումը, այն է՝ վերահսկողություն հաստատել Աղվանքի թեմերում և հաշվետու դարձնել հոգևոր աստիճանով իրենից բարձր կանգնած այդ թեմերի առաջնորդ Սարգիս մետրոպոլիտին: Աշտարակեցու այդ ձեռնարկմանը Եփրեմ կաթողիկոսի աջակցությունը ցույց է տալիս, որ Սարգիս Հասան-Ջալալյանի մետրոպոլիտական աստիճանը լոկ ձևական տիտղոս էր՝ զուրկ այդ աստիճանին հատուկ լիազորություններից:

Չնայած կայսրը չհաստատեց Ղարաբաղի և Շաքիի նկատմամբ Ներսես Աշտարակեցու վերատեսչությունը, սակայն Սարգսին ուղղված 1815 թ. հոկտեմբերի 2-ի և նոյեմբերի 26-ի նրա նամակներից կարելի է եզրակացնել, որ Ներսես Աշտարակեցին Եփրեմ կաթողիկոսի համաձայնությամբ փաստացի վերահսկողություն էր հաստատել Սարգիս մետրոպոլիտի հոգևոր իշխանության տակ գտնվող թեմերում, ինչպես նաև իրեն հաշվետու և ստորադաս դարձրել մետրոպոլիտին:

Ի վերջո Ներսես Աշտարակեցուն հաջողվեց իր այս փաստացի իշխանությունն օրինականացնել և ռուսական իշխանություններից այդ թեմերում իր վերատեսչության հաստատում ստանալ:

Ասվածի ապացույց է ծառայում Կովկասի կառավարչապետ Երմոլովի կողմից Սարգիս մետրոպոլիտին դավաճանության մեղադրանքով Ներսես Աշտարակեցու դատին հանձնելու փաստը: (Մետրոպոլիտը մեղադրվում էր 1826 թ. ամռանը Շուշիի պաշարման ժամանակ պարսիկների հետ գործակցելու մեջ)[745]:

742 Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164բ, վավ. 758:
743 Նույն տեղում, վավ. 766:
744 Նույն տեղում, վավ. 984:
745 Акты, т. VI, Тифлис, 1874, док. 626, с. 464.

Չնայած Ներսես Աշտարակեցու իրականացրած հետաքննության և Երմոլովի փոխարեն Պասկևիչի նշանակման արդյունքում Սարգիս մետրոպոլիտը լիովին արդարացվեց[746], սակայն, ինչպես գրում է Ալ. Երիցյանը, այս բարոյական նվաստացումը ծանր հարված հասցրեց ծերունի մետրոպոլիտին և Գանձասար վերադառնալուց քիչ անց 1828 թ., նա կնքեց իր մահկանացուն[747]:

Առկա է Շուշիի բերդի պարետ, կապիտան Կալաչևսկուն ուղղված Սարգիս մետրոպոլիտի ուղերձը: Այն գրվել է Գանձասարում, 1828 թ. նոյեմբերի 28-ին[748], ինչը մեզ հնարավորություն է տալիս եզրակացնել, որ Աղվանից վերջին կաթողիկոս Սարգիսը վախճանվել է 1828 թ. դեկտեմբերին:

Սարգիս Հասան-Ջալալյանը Աղվանից 85-րդ և վերջին կաթողիկոսն էր: Մակար Բարխուտարյանցը նրա մահվան տարեթվի հետ է կապում Աղվանից կաթողիկոսության հեռացումը պատմական ասպարեզից. «Վախճանուած է կաթուղիկոսութիւն Աղուանից և թաղուած վերջին Սարգիս կաթուղիկոս Ջալալեանցի գերեզմանում»[749]:

Աղվանից կաթողիկոսության վերացման գլխավոր պատճառներն էին.

1. Կաթողիկոսության աշխարհիկ հենարան Ղարաբաղի հայկական մելիքությունների թուլացումը և քաղաքական ասպարեզից հեռացումը:
2. Եկեղեցու և հոգևոր իշխանության հիմքերը քայքայող հակաթոռ կաթողիկոսների գլխավորած խմբավորումների միմյանց դեմ պայքարը:
3. Մահմեդական իշխանությունների վարած կրոնական հալածանքների քաղաքականությունը, որն իր գագաթնակետին հասավ Ղարաբաղի խաների օրոք:
4. Իբրահիմ խանի կողմից XVIII դ. վերջում Աղվանից կաթողիկոսության շարժական և անշարժ գույքի բռնագրավման հետևանքով կաթողիկոսության տնտեսական ներուժին հասցված անվերականգնելի հարվածը:

[746] Акты, т. VII, док. 204, с. 251-252.
[747] Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 256:
[748] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 50:
[749] Մ. Բարխուտարյանց, Արցախ, Երևան, 1998, էջ 154:

5. Ամենայն Հայոց կաթողիկոսների հետ հոգևոր գերիշխանության և առանձին թեմերից ստացվող եկամուտների համար հակամարտությունը:
6. Էջմիածինը հայերի միակ հոգևոր կենտրոն ճանաչելու Ռուսաստանի դիրքորոշումը:

Աղվանից կաթողիկոսության վերացումը բացասական հետևանքներ ունեցավ նրա թեմերի հոգևոր-եկեղեցական կյանքում: 1854 թ. մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանի մահից մինչև 1914 թ. ընկած ժամանակաշրջանում Էջմիածնի կողմից Ղարաբաղի տասնհինգ առաջնորդներ են նշանակվել, որոնք, բացառությամբ տասնմեկ տարի առաջնորդած Սարգիս Ջալալյանցի, պաշտոնավարել են միջինը երեք տարի և այդ պատճառով հնարավորություն չեն ունեցել արդյունավետ գործելու: Այդ ժամանակաշրջանում Ղարաբաղի թեմի եկամուտները տրվում էին կապալով[750], իսկ Բաղդասար մետրոպոլիտի օրոք գործող ինը վանքերից երեքն են մնացել[751]:

«Որքան կենդանի եղած է Աղուանից կաթուղիկոսութիւնն, նոյնքան պայծառ եղած են Աղուանից վանքերը: Բայց այս կաթուղիկոսութեան մահից յետոյ օրեցօր յափշտակված են վանօրեից կալուածներն, ցրուած են միաբանութիւններն և քայքայված են վանքերն»[752]:

[750] Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 130; Լեո, Իմ հիշատակարանը, Երկերի ժողովածու, հ. VIII, էջ 127:
[751] Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 156:
[752] Նույն տեղում, էջ 154:

ՎԵՐՋԱԲԱՆ

Աղվանից կաթողիկոսությունը Հայ Առաքելական եկեղեցու չորս ճյուղերից մեկն էր: Ի տարբերություն Սիսի և Աղթամարի կաթողիկոսությունների, Աղվանից և Ամենայն Հայոց կաթողիկոսությունների հարաբերությունները կանոնակարգված էին, և 608 թ. Դվինի ժողովի որոշումների համաձայն Աղվանից կաթողիկոսությունը «ի հոգևորս» ենթակա էր Ամենայն Հայոց կաթողիկոսությանը: Աղվանից կաթողիկոսը Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական աստիճանացանկում երկրորդն էր և օծվում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից: Այդուհանդերձ, այս կանոնակարգը չապահովեց խախտումների վերացումը: Ամենայն Հայոց կաթողիկոսները ձգտում էին ուժեղացնել վերահսկողությունը Աղվանից կաթողիկոսության թեմերի նկատմամբ, նաև Աղվանից կաթողիկոսների կախվածությունն իրենցից, իսկ Աղվանից նվիրապետները ջանում էին զերծ լինել Ամենայն Հայոց կաթողիկոսների ճնշող խնամակալությունից և ձեռք բերել ավտոկեֆալ կարգավիճակ: Այդ հարաբերությունները մռայլվում էին նաև թեմերի և դրանցից ստացվող նյութական միջոցների համար XVII-XIX դդ. պայքարով, որի կիզակետ էին դարձել Շիրվանի, Աստրախանի և Հաղպատի թեմերը:

XVI դ. երկրորդ կեսից Աղվանից կաթողիկոսությունում ծայր է առնում աթոռակալական պայքար Հասան-Ջալալյան կաթողիկոսների և կաթողիկոսական աթոռը ժառանգաբար զբաղեցնելու նրանց իրավունքը վիճարկող հակաթոռների միջև: Աղվանից կաթողիկոսությունում հակաթոռության երևան գալը պայմանավորված էր Հասան-Ջալալյան տոհմի և Աղվանից կաթողիկոսության թուլացմամբ շահագրգռված Սեֆյան շահերի, ապա Ղարաբաղի խաների քաղաքականությամբ:

XVII դ. վերջին քառորդից աթոռակալական պայքարը թևակոխում է նոր փուլ: Այդ փուլի առանձնահատկությունն այն էր, որ եթե անցյալում Հասան-Ջալալյան կաթողիկոսները պայքարում էին միմյանցից անջատ հանդես եկող հակաթոռների դեմ, ապա այս անգամ ստիպված էին բախվել այնպիսի հակառակորդների հետ, որոնք, ինչպես և իրենք, ներկայացնում էին հոգևորական գործիչների մեկ տոհմ:

Աղվանից կաթողիկոսության պատմության այս ժամանակաշրջանին անդրադարձած ուսումնասիրողներից Մակար Բարխուտարյանցը, Մաղաքիա Օրմանյանը, Լեոն, Բագրատ Ուլուբաբյանը

կաթողիկոսական գավազանի համար պայքարով Հասան-Ջալալյանների հակառակորդներին անվանում են ապօրինի և ինքնագլուխ: Այս խնդրին առնչվող տպագրված սկզբնաղբյուրների և Մատենադարանի մի շարք ձեռագրերի ու վավերագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս տոհմի հիմնադիր Սիմեոն Խոտորաշենցին օրինավոր և օծյալ կաթողիկոս էր՝ իր նախորդի կտակի համաձայն, Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով և շահական հրովարտակով:

Չնայած Ամենայն Հայոց կաթողիկոսության հետ հակասություններին և հակաթոռության հիմնահարցի առկայությանը Աղվանից կաթողիկոսությունը ակտիվ մասնակցություն է ունեցել XVIII դ. հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Այդ դարի 20-ական թվականներին պարսկական և թուրքական ուժերի դեմ մղված պայքարում Աղվանից կաթողիկոսությունը աջակցել է Ղարաբաղի սղնախներին: Եսայի Հասան-Ջալալյան և Ներսես Ջրաբերդցի կաթողիկոսները մեծ հեղինակություն ունեին սղնախների ռազմական ղեկավարության շրջանում: Նրանց դերն առավել մեծ էր սղնախների արտաքին կապերի ուղղորդման գործում, սակայն հրամանատար յուզբաշիների վրա նրանց ունեցած ազդեցությունը սահմանափակ էր:

XVIII դ. 20-ական թթ. համեմատությամբ Աղվանից կաթողիկոսությունը նույն դարի 80-ական թվականներին շատ ավելի ծանր պայմաններում էր գտնվում: Թեպետ երկու ժամանակաշրջաններում էլ այն բաժանված էր երկու կաթողիկոսների միջև, բայց Եսայի և Ներսես կաթողիկոսները համատեղ էին հանդես գալիս 20-ական թվականների ազատագրական պայքարի ընթացքում, իսկ դարի ութերորդ տասնամյակում Հովհաննես և Իսրայել կաթողիկոսները անգիջում պայքարի մեջ էին:

Ուծացման և հայաթափման քաղաքականություն իրականացնող, Ղարաբաղում հաստատված խանությունը Աղվանից կաթողիկոսության վրա ազդեցությունը խորացնելու նպատակով օգտագործում էր հակաթոռ կաթողիկոսների պայքարը: Հովհաննես կաթողիկոսը ջանում էր ծերբազատվել կաթողիկոսության գործերին Ղարաբաղի խանի հարաճուն միջամտությունից: Հասան-Ջալալյան տոհմից սերված Հովհաննես կաթողիկոսը իր աշխարհական եղբայրների հետ ձգտում էր Խաչենում վերականգնել իր տոհմի մելիքությունը: Բացի այդ, ազատագրական պայքարում Հովհաննես կաթողիկոսի մասնակցությունը պայմանավորված էր Սիմեոն Երևանցու մահից հետո էջմիածնի վերահսկողության նվաճման հետ: Դեռևս 1767 թ. Հովհաննես կաթողիկոսը Հովսեփ

էմինի հետ հանդիպման ժամանակ այն կարծիքն էր հայտնել, որ միայն Սիմեոն Երևանցու մահից հետո է հնարավոր ազատագրական ծրագրեր իրականացնել:

Ղարաբաղում XVIII դ. 80-ական թվականներին ծավալված ազատագրական պայքարի պարտությունը շատ ավելի ծանր ու անշրջելի հետևանքներ ունեցավ Աղվանից կաթողիկոսության համար, քան 20-ական թվականների պարտությունը, քանի որ այդ պարտությունից հետո եկեղեցական վերնախավը, կաթողիկոսության երկփեղկվածության մեջ իր դիրքերի թուլացման վտանգ տեսնելով, համախմբվեց Ներսես կաթողիկոսի շուրջը, մինչդեռ 80-ական թվականների ազատագրական պայքարի պարտությունից և Հովհաննես կաթողիկոսի սպանությունից հետո հուսալքված հոգևորականությունը չկարողացավ համախմբվել մեկ կաթողիկոսի շուրջ, ինչը պառակտման և հակաթոռության նոր շրջանի սկիզբ դրեց: Միաժամանակ անշարժ և շարժական գույքի բռնագրավումը անվերականգնելի հարված հասցրեց Աղվանից կաթողիկոսության տնտեսական ներուժին:

Աղվանից կաթողիկոսությունը XIX դար մուտք գործեց խոր ճգնաժամային վիճակում: Կաթողիկոսության վերջին երկու աթոռակալներ Սարգիս Հասան-Ջալալյանը և Սիմեոն Փոքր Խոտորաշենցին ի զորու չէին կաթողիկոսությունը դուրս բերել ճգնաժամից: Աղվանից կաթողիկոսության համար ճակատագրական նշանակություն ունեցավ Հարավային Կովկասում իր տիրապետությունը տարածող Ռուսաստանի դիրքորոշումը: Ռուսաստանը ծրագրել էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում և հայկական գաղթավայրեր ունեցող այլ երկրներում սեփական ազդեցության շրջանակը մեծացնելու նպատակով օգտագործել Ամենայն Հայոց կաթողիկոսության հեղինակությունը: Ռուսաստանը հայ ժողովրդի միակ հոգևոր կենտրոն ճանաչում էր էջմիածնի կաթողիկոսական աթոռը՝ չընդունելով Օսմանյան կայսրության տարածքում գտնվող Հայ Առաքելական եկեղեցու Սիսի և Աղթամարի կաթողիկոսությունները, որոնց միջոցով թուրքերը կարող էին հակազդել հայերի վրա: Հետևաբար ռուսական այս քաղաքականությունը պետք է առաջինը գործեր Հայ Առաքելական եկեղեցու չորրորդ նվիրապետական աթոռի՝ Աղվանից կաթողիկոսության դեմ, որի բոլոր թեմերը 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով անցել էին Ռուսաստանին:

Օգտվելով Ռուսաստանի այս դիրքորոշումից՝ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը տիրացավ Աղվանից կաթողիկոսության թեմերին: Կաթողիկոս Սարգիս Հասան-Ջալալյանը, ի վիճակի չլինելով դիմադրել Հարավային Կովկասում ռուսական իշխանությունների և էջմիածնի ճնշմանը, համակերպվեց Աղվանից կաթողիկոսության վերացման փաստի հետ և Ամենայն Հայոց կաթողիկոսի 1815 թ. հունիսի կոնդակով վերացված կաթողիկոսության թեմերում մետրոպոլիտական տիտղոսով էջմիածնին ենթակա առաջնորդ հաստատվեց:

XVII-XIX ԴԴ. ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հասան-Ջալալյան կաթողիկոսներ	Հասան-Ջալալյան կաթողիկոսների հակաթոռներ
Հովհաննես Ը (1606-1634)	Տրդատ (Հիշատակվում է Սրբաս Ա-ի օրոք)
	Պետրոս (Հիշատակվում է 1604-ին)
	Հովհաննես Շահմասուրեցի (Հիշատակվում է 1633-ին)
Գրիգոր Դ (1634-1653)	
Պետրոս Դ Խանձթեցի (1653-1675) Որդեգրվել է Գրիգոր Դ-ի կողմից 1652թ.	Եղիա (Հիշատակվում է 1655-ին)
	Մելիքսեթ Արեշեցի (Աթոռակալության տարիները հայտնի չեն (Տես Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 132)
Երեմիա (1675-1700)	*Ջրաբերդցիների տոհմին պատկանող կաթողիկոսներ*
	Սիմեոն Խոտորաշենցի (1675-1702)
Եսայի (աթոռակից 1695-1700; աթոռակալ 1700-1728)	Ներսես Ջրաբերդցի (Աթոռակից 1700-1702; աթոռակալ 1702-1763)
Հովհաննես Թ (1763-1786)	Իսրայել Ջրաբերդցի (1763-1808)
Սարգիս Բ (1794-1798; 1812-1815)	Սիմեոն Փոքր Ջրաբերդցի (1794-1810)

ՀԱՎԵԼՎԱԾ

Կաթողիկոսաց դիվան, թղթապանակ 240, վավերագիր 132
(= ՄՄ 2561, 1664 թ.)

Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղվանից» ձեռագրի հիշատակարանը, ուր խոսվում է Աղվանից Պետրոս Խանձթեցի կաթողիկոսի կողմից Ամարասի թեմից խլված կալվածքների վերադարձի վերաբերյալ, և ներկայացված է Աղվանից կաթողիկոսների եվիրապետական ցուցակը՝ սկսած քառասունչորսերորդ կաթողիկոս Մարկոսից:

Փառք իւրական Տերութեան և ևս որոշ անձնաւորութեանն Հօր անսկզբան, Որդոյ անեզրի եւ Հոգւոյն Սրբոյն անհատ փոխողի այժմ եւ անգրաւ յաւիտենիւ. ամէն:

Շնորհօք Ամենազորին Աստուծոյ եղև կատարումն այսմ լուսազարդ եւ ներբողական մատենիս ի շրջաբերութիւն թուականիս հայազնի ի Ռ ի Ճ ի Ժ եւ Գ ամին (1664թ.-Լ. Մ.), ի հայրապետութեան աշխարհիս Աղուանից Տեառն Պետրոսի երջանկափառ կաթուղիկոսի, վերադիտողի մեծի Աթոռոյն Գանձասարայ: Զի այս խոհեմաբան աշակերտ էր սրբափայլ, ուղփաճեմ, մեծ ռաբունապետին Ղուկասու: Վասն զի այս երիցս երանեալ կաթուղիկոսն լուսաւորեաց այս խաւարեալ և զնսեմացեալ տունս Աղուանից, զոր ի բազում ամանակաց կայր խախտեալ եւ խանգարեալ ի կարգայ և ի կրօնից վանօրայք և ամենայն եկեղեցիք. յորոց մի էր և մեծ Աթոռս Ամարաս, զի ամանակաց յոլովից կար աւերակ և անբնակ ի մարդկանէ: Զի արք ոմանք խենէշք և անխոհեմք փեռեկտեալ եւ խրամատեալ էին զթէմ և զվիճակ սորին և արարեալ էին իւրեանց բնակութիւնս յայլ եւ այլ վայրս ըստ անձնիւր կամաց: Իսկ այս խոհեմաբան կաթուղիկոսն Պետրոս եկեաց, ժողովեաց ի մի զթէմ և զվիճակ երկրիս Հաբանդ կոչեցեալ, զոր այժմ ասի Վարանդա և կացոյց առաջնորդ զհարազատ եւ զմիածին աշակերտն իւր զպարոն-տէր Բարսեղն, որ է ստացող տառիս: Եւ սա նորոգեց զԱմարաս պարսպօք եւ բազմածախ սենէկօք եւ տամբք ի փառս Արարչին եւ ընտրելոյն իւրոյ Սրբոյն Գրիգորիսի. ամէն:

Զի կայր և հովարան հնուց մեծի Աթոռոյս հուպ ի գեղջն Հերիէր կոչեցեալ, որ կոչեր Սուրբ Աստուածածնի վանք: Սա ևս էր անբնակեցեալ, այլ և անդ գնացեալ մեծ հայրապետն, հիմնարկէ զեկեղեցի

և յանձնէ զաշակերտին իւրոյ զվերոյ ոգեալ Բարսեղ պարոն տէրին, զի շինեսցէ: Զոր եւ կատարեաց իսկ կամարակապ ձեւով և գեղեցկանկար դրամբք, ըստ ձեռնտուութեան ժամանակիս, որ վերածայնի Սուրբ Գրիգորիս, որ և անդ զարդարեաց պարսպօք և խցերօք կամօք և օժանդակութեամբ վերոյ ասացեալ հոգևոր հօրն իւրոյ:

Դարձեալ և ետ գրեալ յոլով գրեանս յորոց մինն է և զայս պատմագիրք, զոր ի վաղուց հետէ սպասեալ էր ի տանէս Աղուանից և գրեալ եղև ի ձեռն լուսահոգի Ղուկաս վարդապետին, զոր ետ վերստին գրել և օրինակել վերոյ գրեալ հայրապետս:

Տէր Մարկոս այրն Աստուծոյ-ԽԴ
Տէր Հովսեփ ՆԸ (959թ.)- Խե
Տէր Մարկոս- ԽԶ
Տէր Ստեփանոս-Խէ
Տէր Յօյաննէս-ԽԸ
Տէր Ստեփանոս- ամ մի եւ կէս-ԽԹ
Տէր Դաւիթ, Գրիգորիս անուանեալ-Ծ
Տէր Բէժեն, որ եթող զկարգն և մտավ աշխարհ-ԾԱ
Տէր Ներսէս -ԾԲ
Տէր Ստեփանոս-ամս Խ-ԾԳ
Տէր Ներսէս -ամս Զ - ՈՁԴ (1235թ.)- -ԾԴ
Տէր Ստեփանոս - ՁԺԱ -(1262թ.)- ԾԵ
Այս միջոցս Բ կաթուղիկոս է եղեալ Սուքիաս եւ Պետրոս չկարացաք իմանալ զկարգ զկնի միմիեանց-ԾԶ
Տէր Ստեփանոս վախճանի ՁԳԲ (1323թ.)-ԾԷ
Տէր Կարապետ- ՊԾԵ (1406թ.) ՊԳԳ (1424թ.)գտան զթիւն-ԾԸ
Տէր Մաթէոս- ՊՁԵ (1436թ.)-ԾԹ
Տէր Աթանաս-ամ մի-Կ
Տէր Յովհաննէս որդի ճալալին- ՊՂ (1441թ.)-ԿԱ
Տէր Մաթէոս- ՁԳ (1454թ.)-ԿԲ
Տէր Արիստակէս- ՁԻԲ (1473թ.)-ԿԳ
Տէր Ներսէս- հաստատեցաւ յԱթոռն իւր ՁԻԷ (1478 թ.)-ԿԴ
Տէր Շմաւոն- ՁԼ (1481 թ.)-Կե
Տէր Թումայ Սուկուլթուեցի- ՁԼ (1481 թ.)-ԿԶ
Տէր Առաքել- ՁԼ միչև ՁԽԵ (1481-1496թթ.) գտանք զթիւ սորայ Սոկուլթուի հին եկեղեցւոյն -Կէ
Տէր Արիստակէս- ՁԿԵ (1516թ.)-ԿԸ

Տէր Սարգիս Խաչենու Ղշլաղեցի- ՈԳ (1554 թ.) թուին վախճանի – ԿԹ
Դաւիթ Արջածորեցի- նոյն ամին խեղդին կախեալ ժամատանէն Գանձասարու չարք անիծեալ Խաչին-Հ
Տէր Փիլիպոս Տումեցի- ՈԺԲ (1563թ.)-ՀԱ
Տէր Յովհաննէս- Ոիե եւ ՈԼԵ վախճանի- (1576-1586թթ.)-ՀԲ
Տէր Արիստակէս Քոլատակեցի- ՈԼէ (1588 թ.)-ՀԳ
Տէր Մէլիքսեթ Արաշեցի- ՈԽԲ (1593 թ.)-ՀԴ
Տէր Սիմոն Քոլատակեցի- ՈԽԵ (1596 թ.)- Հե
Տէր Շմաւոն Քոլատակեցի- ՈԿ (1611թ.)-ՀԶ
Տէր Յովաննէս Գանճոյ եկեղեցւոյ շինողն- ՈՁԲ (1633թ.)-Հէ
Տէր Գրիգոր- ՈՁԳ վախճանի ՈԵԲ (1634-1653թթ.)-ՀԸ
Տէր Պետրոս- Խանձկեցի- ՈԵԲ ,որ վախճանի ՈԵԻԴ (1653-1675թթ.)-ՀԹ
Տէր Մէլիքսեթ ևս կայ Արաշեցի սուտ անուանեալ, բնակեալ մերձ Գանձասարու: Յետն ու յառաջն չիմացանք-Ձ
Տէր Սիմէօն Շնորհալիր Չարաբերթու Մեծ Կունեցւոյն Տէր Երեմիայ ճալեցի- ՈԵԻԵ (1676 թ.) հակառակեալ, անձամբ առեալ կաթուղիկոսութիւն, ի միասին վարին չարչարանօք, որ խորին աղճատեալ ոմն Եղիայ անուն եպիսկոպոս անուան կաթուղիկոս և նա ձեռնադրէ Տէր Երեմիայն անուանին կաթուղիկոս-ՁԱ
Տէր Եսայի Քոլատակեցի մերձ Գանձասարու- ՁԲ
Տէր Ներսէս մեղապարտ, յետին թշուառացեալ- ՈԵԾԵ - ՈԵՁԵ* (1706թ.)- (1736թ.)-ՁԳ
Տէր Իսրայէլ Մեծ Կունեից, որ այժմ վարէ զժողովուրդս իւր- ՈՄԺԲ (1763թ.)-ՁԴ

* 1736 թվականը Ներսես Չարաբերդցուն Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացու կողմից Աղվանից կաթողիկոս վերահաստատվելու տարեթիվն է:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 160

Աղվանից Պետրոս Խանձքեցի կաթողիկոսին Վերին Խաչենի (ներկայիս ԼՂՀ Քարվաճառի շրջան) մի քանի աշխարհիկ և հոգևոր հայ ավատատերերի 1661թ. հուլիսի 20-ին տրված պարտավորագիրը, որով կարգավորվում էր նրանց և Խաթրավանքի ու Դադիվանքի հողային վեճը:

Տէր Հայրապետ Պետրոս կաթուղիկոսին

Յանուն յԱստուծոյ ես՝ Յոհաննէս վարդապետս, Ներսէս էրէցս, Թումանս, Եսայի էրէցս, տէր Բաղդասարս, Ամանս, Միրզէս, տէր Բարսեղս, Ուլուխանս, առ դրան Սրբոյ Աթոռոյն Գանձասարայ ու առաջի Պետրոս Հոգևոր Տէրին, գիր տուինք Պարոն-տէր Պետրոսին և տէրտէր Հոհանիսին, Մէլիքբէկին, Ուլուբէկին, Ատիբէկին, որ քանի ժամանակ էր, որ մեր նախնիքն վանքի ու թէմի դաւի անինք: Այսօր Պետրոս Հոգևոր Տէրին հրամանաւն, այս քանի գիւղորայքս մեզ բաժին տուին մեր մուլքէրն՝ Ատրէնիս, Ըռուցփոր, Քավքառանց, Հաճաւ, Բորու, Քարվաճառ, Գումէրն, Զուար: Այսու հետև մեր էլ դաւի չմնաց Բ վանիցն՝ Տաթէի և Խաթէի: Եւ ոչ այլ իրաց մեր էլ ես վանքէրիցս հետ և մնացեալ թէմին հետ դաւի չունենք, որ էլ հետ ու հառաջ դաւի անի ԳԵ և ԺԸ հայրապետացն նզոված լինի ու տեղի հաքիմին Ե թուման տալացուք լինի:

Գրեցաւ թուին ՌԵԺ յուլիսի Ի:

Ես Յոհան վարդապետ Թաթեացի վկայ այսմ բանի:
Ես Սարգիս եպիսկոպոս Գանձայու վկայ այսմ բանի:

Ձեռագիր 8965, էջ 361բ 1675թ. հիշատակարան

Շնորհիւն Տեառն Ամենակալի և նորին օգնականութեամբ աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ Աւետարանս ՌԵԻԴ ամին, յուլիս ամսոյ ԺԸ աւուրն ի երկիրս Գանձակայ, ի գեղջս Քարահատ: Եւ ի թագաւորութեան պարսից Շահ Սուլեյմանին, ի հայրապետութեան Տանս Աղուանից Տեառն Սիմէօնի ամենիմաստ և սրբանուեր Հայրապետի Սրբոյ Աթոռոյն Գանձասարայ՝ աշակերտ Տեառն Պետրոսի սրբազան կաթուղիկոսի նոյն յԱթոռոյն, որ և ի սոյն ամի փոխեցաւ առ Քրիստոս և հաստատուն կտակօք սահմանեաց, որ հետ իւրոյ մահուն զՍիմէօն ռաբունապետն լինիցի կաթուղիկոս, որ և օգնականութեամբ Սուրբ Հոգւոյն և կամակցութեամբ ամենայն մեծամեծաց Տանս Աղուանից, նաև հրամանաւ թագաւորին պարսից և մեծի Հայրապետին Տեառն Հակոբայ պատրիարքին Սրբոյ էջմիածնայ, որ և սոյն ժամանակի նա ևս էր ի դուռն թագաւորին:

Ձեռագիր 8965, էջ 364ա 1675թ. հիշատակարան

Արդ այսպիսի բիւր գանձուց և մեծագին մարգարտաց յոյզ և խնդիր էր ամենիմաստ և հանճարեղ տիեզերալուր վարդապետն Յիգնատիոս եղբայրն հարազատ Տեառն Սիմէօնի, նորընծայ կաթուղիկոսի, որ և ի մանկութենէ հրաժարեալ բազմապտուղ կենցաղոյս, աշակերտեցաւ Յիսուսի և եհաս ի աստիճան վարդապետութեան և կարգեցաւ յաթոռակալ ի մեծ կաթուղիկոսէն Պետրոսէ Սրբոյ Աթոռոյն Գանձասարայ, որ և յօժարակամօք և կատարեալ սիրով ցանկացող եղև այսմ լուսափայլ մարգարտիս և ոսկիազարդ Սուրբ Աւետարանիս, վասն օժանդակ քարոզութեան իւրոյ: Եւ ետ գծագրել և երփներին գունովք և ոսկեզօծ որակօք զարդարել վասն անջինջ յիշատակ լինելոյ հոգւոյն իւրոյ և ծնօղացն հօրն Սարգիս քահանային և մօրն և եղբարցն՝ Սեաւումին, Պալասանին, Մանուչարին:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 1

Աղվանից կաթողիկոս Սիմեոն Զրաբերդցին պարտավորագիր է տալիս Ամենայն Հայոց Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին և իր հակաթոռ Երեմիա Հասան-Ջալալյանին, որով պարտավորվում է վերջինիս ճանաչել գերագահ, ինչպես նաև հավաստում է, որ իր մահից հետո ազգականներից ոչ ոք կաթողիկոսական աթոռին իրեն չի հերթագայի:

Ես՝ նուաստ Սիմէօն կաթուղիկոս Աղուանից, զայս գիրս այսու պատճառաւ գրեցի, որ իմ մէջ և Երեմիա կաթուղիկոսին մէջ թէ որքան աղմուկ և խռովութիւն էր անցած մինչև հիմա, ոչ լինի մի ըստ միոջէ գրեալ: Զերայ ամենեցուն հայտնի է: Որոյ սակս բազում և ազգի ազգի խօսք եւ մանսարներ շատ է եղած յաղագս մերոյ կաթուղիկոսութեան և Սրբոյ Աթոռոյն Գանձասարայ:

Զայս թուղթս այսու պայմանաւ տուի մեր սիրելի եղբայր Երեմիայ կաթուղիկոսին: Յորժամ զիմ անուան կաթուղիկոսութեան ռաղամն ի թագաւորեն* թամամեալ առնում ի ձեռս իմ, Յակոբ հոգևոր տիրի ձեռամբն և հրամանաւն վերոյ գրեալ սանատներս տամ ի ձեռն Երեմիայ կաթուղիկոսին: Եւ զայս խորհուրդս, որ ընդ Երեմիայ կաթուղիկոսին խոսեցաք սակս Սրբոյ Աթոռոյն Գանձասարայ հաստատութեան, յայնժամ հրամանաւ վերոյ գրեալ վեհին (Հակոբ Ջուղայեցու- Լ. Մ.) կրկին ուխտիւք և դաշամբք հաստատեցիս:

Զերս ես նմա (Հակոբ Ջուղայեցուն- Լ. Մ.) թուղթ եմ տուեալ, թէ զոր ինչ առնեմ առանց հրամանի քոյ չառնեմ, որքան կենդանի իցես, իսկ եթե մինչև իմ Հայոց երկիր գնալն նմա վախճանիլ պատահէ կամ յօտար երկիր, ուր ոչ լինի ձեռնհաս, ես զայս վերոյ գրեալն կատարեմ առանց պատճառի:

Այլև զայս հաստատաբար գրեմ Սիմէօն կաթուղիկոս, որ ամենևին իմ մարմնաւոր ազգականացն կաթուղիկոսութեան անուն չլինի, որ թէ իմ ազգիւն սեւագլուխ այլ յառաջ գայ, որ ես յայս կաթուղիկոսութեան աստիճան չհրաւիրեմ: Որ թէ զայս գրեցելոցս դառնամ այլ իմն մտածեմ, դատապարտիմ յԱստուծոյ և ամենայն սրբոց նորա:

Գրեցաւ ի ՌՃԻԶ (1677) թուին, յօգոստոսի ԻԵ-ին իմով ձեռամբ:

---

* Նկատի ունի Իրանի շահ Սուլեյմանին

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 2

Աղվանից կաթողիկոսության հոգևոր հոտի ներկայացուցիչների համախոսականն առ այն, որ դեմ են Սիմեոն Զրաբերդցու կաթողիկոսությանը և օրինական կաթողիկոս են ճանաչում միայն Երեմիա Հասան-Ջալալյանին:

Յուսովն անմահին Հօր և կամաւն ամենակալին Որդւոյ և թողտուութեամբ Հոգւոյն Սրբոյ: Առաջի Ամենասուրբ Երրորդութեան, համայն սրբոց և հրեշտակաց նորին, մեք՝ բոլոր երկրիս Աղուանից առաջնորդք, վարդապետք, քահանայք, մելիքք, երեսփոխք, տանուտէրք, վաճառականք և հողագործք և առհասարակ մեծ և փոքր ժողովուրդք, որք եմք սեփհական թէմ եւ վիճակ հայրապետական Աթոռոյն Սրբոյն Գրիգորիսի՝ Սրբոյն Գանձասարայ:

Որոյ սակս գրեցաք այս թուղթ դաշնադրութեամբ և նամակով և միաբանութեամբ այսպէս: Քանզի որ մերումս ժամանակի երկու կաթուղիկոսք են հակառակ միմեանց և աւերեցին զԱթոռն մեր սուրբ Գանձասար, և մեք երբեմն նորա կողմն լինելով և երբեմն նորա՝ ոչ գիտելով թէ ով ի նոցանէ բարի կամիցէ Աթոռոյն մերոյ: Եւ այժմ իմացաք ճշմարտութեամբ, որ Երեմիայ կաթուղիկոսն, զոր ինչ ժողովում է վասն Աթոռոյն է, և Սիմօնն հավաքում է, իւր հոր տանն է մսխում և այլ տեղ կորուսանում, մանաւանդ մինչեւ ցայսօր խաբեաց զմեզ՝ ասելով կերթամ Գանձասար եւ ոչ գնաց՝ ուխտազանց լինելով: Եւ այժմ ամենայն տեղիս պախարակէ զԱթոռն մեր՝ արհամարհելով զսրբութիւնս նորա: Վասն որոյ գրեցաք պայման և սահման և հաստատեցաք կնքով և մօհրով, այսուհետև մեր հայրապետն Երեմիայ կաթուղիկոսն է, այլ Սիմօնին հետ բան չունիմք: Զկնի այսօրիկ ով որ զՍիմօնն ուզի և կաթուղիկոսի տեղ դնէ, թէ վարդապետ, թէ եպիսկոպոս, թէ քահանայ և թէ աշխարհական սև երես լինի և պարտական առաջի Աստուծոյ եւ Սուրբ Գանձասարայ Աթոռոյն և Սուրբ Աջոյն Գրիգորիսի, և ով զՍիմոնն չընդունէ, պահեալ լիցի յԱստուծոյ և ամենայն սրբոցն ընդ տամբ եւ տեղօք, զարմօք և զաւակօք և զամենայն էիւք և գոյիւք: Եւ մեք այսուհետեւ միախօսք և միակամք կանգնիմք, երբ Երեմիայ կաթուղիկոսն գայ մեր մեջն իբր մեր հայրապետ և կաթուղիկոս սիրով ընդունիմք և մեծարեմք և զիւր կաթուղիկոսական իրաւունքն տամք, իսկ եթէ Սիմօնն գայ թակիմք, ջուղապ առնիմք և դուրս անիմք մեր մէջէն, ուր կամի գնայ: Այլ և միբանութեամբ կանգնիմք և որչափ արծաթե-

ղեն, ոսկեղեն, զառպաֆ և այլ զարդ եկեղեցական զոր կորուսեալ է, ծախեալ ապրանս Աթոռոյն մերոյ Գանձասարայ, զամենայն մի ըստ միոջէ պահանջեմք ի Սիմօնէ և վրեժխնդիր լինիմք վասն մերոյ Աթոռոյն: Եւ այս թուղթ հաստատուն լիցի և մնասցէ կամաւքն Աստուծոյ:

Գրեցաւ ի թուին ՌՃԽ (1691), փետրվար ամսոյ ի տասն:

Կնիքներ՝ Պետրոս վարդապետ; Գրիգոր եպիսկոպոս, առաջնորդ Մեծառանից; Մելիքսեթ եպիսկոպոս; Դավիթ եպիսկոպոս; Բարսեղ եպիսկոպոս Փառիսոսի, առաջնորդ Շամքորի; տեր Բարսեղ, առաջնորդ Ծարի; մելիք Թուճի; Թադեոս եպիսկոպոս; խոջա Բարխուդար; մուղդուսի, երեսփոխ Հովսեփ; Հովսեփ վարդապետ, պաշտոնյա Խաչենի; տեր Անանիա; մելիք Ետկար; տեր Գալուստ; Սարգիս Գանձակեցի, Սարուխան; Մարտիրոսի որդի եղիազար

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 241, վավերագիր 201(ռուսերեն պատճեն)

Երեմիա Հասան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս հաստատելու վերաբերյալ Սեֆյան Սուլեյման շահի (1666-1694) հրովարտակը:

Мудреиши католкос Еремия Хаченски обявил нам, что патриаршество христиан в Арцахе и в прочих местах абитающих после Высоких Грамот с давнего времени предоставлено было дяде его католикосу Григорию. По случаю малолетства его Еремии, перешло оное патриаршество католикосу Петросу, который при жизни своей предоставил оное письменно католикосу Еремии. При чом предявляя бумагу подписанную вельможами края, которые изявляют благодарность свою, он просил на имя свою особую грамоту на патриаршество Гандзака, Шемахи. И как видно католикосатсво это после грамоты выданной в 1074 году (1663) предаставлено было католикосу Петросу. Рукаводствуясь грамотами шаха Тахмаспа 972 года (1561) и шаха Абаса 1014 года (1604) на имя католикоса Григо-

рия, мы представляем оное с начала Заячего года вышесказанному католикосу Еремии. По сему армяне тех земель признавая Еремию католикосом и владыкой, должны непременно исполнять все его требования по сану его и не уклонятся от его добрых советов и не требовать ежегодного возобновления нашей грамоты. 1086 год, месяц сафар (1675թ. ապրիլի 27-ից մայիսի 26).

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 97

Աղվանից կաթողիկոսության Շիրվանի թեմի աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչների համախոսականը այն մասին, որ իրենք Աղվանից կաթողիկոս են ճանաչում միայն Եսայի Հասան-Ջալալյանին:

Պատճառ գրոյս այս է: Մեք՝ Շամախու, Շրուանու, Շաքուայ և առհասարակ Աղուանից երկրի առաջնորդք, քահանայք, տանուտերք և առհասարակ միահամուռ ժողովուրդքս, մեր կամաւ և յօժարութեամբ զմուջալայս և թուղթս շինեցաք և կնքեցաք յաղագս մերոյ Աթոռոյն և մեր կաթուղիկոսին կողմանէ:

Զի ի սկզբանէ, ի սրբոյն Եղիշեի առաքելոյն և Գրիգորիսէ հայրապետեն մերոյ մինչև ցայսօր թէմ և վիճակ եմք եղեալ մեք և հարք մեր և հարք հարանց մերոց և այսուհետեւ եղիցուք մեք և որդիք մեր և որդիք որդւոց մերոց մինչեւ ցբուն: Վասն զի վերոյ գրեալ լուսաւորչոքն մերովք ածեալ եղաք ի հավատս և նոցին վիճակի կամք և եմք: Ոմանք որք կամին զմեզ ցանկապատառ առնել և անջատել և բաժանել ի նախնի և բուն Աթոռոյն մերոյ, այնպիսիք մեք չեմք կամեցող և այնպես բան և արարքն չեմք ընդունողք և մանաւանդ ըստ կարի մերում վրեժխնդիր ևս լինելոց եմք այնպիսեացն: Ահա, որպես մինչև ցայժմ տեսած եմք, մեր Աթոռն Աղուանից Աթոռն է, որ է Սուրբ Գանձասար և մեր կաթուղիկոսն նորին նստող կաթուղիկոսն է, որ է այժմս Եսայի կաթուղիկոսն և զկնի զոյ որ ընտրեսցէ յաջորդ: Արդ այս թուղթ ուխտի հաստատութեան սակս գրեցաւ: Մի որ իշխեսցէ զսա երկարել: Եթե որ հանդգնեսցի, նա լիցի պարտական վերոյ գրեալ հոգևոր ծնողացն և լուսաւորչացն մերոյ*:

* Մատենադարանի արխիվային ֆոնդում առկա է այս համախոսականի պարսկերեն բնագիրը (Կթղկ դիվան, թղթ. 2բ, վավ.143), որը թվագրված է 1703թ. օգոստոսի 7-ով:

Արխիվ Ալ. Երիցյանի, թղթապանակ 155, վավերագիր 3

Ամենայն Հայոց Ղազար Ջահկեցի կաթողիկոսի 1750 թ. հոկտեմբերի 12-ին կոնդակը Աստրախանի հայերին, ուր կոչ է արվում հնազանդվել ոչ թե Աղվանից կաթողիկոսին, այլ էջմիածնին:

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Ղազար ընդհանրական կաթուղիկոս Ամենայն Հայոց...

Ժամանեսցի թուղթ օրհնութեան և նամակ պահպանութեան, շնորհք առաքելական և աստուածային բազմապատիկ օրհնութեան և նախախնամական գրութիւն ի վերայ տիրապահ աստուածախնամ մայրաքաղաքիդ Հաշտարխանու և միջի դորին սրբանուէր քահանայից, ուսումնասէր սարկաւագաց, պերճապատիւ իշխանաց, փառազարդ դօվլաթաւորաց, շքեղաշուք մեծատանց, հարազատ երեսփոխանաց, հաւատարիմ գանձապետաց, հանճարեղ վաճառականաց, վայելչագործ արհեստաւորաց, արդարավաստակ երկրագործաց և առհասարակ ամենայն ժողովրդականաց՝ խմբից մեծամեծաց և փոքրկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և ամենայն չափու և կարգի տիոց և կարգի ի Տէր խնդալ միշտ ցնծութեամբ. ամէն:

Շնորհք, սէր և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ...

Զի թէպէտ դուք ամենեքեանդ Աստուածուսույց էք և տեղեակ սուրբ գրոց, զի դասատուն մեր հոգւոց սուրբ Գրիգորիս արքուն անունն արդար և յորժամ լուսաւորեաց զՀայաստան և էած յԱստուածապաշտութիւն և եղև հայրապետ և ծայրագոյն պատրիարք հայոց, որպես ասեն պատմիչքն և գրի ի պատմութիւնսն՝ զերկուս կաթուղիկոս ձեռնադրեալ՝ զմինն առաքեաց ի Վիրս՝ անտէն նստիլ և հովուիլ զազգն վրաց և զմիւսն առաքեաց նոյնպես յԱղուանս՝ անդ նստիլ... յորժամ եկին թագաւորքն պարսից յաշխարհս մեր, ոմանք ի նոցանէ, ըստրկութիւն ի քաղցրութիւն շարժեալ, զբոլոր ազգս աղուանից ի մեծէ մինչև ի փոքրս, ի մեծատանց մինչև յաղքատս, իւր սարօք հանդերձ, չուիցուցին ի խորին Խօրասան և անդր քան զՔաբուլի, ի Ղանդահար, որպէս և զոմանս ի հայոց, որք ոմանք բնակեալ են ի նոր օրհնեալ մայրաքաղաքին Զուղայ և ի Ֆահրապատ՝ ի կողմն Մազանդարանու և ի Համադան: Իսկ գնացեալ աղուանից ի վայրն Ղանդահարու՝ բնակեցան անդ և կեցեալ ի Պարսս, ուսան զբարս պարսից:

Առ այս պատուիրէր հանապազ Աստուած Մովսէսի և ամենայն մարգարէից՝ ոչ առնել զբարեկամութիւն ընդ քանանացիս:

Արդ ի համառօտն դիմեալ բան մեր այս իսկէ, եթէ ի Գանձասար նստեալքն և Աղուանից կաթուղիկոս անուանեալքն... բնակիչք տեղւոյն, որք հայեն ազգաւ և ոչ աղուանք, ժողովուրդք մեր են և ոչ իւրն: Մինչև ցայսօր ապստամբութեամբ է տիրեալ և հովուէ և թէ որպէս հովուէ, այն ևս գիտնոց յայտնի է և որպէս ժողովրդեան և վանիցն, յորս նստեալք են, լուաք, թէ որպէս է, ի լռութեամբ պահեսցուք: Նաև տեղւոյն կաթուղիկոս անուանեալն (Ներսես Զրաբերդցին-Լ. Մ.), որպէս ապստամբեալ, կամի ձեռնամուխ լինիլ օրհնեալ մայրաքաղաքիդ և զձեզ, սիրելի ժողովուրդդ իմ, տիրապետիլ: Եւ զայսոսիկ ոչ մերոյս օգտի և նախանձու ինչ գրեմ երկրորդաբար, որ ի վաղուց... քաւ լիցի, այլ վասն շահի հոգւոց ձերոց, զի իմացեալ և զգոյշ լեալ, չանկանիջիք ի գուբ խորդութեան և անհնազանդութեան, որ և հեռի լիցի ի ձենջ: Ուրեմն պատրաստ լեալ կայջիք ի հարազատ որդիութիւն ի ծոց սենդեան մօր լուսոյ սրբոյ էջմիածնի, զի պահիջիք զօրհնութիւն և լիջիք որդիք Արքայութեան, որ ի վերայ երկրի սրբոյ իջման տեղւոյ: Որ և Տէր օրհնեսցէ զձեզ և արասցէ ժառանգ Արքայութեան՝ անդեն թագաւորիլ ընդ Քրիստոսի, որ ամենայն վայելէ փառք և պատիւ յաւիտեանս. ամէն:

Գրեցաւ ի ՌՃՂԹ թուին և յամսեան հոկտեմբերի ԺԲ, առ դրան սրբոյ և մեծի Աթոռոյս էջմիածնի:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 5

Միայն Հովհաննես Հասան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս ճանաչելու վերաբերյալ Ղարաբաղի թեմերի աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչների համախոսականը:

Յուսովն Անմահին Հօր և կամաւն Ամենակալին Որդւոյ և թողտուութեամբ Հոգւոյն Սրբոյ, առաջի Ամենասուրբ Երրորդութեան և համայն սրբոց և հրեշտակաց նորին:

Մեք բոլոր երկրիս առաջնորդք, վարդապետք, քահանայք, մելիքք, երեսփոխք, տանուտերք, վաճառականք և հողագործք և առհասարակ մեծ ու փոքր ժողովուրդք, որք եմք սեփական թեմ և վիճակ հայրապետական Աթոռոյն Սրբոյն Գրիգորիսի, Սուրբ Գանձասարայ: Որոյ սակս գրեցաք այս թուղթ դաշնութեամբ և նամակ ուխտի և միաբանութեան այսպես:

Քանզի որ մերումս ժամանակի, չուն Յիսայի կաթուղիկոսն առ Աստուած փոխեցավ, Ներսես կաթուղիկոսն կաթուղիկոսէր, մէկն մէկի հետ ուխտ և դաշինք ունեին: Այն պատճառէն մեք էլ դաբուլ արինք, թէ Աթոռումն նստի, կաթուղիկոսութիւն անէ: Այս պատճառօվս, որ զյետ վախճանելոյն իւր, այլ կաթուղիկոսն երկրիս Յիսայի կաթուղիկոսին ազգիցն լիցի: Եւ մեք հաւատեցեալ ընդ խօսկն նորին և մինչև ցայսօր ընդունեցինք զնա: Եւ յայժմ ևս եղբոր որդի Ներսես կաթուղիկոսին, որէ Ապրես անուն, քանի աւուր հետ վախճանելոյն Ներսես կաթուղիկոսին, իւր որդի Իսրայէլ վարդապետն աղտ կողութեամբ և ի տեղոյ փախուստականի իւր, կաթուղիկոս էր օրինեալ: Վասն որոյ գրեցաք պայման և սահման և հաստատեցաք կնքով և մօհրով. այսու հետև մեր հայրապետն Յոհաննես կաթուղիկոսն է, որ է եղբոր որդի Յիսայի կաթուղիկոսին, որ եղև մեր հայրապետ: Այն աղտ կողութեամբ օրինեալ Իսրայէլին հետ բան չունինք: Զկնի այսորիկ, ով որ զԻսրայէլն ուզի և կաթուղիկոսի տեղ դնէ, թէ վարդապետ, թէ եպիսկոպոս, թէ քահանայ և թէ աշխարհական սև երես լինի և պարտական առաջի Աստուծոյ և Սուրբ Գանձասարայ և Սուրբ Աջոյն Գրիգորիսի: Եւ ով զԻսրայէլ չէ ընդունէ, օրինեալ լինի Աստուծոյ և ամենայն սրբոց նորայ տամք և տեղօք, զարմօք և զաւակօք և ամենայն էիւք և գոիւք. ամէն:

Այսու հետև միախօսք և միակամք կանգնեմք և կանգնեալ եմք, որ այսու հետև Յոհաննես կաթուղիկոսն եղև մեր հայրապետ, որ սիրով սրտիւ ընդունեմք և մեծարեմք և մեր Աթոռոյն ծառայութիւն

անեմք և զիւր կաթուղկոսական իրաւունքն տամք: Իսկ եթէ Իսրայէլն գայ, որէ կող և խաբեբայ, թակեմք և ջուղապ անեմք մեր Աղուանից երկրէն: Այլև միաբանութեամբ կանգնեմք և որչափ արծաթեղէն, ոսկեղէն, զարպափ և այլ զարդ եկեղեցական, զոր աստի յառաջ Ներսես կաթուղիկոսն, անուամբ Մեծի Աթոռոյս Գանձասարայ, ի երկրիցն մեր Աղուանից ժողովեալ է և չի տուեալ Աթոռոյն մեր, զամեն մի ըստ միոջէ պահանջեմք Իսրայէլեն և վրեժխնդիր լինիմք վասն մերոյ Աթոռոյն:

Եւ այս թուղթս հաստատուն լիցի և մնասցէ կամաւքն Աստուծոյ;

Գրեցաւ ի թուեն ՌՄԺԲ փետրվար ամսոյ Ե (5. 02. 1763):

Կնիքները պատկանում են Վարանդայի մելիք Շահնազարին՝ մելիք Հուսեինի որդուն, Դիզակի մելիք Եսայուն՝ մելիք Եգանի որդուն, Խաչենի մելիք Միրզախանին, մելիք Հովսեփին՝ մելիք Հուսեինի որդուն, մելիք Բախտամին՝ մելիք Արամի որդուն, մելիք Եգանի որդի Հովսեփ բեկին, Մելիք Միրզաբեկի որդի Բաղր բեկին, մելիք Գունային, Ամարասի եպիսկոպոս Բաղդասարին, Սուրբ Հակոբի վանքի առաջնորդ Եղիային, Սպիտակ վանքի առաջնորդ Սարգսին և այլն՝ ընդամենը 50 կնիք և 12 մատնադրոշմ:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 210 (պարսկերեն պատճեն)

Հովհաննես Հասան-Ջալալյանին կաթողիկոս հաստատող Ղարաբաղի Իբրահիմ-Խալիլ խանի 1763թ. հրովարտակը

Իշխանությունն Ալլահինն է:

Համաձայն Ջաննաթում բնակվող Սեֆյան նախկին արքաների հրովարտակների, որոնց թող Ալլահը հանգստություն պարգևի, Ղարաբաղի, Գյանջայի և Զարզբիլի հայ համայնքի կաթողիկոսությունը և գլխավորությունը հանգուցյալ երեմիա և Իսա (Եսայի Հասան-Ջալալյան-Լ. Մ.) կաթողիկոսներին է պատկանել: Ապա Իսա կաթողիկոսի վախճանվելուց հետո կրկին տրվել է Ներսես կաթողիկոսին: Այս Ներսես կաթողիկոսը զառամյալ տարիքի էր հասել: Այժմ լուր ստացվեց, թե մահացել է: Եվ քանի որ կաթողիկոսական աթոռը չպետք է թափուր մնա, կաթողիկոս ընտրված Մելիքբեկի որդի Հովհաննեսին հիջրայի 1176 թ. շաբան ամսի 25-ին (1763թ. մարտի 18 -Լ. Մ.) տրվեց կաթողիկոսությունը:

Համաձայն այս հրամանի նա պետք է իր պաշտոնավարման ընթացքում ստանա Սեֆյան արքաների հրովարտակներով հաստատված թալիբանեն (հոգևոր հաստատությունների և բարձրաստիճան հոգևորականների օգտին գանձվող դրամ և բնամթերք-Լ. Մ.):

Ով համայնք, քրիստոնյաների կողմից ընտրված Մելիքբեկի որդի Հովհաննեսին ճանաչե՛ք Աղվանքի կաթողիկոս և գլխավոր, հնազանդվե՛ք նրա խոսքին և խորհուրդներին, մի հակառակվե՛ք նրա հրամաններին:

Գրվեց 1176թ. շաբան ամսին:*

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2ա, վավերագիր 57 (պարսկերեն պատճեն)

Շիրվանի Մահմադ-Սաիդ խանը 1763թ. վերջին հրապարակված հրովարտակով հրամայում է իր հպատակ հայերին կաթողիկոս ճանաչել Հովհաննես Հասան-Ջալալյանին:

Չկա աստված բացի Ալլահից, և Մուհամմադը նրա մարգարեն է:

Քրիստոնյաների ընտրյալ Գանձասարի վանքի կաթողիկոս Հովհաննեսը ներկայացավ Մեզ և հայտնեց, որ Սեֆյան թագավորների հրովարտակների համաձայն, թող Ալլահը հանգստություն պարգևի նրանց, Գանձասարի վանքի, Ղարաբաղի, Գյանջայի, Նուխու, Շիրվանի քրիստոնյաների կաթողիկոսությունը նրա նախնիներին է պատկանել: Վերոհիշյալ հրովարտակների համաձայն Մեր Վսեմության կողմից էլ Հովհաննես կաթողիկոսի վերաբերյալ հրամայում ենք. ինպես քրիստոնյաների դավանանքն է պահանջում, թող զբաղվի կաթողիկոսական գործերով: Մեր բարձր իշխանության տակ գտնվող հայկական գյուղերին և նրանց գեղջավագներին ու քեդխուդաներին հրամայում ենք՝ Հովհաննեսին ձեր կաթողիկոս ճանաչե՛ք, թալիբանեն և այլ նրան հասանելի արդյունքները նրան հանձնե՛ք:

Գրվեց հիջրայի 1177 թ. ջումադ ալ-ավալ ամսին (1763թ. դեկտեմբերի 7- հունվարի 5)

---

* Հրովարտակի վրա առկա է Իբրահիմ-Խալիլի հոր՝ Փանահ-Ալիի կնիքը: Վերջինս սպանվել էր 1763թ. սկզբին և Իբրահիմ-Խալիլը, սույն հրովարտակը հրապարակելու պահին, իր խանական իշխանությունը հաստատող հրովարտակ Նադիր շահի հաջորդներից չէր ստացել:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 150

Վրաց Հերակլ Բ թագավորի հրովարտակը Աղվանից կաթողիկոսություն կենտրոն Գանձասարի վանքի մասին, ռուսերեն պատճեն:

Мы достоверии узнали, что Святая Гандзасарская церковь алванцевъ, предками нашими построенная во имя Іоанна Предтечи, святая голова которой по их преданію находится там же, ныне по милости двух католикосов* (разделившихся, враждовавшыхъ) разорена и пришла въ упадокъ, что намъ не желательно. Мы стараемся о возобновленіи сия, о чемъ старается и святой католикосъ всех армянъ Симэонъ. По сему извещаю всехъ, что согласно предыдущимъ закономъ нашимъ, сообщенныхъ вамъ, дабы духовные приношения ваши не пропали даром, а шли съ пользою.

Тот долженъ считатся католикосом вашимъ, кто будучи поставленъ в Гандзасарахъ, будет старатся о возобновленіи Святой церкви Гандзасарской, если на то будет и ваша воля (что намъ особенно желательно). До хранитъ васъ Богъ. Аминь.

Дано 1215 года армянского летосчисленія, іюля 5, в Тифлисе (5. 07. 1766)

---

* Հովհաննես Հասան-Ջալալյան և Իսրայել Ջրաբերդցի հակամարտ կաթողիկոսները:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 100

Շամախու հայերի համախոսականն է, որով հայտնում են Ամենայն Հայոց Սիմեոն Երևանցի կաթողիկոսին, որ նրա կողմից հաստատված Հովհաննես Հասան-Ջալալյանին են ճանաչում Աղվանից կաթողիկոս և մերժում են Իսրայել Ջրաբերդցուն:

Վեհ Սիմեոն կաթուղիկոսին:

Ջորութիւն գրոյս այս է: Որ թարիղես յառաջ մինչ ուր ամն թէ որքան խռովութիւնք և վրդովմունք եղեն երկիրս մեր սակս երկՃուղութեան կաթուղիկոսական տանս Աղուանից, որ ոչ վայել է զեղեալսն վերստին յիշել կամ գրել: Մինչև վերջապես զգուեալ գրեցաք ի Սուրբ էջմիածին, առ սրբազան վեհապետն ամենայն հայոց զի խնդրիսցէ զմի ի յերկուցն և կարգիսցէ հայրապետ ի վերայ մեր և մեք հրամանաւ նորին ընդունիսցուք կաթուղիկոս: Քանիցս անգամ գրեալ եմք յէջմիածին և խնդրեալ ընդհանրական հայրապետին ամենայն հայոց, իսկ սրբազան հայրապետն թէ որքան ջանաց բառնալ զխռովութիւն երկրիս: Գրեաց երկու կողմն ևս, զի երկու կաթուղիկոսքն գնասցին առ ինքն և ընտրեսցէ զմի ի նոցանէ և հաստատեսցէ կաթուղիկոս ի յԱթոռն մեր Գանձասար: Իսկ Յովհաննէս կաթուղիկոսն երկիցս և երիցս անգամ խոնարհեալ գնաց ի Սուրբ յէջմիածին, և Իսրայէլն ո՛չ Սուրբ էջմիածնայ հնազանդեաց, և ո՛չ յԱթոռն գնալն յանձն էառ: Եւ վերջապես սրբազան հայրապետն ամենայն հայոց զՅովհաննէս կաթուղիկոսն ընտրեաց հայրապետ մեր և հաստատեաց ի Սուրբ Աթոռն մեր Գանձասար եւ զԻսրայէլն խոտեաց եւ բանադրեաց: Բայց այլևս ոչ եղև միութիւն, զի իշխանք յերկրիս ոմանք զնայ ընդունեին և ոմանք զնայ: Մնաց այսպէս մինչև չորս ամն և թարիղումս կամօքն յԱստուծոյ հրամանաւ գահակալին սրբոյ էջմիածնայ, մեք Շամախու առաջնորդով, քահանայիւք, իշխանօք և բոլոր ժողովրդովք և երկրաւ ընտրեալն սրբազան վեհապետէն ամենայն հայոց, զՅովհաննէս սրբազան կաթուղիկոսն ընտրեցաք հայրապետ մեր, որ ի յԱթոռն մեր Գանձասար նստի: Իսկ որ խոտեալն և բանադրեալն, խոտեցաք և մեք: Այս վերջի մուջալայն տամք Սրբազան Յովհաննէս կաթուղիկոսին և ընդունեսցուք հայրապետ մեր, որ կայ նստեալ ի Սուրբ Աթոռն մեր Գանձասար: Թարիղես յառաջ մուջալայ շատ ունիմք ի ծեռս խոտելոյն: Զայն ամեն անընդունակ է մեզ: Այս վերջի մուջալայս մեր եւ այս գիր թողուք կտակ մեր յորդոց յորդիս, որ այսուհետև յարտաքոյ Սրբոյ Աթոռոյն մերոյ Գանձասարայ կաթուղիկոս մի ընդունիցեմք և ի Գանձասար նստողին ծառայիցեմք: Ով որ այսուհետև ուխտիցս և պայմանէս դուրս գայ պարտական լիցի Սրբոյ Աթոռոյն Գանձասարայ և ներքոյ նզովից սրբոյ յերից ժողովացն, իսկ հնազանդն Սրբոց Աթոռոցն էջմիածնայ եւ Գանձասարայ, օրհնիցի ի սրբոց հայրապետացն և ամենայն սրբոցն Աստուծոյ. ամէն:

Գրեցաւ ի հազար եօթն հարիւր եօթանասուն թուոջն Փրկչին և է Հայոց հազար երկու հարիւր տասն ու ինն: Ամս բուն քսան և եօթն նոյեմբերի:

Արխիվ Ալ. Երիցյանի, թղթապանակ 156, վավերագիր 224

Գանձակեցի մելիք Ռոստոմը Ամենայն Հայոց Սիմեոն Երևանցի կաթողիկոսին ուղղված 1770 թ. դեկտեմբերի 5-ի նամակով հայտնում է, որ Աղվանից Իսրայել Ջրաբերդցի կաթողիկոսը պատրաստակամություն է հայտնել հնազանդվել էջմիածնի ընդհանրական աթոռին, եթե Սիմեոն Երևանցին սիրալիր բնույթի նամակ հղի իրեն:

Քրիստոսի բանաւոր հօտիս և հոգւոց մերոց արփաւորիչ համայնաեղիւ տերութեամբ Սիմէօն սրբազան կաթուղիկոսիդ, յաջորդ իւր յոգնաչարչար նահատակին արքմնական հովուին Գրիգորի հոգելուսին, տանս Հայոց տիրապետին:

Ի ստորագրեալ նուաստ ծառայէ համբոյր խոնարհական գարշապարաց վերոյ գրեցեալ սրբազնութեան, հանդերձ պարգևամբ քոյին օրհնութեան, որ միշտ շնորհիցեալ է փծուն ծառային ի վեհազան տեառնէդ, որոյ օրհնութիւնք ոչ միայն առ իս իջանին, այլև բոլոր անձինս Լուսաւորչական հոտին, որ ի փարախ կաթուղիկոսիդ հայրականի ժողովեալ, ամրապես պահեն թարց երկիւղի և կասկածի:

Յետ բայիս գրեցելոյ յայտարարութիւն լիցի ծառայօրեն, զի յամսեան հոկտեմբերի վեցտասանին եկն ի Գենջէ քաղաքս կաթուղիկոս կոչեցեալն մեր (Իսրայել Ջրաբերդցին-Լ Մ.), առ որ գնացեալ, ժողովեցաք մելիքք, տանուտեարք, իշխանք, քէտխու-

տանք և ժողովուրդք և ասացաք միաբերան, ի միասին. թէ ոչ օրէնէ լինելն խռովութիւն ի մէջ քոյ և Լուսաւորչի փոխանորդին, զայն ոչ կամիմք մենք, բարց ի միջոյ: Որում պատասխանեալ, ասաց. «բարւոք ասէք, ես ոչ ունիմ ընդդիմանալ այդպիսւոյ խելամերծ բանի, այլ խոնարհիմ յօժարութեամբ ցայն կէտ, ուր զետեղեալ պահանջեն օրէնք, սահմանի խոնարհութիւն: Բայց ասեմ ձեզ, կատարումն հաշտութեան այսր խռովութեան յայնժամ լինի, յորժամ նա թուղթ մի գրեսցէ սիրոյ»: Զոր լսեալ եմ, յարեալ ի տեղւոջէս, ուր նստի և ասացի. «ես վէքիլութիւն կանիմ ի կողմանէ նորին, որ զայդ ասացեալ բանդ նա կատարեսցէ՝ հղելով այսր զայդպիսի թուղթ սիրոյ»: Եւ իբրև լուան զվէքիլ լինելն իմ Տեառնիդ՝ ինքեանց ևս վէքիլ արարին զիս, որ եղէ ես յերկուց կողմանց, ըստ որոյ ես նոսայ վէքիլ ի հրամանոցդ կուսէ, առ հրամանքդ վէքիլ ի նոցունց կուսէ:

Վասն հաստատութիւն բարի խորհրդոյս՝ յաւուր ժամասացութեան իւրոյ, հաստատեաց վերստին զգանձանակդ Աթոռոյդ մեծաւ ծանուցմամբ, որում գանձապետ կարգեաց զԱռաքելեան Պապայն՝ կարգեցեալդ ի սրբոյդ:

Այժմ Տերութեանդ արգս այս է, զի զիս, որ վստահութեամբ արարեալ վէքիլ եղէ, մի ամաչեցուցիս առաջի սոցայ, այլ վեր իմոյ սիրոյ գրեալ խաթրճամ բանիւ առաքեսցից, որով հաւատացուցեալ, վեր կացուք և եկեսցուք յոտսդ, առ ի առնուլ զօրհնութիւն հօրեդ և զշնորհս սուրբ տեղւոյդ և առ ի ուխտել ընդ Տեառնեդ, զի առաջնանէ որպես եղեալ է, այսուհետև ևս այսպես լիցի: Հրամանքդ իբրև զհաւ զսա սիրեսցիս ու որպես զթոռն քեզ հնազանդեսցի: Լիջիր ողջ ի պարծանս քոյ նուաստ ծառայ Մելիք Ռոստոմ:

Ի ՈՄԺԸ դեկտեմբերի Ē գրեցաւ:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 152

Սարգիս Հասան-Զալալյանին Հաղպատի առաջնորդ հաստատելու վերաբերյալ Վրաց Հերակլ Բ թագավորի հրովարտակը (ռուսերեն պատճեն):

Мы всея Грузіи и прочая Царь Георги повелеваем вамъ всемъ и въ Тифлисе живущимъ, также въ Карталиніи, Сомхетіи, Сабарато, Казахе и прочих местахъ где ныне обретают прихожане Ахпатского монастыря-духовенство, почтенейшіе особы, протоіереи и священники, такоже простолюдины. Должны вы ведать, что по повеленію нашему и пожеланію Его Святейшества Патриарха преосвященной Архіепископъ Сергей утвержденъ Ахпатскимъ Епархіальнымъ Архіепископомъ и настоятелемъ Монастыря сего, почему въ все обязаны приказанія Его исполнять и повиноватса Ему, и как прочіе настоятели имели Преимущества, также и сей имеетъ святымъ онымъ домомъ управлять, и вы прихожане принодлежащіе монастырю сему должны доходы взносить къ нему-Архіепископу Сергею.

Сентября 13 го дня 1799 года

Мы всея Грузіи наследникъ и повелитель Царевичъ Давидъ сію блаженнего отца нашего грамоту утверждая, прилогаемъ печать.

Апрель 9 го дня 1801года

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 147

Սարգիս Հասան-Զալալյանի դիմումը Վրաստանում կայսեր լիազոր ներկայացուցիչ Պ. Ի. Կովալենսկուն:

Խնդիր ի նորին վեհազնություն Վրաստանա մինիստր տեառն Պետր Իվանիչ Կաւալինցկիէն:

Ի թուին Փրկչին մերոյ 1781-ին ի տեառնէ քնեազ Գրիգորի Պոտէմկինէն և ի տեառնէ Յովսէփայ սրբազան առաջնորդեն ամենայն Ռուստաց երկրի ազգին հայոց, թուղթ էին հղեալ ի վերայ մէլիքացն և ուզբաշոցն Ղարաբաղու, որոյ միտք գրեցելուցն էր այս: Ողորմութիւնն ամենողորմած կայսրուհւոյն հասեալ է ի վերայ ազգին հայոց և մանաւանդ ի վերայ Աղուանից մէլիքացդ և ուզբաշոցդ և այլն ըստ կարգի:

Ի ժամանելն այն յուսադրական թղթոյն Մէլիք Աթամն Մէլիք-Իսրայէլեան, Մէլիք Ապօվն Մէլիք-Յովսէփեան և Դանիէլ ուզբաշին Մելիք-Բէգեան, որ էր եղբայրն իմ, միաբանեալ ժողովեցան առ Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից, նա ևս էր եղբայր մեր, զվերոյ թուականին դեկտեմբեր ամսոյ մուտն արզառողական թուղթ (խնդրագիր- Լ.Մ.) մատուցին ի սպասաւորացն կայսերական բարձրութեան, առ քնեազ Գրիգորի Պոտէմկինն, առ Պաւլ Սերգէիչ կողմնակալն և առ Յովսէփ Սրբազան Առաջնորդն հայոց և ընկալան զպատասխանին ի 1782 թուին յունիս ամսոյ ելն: Եւ յայս յունիս ամսոյ 17-ին յիշեալ Մէլիք Աթամն Մէլիք-Իսրայէլեան փոխեցաւ առ Աստուած: Եւ յապա Յովհաննէս կաթուղիկոսն, Մէլիք Մեջլումն, Մէլիք-Աթամեան, Մէլիք Ապօվն Մէլիք-Յովսէփեան, Մէլիք Բախտամն Մէլիք Ադամեան, Դանիէլ ուզբաշին Մէլիք-Բէգեան վերստին թուղթ գրեցին և ձեռամբ Գաբրիէլ և Դանիէլ մարդկանց մատուցին ի սպասումին ողորմած կայսրուհւոյն: Զի գրութիւնք չորիցս եղև և ամենց պատասխանիսն ընկալան ըստ իւր ժամանակին: Որ թէ ի սոցանէ մատուցեալ թուղթքն և թէ Նորին Կայսերական Բարձրութենեն շնորհեցեալ թղթոց կոպիայն ի հարկէ լինելոց է պատրաստի ի գանձարանս թագաւորին և նախատիպքն հանձնեցեալ եղև մեզ ի Աթոռոջն Գանձասարու:

Իսկ ի թուին 1784-ին նոյեմբեր ամսոյ 5-ին Իբրահիմ խորամանկ խանն տեղւոյն, գիտեցեալ զայս խորհուրդ, սկսաւ հարցաքննութիւն առնել զՅովհաննէս կաթուղիկոս եղբորէս, հիշեալ մէլիքանց եւ ուզբաշիեն: Եւ ապա պարտաւորութիւնք արար ի վերայ

կաթուղիկոսին, թէ այս բանս դու ես արարեալ վասն ազգին հայոց, որոյ յաղագս մշտապես մախայր ընդ կաթուղիկոսին և սպառնայր մահացուցանել. մինչ զի մահադեղս տալով, եբարծ զնա ի կենաց աստի: Եւ ետ մահացուցանելոյն զնա, ընբռնեցին զիս և եղբայրն իմ Դանիէլ ուզբաշին և այլ երեք եղբարքս, արկեալ ի բանտ: Ինն ամիս և վեց աւուր մնացաք ի անտի Շուշւոյ բերդին եւ զամենայն կահս Սրբոյ Գանձասարու և զստացուածս եղբարցն իմոց մինչեւ հինգ հազար վեց հարիւր թումանի նաղդ և վէջ կողոպտեցին, նմանապես և Մէլիք Բախտամին արարին, որ որդի նորին Մէլիք Աբազն այժմ է ի Ղարաբաղ: Անիրավ խանն Իբրահիմ զայս յառաջադրէր մեզ, թէ առ Ռուստաց տերութեան թուղթն գրելոյ պատճառն դուք էք եղեալ: Խորամանկ խանն այսու արարմամբքս ոչ շատացաւ, զի զկաթուղիկոսութիւն Գանձասարու մեր էր, քակեցեալ, մինչ զի երեսուներեք կաթողիկոսունք յազգէ մերմէ էին նստեալք, զայս եւս կողոպտեաց ի մէնջ և ետ այլոց, որ յայժմ է ի Ղարաբաղ: Նաև զմէլիքութիւն խաչենիցւոց, որ ի Ղարաբաղ, բնական մեր է եղեալ և ունիմք զփարման Նադիր շահէն, զայն ևս եբարծ յազգէ մերմէ և ետ ումիմն ծառայի մեր, որ այս վերոյ գրեցեալ ամենայն անցքն պայազատ Մէլիք Զմշիդ Մէլիք-Շահնազարեանն լաւապես գիտէ:

Յորժամ այսքան վիշտ, նեղութիւնք հասին մեզ, Մէլիք Մեջլումն և Մէլիք Ապօվն փախուստ առեալ դիմեցին այս կողմանս, նմանապես և մեք զերծեալք ի մահուանէ, ի փախուստ առեալ քանի վարդապետօք և եղբայրներովս էինք ի քաղաքս առ սորին արքայական մեծութիւն տէրն Գիորգի արքային վրաց, որոյ Աստուած երկայն աւուրս արասցէ: Ընկալաւ զմեզ սիրով և շնորհեաց մեզ զՍուրբ վանքն Հաղբատու և հրամանաւն Սրբազնասուրբ Հայրապետին Ամենայն հայոց*, որ է ի էջմիածին, առնիմք զեպիսկոպոսութիւն և անդադար աղօթեմք վասն կենաց ամենողորմած կայսէրն և թագաւորութեան մեր և ձերոյ վեհազնութեանն և անցուցանեմք դառնօրեայ կեանս մեր: Բայց եղբայրքս և հիշեալ Դանիէլ եղբօրս որդի Աստուածատուրն կան աստ ողորմելաբար զրկեալք ի բնական ժողովրդոց իւրեանց և իշխանութենէ՝ ակն ունելով արդար իրաւանց ձերոյ վեհազնութեանն: Զի որովհետեւ ի յամենողորմած Նորին Կայսէրական Բարձրութէնեն քեզ է յանձնեցեալ ակնարկումն Ղարաբաղու հինգ մէլիքաց՝ ահա է օր և ժամանակ արդար իրաւանց, զհանձնելումն զորքին պարսից, որք էին յերկրէն յԵրևանու: Ժողովուրդքն Ղարաբաղու երկրին հնգից մէլիքացն, զոր կային անդ, լսելով զբարի հաջող անուն ձեր և գիտելով զշնորհաւոր գալն ձեր աստ և

* Ղուկաս Կարնեցին

մելիքներն իւրեանց աստ ի ծառայութենէ ձեր ինքնայօժար կամօք մինչև երեք հարիւր երեսուն տուն եկեալ են այս կողմս ընդ յուանաւորութիւնն ձեր, որ ի մեջ նոցա ութսուն և իննսուն տուն խաչենցիք մեր բնական ժողովրդոց են, որ հինգ մելիքաց մին էր յազգէս եղեալ: Հայրն և հորեղբայրն իմ մինչև ցութն մելիքք նստեին ղգլբաշից այս կողմն, որ այս բանիս զորպէսն Յովսէփ սրբազնասուրբ կաթուղիկոսն Ամենայն հայոց և պայազատ մելիք Ջմշիդն Մելիք-Շահնազարեանն լավապէս գիտակք են: Որ և խնդրեմ մեծաւ աղերսանօք վերահասու լինիցի ի վեհազնութենէ ձեր, եթէ խաչենու յերկրի մելիքութիւնն (ուզբաշի Դանիէլ եղբորս որդւոյն Աստուածատուրս) բնականապես մեր ազգին իցէ: Քրիստոսի խաչի սիրոյն արդար իրաւամբք շնորհեա վերստին զմելիքութիւնն ուզբաշի Աստուածատուրիս, որոյ հայրն սպանիցեալ եղեւ ձեռամբ անիրաւ խանին և ինքն աստ ի ծառայութեան ձեր է և նորաեկ ժողովուրդքն մեր խաչենցիք շնորհեա նմա ողորմութեամբ և թղթով: Որ բացի նորաեկ խաչենցւոց աստ ևս՝ Վրաց տուն բազումք կան խաչենցիք: Կարող եմք զնոցա ևս ժողովել ի մի վայր և մնալ ի հպատակութեան և ծառայութեան Ամենողորմած Ինքնակալ Կայսերն և ըստ ժամանակի պիտոյանալ ձերոյ վեհազնութեանն:

Զայս ևս յուշ լիցի ձերոյ վեհազնութենէ, զի Մելիք Ջմշիդն Վարանդու է, Մելիք Ապօվն Թալիշու, մեք Խաչինու և երկուքին մինն է Գեանջայ Աբամն՝ որդին Մելիք Մեջլումին եւ մինն է Ղարաբաղ՝ Մելիք Աբազն՝ որդին Մելիք Բախտամին:

Սարգիս Արքեպիսկոպոս Գանձասարայ և այժմ Առաջնորդ գերահռչակ Սրբոյ վանիցն Հաղբատու:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 148

1802թ. սեպտեմբերի վերջին գրված ծանուցագրով Գյուլիստանի մելիք Աբով Մելիք-Հովսեփյանը Խաչենից Վրաստան գաղթաց և իր իշխանության տակ հայտնված հայերի նկատմամբ ավատական իրավունքները հանձնում է Սարգիս Հասան-Ջալալյանին: Ծանուցագիրը վավերացված է Վարանդայի մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի կողմից:

Պատճառ գրոյս այս է, զոր ինձ՝ Մելիք Աբովիս մօտն Ղարաբաղու բերած կամ Երևանու բերած մին փարայ տուն կար, որ մինչի այսօր տէրութիւն էի անում: Բայց սրբազան Սարգիս վարդապետն դուս ելաւ, թէ Խաչենու ըռայեաթն իմն է, և մենք էլ առաջնոյ յատկապէս տեղեակ ենք, որ այս Սարգիս վարդապետիս հայր կամ ազգն Խաչանու միալին մելիքութիւն արած են այս ռապաթովս:

Զի ահա թարիղումս գերազանցագունեղ Պետր Իվանիչ Կավալցգուն մարիփաթովն և մեր եղբայր իշխան Մելիք Ջիմշիտին մարիփաթովն վեր առինք, որչափ որ խաչանեցի իմ մօտս տուն կար տվի Սարգիս վարդապետին իմ կամաւ և յօժարութեամբ, որ զայս վերոյ գրեալ տաներիս տերութիւն անէ, էլի այսուհետև իմ բան չի լինի: Այսպես եղաւ մեր եղբայրն:

Գրեցաւ ՌՄԾԱ սեպտեմբերի իզումն, ի քաղաք Թիֆլիզ:

Մելիք Աբով Մելիք-Հօսեփեան:
Մելիք Ճմշիդ Մելիք-Շահնազարեան- ասես գիրել՝ գիրես:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 153

Ռուսաստանի ներքին գործերի նախարարար Ալեքսանդր Գոլիցինը հաղորդում է Կովկասի կառավարչապետ Ալեքսանդր Տորմասովին, որ Ալեքսանդր Ա-ն հաստատել է Սարգիս Հասան-Ջալալյանին Ղարաբաղի արքեպիսկոպոս:

Получено 9 сентября 1809 года

Милостливый Государь Александр Петровичъ

Министръ внутренних делъ сообшилъ мне высочайшую Его Императорского Величества волю, дабы Армянскій Архіепископъ Саркисъ, во уваженіе престарелыхъ его летъ и по усердію къ Россіии определенъ былъ Епархіальнымъ Архіепископомъ въ Карабахе, отъ куда онъ родомъ. Высочайшую волю сообшая Вашему Высокопревосхадительству для приведенія въ надлежащее исполненіе, имею честь быть съ истиннымъ почтеніемъ и преданностію Вашего Высоко Превосходительтва покорнеишіи слуга.

Подлинное подписалъ

Князь Александръ Голицынъ
Санкт Петербургъ
Августа 18 дня

Его Высоко Превосходительству А. П, Тормасову.

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 27, վավերագիր 32

Կովկասի կառավարչապետ Նիկոլայ Ռտիշչևի նամակը Եփրեմ Հորագեղցի կաթողիկոսին:

Возвратившееся из Эчмиадзина Саркис доставил мне почтеннейшее письмо Вашего Светейшества, из содержания коего мне весьма было приятно видеть как о благасклонном уважении вами моей просьбы в рассуждении означенного пастыря, так и об оказанных ему с вашей стороны особых милостях, за что и приношу Вашему Святейшеству наичуствительнейшую мою благодарность, считая сие знаком весьма лестным для меня Вашего благорасположения.

В рассуждении же запущения сказанного Преосвященнего к управлению вверенного от Вас паствою, то сходно с желанием Вашего Святейшества непримену сделать все зависевшееся от меня посему предмету расположения.

14 Июня 1815г. Тифлис

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 11, վավերագիր 169

Աղվանից Իսրայել Հրաբերդցի կաթողիկոսը հայտնում է Ամենայն Հայոց Դանիել Սուրմառեցի կաթողիկոսին, որ ռուսական իշխանությունները իրեն վտարում են Գանձակից:

Յայտ իսկ գտանիցի մեծ տերութեանդ քում, զի տառապեալ և անօգնական որդւոյ քում, մեծապես ողորմութիւն արարեալ,անհունութեան գպոյ տառապանաց հանելն խոստացար, զորս և մեր հայրութեանն քոյ ապաւինեալ հուսացինք: Հոր ևս գտանիցուք ի քեն դուռն ողորմութեան: Իսկ հայրութիւն քոյ ոչ եթող զմեզ առանց խնամոց՝ գրութեամբ մեծի տերութեան քոյ եղև մեզ փոքր ի շատէ ուրախութիւն: Սակայն այս օրինեալ ազգս ռուսաց, ի ազդմանէ բարիբարոյի, արարին զմեզ յաքսորս աստի Ելիսա-

բեթպօլու, ոչ տալով հանգիստ ժամանակ մի և ոչ թէ անսալ գրութեանդ և ոչ ի պատիւ մերոյս ծերութեան: Ահա այսոքիկ վտանգաւոր նեղութիւնքս արարին ընդ մեզ, զոր հայտնեցի տերութեանդ: Այսուհետեւ կամք քոյէ, որպէս հաճեսցիս, այսպէս արայ և այսպէս գիտեցեալ ողջ լեր:

1807թ. նոյեմբերի 22 Ելիսբեթպօլ
Իսրայէլ իբր Աբեղայէ ընկալցիս

Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթապանակ 164ա, վավերագիր 438

Աբրահամ վարդապետի նամակը Սիմեոն Բ Ջրաբերդցու մահվան հանգամանքների վերաբերյալ:

Պսակազարդեալ Սրբազան Հայրապետ իմ, գերապատիւ ողորմած տէր

Ի սեպտեմբերի մուտն վռազ գրութեամբ իմով ծանուցի Ձեզ և Սրբազան Հայրապետին մերոյ զվախճան ողորմելի Սիմօն Սրբազանին Աղուանից, զոր այժմ երկրորդեմ երկար պարագայիւք: Ի սեպտեմբերի 1 յաւուր հինգշաբթի ճաշեալ է ի տան իւր հարսին ի Թիֆլիզ, և անտի սկսեալ է հիւանդութիւն սորին: Բայց սխալ են, որք զայս ասեն և կամ որպէս ինքն հանգուցեալն կարծեր, ինչ և իցէ մրսածութեամբ ի սեպտեմբերի 2 յաւուր ուրբաթու ի ճանապարհ ելաք և ի ճանապարհին, իբրև սաստկացեալ է տաքութիւն, կամեցեալ է արիւն առնուլ և գտեալ են այր մի բժիշկ ծիոյ, ղարաբաղցի ի մարդկանց իւրոց: Եւ ծիոյ մեծ և գուլ նշտարիւ, կոպիտ և անհմուտ այրն այն չորս և հինգ տեղ ծակեալ է և արիւն չէ եղեալ, որոյ սկսաւ ուսն ուռիլ և ի վերայ այսց ի ճանապարհին կրկին և կրկին սկսեալ է վերստին յանզգուշութենէ իւրոյին տգէտ սպասաւորաց մրսիլ և տաքութիւն և հիւանդութիւն օր քան զօր առաւելուլ և այպես ծանրացաւ և բազում դժուարութեամբ ի սեպտեմբերի 7 յաւուր չորեքշաբթի հասաք աստ, և գնացեալ ի տուն Ֆաթալեանց Մկրտումին անկաւ ի մահիճ, ի կիրակէ:

Ի սեպտեմբերի 11 յառաւոտու գնացի ի տեսութիւն, և քրտունքն եկեալ էր ողորմելոյն և կատարեալ ծանր հարինք էր և եթէ լաւ պահող լիներ ի ժամանակի քրտունքին Աստուծու ազատեալ էր: Բայց ըստ որում ոչ հարինք գիտեն, ոչ թէ պահպանութիւն, վորոյ ի

հիմարութենէ պահողաց գրեթէ խաշեցաւ ի մէջ քրտունքին և առանց խոստովանութեան և համարէ թէ առանց հաղորդութեան, իբրև յանկարծամահ, հաղորդեաց զհոգի իւր առ Աստուած ի սեպտեմբերի 12, յաւուր երկուշաբթի յառաւոտու ի տասներորդ ժամու:

Սուգ և կսկիծ մեծ ողբումն և աշխարումն տիրեաց սաստիկ ի վերայ ամենեցուն: Սգացաք ի թշվառութիւն մարդկային կենաց և ատելի թուեցաւ մեզ աշխարհ իւրու սնոտիպաշտք, գարշելի վայելչութեամբն, զորոյ զհոգին հանգուսցէ Տէր ի լոյս երեսաց իւրոց յԱրքայութեան իւրում ընդ երանեալ հոգիս երջանակաց կատարելոց բարեխօսութեամբ սրբազան հայրապետաց և ամենայն սրբոց իւրոց. ամէն:

Վասն այն այսպէս երկար պարագաիւք գրեցի զմահ Սիմօն կաթուղիկոսին, զի հարկեսցի բերան հակառակորդաց և որդնալից լիցի լեզու նեխեալ և հոտած չարասիրեաց, որք զպարզ և զմաքուր սիրտ և զհոգի հասարակ ժողովրդոց պղտորեն և ի վերայ էջմիածնեցւոց գայթակղեցուցանեն զջերմ սիրտ հասարակութեան ի մէնք անամօթքն ի մարդկանէ և յաներկիւղքն յԱստուծոյ և յասուցեալ են մինչև ի լսելիս մեծամեծաց ռուսաց: Եւ այսպես բոլոր հասարակութիւն ի վերջին ծայր յուսահատութեան են հասուցեալ դնելով և ստուգելով զմահ նորին ի վերայ էջմիածնեցւոցս: Եւ ես յամօթոյ ոչ համարձակ երևիմ ի հրապարակի, և զայսոսիկ գործօղն է որդի անօրենութեան Ֆաթալեանց Մկրտումն, որում եթէ Սրբազան Հայրապետն գլուխն մեր հաւատոյ և Ձերդ բարձր Սրբութիւն ոչ սաստեսջիք և զամեհի գազանս ոչ սանձեսջիք և ի զգաստութին ոչ վերածջիք, այս կայծ, որ վառեալ է աստ և վառի, մեծաբորբոք ունի հրդեհիլ:

Այսքան ևեթ պարտաւորութիւն կայր ի վերայ իմ, զոր ծանուցի ճշմարտութեամբ զանց արարեալ տակաւին զմեծ և զանգրելի և զանտանելի հայհոյութեամբ և անարգանօք Ֆաթալեանց Մկրտումին, զոր ի նոյն երկուշաբթի, ի հրապարակի, առաջի բազմախուռն հանդիսի յաւուր վախճանի երանելւոյն, մինչև ես քահանայիւքս զհոգւոյն ասէի, նա անզգամաբար ժայթքէր ի գարշահոտ դժոխոց իւրոց զգարշելիս տաղտկացուցիչս լսելեաց հասարակութենէ, թէ դուք էք կործանիչք ձեր Հայրապետին էլ, ձեր Աբոռն էլ: Այսքան արիք, որ սորայ գլուխն էլ կերիք և Աղուանից կաթուղիկոսութիւն բարձիք և հասիք վաղեմի փափագանաց ձերոց և այլն և այլն և այլն: Բայց հանգուցեալն յառաջ քան զմահ իւր ի մէջ խօսից, թէ ի ճանապարհին և թէ աստ ասացեալ է, թէ ինչ որ եղև ի Թիֆլիզ ի սեպտեմբերի 1, յաւուր հինգշաբթի, ի տան իմ հարսին եղև, ի հացկերութին, զոր ի վերդ յիշեցի: Որոյ ոմանք, այսմանէ առիթ

առեալ, արկանեն զմահ նորին ի վերայ Հաղբատոյ առաջնորդ Սարգիս վարդապետիդ և այլն: Ինչ և իցէ, թէ սուտ, թէ իրաւ հաստատեն զդեղակուլ լինիլն նորին, և ճշմարիտն Աստուծոյ է գիտելի:

Ընդ պարոն կամենդանքին, ըստ պարտաւորութեան մերում գրեցաք զինչս նորին, որքան ցուցին մեզ և կնքեալ վերահասութեամբ իշխանաց կայ առ մեզ ի պահեստի, զորոյ իրաց սիահին առաքեցաք այսու, առ Ձերդ Բարձր Սրբազնութիւն՝ ցուցանել առ Գերապատիւ Սրբազան Հայրապետին Ամենայն Հայոց: Գուցէ և պարոն կամենդանքն ևս իցէ զսիահին առաքեալ առ Ձեզ՝ ռուսերեն:

Եւ սպասեմ բարձրագոյն հրամանի Նորին Բարձր Սրբազնութեան, վասն իրաց հանգուցելոյն: Բայց խնդրեմ սովորութիւն չխափանել և ինձ մասն իբրև կողոպուտ հանել, ըստ որում, ուր որ վախճանեսցի, տեղւոյն կառավարչին ի վախճանելոյն բաժին ինչ լինելոց է:

Բայց ի բարի կամս Սրբազան Տեառն իմոյ լիցի ապաստան: Այլև Սրբազան Հայրն իմ և Տեառն ամենեսին պսակաւորեաց և ինձ խոստացաւ զպնակէ եպիսկոպոսութեամբ ի Սրբազան Աթոռն, ուստի ամենայն իրաւամբ այժմ Սիմօն կաթուղիկոսին ընծայեցեալ փիլոնն և պնակէն ինձ պարտի հասանիլ՝ ի հաւատարմութիւն ճշմարիտ բանից արդար բերանոյ Գերապատիւ Սրբազան Տեառն իմոյ, և մնասցէ եպիսկոպոսութիւն, յորում ժամանակի Աստուած պատրաստեսցէ:

Զդի հանգուցելոյն ի նոյն երկուշաբթի երեկոյին իւր մարդիկ տարան ի Ղարաբաղ՝ հանգուցանել ի շիրիմս նախնեաց իւրեանց և ոչ անսային ինձ և պարոն կամենդանքին և տեղւոյս իշխանաց՝ թաղել աստ, մերձ Ներսէս կաթուղիկոսին և շատ բարւոք և եղև վասն հետևեալ պատճառացս: Քանզի ի նոյն երկուշաբթի ի կես գիշերին, յորում լուսանալոց էր երեքշաբթի օրն, յանկարծակի եղև ալեկոծութիւն ի Քիլիսաքենդ, և գրոհ տուեալ՝ արք և կանայք, մեծ և փոքունք աղաղակ ի բերան, գոռումն և գոչումն ի լեզուս, սուգ և լաց և արտասուք յաչս ի մութ խաւարի, բոկոտն, թողեալ զամենայն զկահս և զկարասիս ի տան, հապճեպ, տագնապած հազիւ թէ հասաք ի բերդն, և մինչև ցլուսանալն յառաւոտուն բոլոր բնակիչք քաղաքիս՝ հայք և այլ ազգիք ի բերդն ժողովեցաք, և մնացին ամայի քաղաք մեր և եկեղեցի, զի հրաման էր մեր եներալեն, որ բանակեալ կայր ի Շամքոռ, միչև յառաւօտ ի բերդն ժողովիլ, իբր թէ երեսուն հազար զորք պատրաստեալ են յանկարծակի անկանիլ ի վերայ մեր, ի վերայ Ղարաբաղու և ի վերայ Շամշադինու և այլն: Որոյ ի սեպտեմբերի 13 մտաք բերդն և նոյն սեպտեմբերի 18 սկսաք սակաւ առ սակաւ ելանել և մինչև ցարդ հազիւ թէ կարացաք մեք և բնակիչք տեղւոյս զծանրութիւն մեր և զամենայն կարասիս տան

վերստին ի տեղի իւր բերել: Իսկ տնային կառավարութեան հոգք բազումք առաւել քան զամենայն նեղեն և տառապեցուցանեն զմեզ, զի մտանելն և ելանելն ի բերդն ոչ սակաւ վնասեցին զմեզ և զայգի մեր: Ինչ և իցէ փութամք, ջանամք տնօրինել զամենայն ինչ ըստ կարգի տերութեան քոյ:

Բայց խնդրեմ փութացուցանել զբարի գալուստ Ձեր աստ, զի ըստ ամենի, ամենայն կերպիւ բազումք անկարգութիւնք մտեալ են աստ: Եւ աշխարհականք տիրեն զմեզ և եկեղեցւոյն Քրիստոսի և մարմնաւորքն՝ յամենայն ժամ խառնին ի գործս հոգևորաց և անհանգիստ առնեն զմեզ: Նոյնպես ի Նուխի, ի Բաքու և յայնոսիկ կողմունս եկեղեցին Քրիստոսի, ի բազում անկարգութեանց հոգևորաց և սանձարձակ ժողովարար կարգաւորաց, անարգի, և անունն Քրիստոսի հայհոյի ի պատճառս այնպիսեաց ի մէջ այլազգեաց, վորոյ և խնդրեն գրով և բանիւ ի մենջ, յօգնութիւն հասանիլ ինքեանց և այլն: Ուստի հարկաւորի, զի Սրբազան Տեառն մեր կարգադրութիւն ինչ արասցէ այժմ մասնաւոր Տանն Աղուանից և մի թողցէ զժողովուրդ Տեառն ի ձեռաց գիշատող գայլոց, զի թէ ի կենդանութեան Սիմօն կաթուղիկոսին այնքան անկարգութիւնք տիրեալ էին նոցայ, այժմ, ետ մահու նորին, որքա՞ն ապա, որպես յայտ է Ձերդ Բարձր Սրբազնութեան: Այլև եթէ ի պարոն Տօրմասովէն ոչ լինիցի ատկրիտնի լիստ, այսինքն բացարձակ հրաման, ի ձեռին իմում և կամ ի վերայ եներալին և կամ ի վերայ պարոն կամենդանքին տեղւոյս, ի նեղութեան իմում օգնել ինձ և պահպանել և սաստել աշխարհականաց, չլինիլ ձեռնամուխ ի գործս հոգևորաց և այլն, ես ոչ կարեմ զիշխանութիւն իմ ի գործ դնել և հոգևոր գործ իմ յառաջ տանիլ, գուցէ և անձն իմ ի կորուստ գնասցէ: Ահա այս է ստոյգն, զոր գրեցի, և ի վերայ այսր ամենի խնդրեմ, զի ի բարեաւ գալդ պատշաճաւոր կարգաւոր մի բերցես ընդ ձեզ, վասն յաջորդութեանն տեղւոյս և կամ Սրբազան Տեառն իմ որպես կամեսցի այնպես կարգաւորեսցէ զանկարգութիւն սոցայ: Խնդրեմ զանց չառնուլ Տէր իմ Սրբազան և զայս թուղթ ուշի ոշով, մի առ մի ի քաղցր լսելիս Գերապատիւ Սրբազան Հայրապետին ընթեռնուլ:

Մնամ սպասեալ սորին պատասխանւոյն՝ խոնարհ ծառայ Աբրահամ վարդապետ հայոց վշտաշատ:

Ի սեպտեմբերի 26, 1810 թ.
Յելիսբեթպոլ

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 19, վավերագիր 178

Եփրեմ Չորագեղցին Հովհաննես Գեղարդակրին հասցեագրած նամակում հայտնում է, որ ստեղծված իրավիճակում չի կարող Սարգիս Հասան-Ջալալյանին Ղարաբաղի առաջնորդ հաստատել և այդ խնդիրը անհրաժեշտ է համարում հետաձգել, նաև անհանգստություն է արտահայտում Գանձակում ստեղծված կացության առթիվ:

Յիսուսի Քրիստոսի ծառայ Եփրեմ կաթուղիկոս Ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարք Արարատեան Աթոռոյն:

Քրիստոսաւանդ ողջույն իսկական սիրով սիրեցելոյդ մերում տերութեան Յոհաննու շնորհազարդ արքեպիսկոպոսի ի Տէր խնդալ:

Գրութիւնք Ձեր առանց թուոց 3 նուագի եկեալ ի 23 և միւսն ի 27 դեկտեմբերի և մինն ի 5 ներկայ ամսոյ: Յորս գտանեցեալ հարկաւորացն ըստ յարմարութեան ներկայ ժամանակիս արժան համարիմք պատասխանել Ձեզ:

Վասն Սիմեոն կաթուղիկոսի Աղուանից Աթոռոյն և վախճանի նորայ շփոթինս կրեմք զսրտնեղութիւնս ոչ սակաւ, ըստ որում նախատինք են ազգի, բայց պարտէ համբերութեամբ զայնս կառավարել, զի թերևս շիջցի մեղմով բոց դառնութեան խաժամուժիցն, զորս սաստիւ և վրեժխնդրութեամբ դժուարին իմն է ի բարին կոյս յեղաշիջել: Առ որ և Դուք լաւ համարիք, զի զհամբերութեան կողմն ընտրելի համարեսջիք և ամենայն խոհեմութեամբ գոն գործեսջիք՝ սիրով և քրիստոնեական վարդապետութեամբ միտս նոցայ շահիլ, առ որ մեծանայ պանծանօք իմն քարոզն տիեզերաց:

Ի սակս կացից սրբոյ Աթոռոյն եկեալ հրամանին սպասեմք գրութեան նորին բարձր գերազանցութիւն Ալէքսանդր Պետրովիչ Տօրմասովին և տակաւին ոչ հասանէ: Երբ հասցէ յայնժամ և Մեք արասցուք զտնօրինութիւն:

Յաղագս Սարգիս եպիսկոպոսին բարւոք էր ներկայական տնօրինութիւն Ձեր, այլ վասն առաքելոյն զնա ի վիճակն Ղարաբաղու ոչ լինի կարգադրել այժմիկ, զի և անդուստ մատուցեալ զբազմակնիքս՝ սաստիկս յառաջադրեն զդժկամութիւնս առ որ ընտրելի համարի մեզ, զի թերևս յանցանել աւուրց սաստկութեան ծմռան, կարելի լիցի կոչել աստ զոմանս ի նոցանէ և այնպես զչափ առնուլ ի նոցանէ, թերևս իցէ հնար համեստութեամբ իմն

կառավարել զնոսա՝ ըստ հաճոյս Աստուծոյ և մարդկան: Երկայնամտեջիք և Դուք ուրեմն, մինչև հասցեն աւուրք վայելչութեան ճանապարհորդութեանց և ի գալոյ եկողացն անտի՝ յորժամ կամ կոչեսցուք աստ և զինքն՝ զՍարգիս արքեպիսկոպոսն և կամ ցուցցուք նմա զկարևորն:

Իսկ ի կողմանէ կառավարութեանց Ելիսավետպօլոյ, Ղարաբաղու և Նուխու՝ ճշմարտութեամբ ասեմք, որում և դու կարող ես վկայել ինքնին, թէ յօրէ անտի յօրմէ հետէ Մեք ճանաչեմք զՁեզ և Դուք ճանաչեք զՄեզ, մինև ցայսօր ժամանակի, միշտ սէր և բարեկամութիւն Մեր իսկութեամբ, ուղղութեամբ և պարզութեամբ եղեալ է դէպ առ Ձեզ և այն իսկ է ցայսօր ժամանակի: Պատճառ զի վասն յոյժ սաստիկ դառնութեան և ի դժկամութեան ցուցանելոյ հասարակութեան կողմանցն այնոցիկ, որք Մեզ գրեալ էին պարզապես, թէ ամենևին այս կողմն, ի մէջ մեր մարդս մի հղեսջիք, զի չեմք ընդունելոց և մնասցէ մինչև մեք գամք: Եվ վասն այսորիկ, զի ոչ կամելով մեր տեղի տալ նոցին խռովութեանց՝ մինչև ցայժմ ոչ գրեցուք Ձեզ և կամ Սարգիս արքեպիսկոպոսին գնալ յայն կողմանս, մինչև թերևս ի նոցանէ բերել տուեալ զոմանս, կարելի լիցի համոզել: Այլ չունիցիք Դուք զկասկած ի վրդովմանց խաժամուժիցն և երթիջիք և բարւոք կառավարութիւն արդիւնասջիք առ նոսա՝ Մեք առաւելապես ուրախ լիմիմք, զի որ ինչ՝ վասն բարի լինելոց իցէ, իսկ և իսկ Մեզ համարիմք Մեք զնոյն:

Սակս Ելիսավետպօլ գնալոյդ անտեղի էիր համարեալ յառաջադրութիւն Մեր նախկին և զգնալդ հարկաւոր ցուցեալ՝ ըստ որոյ երևի թէ մինչև ցայժմ կանխաւ իսկ գնացեալ լինիք: Տացէ Աստուած, զի գնալն Ձեր եղիցի ի խաղաղութիւն և ի շինութիւն հարկաւորեալ նոցին: Այնմ Մեք ընտրելի համարիմք, զի թէ շնորհօքն Աստուծոյ լսելի լիցի Մեզ խաղաղութիւն նոցա՝ գնալովն Ձեր, գրեսցուք յայնժամ շնորհակալութիւնս վասն Ձեր և վասն նոցա: Իսկ թէ մի արասցէ Տէր, յառաջ եկեսցէ զայլ իմն կասկածելի տարաձայնութիւն, գրեսցուք առ այն զհորդորական համոզումն: Մինչ հարկաւոր է առ ամենայն իրս զբաւական զգուշութիւն և մանաւանդ ի հանդէս մարտի, յորում սեփհականէ մինն կալ շրջահայեաց, զգուշացող մղելոյն ի ճակատ:

Չե՛մք Ձեզ ատեցող, չե՛մք նախանձաւոր վասն բարեաց Ձերոց և Դուք ուղղութեամբ ընկալցուք զբանս, և առ ամենայն իրս սիրելի լինիցի Ձեզ խաղաղութիւն և բարութիւն:

Յելիսավետպօլու երկիցս և երիցս եղեն հասարակական գրութիւնք և բողոքք մինչև ցայսօր, և ոչ միայն չունիմք տակաւին զպատասխանս, զի գրեթէ պաշարեալ լինիմք: Եվ ի սմին միջոցի Թունի Խալաթովն հայտնեալ էր Մեզ, իբրու թէ տուեալ էք զինքն ի

պատասխան ռուսաց, վասն կտակի եղբօրն: Եթե Դուք յանձնեալ իցէք զայնմանէ պատասխանի ռուսաց, զի՞նչ վայելչութիւն և կամ անուան և բարեկարգութեան եկեղեցւոյ Հայաստանեայց ևս: Մինչ նա այժմ ստիպէ զիս վկայել վասն բանից իմոց եղելոց առ այն խնդիր իւր, Մեք զի՞նչ տացուք նմա առ նոյն զպատասխանիս արժանաւոր Մեզ, Ձեզ: Եվ իրացն ստուգութեան հարկէ վասն ամենայն այսպիսեայց լինիլ երկայնամիտ և նրբահայեաց, զի Մեք չեմք ազատական, չեմք յանձնապաստան, այլ եմք ընդ օրինօք մարդկայնովք և աստուածայնովք: Յորս հարկէ Մեզ առ երկուսին կրկնակի ունիլ զգուշութիւն և գրեալ է- օգտեցան, որք այնպեսն գնացին:

Ողորմութեամբ Աստուծոյ Մեք մինչև ցայժմ կամք ապահովութեամբ և վասն ապագայիցն ի Տեառնէ խնամոց մնամք յանձնապաստան: Առաջնորդք և այլևայլ անձինք ի մերազանց մերձակայից գան և գնան, և երթևեկութիւնք առ սուրբ Աթոռն ոչ պակասին մինչև ցայժմ:

Ողջ լեր և շնորհք սրբոյ Աթոռոյն եղիցի ընդ քեզ միշտ. ամէն:

1811 յունվարի 25
ի սուրբ էջմիածին:

Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթապանակ 164ա, վավերագիր 29

Ներսես Աշտարակեցու պատասխանը Սարգիս Հասան-Ջալալյանին Աղվանից կաթողիկոս հաստատելու խնդրանք պարունակող Վարանդայի մելիքի և մի քանի մեծատունների նամակին:

Քաջազուն Քրիստոսիս զորացեալ Պայծառ իշխան, մելիք Խուտադատ Ջիմշիդեան և Բահրամ բէկ՝ հարազատ և պայազատ տեարք Վարանդայու, նաև Աստուածասէր և բարեպաշտ յարգոյ Պօղոս քեռիվայ Պետրոսեան, Մարգար քեռիվայ Առաքելեան, պարոն Բապա Հախումեան և պարոն Առաքել Խաչատրեան, հարազատք եկեղեցւոյ Հայաստանեայց:

Ողջունեմ զձեզ բազում օրհնութեամբ և ցանկալով ձերում բարեպաշտութիւն՝ հայցեմ յԱստուծոյ քան զոր չունիմք առիթ առաւելապես մխիթարութեան: Ապա հայտնի առնեմ, զգիր առ

մեծահռչակ բարձր Սրբազան տեղապահ արքեպիսկոպոսն և առ նուաստութիւն մեր հասին առ մեզ: Եւ ծանեաք զմիտս գրելոցն լուեալս նանրութեամբ թերևս և նանիր ասեմ, զի ծառ, որ չունիցի զպտուղ քաղցր, զի՞նչ արդիւնաւորութեան իցէ, աղբիւր, որ ոչ ոռոգեսցէ լիապես երկիր դաշտային և ոչ լիացուսցէ զմարդիք առատապտուղ արդեամբ ցորենոյ, գինւոյ, ձեթոյ և այլն՝ ըստ մարգարեին, զի՞նչ օգուտ իցէ: Այսպես և քահանայապետութիւն և կաթուղիկոսութիւն, որ ոչ բարձացուցանէ զփառսն Քրիստոսի, զի՞նչ շնորհ ունելոց իցէ, եթէ ոչ դիցէ զանձն իւր ի վերայ հօտին, զի՞նչ պարծանք իցէ, որ թէ ոչ եղիցի լուսաւորութիւն ի վերայ իւրում ժողովրդեանն: Մեծութիւն անուան, զի՞նչ փառաւորութիւն իցէ, յայտ ոչինչ բնաւ, վորոյ ասեմ նանրութեամբ լցեալ: Քանզի գիտեմ, դուք ամենեքեան զանտանելի վնասակարութիւն կաթողիկոսական անուանակոչութեամբ գիտեք զմեռուցանելն զմիմեանս, զմատնելս զիշխանս և զժողովուրդս իւր, զխանգարելն զբարեկարգութիւնս եկեղեցւոյ Հայոց և զայլս վնասակարութիւնս երևելիս և մեծամեծս:

Այլ մեք ճշմարտութեամբ ասեմք, զի չգիտեմք բնաւ, թէ Ե̄ փարայի օգուտ իցէ յառաջացեալ երբեմն ի կաթուղիկոս անուանեցելոյ վասն մեծի կամ փոքու ժողովրդեան իւրոյ վիճակի: Այսու պատճառաւ ես չունիմ ասել, թէ խնդիր ձեր բարի է կամ օգտակար է, ձեր յարգութիւն ևս վասն բարութեամբ կամ օգտակարութեամբ է: Ձեզ յայտնի եղելոյն չէք խնդրեալ, այլ զի լուեալ էք կամ տեսեալ էք, այն է, զի գրեալ էք, թէ օգտակար իցէ և թէ վնասակար:

Բայց յայտնի է ձեզ ամենեցուն, զի Քրիստոս, Տեառն մեր վասն բոլոր աշխարհի ԺԲ̄ կաթուղիկոս հաստատեաց զՍուրբ երկոտասան Առաքեալսն և նոքա բաւական եղեն ի կառավարել զամենայն ազգս, իսկ այժմ տեսանեմք մեք ահա, զի միայն ողորմելի ազգն հայոց չորս կաթուղիկոս ունին, և դարձեալ կառավարութիւն ազգացն անկերպ մնայ ի վերայ երեսաց իւրոց, մինչև տեսանեմք ահա, զի ի քանի հարիւր տարեաց հետէ պակասին և ոչ յավելանան, տգիտանան և ոչ իմաստանան, աղքատանան և ոչ հարստանան, տկարանան և ոչ զօրանան ողորմելի ազգն հայոց և ամենևին չէ յայտնի, թէ կաթուղիկոսաց շատութիւն ի՞նչ օգնութիւն է ունեցեալ ժողովրդեանն: Ես կարծեմ թէ ոչ ինչ: Դուք թէ բանն մի գիտեք, խնդրեմ մեզ ևս յայտնեցեք:

Յիրաւի կաթուղիկոսութիւն խնդրողքն զարար չունեն և օգուտ ունեն, վասն նոցա խնդրելն ընդ աշխարհի և ընդ մարմնոյ արժան է, զի շահաւէտ կարէ լինիլ որպես և ասէ Սուրբ Աւետարանն. «Լայն են զհանդերձս, երկար են զաղօթս, զի ավելի դատաստանս ընդունիցեն»: Սոցայ ավելի փառք ու պատիւ, զավլուսեֆայ, այլ ժողովուրդք, որ աշխատանք քարշելն յօժարակամ են վասն

հասուցանելոյ զնոսա իւրեանց խնդրանացն, ժողովրդոց օգուտն ի՞նչ է: Ես չգիտեմ, այլ համարիմ, թէ միայն խղճութեան և ողորմելիութեան, որ ամենուն առանց խէր ու շառն որոնելոյ լուեն կամ տեսանեն, թէ բան մի է, ինքեանք ևս ի նանիր աշխատանք կրեն և ոչ խնայեն իւրեանց աշխատանացն և ոչ իւրեանց լաւութեանցն կամ վատութեանցն առնեն հոգացողութիւն:

Ինչ և իցէ, այս ամենն գրեցաւ, ինձ այսպես է յայտնի: Այլ դուք լուեալ լինիք մինչև ցայժմ, որ երանելի հայրն իմ, տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսն ի 7 սեպտեմբերի ամսոյն հանգաւ առ Քրիստոս: Ես ևս, տկարութիւն ունելով այժմ, չեմ ի մէջ գործակալութեան, յորում էի յառաջն: Վասն այսքանս իբրև վարդապետ հայոց և ծառայ ժողովրդեան և եկեղեցւոյ Սրբոյ Լուսաւորչին հայոց բարի սրտով գրեցի, զի դուք ևս տեղեկասջիք: Այլ ձեր ընդունելն կամ չընդունելն ձեր կամքն է, զի ես այսքան ունիմ միայն պարտաւորութիւն, որ յայտնեմ զլաւն և զվատն, վասն ազգի և ժողովրդեան Սրբոյ Լուսաւորչի հայոց:

Ողջ լերուք և ես եմ և մնամ ձեզ միշտ բարեացկամ:

1812 դեկտեմբերի 20
ի Սուրբ Էջմիածին
Խոնարհ ծառայ Ներսէս Արքեպիսկոպոս Աշտարակեցի,ի Սուրբ Էջմիածին միաբան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի

Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթապանակ 164ա, վավերագիր 30

Սարգիս Հասան-Ջալալյանին կաթողիկոսական աստիճանից հրաժարվելու հորդոր պարունակող Ներսես Աշտարակեցու նամակը:

Բարձր Սրբազան Սարգիս արքեպիսկոպոս, գերապատիւ հայր և ողորմած տէր իմ:

Ի 15 նոյեմբերի գրեալդ, ընկալեալ ի ձեռն փայէկի ձերում, ծանեայ վասն առողջութեանդ և ուրախ եմ:

Յաղագս մահուէրագրոցն զորս հղեալ էիր առ նորին Սրբազնակատար Քահանայապետին և մեզ ևս գրեալ, զայնք տեսաք և ընթերցաք: Բայց որպես և կարող ես մտածել և հասու լինիլ Սրբազան Տէր իմ, այժմ ամենայն աշխարհի իբրև բացեալ են աչք և չեն որպես յառաջն: Մեր ազգն ևս, թէպէտ այնպես կատարեալ կերպիւ չեն աչքաբաց, այլ Աստուծոյ ողորմութեամբն վերստին նշան լուսաւորութեան մտաց երևի ի յոմանս, մինչև բաւական յոյս տայ նկատողաց, թէ օրստօրէ աւելի ևս պայծառացի լուսաւորութիւն և տարածեսցի ի մէջ ընդհանրութեան ազգին:

Ըստ որոյ ուրեմն մտածեայ Սրբազան Հայր: Քրիստոս վասն ամենայն աշխարհի ընտրեաց երկոտասան կաթուղիկոսունս և նոքօք բաւականացեալ եղեն ամենայն ազգինք: Զի՞նչ է ապա, զի միայնակ մի հայոց ազգն չորս կաթուղիկոս ունի: Ասաց Աստուած, թէ.« հունձք բազումք են և մշակք սակաւք, աղաչեսցեք զՏէր հնձոց, զի հնձէ մշակս հունձս իւր»: Ըստ որում հարցանեմ և ես ի Ձերդ Սրբութենեն զի՞նչ է յատկացեալ հունձք կաթուղիկոսաց հնձելի, որոց բազում լինելոյն աղագաւ, այսքան բազմացեալ կան կաթուղիկոսք հայոց ազգի:

Գիտեմք մեք, զի յատկացեալ գործք են կաթուղիկոսաց միմիայն ձեռնադրել զեպիսկոպոս և օրհնել զՍուրբ Մեռոն, և զինչպիսի՞ ծանր հունձք են այսոքիկ, զի այսպէս յաճախեցին կաթուղիկոսունք աստի և անտի:

Յայտնի է ինքնին, զի վասն հնձոցն պատճառ և յարկադրութիւն ոչ գոյ բնաւ, այլ մի միայն սնոտի պարծանք և ընդ վայր ավելորդապաշտութիւն, մոլութիւն եղեալ ոմանց, յառաջացուցեալ են զայսպիսի գործ ի մէջ ողորմելի ազգի մերոյ:

Այլ զի յայտնի է տգեղութիւն, գիտեմք առ հասարակ, զի թէ մարդ և թէ անասուն, եթէ ունիցի ի վերայ մի մարմնոյ զբազում գլուխ, անկերպարան իմն լինի և սոսկալի հրէշ: Իսկ ապա զի՞նչ իրաւունք իցեն հոգևորականաց հայոց, որք թողեալ զգեղեցիկ կամք

պաշտելոյ զԱստուած սրբութեամբ և խնամակալ լինելոյ ժողովրդեան Աստուծոյ՝ առ ի պաշտպանել նոսա ի գեղեցիկ դրութեամբ և ի վայելուչ բարեկարգութեամբ, անձնասէր եղեալ, յօժարակամ լինին առնել հրէշ բազմագլխի զազգն հայոց, զի ինքեանք անուանեսցին միայն գլուխ: Անուանեսցին ասեմ, քանզի գործք կամ զարդք կամ պատուականութիւնք, որք պատկանեալ են գլխոյ, գիտես և դու, զի չունին կաթուղիկոսունք: Քանզի գործք գլխոյն են շտեմարաշապետ լինիլ խելապատակին և բաժանարար լինիլ կարողութեանց հոգւոյն՝ այս է լուսաւոր առնել զաչս, լսողութիւն պարգևել զականջաց, տարածանել զուշ իւր ի վերայ արժանաւոր կառավարութեամբ ամենայն մասանց մարմնոյ և անիլ առ իւրև, այսինքն շուրջ զինքեամբ զզարդս գեղեցկափառս և բարձրադիտակս, որք փառաւոր արասցեն զինքն աչալուրջ հայեցիւք, աստուածահաճոյ լսելութեամբ ամենայն անդամոցն ստորադրելոց:

Ապաքէն լաւ ի միտ առ Սրբազան Հայր իմ, յորժամ գլուխն չէ ի ծայրս լրման ամենայն անդամոցն, զի՞նչ պարտականութիւն կարէ ունիլ, յորժամ չէ բարձրացեալ ի կատար բարձրութեան ամենայն մասանց մարմնոյ, այլ ի վերայ բազկին միոյ, կամ ի վերայ ոտին և կամ ի վերայ այլ միոյ իւիք անդամոց մարդոյն, զի՞նչ պարտականութիւն կարէ անիլ: Նոյնպէս ևս, եթէ չիցէ շտեմարանս պետ խելաց և բաժանարար կարողութեանց հոգւոյն, որպէս գրեցաւ. «զի՞նչ գործ այլ ունելոց իցէ գլուխն և եթէ չիցէ փառաւորեալ զարդուք մեծագործ զգայութեանց», զի՞նչ այլ համարեալ ունիցի ինքեան զարդ և փառք, յայտէ զի ոչինչ:

Ըստ այսմ ուրեմն և կաթուղիկոսն, որ է գլուխ խորհրդական անդամոց իւրոց, եթէ չիցէ յատկացեալ յատկութեամբք գլխոյն յատկացեալ անձին, զի՞նչ վայելչութիւն կայ ի մէջ նորին կամ ըստ հոգւոյ կամ ըստ մարմնոյ, յայտէ զի ոչինչ:

Ապաքէն թէպէտ և չեմ այժմ պարտաւոր ըստ կերպիւ կառավարչութեամբ խոսիլ ինչ, զի երբ հանգաւ սրբազան երանելի տեղապահն, ես ևս վասն տկարութեան անձին իմոյ ի բաց կացեալ յայնց պաշտօնադրութեանց իմոց, տիրեմ զխնամակալութիւն կոչկոծեալ անձին իմոյ: Բայց զի ըստ որում ծառայ եմ Քրիստոսի և զանուն ունիմ եպիսկոպոսութեան և պարտական եմ վասն լաւութեան ազգի մերոյ, ևս յատուկ սէր ունիմք առ Ձերդ Հայրութիւն, առ այն միայն հարկադրեալ, վստահացայ գրել համառօտիւ զայս ամենայն ի փառս Աստուծոյ և ի սէր հայրենի ազգին իմոյ, որք տակաւին մինչև ցայսօր ժամանակի չեն տեսեալ զօգուտ այսքան գլխոց իւրեանց բազմութեամբ կաթուղիկոսաց: Եւ որպէս ինձ թուի, յաւիտեան չունին տեսանել բնաւ: Եւ ինքեանք կաթուղիկոսունք ևս, եթէ ոչ գտանիցին հովիւք քաջք և ոչ դնիցեն զանձինս իւրեանց ի վերայ

հօտին, այնպես իմանամք ըստ գրոց, թէ «բաժին նոցայ է միայն լուրն հառաչանաց ահաւորին Աստուծոյ», որպես հայտնի է մարգարէին. « Ո՜յ հովիւք որք զանձինս արածէք և ոչ խաժինս»:

Եւ եթէ Ձերդ Սրբութիւն ևս բարւոքն համարեալ վասն ձեր և վասն մեր ժողովրդեանս, ի բաց կայցիք ի պախարակեալ յօժարութենէ կամաց Ձերոց, այն շնորհքն Տեառն Աստուծոյ են: Իսկ եթէ ոչ, այն ևս կամք Ձեր են: Եւ ես այսու ամենայնիւ եմ և մնամ միշտ բարեացապարտ հայրենի ազգին մերում և Ձեզ բարեացակամ:

1812, դեկտեմբեր 20
ի Սուրբ էջմիածին
Խոնարհ ծառայ, նուաստ Ներսես Աշտարակեցի Եպիսկոպոս

Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթապանակ 164բ, վավերագիր 699

Սարգիս Հասան-Զալալյանին Ղարաբաղի առաջնորդ հաստատելու նպատակով Ներսես Աշտարակեցին միջնորդում է Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմ Չորագեղցուն:

Բարձրահրաման Տէր և Վեհափառ Քահանայապետ եկեղեցւոյ Հայաստանեայց:

Բարեգութ Հայրապետ, եթէ բարեգութ են հարք ի վերայ զաւակաց յամենայնի և միշտ, յառաւել ևս բարեգութ են իհարկէ հայրապետք, ընդ որում պետական հարք կամ հայր հարանց: Որոյ ապաւինեալ ահա անխաբելի յուսով դիմեաց առ սուրբ գիրկս հայրութեան Ձերոյ ծերունազարդ Սարգիս արքեպիսկոպոսն Գանձասարու և Ղարաբաղու հանդերձ իւրովքն հոգևորականօք և մարմնականօք:

Ապաքէն, զի մի ծանձրացուցիչ երկարաբանութեամբ յայտնեալ եմ Ձեր տերութեան զներհաբանութիւն կնեազ Սոլոմոնի ի մասին սորայ կնեազ Դիմետր Ուռպէլեանին և երանալ Հախվերդովին: Ըստ որոյ կարելի է զչափ առնուլ և վասն հակաբանութեանց նորայ և այլոց նմանապիսեաց ի զանազան տեղիս: Բայց այնու ամենիւ հաւատարիմ է բանս իմ, զի թէպէտ և ես զառաջինը յանձն ապաստան ի վերջին հաղթանակն ընդդեմ ամեն հակառակամարտից, վասն սորայ խօսեցայ յայտնապէս ի լուր իւրոյ ծերու-

նազարդ յարգութեան երթալ, դիմեալ ամենայն յուսացեալ տեղիս զաւուրս 15 կամ 20 և քաղեալ յամենեցունց զիւր օգուտն, այնպէս ահա կամ բաւական լինիլ նոքօք, և կամ ի վախճան ամենայն անձնիշխանական շահախնդրութեանց իւրոց, դիմել ապա առ մեզ, եթէ հարկաւոր ինչ լինելոյ իցէ վասն իւր: Բայց նա իսկ և իսկ զառաջինն առանց հայթայթելոյ անդր քան զարժանն, նուիրեաց զանձն իւր ի հաճոյս մերոց կամաց, իբրև Ձերում արժանահաւատ պաշտօնէի: Ըստ որում և մեք ահա ճանապարհորդեցաք գալ ի սպաս Ձերում Վեհափառութեան:

Ապաքէն, որպէս նա ինքն, նոյնպէս և ես յուսով եմ շնորհաց Ձեր առ իս բարեգութ յատկեղ հայրութեան՝ խնդրեմ բաւական համարիլ նմա ցայս վայր տառապակրութեան իւր ի տեղի արժանաւոր ապաշխարութեան և ընկալնուլ ի սուրբ գիրկս մարդասիրութեան Ձերոյ և յանձանձել զձերութիւն նորա՝ ըստ վայելչութեան Ձերումդ Աստուած արարեալ Հայրապետութեան, և տարածեալ առ նա զվայելուչ շնորհս անյիշաչարութեան՝ կարգեայ զնա առաջնորդ և արքեպիսկոպոս Գանձասարու և վիճակին նորա, կամ որպէս ինքն յառաջադրէ, վիճակին Գրիգորիսի, զոր վասն գտանի տարածայնութիւն անդ՝ ի վիճակի իւր:

Եւ փոխանակ նուիրակութեան կարգեայ վասն նորա և կառավարութեան վանացն իւրոյ զիմտատիայս կամ տարեկան և կամ երեք տարեկան և կամ զի արդ վայելուչ դատել լինիցի արժանաւոր խորհրդաւ և այնպես բարւոք մխիթարութեամբ և վայելուչ պատուադրութեամբ և խիլայիւք վերադարձուցանել զինքն բարձրահրաման առաջնորդական կոնդակաւ Ձեր Բարձրագոյն Քահանայապետութեան գալ աստ, առ մեզ: Ուստի և մեք կրկին մխիթարութեամբ, հանդերձ հանձնարարական գրովք կուսակալին ճանապարհ դրեսցուք՝ գնալ ի տեղի իւր և լինիլին օրհնաբան կենաց Ձերդ Սրբութեան և ամենայն ժողովրդեանն: Եւ ես յուսամ, թէ մերազնեայք և օտարազնեայք առ նոյն առ հասարակ լինիցին գոհունակ և գովաբան վերամբարձ Սրբոյ Աթոռոյն և մօրն լուսոյ և Ձեր մարդասէր հայրապետութեան և բարերար կամաց, վասն բարեկարգութեան միայն՝ ազատ յամենայն կրից և օտար կարծեաց, որք անվայելուչք կայցեն Ձերում Սրբափայլ Քահանայապետութեան:

Ողջ լեր, և ես եմ իսկական վերապատուութեամբ Ձերում պատկառելի Քահանայապետութեան, եմ և եղեց ամենահպատակ ծառայ միշտ:

1815, ապրիլ 25
ի Թիֆլիս

Նուաստ արք Եպիսկոպոս հայոց
Վրաստանու և այլոց Ներսէս

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 27, վավերագիր 24

Ղարաբաղի Խաչենի, Վարանդայի, Դիզակի հայ մելիքների ու այլ ազնվականների, ինչպես նաև Շուշիի հայ բնակչության ներկայացուցիչների դիմումը Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմ Չորագեղցուն:

Երջանիկ վեհազնասուրբ եւ իմաստափայլ Սրբոյ Հօրդ մերոյ, գերամաքուր գարշապարացդ համբոյր մատուցանեմք ամենախոնարհաբար:

Մեր ողորմած եւ բարերար Տէր

Ի ներքոյ սորայ կնքեալ ամենախոնարհ ծառայքս քոյ՝ նախ Վարանդայի մելիքներն և ազնիւներն և նմանապես Տուզախի և Խաչենու մեծամեծքն ևս և ղազանչեցոց և ագուլեցոց քէթխուդայք, հասարակ մերազնեից հայոց ամենեքեանս այսինքն ի ձեռն Առաջնորդական բանեն ունիմք զայս ինչ խնդիրս մեծի Սրբոյ Հօրէդ մերմէ, որ զայն Սարգիս Առաջնորդին բանեն և նորին անունն բառնաս մեզանէ՝ ծառայիցդ քոյ, որ ոչ ունիմք նորին աղագաւ:

Եւ դու գթառատ և ողորմած Հայր, զի եթէ զմեզ քոյդ ծառայ համարես, ամենևին Սարգսին անունն մի յիշեր ի վերայ մեր, զի մեք բաղաթ և կարողութիւն ոչ ունիմք կրկնակի ծառայելոյ նմայ: Մեք ամենեքեանս այն չեմք ուզեր, և եթէ հրաման տէրութեանդ կամի բարկութեամբ շարժել ի վերայ մեր, ապա և զանուն նորին յիշեա և եթէ քաղցրութեամբ գթացեալ ածես զխնամս քոյ առ ամենախոնարհ ծառայիցդ քոյ՝ մի յիշեր զայն, առաջինն բաւական էր զոր ինչ կրեցինք նորին աղագաւ:

Ահա այսուհետև մեր կամեցողութեան ժամանակին ամենեքեան բազմակնիք մահսէր առաքեալ, զմերս մտաց հաճելին, ոյ ոք եւ իցէ, խնդրելոց եմք ի մեծութենեդ մեզ հովիւ: Եւ թէ առանց հրամանի տերութեանդ քաւ և մի լիցի, որ ոչ և մեք անցանեմք քոյդ հրամանաց:

Բայց սակայն մեք՝ ամենախոնարհ ծառայքս քոյ ամենեքեանս, երես ի գետին մածեալ առ աթոռ ոտիցդ համբուրելով, խնդրեմք ի Սրբոյ Հօրէդ մերմէ, որ զսրբալոյս մեռօն շնորհես ծառայիցդ հանդերձ օրհնութեամբ քոյ, զի և նովաւ զուարճասցին սիրտք մեր

և պարարեսցին զոսկերքն և մեք օրհնեսցուք ամենասուրբ անուն քոյ յաւիտեանս յաւիտենից՝ զշնորհաբաշխութիւնս առնելով:

Յաւել յայսմանէ խոյս տուեալ յերկարութենէ խոսից, վերջ տացուք ի տերութեանդ մերում և զՍուրբ Հայրդ մեր հանձնեսցուք անքուն ակամբ պահապան Յիսուսի Քրիստոսի եւ շնորհաց նորայ, լինիս ողջ հոգւով եւ մարմնով պարծանս մերոյ. ամէն:

Յամի Տեառն 1815 եւ մայիսի 23, ի Ամարաս

Վարանդու տիրապետող Մելիք Խուտդադադ Մելիք-Շահնազարով, Յոհան արքեպիսկոպոս, Մեսրոպ արքեպիսկոպոս, Բեհրամ բէկ Մելիք-Ջիմշիդով Մելիք-Շանազարեան, Պետրոս բէկ Մադաթեան, Եսայի բէկ Մե- լիք-Յոսեփյան, Ջահանբախշ բէկ Մելիք-Շահնազարեան, Ջհանգիր բէկ Մելիք-Շահնազարեան, Ավաք բէկ Մելիք-Լալապէկեան, Միրզայ Ապրահամ Մելիք-Շահնազարեան, Բաբա Հախումեանց, Տուզախու Մելիք Ասլան, Խաչենու Մելիք Ղահրաման, Սարուխան յուզբաշի, Վանի յուզբաշի, Զոհրապ Թառումով, Պողոս քահանա Պետրոսեան, Սուրբ Աստուածածին եկեղեցու ավագ քահանա Տէր Առաքել, Ամենափրկիչ եկեղեցու ավագ քահանա Տէր Մկրտիչ

Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթապանակ 164բ, վավերագիր 973

Ներսես Աշտարակեցին կոչ է անում Եփրեմ Զորագեղցուն, հաշվի չառնելով Ղարաբաղի խանի ցանկությունները, Աղվանից մետրոպոլիտ հաստատել Սարգիս Հասան-Ջալալյանին:

Սրբազնագոյն տէր, ամենողորմած Քահանայապետ:

Ի ձեռն անկլիացւոցն ստացեալ գրութիւնսն տեղեկացայ ամենայն հրամանաց բարձրագոյն տէրութեան Ձեր: Ձանկլիացին դեռ չեմ տեսեալ և տեսից զկնի:

Վասն Սարգիս արքեպիսկոպոսին առաջին գրութիւն, թէ խանն ոչ կամի, հարկադրեաց ինձ բարին յատուկ փայէկաւ փութացուցանել զգրութիւնս, թէ ամենեին անարժան է յայսպիսում քրիստոնեական իշխանութեամբ ծաղկեալ ժամանակ, այնպիսի պատճառանօք ի

նախատինս մատնել զհամբաւ բարութեան Աթոռոյն՝ փոքահար մահու կեր առնելով մերձ ի մահ փտեալ ոմն, որոյ մեռելութիւն այդր աւելի կարէ լինիլ վնասակար, քան ամենայն անվայելչութեամբ գործս նորին յառաջ և այժմ: Իսկ զի այժմ գրեալ էիք կանխաւ վերադարձուցանել, փառավորեցի զներգործութիւն աստուածային խորհրդոց և յատուկ գոհունակութեամբ պարտաւորիմ օրհնել զկեանս Ձեր սրբազնութեան: Այն զի նիւթն չնչին և զանազան դատողութիւնք վատթարագոյնք օր ըստ օրէ յոյժ յոյժ ունեին առաւելանիլ: Երանի թէ զայս վայր դարձուցեալ լիջիք, և եթէ ոչ յատկապէս պարտաւորութիւն ինձ համարիմ առ օգտի և պայծառութեան անարատ և սուրբ կառավարութեան, զիմս խորհուրդ առնել խնդրագործ առաջի վեհափառ տերութեան Ձեր՝ յաղագս ողջամբ վերադարձուցանել զնա այտի, քանզի բաւական է առ ժամանակս այնքան, զի վեցեալ լիցի անունն կաթուղիկոսական:

Եվ խանն և իւրքն ինքեանք կարող են անմիջաբար, թարց բամբասանաց ենթարկելոյ, զտերութեանն յայտնել զիւրեանց անկարգութիւն ամենայն կերպիւ: Եվ զի փո՞յթ է նոցայ ընտրողութիւն և հաճութիւն կամ տհաճութիւն վասն առաջնորդաց հաւատոյ հայոց ազգին՝ մանաւանդ, զի ո՞չ այն խանն է, որ ցանկայր կաթուղիկոսուցանել երբեմն: Խնդրեմ ուրեմն, որքան կարելի է, գուցէ կանխաւ, զդա դարձուցանել, զի մի անիրաւ բերմունքն աշխարհին բացեն զբերան թշնամեաց ի վերայ Աթոռոյն և Ձեր տերութեան, վասն ոչ անագան մահու դորայ, որպես երբեմն միւսոյն (Նկատի ունի Սիմեոն Փոքր Զրաբերդցու մահվան մեջ էջմիածնի խառն լինելու մեղադրանքները-Լ. Մ.):

Ողջ լեր Սրբազնագոյն գլուխ և գահակալ եկեղեցւոյ Հայաստեայց և մեք մնամք ամենաջերմեռանդ Ձերում բարձրագոյն քահանայապետութեան ամենախոնարհ պաշտօնատար Ներսես արքեպիսկոպոս հայոց Վրաստանայ և այլոց:

1815 մայիսի 31
Թիֆից:

Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթապանակ 164բ, վավերագիր 975

Ներսես Աշտարակեցին Եփրեմ Չորագեղցուն հայտնում է, որ ետ է ուղարկել Սարգիս Հասան-Ջալալյանին Աղվանից մետրոպոլիտ հաստատող կոնդակը, այնտեղ առկա մի քանի ոչ վայելուչ արտահայտություններ փոխելու համար:

Սրբազնագոյն Քահանայապետ, ամենապատիւ տէր:

Սարգիս արքեպիսկոպոսն եկն, առ որ յատկապէս շնորհակալութիւն ունի կուսակալն ևս և ամենայն լսողքն վասն այնպիսի խնայելոյն ի նորայ ծերութիւն: Իսկ և ես ոչ սակաւ որպէս և յայտ է: Բայց վասն կոնդակի նորա, քանզի անվայելուչ էր յայտնի արծանացուցանելն ի նմին, թէ ի պատիւ կուսակալին կամ Ներսէս եպիսկոպոսին այսպէս արարաք, որէ այսմ ընդդէմ բարեկարգ կառավարութեան բանի ևս և արդարութեան և վայելչութեան քահանայապետութեան: Որոյ եթէ հաճեցուցանել զնա կարողացայց, զի անկասկած լիցի: Ունիմ դարձեցուցանել զայն հանդերձ եղանակաւորութեամբ աւելորդացն անվայելչականացն ի նմին: Զի այսպէս առանձնութեամբ յապաւեալ զամենայն անվայելչականսն ի նմին: Զայլ միւս նորոգ գրեալ յղեսջիք նոյնպես լսելեացն, զի հասցուք ինքեան աստ կամ յԵլիսավետպոլ:

Նոյնպես և կոնդակ Սարգիս արքեպիսկոպոսի ի բերանոյ նորա առնուլն եղև իբրև անհնարին և մեք լռելն առաւել վայելուչ դատեցուք:

Բարվոք ճանապարհորդից զնա և աստի ի փառս մեծութեան անուան Ձեր տերութեան, այլ տացէ Տէր, զի և ինքն բարւոք ունիցի զընթացս հոգւոյ և մտաց իւրոց ի փառս Տեառն և ի մեր յօժարութեամբ...

Ողջ լեր և ես եմ և մնամ ամենախոնարհ վերապատուութեամբ:

1815 յունիսի 9
ի Թիֆլիզ:

Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթապանակ 164բ, վավերագիր 984

Ներսես Աշտարակեցին տեղեկացնում է Եփրեմ Չորագեղցուն Սարգիս Հասան-Ջալալյանի ծանր հիվանդության մասին, իր անհանգստությունն է արտահայտում Ղարաբաղի խանի կողմից Սարգսի դեմ արգելքներ հարուցելու հավանականությունից, ինչպես նաև դժգոհում է, որ ինքը հաստատվել է միայն վրացահայության հոգևոր առաջնորդ:

Սրբազնագոյն Քահանայապետ, ամենողորմ տէր:

Յաղագս Սարգիս արքեպիսկոպոսի աստ բնաւ չգոյ ինչ լուր և զի արդէ: Կարելի թէ բդեշխն նորայ (Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը-Լ.Մ.) յանդգնեսցի այնքան, մինչև չընկալնուլ զնա արքեպիսկոպոս: Միայն նա ինքն՝ Սարգիս արքեպիսկոպոսն ընկալեալ աստ զդեղ լուծողական և այնու զվերջին նուազութեան գնաց յուսահատ գլուխ ճանապարհորդութեան իւրոյ և յԵլիսաւետպոլ տարեալ են զինվորքն մահճօք ի մէջ անակնկալ շնչասպառ վերջին տկարութեան, ընդ որոյ թեև մնասցէ կենդանի՝ ամիսս 10 հազիվ նա կարողանայ առնուլ զհոգս: Այլ եթէ ամբարշեսցի բդեշխն՝ յուսով եմ, թէ սանձեսցէ զամբարշտութիւն նորայ կուսակալն կամ մանաւանդ սաստի բարձրագոյն տեղեաց...

Ես նախ արժան համարեցայ յայտնել Ձեր տերութեան, զի կնեազ Գօլիցինն, որ գրէ վասն իմ ընկալնուլ ի Կայսէրեն յառաջնորդ Վրաստանու, ոչ գրէ և վերատեսուչ այլոցն, զորոց Ձեր տերութիւն գրեալ էիք Ղարաբաղու, Նուխւոյ և այնց կողմանցն: Եվ պատճառ յայտնէ սրբազան Յոհաննէս առաջնորդն, թէ «խնդրեսցի ես ի կնեազ Գօլիցինէն տալ գրել և յայնցանէ, որպէս և գրեալ է առ ինքն Սրբազնագոյն Վեհն: Այլ նա պատասխանեց, ասէ, թէ հասու լինիմ արժանաւորութեամբ և իրաւանց երկուցն ծայրից՝ այնէ առաջնորդին և վիճակացն և այնպես ընկալնուլ ապա, եթէ արժան իցէ»:

Վեհագոյն տէր, յառաջ ոչ գոյր ընդհանուր ազգաց հոգևորական մինիստրութիւն, այլ միայն ռուսաց և այնէ զի իւրաքանչիւր ազգք ընթանային ազատորեն: Այժմ, զի ընդարձակեցաւ հոգևորական մինիստրութիւն նաև ի վերայ ամենայն ազգաց ևս և մահմեդականաց և այլոց բարբարոս ազգաց, զմտաւ ածել արժանէ, թէ զի՞նչ վախճան կայցէ ամփոփեալ ի ներքոյ այսպիսի սկզբան նոցա: Ընդ այսմ միշտ շահաւէտ համարիմ հրամանաց նոցայ ի վերայ այդպիսի

և իցէ իրաց: Այժմ, եթէ բողոքեսցեն՝ բողոքեն նոքա ամենայն ճարտարութեամբ իւրեանց՝ ուր և բողոքելոցն իցեն: Եվ ես իրաւի ցավիմ, թէ զի՞նչ ունիցիմ տալ զպատասխանի: Եթէ ասեմ անտեղեակ եմ՝ ոչ վայել է: Եթե ասեմ տեղեակ եմ՝ ոչ կարեմ օրինաւոր պատասխանի մատուցանել: Մանաւանդ, զի շահասիրութեան եղանակ նոքա ունին վասն մեր ցուցանել ուր ամբաստանելոց են և ոչ իրաւունք կամ վայելչութիւն: Յառաջն ջրոյ փակելով՝ զի ա՞ոդ դադարեսցին հոսանքն յաղբերէն:

1815 օգոստոսի 8
ի Թիֆլիզ:

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 241, վավերագիր 113

Ղարաբաղի խան Մեհտի-Ղուլիի կողմից վավերացված Գանձասարի վանքին պատկանող ապահարկ կալվածքների ցուցակ:

1. Կիրջուկն և Ջաղացքարի մատն, որ Կիրջուկին թալաղ է և նորին վեց դանկը Սարգիս կաթողիկոսը՝ Հաղիր Մելիքի որդին յիշեալ վանքին վախմ է* արարեալ:
2. Հողն վարելոյ Մենշակտուն, որ վախմ է արարեալ չորս դանկ ու կէսն:
3. Հողն վարելոյ Առտանոց, որ վախմ է արարեալ երկու դանկ:
4. Հողն վարելոյ Կուռալան, որ վախմ է արարեալ չորս դանկ:
5. Գիւղն Աղմանայ, Սայտունի որդի Վելիջանը վախմ է արարեալ վեց դանկ:
6. Եղիայ Առաջնորդն վախմ է արարեալ հողն Աթախու՝ երեք դանկ:
7. Հողն Քարքիջան, Բատարան, Ծաղկավան վախմ է արարեալ հինգ դանկ:
8. Հողն Ջուխտանուլ, վախմ է արարեալ Մեջլիսի որդի Ուլուբէկն՝ վեց դանկ:
9. Ջալալի որդի Դուրսունն վախմ է արարեալ Միսիրշահ՝ վեց դանկ:
10. Գիւղն Յեյվալու, վախմ է վեց դանկ:
11. Աթաբէկի որդի Այդինն վախմ է արարեալ հողն Ալմաչայ՝ վեց դանկ:
12. Տէր Համզի որդի Սմպաթը վախմ է արարեալ հողն Տանձաձորի՝ վեց դանկ:
13. Ազրպասրու որդի Սայդունն վախմ է արարեալ Բեմին հողը՝ վեց դանկ:
14. Աթաբէկն՝ Ջալալի որդի, վախմ է արարեալ հողն Գիւղլակու վեց դանկը, որ Կիչան գիւղումն է:

Հիջրայի 1224թ. մուհարամ ամիս (1809թ. փետրվարի 16-մարտի 18)

* վախմ (արաբ.) – կրոնական հաստատություններին նվիրաբերված տարածք

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 240, վավերագիր 50

Աղվանից մետրոպոլիտությանը Ղարաբաղում պատկանող հողերի և դրանց վրա աշխատող գյուղացիների նկատմամբ ճորտատիրական իրավունքի վերաբերյալ Աղվանից մետրոպոլիտ Սարգիս Հասան-Ջալալյանի գրությունը Շուշիի բերդի պարետ Ս. Կալաչևսկուն:

Ձերին բարեծնունդութեանդ Ղարաբաղու Կամենդանք տեառն կապիտան և կավալեր Կալաչեւսկույն:

Անցեալ յօգոստոսի 24-ի և նոյեմբերն 14-ի գրութիւնդ Ձեր ընկալայ ես, զորս հրամաեալ էիք սակս Ղարաբաղու վանօրեից, եկեղեցեաց եւ յանապատաց դրութեան եւ կառավարութեան: Զի զպատասխանի նորին անցեալ սեպտեմբերի 3-ին և նոյեմբերի 26-ին գրեալ և մատուցեալ եմ ի մեծութեանդ Ձերոյ: Զիմանամ, թէ որոյ պատահմամբ է լեալ, որ մինչեւ ցարդ չունիք տեղեկութիւն ի նմանէ: Իսկ այժմ ես, վերստին հրամանաւ եներալ մայիոր և կաւալեր կնեազ Աբխազովին գրութեամբ նոյեմբերի 24-ի, հարցանեք զիս վասն Ղարաբաղու վանորեից, եկեղեցեաց և յանապատաց կառավարութեան:

Ունիմ պատիւ զյետին գրութեանդ Ձերոյ պատասխանելոյ այսպես:

Քանզի ամենայն Աղուանից հայոց եւ Ղարաբաղու յառաջին և գլխաւոր պատրիարքարանն է Գանձասարու վանքս և այժմ մետրոպոլիտարան և երկրորդն է զԱթոռ Ամարասայ վանքն արքեպիսկոպոսարան, որ յութն յարիւր ամ է, յորս սոքա լինեցեալ ի յազգէն թագաւորացն հայոց և վասն հոգւոյ մասին իւրեանց և կառավարութեամբ տեղոյս եպիսկոպոսաց, վարդապետաց և այլ վանականաց, շնորհեալ են յիշեալ վանօրեիցս գիւղօրայս, ծառայս, վարելոյ հանդս և հանդաստանս ջրարբի և անջուր, այգիս, տունս և մառանս ջղացքարի վախմ անուամբ, որ նոքօք կառավարեն զձեռս իւրեանց վանականքն և աղօթս մատուցանեն առ Աստուած, վասն խաղաղութեան աշխարհի մինչև ի ժամանակս պարսից շահերին և Ղարաբաղու խաներին: Եւ ի ժամանակս պարսից շահերին և Ղարաբաղու խաներին ևս ունեցեալ են նոյն վանօրայքս յիշեալ ծառայքն, վարելոյ տափերն և վախմ տեղերն, այլև ի պարսից շահերից եւ Ղարաբաղու խաներից և մեծամեծաց վկայական գրով հաստատեալ են յիշեալ վանքաց սեփական ինչքն: Եւ նմանապես

ծառայքն, որ միայն վանական գործն են կատարեալ, այսինքն ռանչբարք, տուարապանք, ծիապանք, ոչխարապանք, այգեպանք ջղացպանք և այլ սպասաւոր վանականք: Եւ սոցին ծառայութիւն վանիցն այն է եղեալ, որ չեն խափանել վանական գործն և մարմնաւոր կառավարչաց ոչինչ ժամանակի խարճ և բէկար տուեալ: Տակաւին պատահեալ է, որ ի ժամանակի մեծ շինութեան վանօրեից խնդրեալ են երկրիս կառավարչաց յօգնութիւն առնել վանից, զի և նոքա յօգնութիւն են արարեալ, փահլայիւք: Որպես ի 1772 յամին յանգուցեալ եղբայրն իմ Յոհաննէս պատրիարքն հայոց Աղուանից, վասն Գանձասարու վանիցս գլխոյն վերստին նորոգման ժամանակին, Իբրահիմ խանէն օգնութիւն խնդրեաց, և նա Ղարաբաղու երկրէս հրամաեաց հարիւր ջուխտ գօմէշ իւրեանց մարդովն եկին աստ, քանի օր գերան քաշեցին, որ ես և այլք բազումք գոն այսմ բանիցս ականատեսք:

Այլև հինգ փոքր վանք ևս գոն ի մէջ Ղարաբաղու: Նոքա ևս են ունեցեալ մասնաւոր կեցութիւն, թէ վարելոյ տափեր և թէ երկու կամ երեք ռանչբարս տուեալ երկրիս կառավարչացն: Բայց այժմ նոցին չորեքն է ամայի և անշինութիւն, իսկ որ մինն է, որ Սրբոյ Յակոբայ վանք կոչի, վարդապետք գոն և ունին զերկու ռանչբարք, մի քանի վարելոյ տափեր, զկեանս իւրեանց կառավարեն:

Ուրեմն ամենախոնարհաբար խնդրեմ ի մեծութիւնէ Ձերին, զի ուր հարկն է յայտնեսջիք, որ յիշեալ վանօրայքս, որք այսպէս յառաջին դրութեամբն եղեալ են, այլևս այնպէս մնայցեն, զի մեք լիցուք հանգիստ և մշտապէս աղօթս մատուցուք առ Աստուած, վասն անգին կենաց ի Նորին Ամենողորմ Կայսերն Ամենայն Ռուսիոյ և բոլոր զորապետից և զորաց նորին:

Յամի 1828-ին, յամսեան նոյեմբերի 28 ի Սուրբ Աթոռ Գանձասար:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Սկզբնաղբյուրներ

Ա. Ձեռագիր սկզբնաղբյուրներ

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր N: N: 2776, 2803, 2912, 2931, 3738, 3814, 4331, 4481, 4484, 4496, 4501, 5794, 6241, 6271, 6714, 7823, 7980, 8066, 8206, 8965:

Բ. Արխիվային նյութեր

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, արխիվային բաժին, ֆոնդ Կաթողիկոսական դիվան, թղթապանակ N: N: 1ա (վավ. 57); 2ա (վավ. 32, 47, 57, 58բ, 76, 77, 83, 91, 93, 94, 95); 2բ(վավ. 131, 134, 141, 143, 163, 210, 219, 226, 235, 238բ, 241, 248, 249, 255ա-բ); 6 (վավ. 152); 7(վավ. 5); 13 (վավ.298); 19 (վավ. 82,178); 21 (վավ. 7, 89, 90, 107); 22բ (վավ. 51); 23 (վավ. 11, 178, 185); 27 (վավ. 22, 24, 32); 160 (վավ. 130); 240 (վավ. 1, 2, 4, 5, 50, 101, 105, 127, 132, 147, 152, 158, 160); 241 (վավ. 1ա, 57, 201, 202, 210, 296); 244 (վավ. 273, 279); 257 (վավ. 299, 250); 260 (վավ. 130)

Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ N: N: 155 (վավ. 3); 156 (վավ. 224); 250 (վավ. 219); 256 (վավ.219)

Ներսես Աշտարակեցու արխիվ. թղթապանակ N: N: 164ա (վավ. 438); 164բ (վավ. 29, 758, 769, 969, 970, 973, 975):

Գ. Տպագիր սկզբնաղբյուրներ

1. «Գիրք թղթոց», Տփղիս, 1901:
2. Դիվան Հայոց պատմութեան, Կազմեց Գիւտ Աղանեանց, Գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893; Գ, Թիֆլիս, 1894; Դ, Թիֆլիս, 1899; Ե, Թիֆլիս, 1902; Ը, Մաս II, Թիֆլիս, 1908; ԺԱ, Թիֆլիս, 1913:
3. Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Գիրք I, հ. Ա, Աշխատ. Վ. Գրիգորյանի, Երևան, 1984:
4. Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, Կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982:
5. Դիվան հայ վիմագրության, պրակ VII, Կազմեց Գ. Գրիգորյան, Երևան, 1996:

6. Եղիա Կարնեցու դիվանը, Առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյան, Երևան, 1968:
7. Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Երևան, 1938:
8. Զաքարիա Սարկավագ, Պատմագրութիւն, հ. Բ, Վաղարշապատ, 1870:
9. Կանոնագիրք հայոց, Աշխատ. Վ. Հակոբյանի, Գիրք Ա, Երևան, 1964:
10. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Աշխատ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:
11. Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1641-1660), հ. Գ, Երևան, 1984:
12. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, Կազմեց Հ. Փափազյան, պրակ Ա, Երևան, 1956, պրակ Բ, Երևան, 1959:
13. Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983:
14. Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873:
15. Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:
16. Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, Կազմեց Հրաչեայ Աճառեան, Վիեննա, 1910:
17. Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1885:
18. Ցուցակ հայերերեն ձեռագարաց, Կազմեց Սմբատ Տեր-Ավետիսյան, Վիեննա, 1970:
19. Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դաղեանի, Կազմեց Յակոբ Թոփճեան, Մաս Ա, Վաղարշապատ, 1898;
20. Акты собранные Кавказской археографической комиссией, тт. I-VIII, Тифлис, 1868-1876.
21. Армяно-русские отношения в XVII в., Сборник документов, под редакцией Аш. Иоаннисяна, т. I, Ереван, 1953.
22. Армяно-русские отношения в первой четверти XVIII в., т. II, часть I, Ереван, 1964, т. II, часть II, Ереван, 1967.
23. Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII в., ответ. редактор В. К. Осканян, т. III, Ереван, 1978.
24. Армяно-русские отношения в XVIII в., т. IV, Ереван, 1990.
25. Закарий Канакерци, Хроника, Пер. с арм., комментарии М. О. Дарбинян-Меликян, Москва, 1969.

26. Присоеденение Восточной Армении к России, Сборник документов, т. I, Ереван, 1972, т II, Ереван, 1978.
27. Помятники дипломатических и торговых отношении Московской Руси с Персией, Под ред., Н. И. Веселовского, т. III, Санкт-Петербург, 1898.
28. Письма и донесения иезуитов о России конца XVII и начала XVIII века, Санкт-Петербург, 1904.
29. А. В. Суворов, Письма, Москва, 1987.
30. Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, Санкт-Петербург, 1898.

2. Գրականություն

31. XVI- XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը, Հողվածների ժողովածու, Երևան, 1989:
32. Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմության, Երևան,1953:
33. Ալիշան Ղ., Կամենից, Վենետիկ, 1896:
34. Սճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երևան 1944:
35. Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երևան, 1998:
36. Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907:
37. Երիցեան Ալ. Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894:
38. Երիցեան Ալ., Ներսէս եպիսկոպոսը Դանիէլ կաթողիկոսի ժամանակ, Թիֆլիս, 1877:
39. Զուլալյան Մ., Հայ ժողովրդի XVII- XVIII դդ. պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք I, Երևան, 1990:
40. Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 3, Գիրք II, Երևան, 1973, հ. 4, Երևան, 1984, հ. 8, Երևան, 1985:
41. Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914:
42. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. IV, Երևան, 1972:
43. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, Երևան, 1986:
44. Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977; հ. 6, Երևան, 1980; հ. 9, Երևան, 1983:

45. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք II, Երևան, 1959:
46. Հովհաննիսյան Ա., Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921:
47. Շահխաթունեան Հ., Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. II, Էջմիածին, 1842:
48. Զալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մաս Բ, Տփխիս, 1853:
49. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964:
50. Ուլուբաբյան Ա., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981:
51. Ուլուբաբյան Ա., Խաչենի իշխանությունը X- XVI դդ., Երևան, 1975:
52. Ուլուբաբյան Ա., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998:
53. Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, Գիրք Ա, Բեյրութ, 1959, հ. Բ, Գիրք Գ, Բեյրութ, 1961:
54. Абдуллаев Г., Из истории Северо-Восточного Азербайджана, Баку, 1958.
55. Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.
56. Арутюнян П., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., Москва, 1954.
57. Буниатов З., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.
58. Дубровин Н., История войны и владичества русских на Кавказе, т. IV, Санкт-ПетерБург, 1884.
59. Еремян С, Экономический и социальный строй Албании в III-VII веках, " Очерки истории СССР III-IX веков", Москва, 1958.
60. Иоаннисян А., Иосиф Эмин, Ереван, 1989.
61. Иоаннисян А., Россия и армянское освободительное движение 80-х годах XVIII в., Ереван, 1990.
62. История СССР, Москва, 1967.
63. Католицизм, Словарь, Под общей редакцией Л. Н. Великовича, Москва, 1991.
64. К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, т. I, Ереван, 1991.

65. Лысцов В., Персидский поход Петра I (1722-1723), Москва, 1951.
66. Маркова О., Россия, Закавказье и международные отношения в XVIII в., Москва,1966
67. Мирза Адигезал-бек, Карабаг-намэ, Баку, 1950.
68. Мирза Джемал Дживаншир Карабахский, История Карабаха, Баку, 1950.
69. Петрушевски И., О дохристянских верованиях крестян Нагорного Карабага,Баку,1930
70. Петрушевски И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и в Армении в XVI-начале XIX вв., Ленинград, 1949.
71. Орбели И., Синхронистические таблицы хиджры и европейского летосчисления, Москва, 1961.
72. Brosset M., Histoire de la Georgie depuis l' antiquite' jusqu'a XIX siecle, parte II, St. Petersburg, 1857.

Պարբերական մամուլ

73. Բալայան Բ., Հայ պետականության վերականգման պարսկական մի ծրագիր, «Իրան-Նամէ», Երևան, N 2, 1993:
74. Լալաեան Ե., Գանձակի գավառ, «Ազգագրական հանդես», Գիրք Ե, Թիֆլիս, 1899:
75. Յակոբեան Ալ., Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարավային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա,1999:
76. Ներսիսյան Մ., Վարդան Օձնեցու ձեռագիր աշխատությունը, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, N 6, 1945:
77. Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքների և պարտականությունների մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1, 1966:
78. Տեր-Հովհաննիսյան Գ. (Մուրացան), Բաղդասար մետրապոլիտի կենսագրությունը, «Փորձ», N 5, 1880:

Լեոնիկ Ալբերտի Մկրտումյան

Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ.

Կազմող՝ խմբագրության աշխատակցի Ալվանից կաթողիկոս Իրեան խանգրաշեանցի եւ նրա հեղինակ Իշանտիսի վարդապետը (աղբանկար XVII դ. շեմադրից)

Պատվեր՝ 33: Չափս՝ 60x84 1/16:
11,5 հեղ. մամուլ, 15,2 հրատ. մամուլ,
16,75 տպ. մամուլ,15,57 տպ. պայմ. մամուլ:
Տպաքանակ՝ 200:

«Տնտեսագետ» հրատարակչություն

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության տպագրական արտադրամասում Երևան 25, Նալբանդյան, 128: